ՋՈՆ ԲԻՎԵՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ

ԱՍՏԾՈ ԵՐԿՅՈՒՂԸ

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑ, ՈՐՈՎ
ՈՂՋԱՄԻՏ ԵՐԿՅՈՒՂՆ ԱՍՏԾՈՒՑ
ԿՎԵՐԱՓՈԽԻ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ

Սիրելի՛ ընկեր,

Երկյուղը նշանակում է ակնածալի հարգանքի զգացում՝ ահ ու դողի կամ պատկառանքի հետ մեկտեղ: Այն առողջ, պատվալի, սուրբ վախ է Աստծուց, որին պետք է ձգտի յուրաքանչյուր հավատացյալ, քանի որ Աստծո երկյուղը Նրա բոլոր խոստումների հիմքում է:

Այս երկյուղին հարելու առավելություններն անասելի են. դրանց թվում են ավելի մեծ իմաստությունը և մտերմությունն Աստծո հետ, երկարակեցությունը, պատիվը, ապահովությունը և տևական ժառանգություն կառուցելը: Աստվածաշունչը պարզորեն հայտնում է, որ Աստված մոտենում է նրանց, ովքեր աննահանջ ձգտում են Իրեն՝ հնազանդությամբ և ճշմարտությամբ: Հիսուսն արժևորում էր այս առաքինությունն ամեն ինչից առավել, և մենք իմաստուն կլինենք, եթե նույն կերպով վարվենք:

Խրախուսում եմ ձեզ՝ փոխարինել անկյանք և տաղտկալի քրիստոնեական կրոնը Աստծո հետ տևական, իմաստալից, պտղաբեր և բավականություն պատճառող հարաբերությամբ՝ ազատ ամեն վախից և տագնապից:

Ձեր եղբայրը՝ Քրիստոսում

Ջոն
JohnBevere@ymail.com

MessengerX

Messenger INTERNATIONAL

ԱՍՏԾՈ ԵՐԿՅՈՒՂԸ

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑ, ՈՐՈՎ
ՈՂՋԱՄԻՏ ԵՐԿՅՈՒՂՆ ԱՍՏԾՈՒՑ
ԿՎԵՐԱՓՈԽԻ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

The Awe of God, Armenian, by John P. Bevere
© 2024 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as The Awe of God
ISBN 978-1-400-33670-8
Author photo © Meshalli Mitchell
Additional resources in Armenian are available for
free download and video streaming at
MessengerX.com and on the **MessengerX** app
To contact the author: JohnBevere@ymail.com
This international leadership seeding edition of the
Awe of God book has been produced
in collaboration between Thomas Nelson and Messenger International.
It is a free gift and is NOT FOR SALE

Printed in Armenia

«Աստծո երկյուղը» հայերենով, Ջոն Պ. Բիվեր
© 2024 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակված է անգլերենով, «The Awe of God»
վերնագրով
ISBN 978-1-400-33670-8
Հեղինակի լուսանկարը՝ © Meshalli Mitchell
Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են անվճար ներբեռնման
և հոսքային հեռարձակման համար
MessengerX.com կայքում և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com
«Աստծո երկյուղը» գրքի այս միջազգային հրատարակությունը
պատրաստվել է «Thomas Nelson»-ի և «Messenger International»-ի
համագործակցությամբ: Այն նվեր է և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ:

Տպագրված է Հայաստանում:

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշներն են:

Իմ սքանչելի կնոջը, լավագույն ընկերոջը և քնքուշ սիրուն՝ Լիզա Բիվերին:

«Այն կինը, որը վախենում է Տիրոջից, կգովվի»:
Առակաց 31.30

Ես գրեցի այս գիրքը մեր ամուսնության քառասունեորորդ տարում:
Ամեն տարի դու ավելի հրաշալի ես դառնում, և եթե հնարավորություն ունենայի, առանց վարանելու կրկին կամուսնանայի քեզ հետ:
Բառերը չեն կարող նկարագրել այն հիացմունքը և ուրախությունը, որոնք պատճառում ես սրտիս:
Ես չէի լինի այն տղամարդը, որն այսօր եմ՝ առանց քո սիրո և աջակցության:
Դու իմաստուն, զվարճալի, հմայիչ, ուժեղ, աշխույժ և հրաշալի ես:
Ես կսիրեմ քեզ հավիտյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս ընթերցել այս գիրքը VII
Ներածություն XI

ՇԱԲԱԹ 1. ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՍՏՎԱԾ

1. Աստծո գանձը.....3
2. Հակադիր վախեր.....9
3. Ի՞նչ է սուրբ երկյուղը.....15
4. Աստծո շոշափելի ներկայությունը.....21
5. Անմոռանալի երեկո.....27
6. Նրան տեսնելը.....33
7. Աստծո փառքը.....39

ՇԱԲԱԹ 2. ՀԱՅՏՆՎԱԾ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՆՔ

8. Ձեր արժեքը 45
9. Մահացու բախում 51
10. Աստված չի տեսնում 57
11. Ահով և դողալով 63
12. Վարակիչ կեղծավորություն 69
13. Երեք պատկեր 75
14. Հավիտենական որոշումներ 81

ՇԱԲԱԹ 3. ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

15. Մարդու հանդեպ վախը 89
16. «Արտոնյալ» դիրք 95
17. Չարից հեռանալը.....101
18. Երկարակեցություն.....107
19. Մեր անձերը մաքրելը.....113
20. Մեր ձգտումը.....119
21. Ցանկություն և զորություն.....125

ՇԱԲԱԹ 4. ՄԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻՆ

22. Աստծո Խոսքից դողալը....133
23. Անմիջապես....139
24. Դա անիմաստ է թվում....145
25. Առանց ակնհայտ շահի....151
26. Դրական ցավ....157
27. Կատարված է....163
28. Ինչպե՞ս տաղել խիղճը....169

ՇԱԲԱԹ 5. ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ

29. Մտերմության սկիզբը....177
30. Ուրիշ Հիսուս....183
31. Ձեզ չեմ ճանաչում....189
32. Տիրոջ գաղտնիքը....195
33. Ներքին անցուդարձ....201
34. Երես առ երես....207
35. Դուք Իմ ընկերներն եք....213

ՇԱԲԱԹ 6. ԱՍՏԾՈ ԳԱՆՁԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

36. Հաստատելով Իր խոստումները....221
37. Բոլոր վախերը հեռացնող վախը....227
38. Ժառանգություն....233
39. Ամենակարևոր բանը....239
40. Հաջողակ կյանք....247
41. Բարեհաջող ավարտ....255
42. Գանձը գտնելը....261

Հավելված. Հայացք Աստծո մեծությանը....271
Նշումներ....278

ԻՆՉՊԵՍ ԸՆԹԵՐՑԵԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Հարգելի՛ ընթերցող,

Սա հասարակ ուղերձ չէ. սա կյանքի ուղերձ է, և եթե հավատաք ու վարվեք ըստ այս ուղերձի, ձեր կյանքը մեկընդմիշտ կվերափոխվի: Վստահ եմ սրանում, քանի որ այս ճշմարտությունները փոխել են իմ և անթիվ մարդկանց կյանքերը: Երբ խորհուրդ են հարցնում ամուսնության, ընտանիքի կամ ծառայության մասին, առաջնահերթ ներկայացնում եմ գրքի ուղերձը:

Այս ուղերձի կարևորության պատճառով երկար եմ աղոթել և խորհել, թե ինչպես ներկայացնեմ: Հաշվի առնելով մեր ժամանակակից կյանքը՝ առօրյա բազում պարտականությունները և մեծ զբաղվածությունը, զգացի, որ անհրաժեշտ է փոփոխել գրքի ձևաչափը և ներկայացնել այս ճշմարտությունները փոքրիկ չափաբաժիններով, որպեսզի կարողանաք հեշտ և խորությամբ յուրացնել:

Առաջին հայացքից գուցե թվա, թե սա ամենօրյա ընթերցանության ձեռնարկ է, բայց վստահեցնում եմ, որ այդպես չէ: Թույլ տվեք բացատրել: Ամենօրյա ընթերցանության ձեռնարկը սովորաբար ընդգրկում է տարբեր թեմաներ յուրաքանչյուր օրվա համար, որոնք պարտադիր չէ, որ ամբողջական և համակարգված ուղերձ կազմեն: Թեև այս գիրքն ամենօրյա ընթերցանության ձեռնարկի տեսք ունի, յուրաքանչյուր օրվա գլուխը կառուցվում է նախորդ օրվա նյութի վրա, և միասին կազմում են այնպիսի ուղերձ, որը սովորաբար գտնվում է ամբողջական իրապատում պարունակող գրքում: Այս ձևաչափի առավելությունն այն է, որ ինքներդ եք որոշում, թե ինչպես ընթերցեք: Անկասկած, ամբողջ գիրքը կարելի է ընթերցել մեկ-երկու օրում, եթե նա-

խընտրում եք: Այնուամենայնիվ, առաջարկում եմ ընթերցել այն կա՛մ վեց շաբաթում (օրական մեկ գլուխ), կա՛մ երեք շաբաթում (մեկ գլուխ՝ առավոտյան, և մեկ գլուխ՝ երեկոյան):

Յուրաքանչյուր գլխի վերջում կգտնեք հավելյալ բաժին, որը կօգնի առավել մեծ օգուտ քաղել գրքի նյութից: Մենք կանվանենք այս բաժինը «Անձնական կիրառում»: Այն բաղկացած է հինգ կետից.

1. **Հատված**. Ես ընդգրկել եմ յուրաքանչյուր օրվա ուղերձի գլխավոր աստվածաշնչյան հատվածը կամ այնպիսի աստվածաշնչյան հատված, որն ընդգրկված չէ հիմնական տեքստում, սակայն ավելի ազդեցիկ է դարձնում ներկայացված նյութը: Խորհուրդ եմ տալիս անգիր հիշել այս հատվածները:
2. **Եզրահանգում**. Այս կետը յուրաքանչյուր գլխի հիմնական միտքն է: Դրա նպատակն է հասկանալի դարձնել յուրաքանչյուր գլխի ուղերձի կարևորությունը: Այն կրկին ընթերցելն ավելի արդյունավետ կդարձնի ուսումնասիրվող նյութը, ինչպես նաև կծառայի որպես արագ հղում՝ տվյալ գլուխը հետագայում վերանայելիս:
3. **Մտորում.** Այս կետն անչափ կարևոր է: Սաղմոսերգուն պնդում է. «Քո պատվիրանների վրա կմտածեմ և Քո ճանապարհին մտիկ կտամ» (Սաղմոս 119.15): Մենք մտորում ենք Աստծո Խոսքի շուրջ, երբ փորձում ենք հասկանալ, թե ինչ կերպով է այն վերաբերում մեզ՝ մեր ներկա վիճակում: Գրված է, որ եթե այսպես վարվենք, մեր ճանապարհները հաջողակ կլինեն, և մենք խելամիտ կլինենք (տե՛ս Հեսու 1.8, Սաղմոս 1-ին գլուխ և Ա Տիմոթ. 4.15):
4. **Աղոթք**. Լինելու է նաև տվյալ գլխի ուսուցումն արտացոլող աղոթք: Այնքա՛ն կարևոր է, որ լսելի դարձնենք մեր ձայնն Աստծուն և թույլ տանք Նրան փոխել մեզ՝ համաձայն Իր Խոսքի:
5. **Դավանություն**. Գրված է, որ *մահը և կյանքը* մեր խոսքերի իշխանության մեջ են (տե՛ս Առակ. 18.21): Երբ դավանում ենք այն, ինչ Նա ասում է մեր կյանքում, մեր հոգին, անձը և մարմինը համապատասխանում են Աստծո կամքին: Սա փորձված միջոց է լիարժեք կյանք ունենալու համար:

Կրկին, խրախուսում եմ ձեզ ժամանակ հատկացնել և ամբողջությամբ ընթերցել գիրքը, որպեսզի Աստծո Խոսքի ճշմարտությունները թափանցեն ձեր սիրտը և միտքը: Հաջորդ շաբաթների ընթացքում ամեն օր այս ճշմարտությունների շուրջ մտորելը կօգնի, որ դրանք հասկանալի դառնան ձեզ համար և արմատ գցեն ձեր կյանքում: Սա

ընդամենը տեղեկություն չէ, այլ՝ միջոց, որով ավելի ենք մոտենում մեր Աստծուն: Առաջարկում եմ, որ այս գլուխներն ընթերցելու և «Անձնական կիրառում» բաժնի հինգ կետերն ուսումնասիրելու ժամանակ նոթատետր ունենաք: Գրի՛ առեք ձեր մտքերը և աղոթքներն այդ նոթատետրում ամեն օր, որպեսզի հետագայում, երբ վերանայեք այս նյութը, հիշեք, թե ինչ էր Սուրբ Հոգին հայտնել ձեր մտքին:

Եվս մի քանի խորհուրդ: Առաջինը՝ հետևեք ձեր սմարթֆոնով կամ ժամացույցով, թե որքան ժամանակ է պահանջվում մեկ գլուխ ընթերցելու, «Անձնական կիրառում» բաժնի հինգ կետերն անցնելու և նոթատետրում նշումներ անելու համար: Մի՛ շտապեք. սա մրցույթ չէ: Ժամանակը չափելու նպատակն է, որ մի քանի գլուխ անց կարողանաք իմաստուն կերպով ծրագրել հետագա գլուխների ընթերցումը՝ հիմնվելով ձեզ անհրաժեշտ միջին ժամանակի վրա:

Երկրորդը՝ փորձեք սովորություն ձևավորել և թույլ մի՛ տվեք, որ որևէ բան խոչընդոտի ձեր ամենօրյա որոշված ժամանակը: Աղոթում եմ և հուսով եմ, որ այս գիրքն ընթերցելիս Աստված կկատարի ձեր մեջ այն աշխատանքը, որը կատարել է ինձանում վերջին քառասուն տարում:

Երրորդը՝ ցանկացած ուղերձ մշտապես առավելագույնս օգտակար է լինում, երբ սովորեցնում եմ մի խումբ ընկերների կամ ուսումնասիրում եմ նրանց հետ: Հավաքվեք մտերիմ ընկերներով և միասին ուսումնասիրեք այս ուղերձը: Այն բանից հետո, երբ ավարտեք հերթական գլուխը՝ ինքնուրույն, Սուրբ Հոգու հետ, հանդիպեք ձեր ընկերներին և կիսեք այն ամենը, ինչ Նա ցույց է տվել ձեզ: Պարբերաբար հանդիպեք այս կերպով:

Աղոթում եմ, որ ավելի մտերմանաք Աստծո հետ *«Աստծո երկյուղը»* գիրքն ընթերցելիս: Կարևոր է, որ ընթերցեք նաև գրքի Ներածությունը՝ մինչև 1-ին գլխին անցնելը, քանի որ այն բացում է մեր սրտերը քննարկվող նյութի համար: Եվ երբ ավարտեք գիրքը, սիրով կցանկանամ լսել, թե ինչ կերպով Աստծո սուրբ երկյուղն ազդեց ձեր հավատքի և կյանքի վրա:

Անկեղծորեն՝
Ջոն Բիվեր

Հ.Գ. Ուզում եմ հիշեցնել, որ բաց չթողնեք Ներածությունը: Աղոթում եմ, որ այն կրակ բորբոքի ձեր մեջ, որը սուրբ երկյուղ կձևավորի և կօգնի գլխիվայր սուզվել այս ուղերձի մեջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վախ. տարիներ շարունակ մարդիկ ձգտել են արմատախիլ անել այն: Շատերն են ուսումնասիրել վախը, պայքարել դրա դեմ և հորդորել, որ վերջ դնենք դրա ազդեցությանը մեր կյանքերում: Նույնիսկ ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտի ամենահայտնի թևավոր խոսքերից մեկն այդ մասին է. «Միակ բանը, ինչից պետք է վախենանք, հենց վախն է»: Ձայները բոլոր հարթակներից գոչում են, որ մենք պետք է վախը հաղթահարելու միջոցներ հայտնաբերենք: Կարելի է գտնել գործնական խորհուրդներ պարունակող հարյուրավոր, եթե ոչ հազարավոր գրքեր, որոնք գրված են հենց այս նպատակով: Սկսած 1980-ական թվականներից՝ մարդիկ աշխարհով մեկ հագուստ էին կրում, որի վրա խոշոր տառերով գրված էր՝ «Ո՛չ վախին»: Թվում է՝ մենք անդրդվելի ենք ամեն տեսակի վախը մեր կյանքից արմատախիլ անելու ձգտման մեջ:

Այս արշավը կարելի է ողջամիտ, ազնիվ և խոհեմ համարել: Ու թեև շատ առումներով այդպես է, ճշմարտությունն այն է, որ *բոլոր վախերը չէ, որ վատն են:* Այդ դեպքում, ո՞րն է այս մոլուցքի պատճառը: Կարծում եմ՝ մենք դասում ենք բոլոր վախերը մեկ ընդհանուր կարգի ներքո՝ պիտակելով դրանք որպես «վնասակար»: Բայց արդյո՞ք այս մոտեցումը ճիշտ է:

Նախևառաջ կարևոր է հասկանալ, որ, անկասկած, գոյություն ունեն այնպիսի վախեր, որոնք *կործանարար* են, նույնիսկ եթե դրանք ողջամիտ են թվում: Եթե մենք վախենանք, որ կկորցնենք մեր ամբողջ գումարը և ունեցվածքը, հավանաբար, տարված կլինենք դրանցով և կդառնանք ժլատ և մշտապես կուտակող մարդիկ, որոնք երկրպագում են իրենց փողին և ունեցվածքին՝ դրանք վեր դասելով ամեն ինչից: Եթե վախենանք, որ կկորցնենք մեր կո-

ղակցին, մենք չափազանց ամուր կկառչենք նրանից կամ կասկածամտորեն կվերաբերվենք նրա ցանկացած արարքին: Երկու տարբերակներն էլ վրդովմունքի պատճառ կդառնան և, ի վերջո, վնաս կհասցնեն մեր հարաբերությանը: Եթե անդադար վախենանք, որ չենք ապրում լիարժեք կյանքով, կսկսենք ձգտել նոր զգացմունքների և վերապրումների, սակայն կզրկվենք առողջ շփման շրջանակից, իրական հարաբերություններից և այն սքանչելի խաղաղությունից, որը վերապրում ենք՝ նվիրվելով մարդկանց: Եթե վախենանք մեր երեխաների անվտանգության համար, մենք, հավանաբար, կխանգարենք նրանց աճին և ձևավորմանը՝ անհարկի սահմանափակումներով, կամ ապստամբ ու եսակենտրոն կդարձնենք նրանց: Կարելի է անվերջ նման օրինակներ բերել:

Մյուս կողմից, *կառուցողական* վախերն իմաստություն են տալիս: Հարյուրավոր մետրերով բարձր ժայռից վայր ընկնելու վախն իմաստություն է տալիս, որ չափազանց մոտ չգնանք ժայռի ծերպին, որտեղից կարող ենք սայթաքել: Վախենալ գորշ արջի ուժից՝ իմաստություն է տալիս, որ չմոտենանք մայր արջի քոթոթներին: Երրորդ աստիճանի այրվածքներ ստանալու վախն իմաստություն է տալիս, որ պաշտպանիչ ձեռնոց հագնենք՝ տաք ջեռոցից տապակը հանելիս:

Սակայն կառուցողական վախը, որքան էլ օգտակար լինի, նույնպես կարող է խեղաթյուրված դառնալ և սահմանափակել մեր կյանքը: Եթե չվերահսկենք այն, վայր ընկնելու վախը կարող է թույլ չտալ մեզ ինքնաթիռ նստել: Անվերահսկելի սարսափը գորշ արջից կարող է զրկել մեզ հաճելի անտառային զբոսանքից, իսկ այրվածքներ ստանալու վախը կարող է թույլ չտալ մեզ միացնել ջեռոցը և համեղ տնական կերակուր վայելել:

Իրականում, մենք պետք է հարցնենք հետևյալը. *«Ինչի՞ց ենք ամենից շատ վախենում»:* Ավելի լավ է հասկանալ այս հարցի պատասխանը, քան կենտրոնանալ կործանարար վախերն արմատախիլ անելու և կառուցողական վախերը վերահսկելու վրա: Սա իմաստուն հարց է, և ճիշտ պատասխանվելու դեպքում այն թույլ կտա նորովի դիտարկել մնացած վախերը և կբարելավի մեր կյանքը՝ թե՛ ներկայի, թե՛ հավիտենության տեսանկյունից: Այն ցույց կտա ճանապարհը դեպի արդյունավետ և բավականություն պատճառող կյանք: Աստվածաշունչը շատ է խոսում վախի մասին: Աստծո Խոսքի կառուցողական հիմքը հետևյալն է. Տիրոջ վախն իմաստության սկիզբն է (տե՛ս Առակ. 1.7), և ոչ թե ինչ-որ իմաստության, այլ՝ Աստծո իմաստության: Սա վատ սկզբնակետ չէ:

Այսպիսով, մտածե՛ք հետևյալը. ի՞նչ, եթե ճշտորեն ուղղորդված վախն *առաքինություն* է: Ի՞նչ, եթե Աստծո վախն այն պարադոքսալ ճանապարհն է, որը տանում է դեպի իրական հարաբերություն Նրա հետ: Եվ ի՞նչ, եթե սուրբ վախը ճշմարտապես բացում է մեր սրտերն այն լիարժեք կյանքի համար, որը Հիսուսի հետևորդները վերապրել են դարերի ընթացքում: Ի՞նչ, եթե այս վախն արմատախիլ է անում մյուս վախերը՝ ձեր սեփական գործը սկսելու վախը, վախն այն բանից, թե ինչ կանի ձեր կառավարությունը կամ ինչ կպատահի ձեր երեխաներին, վախը ձեր առողջության վերաբերյալ, այն վախը, որը մտավոր հիվանդություններ և ընկճվածություն է առաջացնում, և այլն (այս ցուցակն անվերջ է):

Շարունակելով մեր ընթացքը՝ թույլ տվեք չորս հավաստի պնդում անել.

1. Մենք մարդ ենք, և մենք վախենալու ենք:
2. Աստծո վախը կամ երկյուղը ավելի խոր, գեղեցիկ և մտերմացնող է, քան շատերը համարձակվում են պատկերացնել:
3. Աստծո վախը կլանում է բոլոր կործանարար վախերը:

Աստծո վախը ամեն բարի բանի սկիզբն է:

Ոմանք արդարացիորեն կհիշեցնեն, որ Աստվածաշունչը գրեթե 365 անգամ պատվիրում է մեզ՝ մի՛ վախեցիր, ինչի պատճառով շատ քրիստոնյաներ եզրակացնում են, որ Աստված չի ուզում, որ մենք վախենանք: Սակայն այս խոսքերը վերաբերում են *կործանարար* վախին: Միևնույն ժամանակ, ես կարող եմ նշել գրեթե 200 խոսք Աստվածաշնչից, որոնք խրախուսում են վախենալ կամ երկյուղել Աստծուց: Եվ դժբախտաբար, ձգտելով արմատախիլ անել ցանկացած վախ մեր կյանքից (ներառյալ՝ Աստծո երկյուղի առաքինությունը), մեր հավատքի այս ոլորտը չուսումնասիրված ու չհասկացված է մնացել և օգուտ չի բերել:

Տիրոջ երկյուղը շատ ավելի փառավոր, ակնածալի և նույնիսկ ուրախալի է, քան երբևէ կարող ենք պատկերացնել: Գրքում ուզում եմ ցույց տալ, թե ինչպես ճշտորեն ուղղորդված վախը, հատկապես՝ ամեն ինչից առավել Աստծուց վախենալը, կարող է բացել կյանքի ճանապարհ, որը գերազանցում է այն, ինչ դուք երբևէ պատկերացրել եք: Եվ միայն այդ ժամանակ է, որ կյանքում կարող ենք համարձակ բախվել ցանկացած անակնկալի: Չարլզ Սփերջենի խոսքով՝ «Աստծո վախը մյուս բոլոր վախերի մահն է. զորավոր առյուծի պես այն հալածում է բոլոր վախերն իր առջևից»[1]:

Հուսով եմ՝ ընթերցելով գիրքը, գլխիվայր կսուզվեք այս առաքի-

նության մեջ, կփարատեք սուտ կրոնական պատկերացումն այն մասին, թե ինչ այն չէ, և կհայտնաբերեք այն հաստատուն հիմքը, որի վրա այն կանգնեցնում է ձեզ: Այո, մի՛ վախեցեք չարից, սակայն բացահայտե՛ք, թե ինչպես Տիրոջից վախենալու չհասկացված առաքինությունը կծաղկեցնի ձեր կյանքը և վայրի գեղեցկություն կհաղորդի:

Սկսենք ուսումնասիրել, թե որքան զարմանալի և ահավոր է մեր Աստված:

Մենք կանվանենք սա «Աստծո երկյուղը»:

Զարմանալի Աստված

ՇԱԲԱԹ 1

Տիրոջ երկյուղը Նրա գանձն է, ընտիր զարդը, որը միայն տրվում է... նրանց, ովքեր մեծապես սիրված են:

– ՋՈՆ ԲԱՆՅԸՆ

1| ԱՍՏԾՈ ԳԱՆՁԸ

Ի՞նչ կլիներ, եթե ձեզ պատմեին մի թաքնված առաքինության մասին, որը, ըստ էության, ամբողջ կյանքի բանալին է: Այն բացահայտում է ձեր գոյության նպատակը և գրավում ձեր Արարչի ներկայությունը, պաշտպանությունը և մատակարարումը: Դրանից են բխում ազնվագույն բնավորության բոլոր գծերը, այն երջանկության հիմքն է և տրամադրում է լուծումներ բոլոր աննրդաշնակ հանգամանքներում, որոնց կարող եք բախվել: Այս առաքինությանը հարելը կարող է երկարացնել ձեր կյանքի տևողությունը, շնորհել ամուր առողջություն, հաջողություն և ապահովություն, վերացնել ամեն կարիք և երաշխավորել ազնվագույն ժառանգություն:

Սա չափազանց լա՞վ է թվում՝ ճշմարիտ լինելու համար: Գուցե մտածեք. «Այս գիրքը գեղարվեստակա՞ն է»: Հավաստիացնում եմ ձեզ, որ այդպես չէ. այն, ինչ ես ասացի, ճշմարտություն է:

Լսելով այս մասին՝ մարդկանց մեծ մասը քմծիծաղ կտա և կառարկի. «Նման առաքինություն գոյություն չունի»: Այնուամենայնիվ, վերևում բերված խոստումներից յուրաքանչյուրը գրված է մի մարդու կողմից, որն, անկասկած, եղել է երբևէ ապրած ամենաիմաստուն մարդկանցից մեկը: Ավելին՝ նա գրել է այս խոսքերը մեր Արարչի ոգեշնչման ներքո, իսկ Նրա խոսքերն անսխալական են:

Այնուամենայնիվ, նախքան Սողոմոնի կյանքի ավարտը, նա ընկավ այն երանությունից, որը նկարագրել էր, քանի որ նրա սիրտը թողեց իր իմաստության Աղբյուրին և, որպես արդյունք, նա շեղվեց իր բարեհաջող ընթացքից:

Թույլ տվեք համառոտ պատմել նրա մասին: Մանուկ հասակում Սողոմոնը կրթվել էր այս առաքինությամբ և հարել էր դրան: Նրանում ձևավորվել էր ամուր, ազնիվ բնավորություն և խորաթափանցություն: Առաջնորդ դառնալով՝ նա արագորեն գերազանցության հասավ և ի վերջո սկսեց իշխել միլիոնավոր մարդկանց: Աստծուն ներկայացրած

իր խնդրանքից հետո նա ապշեցուցիչ իմաստություն ստացավ. չկար գրեթե մի բան, ինչը նա դժվարանում էր հասկանալ: Նա գրեց հազարավոր իմաստուն խոսքեր և հարյուրավոր երգեր: «Նա կարող էր հեղինակությամբ խոսել ամեն տեսակի բույսերից՝ Լիբանանի բարձր սոճիներից մինչև փոքրիկ զոպան, որն աճում է պատի ճաքերից: Նա նույնպես կարող էր խոսել կենդանիներից, թռչուններից, սողուններից և ձկներից» (Գ Թագավորաց 4.33, NLT):

Այս իմաստուն մարդը հասավ հաջողության, հարստության և համբավի այնպիսի մակարդակի, որն անզուգական էր նրանից առաջ, և որը մինչև օրս ոչ ոք չի գերազանցել: Թագավորները, թագուհիները, դեսպանները և բարձրաստիճան պաշտոնյաները գալիս էին հեռավոր երկրներից, որպեսզի հանդիպեին նրան, լսեին նրա գաղափարները, անձամբ տեսնեին նրա թիմի գերազանցությունը և միաբանությունը, նաև ծանոթանային այն նորարարություններին, որոնք մեծ ազդեցություն և հարստություն էին բերել նրա երկրին: Այդ ամենը այնքան տպավորիչ էր, որ կար մի թագուհի, որը չէր հավատում նրա մասին իր լսածին, մինչև որ անձամբ չայցելեց նրան: Այնուամենայնիվ, Սողոմոն թագավորի հետ որոշ ժամանակ անցկացնելուց հետո նա բացականչեց. «Ես չէի հավատում այն խոսքերին, մինչև որ եկա, և իմ աչքերը տեսան, և ինձ դեռ կեսը չեն պատմել: Դու իմ լսած համբավից ավելի իմաստություն և բարիք ունես: Երանի՜ քո այս մարդկանց, քո այս ծառաներին, որ միշտ քո առջև կանգնած են և լսում են քո իմաստությունը» (Գ Թագավորաց 10.7,8):

Դատելով այն ամենից, ինչ գրված է, տեսնում ենք, որ նրա իշխանության ներքո գտնվող ժողովուրդը երջանիկ էր և արդյունավետ էր իր գործերում: Յուրաքանչյուր ընտանիք նրա թագավորության մեջ ուներ իր սեփական տունը և այգին: Պատմությունն ասում է, որ ժողովուրդը «ուտում, խմում և ուրախանում էր» (Գ Թագավորաց 4.20): Նրանց կյանքը խաղաղ և ապահով էր:

Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց այս ակնառու առաջնորդը հեռացավ այն բանից, ինչը սնուցում էր իր ձեռքբերումները: Նա իր աչքերում իմաստուն դարձավ և համարեց, որ այլևս անհրաժեշտ չէր ականջ դնել այս առաքինությանը: Նա մոլորվեց իր ճանապարհից և ի վերջո դառնացած քննադատ դարձավ: Նա միակը չէր, ով տուժեց իր վրիպումից. տուժեց նաև այն ժողովուրդը, որին նա առաջնորդում էր:

Կյանքն անիմաստ դարձավնրա համար: Նա արհամարհանքով լի պնդումներ էր գրում, օրինակ՝ «Ամեն ինչ ձանձրալի է, լիովին ձանձրալի է. ոչ ոք չի կարող որևէ իմաստ գտնել այս ամենում»[1] և «Պատմությունը կրկնվում է, քանի որ արևի ներքո ոչ մի նոր բան չկա»[2]: Նա ավելի կտրուկ պնդումներ էր անում, օրինակ՝ «Լավ է... մահվան օրը...

ծննդյան օրից»[3] և «Սխալն անկարելի է ուղղել: Կորսվածն անկարելի է վերականգնել»[4]: Իրականում, նա մի ամբողջ գիրք գրեց այն մասին, թե որքան անիմաստ է գոյությունն այս աշխարհում. նրա համար ամեն ինչ դատարկ էր: Այս մարդը բավականին կարճ ժամանակահատվածում գահավիժեց հաջողության վեհ բարձունքներից դեպի բացահայտ հոռետեսության խորքերը: Այսօր բազմաթիվ հոգեբաններ կախտորոշեին նրա վիճակը որպես մոլագարային դեպրեսիայի ծանր դեպք. ինչպիսի՛ կտրուկ անցում մեկ ծայրահեղությունից մյուսը:

Բարի լուրն այն է, որ նրա պատմությունը չավարտվեց հուսալքության խորքերում: Ի վերջո, նա վերադարձավ կյանքի ամենակարևոր առաքինությանը: Մենք չգիտենք, թե քանի ամիս կամ, նույնիսկ, տարի նա տրամադրեց՝ գրելու համար իր հուսահատությամբ լի գիրքը, բայց գրքի վերջաբանն ակնարկում է նրա վերականգնման մասին: Նա սկսում է վերջին գլուխը՝ յոթ[5] անգամ տարբեր կերպերով գրելով միևնույն բանը. «Հիշի՛ր քո Ստեղծողին»: Նրա վերջին խոսքերը հետևյալն են.

> «Ամեն բան լսվեց. այս ամենի վերջը հետևյալն է. *վախեցի՛ր Աստծուց*... և պահի՛ր Նրա պատվիրանները, քանի որ սա է մարդու ամենը [նրա ստեղծվելու լիարժեք, սկզբնական նպատակը, Աստծո նախախնամության առարկան, աստվածահաճո բնավորության արմատը, ամեն երջանկության հիմքը, նաև հարմարեցումը արևի ներքո եղած բոլոր աններդաշնակ հանգամանքներին և իրավիճակներին] և ամբողջը [ամբողջ պարտականությունը]՝ յուրաքանչյուր մարդու համար» (Ժողովող 12.13, AMPC):

Այս արժեքավոր առաքինությունը հենց *Աստծո երկյուղն* է: Հեղինակը՝ Սողոմոն թագավորը, հայտարարում է, որ այն լիարժեք և առատ կյանքի նախապայմանն է: Մենք կարդում ենք Աստծո Խոսքում. «Ովքե՞ր են այն մարդիկ, որոնք *վախենում* են Տիրոջից: Նա ցույց կտա նրանց այն *ուղին*, որը նրանք պետք է ընտրեն» (Սաղմոս 25.12, NLT): Այս ուղին հազվագյուտ է, քանի որ, ցավոք, շատերը հավատում են, ինչպես Սողոմոն թագավորն իր խավար օրերում, որ իրենց իմաստությունն է, որ հաջողություն և երջանկություն է պարգևում: Սուրբ երկյուղն օգնում է մեզ պահպանել կապը մեր Արարչի իմաստության հետ: Միայն Նա գիտի, թե ինչն է օգտակար և ինչն է կործանարար մեզ համար:

Սուրբ երկյուղի կարևորությունն այն աստիճան է գերազանցում բոլոր առաքինությունները, որ Աստվածաշունչն անվանում է այն Հիսուսի *ախորժանքը* կամ *բերկրանքը* (տե՛ս Եսայի 11.3): Նույնքան զարմանալի է հետևյալ խոսքը. «Տիրոջ երկյուղը կլինի Նրա (Աստծո) գանձը» (Եսայի 33.6): Մի պահ կանգ առեք և խորհեք սրա շուրջ: Այն Ամենակարող Աստծո *բերկրանքը* և *գանձն* է: Ապշեցուցի՛չ է: Շուտով խորապես

կուսումնասիրենք այս զարմանալի իրողությունը, բայց, նախ, վերադառնանք Սողոմոն թագավորին:

Ինչո՞ւ սկսեցի այս ուղերձը՝ պատմելովնրա հաջողության, ձախողման և վերջնական վերականգնման մասին: Իմ ծառայության առաջին մի քանի տարիներին ես լսեցի հետևյալը մի իմաստուն առաջնորդից, ինչը գրավեց իմ ուշադրությունը, և ինչը մտապահել եմ տասնամյակներ շարունակ: Նա ասաց. «Իմ սկզբունքներից մեկն է առաջնորդական դիրքի չնշանակել այնպիսի մարդու, որն անթերի անցյալ է ունեցել»:

Երբ նրան հարցրին, թե ինչն է պատճառը, նա պատասխանեց. «Ես հասկանում եմ, թե ինչպիսի բնավորություն ունի մարդը՝ տեսնելով, թե ինչպես է նա արձագանքում ձախողմանը: Արդյո՞ք նա պատասխանատվություն ստանձնեց, ապաշխարեց և աճ ունեցավ՝ հաղթահարելով այդ իրավիճակը, թե՞ արդարացրեց իր վարքը և մեղադրեց ուրիշներին: Դա ցույց է տալիս՝ արդյո՞ք նա պատրաստ է պատասխանատվություն ստանձնելու»: Ես հասկացա հետևյալը նրա խոսքերից. *մարդու արձագանքը ցույց է տալիս՝ արդյո՞ք նա արժևորում է իմաստությունն ամենից առավել:*

Սողոմոնը լիովին չէր գիտակցում աստվածային երկյուղի արժեքը, թեև նա սովորեցնում էր այդ մասին Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո: Ահա թե ինչու նա հեռացավ դրանից: Մինչև իր անկումը, աստվածային երկյուղը նրա *գանձը* կամ *բերկրանքը* չէր. այն անսասան հիմք չէր նրա շարժառիթների և գործերի համար: Սայթաքելուց, անմտորեն վարվելուց և ի վերջո վերականգնվելուց հետո նա ավելի լիարժեք ընկալեց դրա վեհությունը և ուժը:

Նմանապես, Պողոս առաքյալը գրում է.

> «Ես ճնշում եմ իմ մարմինը... և հպատակեցնում եմ այն՝ վախենալով, որ չլինի թե ուրիշներին Ավետարանը հռչակելուց հետո ես ինքս դառնամ ոչ պիտանի [չանցնեմ ստուգումը, հավանություն չստանամ և մերժվեմ՝ կեղծ լինելու պատճառով]» (Ա Կորնթացիների 9.27, AMPC):

Պողոսը հասկանում էր, թե որքան կարևոր էր գանձի պես պահպանել Աստծո Հոգու կողմից իրեն վստահված իմաստությունը և չգործել նույն ողբերգական սխալը, որը գործեց Սողոմոն թագավորը: Նրան հայտնվել էին Աստծո ուխտի ծածուկ ճշմարտությունները, որոնք ազատություն էին շնորհելու անթիվ մարդկանց, բայց եթե նա անգնահատելի չհամարեր աստվածային երկյուղը և ամուր չհարեր դրան, նա նույնպես կվերածվեր հուսալքված քննադատի՝ ոչ պիտանի, հավանություն չստացած և մերժված՝ կեղծ լինելու պատճառով:

Երբ հարում ենք աստվածային երկյուղին՝ որպես ամենից արժեքավոր

գանձի, այն զորացնում է մեզ՝ օգնելով հպատակված մնալ ճշմարտությանը: Դրա շնորհիվ մենք մնում ենք կյանքի ուղու վրա, ինչն ուշագրավ վարձատրություններ է բերում մեզ:

Մեր ժամանակներում, երբ մեծամասնությունը կործանարար կամ վնասակար է համարում վախը, հայտարարությունն այն մասին, որ *Տիրոջ երկյուղն* օգտակար և արժեքավոր առաքինություն է, անտրամաբանական է թվում: Այնուամենայնիվ, հիմնվելով Աստվածաշնչի հեղինակության վրա, ես հավաստիացնում եմ ձեզ, որ երբ հարենք դրան, մենք զորություն կստանանք, որպեսզի մնանք կյանքի ուղու վրա: Տիրոջ երկյուղով մենք կվերապրենք ճշմարիտ մտերմություն Աստծո հետ և կստանանք առավելություններ, որոնք կփոխեն մեր կյանքը, որոնցից մեծագույնը Քրիստոսի պատկերին կերպարանվելն է: Այնպես որ, եկեք սկսենք Աստծո երկյուղը բացահայտելու մեր ընթացքը:

Անձնական կիրառում

Հատված. «Եվ քո ժամանակներում կայունություն կլինի՝ փրկության, իմաստության և գիտելիքի առատություն. Տիրոջ ակնածալի երկյուղը և երկրպագությունը քո և Նրա գանձն է» (Եսայի 33.6, AMPC):

Եզրահանգում. Սուրբ երկյուղն Աստծո գանձն է, և այն պետք է լինի նաև մեր գանձը:

Մտորում. Ինչպե՞ս գործնականորեն արժևորել սուրբ երկյուղը: Ինչպե՞ս մոտենալ դրան: Ինչպե՞ս վերաբերվել դրան: Ինչպե՞ս չկորցնել այն:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ Տիրոջ երկյուղը բացահայտելու այս ընթացքում ճանաչեմ այն, ապրեմ դրանով և բերկրանք զգամ դրանում: Թող որ այն դառնա իմ գանձը, ինչպես որ Քո գանձն է: Թող որ այն տա ինձ իմաստություն և գիտելիք, որոնք անհրաժեշտ են լիարժեք և հաջողակ կյանքի համար, որը հաճելի է Քեզ: Նույնպես, խնդրում եմ, որ մարդիկ, որոնք թանկ են ինձ համար, գիտակցեն սա, և նրանք, ովքեր հաղորդակցվում են ինձ հետ, ճանաչեն դրա արժեքը: Ես խնդրում եմ Հիսուս Քրիստոսի՝ իմ Տիրոջ և Փրկչի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ կայացնում արժևորել սուրբ երկյուղը՝ որպես կյանքի մեծագույն գանձ, և այսպես վարվելով՝ ես զորություն կստանամ, որպեսզի կարողանամ մնալ բարեհաջող կյանքի ուղու վրա:

Երկյո՛ւղ ունեցիր
Աստծուց, այո՛, բայց մի՛
սարսափիր Նրանից:

– Ջ.Ա. ՍՓԵՆԴԵՐ

2| ՀԱԿԱԴԻՐ ՎԱԽԵՐ

1994 թվականի ամռանը ինձ խնդրել էին ծառայել մի եկեղեցական համաժողովում, որն անցկացվում էր Միացյալ Նահանգների հարավ-արևելքում: Դա խոշոր եկեղեցական համայնք էր, որն այդ համաժողովից երկու տարի առաջ վերապրել էր չորս շաբաթ տևող հզոր արթնություն՝ համաշխարհային համբավ ունեցող մի ավետարանչի առաջնորդությամբ: Այդ արթնության շեշտադրումը Աստծո բարությունն էր, սերը և ուրախությունը: Այն հրաշալի ազդեցություն էր թողել շատերի կյանքում: Բայց, ցավոք, այդ եկեղեցին կանգ էր առել այդ արթնության փորձառության վրա և չէր շարունակել ճանաչել Աստծո սիրտը: Ըստ էության, նրանք կառչել էին դրանից և ոչ հավասարակշռված էին դարձել:

Այդ ժամանակ ես սուրբ երկյուղը հայտնաբերելու ընթացքի մեջ էի: Ես հասկանում էի դրա կարևորությունը, բայց դեռ շարունակում էի ճանաչել այն, և այդ պատճառով վարանում էի այդ մասին հրապարակավ քարոզել: Այնուամենայնիվ, ես ուժգնորեն զգում էի, որ պետք է թողնեի իմ մտավախությունը և քարոզեի Աստծո երկյուղի մասին հենց առաջին երեկոյան հավաքույթին:

Ես բարձրացա ամբիոնի մոտ և սկսեցի սովորեցնել այդ համայնքին իմ սահմանափակ գիտելիքով: Մարդկանց արձագանքն ավելի շուտ վիատեցնող էր. նրանք հառել էին աչքերն ինձ վրա՝ դեմքի դատարկ արտահայտությամբ, և որևէ կերպով չէին արձագանքում: Թվում էր՝ իմ խոսքերն ուղղված էին խուլ ականջների: Ինչպես պարզվեց, իմ տպավորությունը ճիշտ էր, և շատ շուտով ես պարզելու էի դրա պատճառը:

Հաջորդ երեկոյան՝ երկրպագությունից հետո, ավագ հովիվը բարձրացավ ամբիոնի մոտ, ինչպես ինձ էր թվում, սովորականի պես ինձ ներկայացնելու համար, սակայն դա տեղի չունեցավ: Տասնհինգ րոպե

շարունակ նա շտկեց այն, ինչի մասին խոսում էի նախորդ երեկոյան: Նա վստահորեն պնդում էր Բ Տիմոթեոսի 1.7-ում գրվածը. «Տիրոջ երկյուղը միայն վերաբերում է Հին կտակարանի ժամանակաշրջանին, սակայն, որպես քրիստոնյաներ, մեզ չի տրվել վախի հոգի»:

Ես նստած էի առաջին շարքում և լիովին ցնցված էի. թվում էր՝ մղձավանջի մեջ էի: Որքան ավելի էր նա խոսում, այնքան ավելի անհարմարավետ էի ինձ զգում: Նա շարունակեց.

– Նոր կտակարանը հայտնում է մեզ. «Վախ չկա սիրո մեջ, այլ՝ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, որ վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ» (Ա Հովհաննես 4.18): Այսպիսով, այն, ինչ Ջոնը սովորեցնում էր անցած երեկո, սխալմունք է, և ես ուզում եմ պաշտպանել ձեզ դրանից:

Իմ ուղերձի մանրակրկիտ շտկումը շարունակվեց ևս մի քանի րոպե: Հենց որ նա ավարտեց, ի զարման ինձ, հրավիրեց ինձ ամբիոնի մոտ ծառայելու: Ես դեռ հիշում եմ, որ աստիճաններով բարձրանալու ընթացքում մտածում էի. *«Ինչպե՞ս եմ ծառայելու այս մարդկանց այն բանից հետո, ինչ նա արեց: Սա չի կարող կատարվել ինձ հետ»:* Ես պետք է տիրապետեի ինձ, թեև միակ բանը, որ ուզում էի այդ պահին, փախուստի դիմելն էր: Ինձ համար դժվար էր կենտրոնանալ, առավել ևս՝ կյանքեր փոխող ուղերձ քարոզել այդ համաժողովի մասնակիցներին:

Քարոզելու ընթացքում միտքս շարունակ վերադառնում էր նրա շտկումներին: Ես չէի կարողանում մոռանալ նրա խոսքերը: Այդ վերապրումը միաժամանակ անիրական և զարհուրելի էր թվում: Մի քանի անգամ պետք է մեծ ջանք գործադրեի, որպեսզի չկորցնեի մտքիս թելը: Ես պայքարում էի իմ զգացմունքների դեմ, որոնք ասում էին. *«Մոռացի՛ր այս մասին. դադարի՛ր խոսել և հեռացի՛ր այստեղից»:* Դա շատ ծանր զգացում էր: Կարճ ուղերձից հետո ես փոխանցեցի խոսքը նրան, արագ վերադարձա իմ հյուրանոցային համարը և պառկեցի քնելու՝ ինձ բոլորովին շփոթված և մերժված զգալով:

Հաջորդ առավոտյան մի դատարկ շինարարական հրապարակ գտա, որը մոտ էր իմ հյուրանոցին. այդ օրը այդտեղ ոչ ոք չէր աշխատում: Ես ջանասիրաբար աղոթում էի՝ սպասելով Աստծո շտկմանը: Եվ անկեղծորեն հարցրի. «Տե՛ր, ես ցա՞վ եմ պատճառել Քո եկեղեցուն: Իմ սովորեցրածը սխա՞լ էր: Ես ստրկության մե՞ջ եմ տանում Քո ժողովրդին»:

Դա տևեց բավականին ժամանակ, և մինչ աղոթում էի, իմ խոսքերն աղոթքի մեջ փոխվեցին: Ես դադարեցի կասկածել այդ երեկո քարոզած իմ ուղերձին և հանկարծ հասկացա, որ եռանդուն կերպով խնդրում էի, որ ավելի հասկանայի սուրբ երկյուղը: Դա աղաչանք էր,

որը բխում էր սրտիս խորքից, և այդ վերապրումը զարմացրեց ինձ: Ես չէի զգում Աստծո տհաճությունը, ընդհակառակը՝ զգում էի Նրա բարեհաճությունը իմ արարքի պատճառով: Նա հիշեցրեց ինձ բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներ Նոր կտակարանից Տիրոջ երկյուղի մասին: Կարճ ժամանակ անց այլևս շփոթված չէի, այլ աղաղակում էի բարձր, եռանդագին ձայնով. «Հա՛յր, ես ուզում եմ ճանաչել Տիրոջ երկյուղը և ուզում եմ վարվել դրանում»:

Այո՛, Նոր կտակարանի հեղինակները գրել են այն խոսքերը, որոնք մեջբերեց այդ հովիվը, բայց նրանք գրել են նաև այլ խոսքեր.

- Պողոս առաքյալը գրում է. *«Ահով* և *դողալո՛վ* գործեք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպեցիների 2.12):
- Կրկին, նա խրատում է. «Սիրելինե՛ր, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք *Աստծո ահով»* (Բ Կորնթացիների 7.1):
- Եբրայեցիների թղթի հեղինակը նշում է. «Ուստի, անշարժ թագավորություն ընդունած լինելով՝ պինդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն՝ *ահով և երկյուղածությամբ»* (Եբրայեցիների 12.28):
- Պետրոս առաքյալը գրում է. «Եվ եթե Հայր եք կանչում նրան, որ առանց աչառության դատաստան է անում՝ ամեն մեկի գործի պես, ապա ձեր պանդխտության ժամանակը *վախով* վարվեք» (Ա Պետրոս 1.17):
- Հուդա առաքյալը հայտարարում է. «...*վախո՛վ* ապրեցրեք (կամ՝ «փրկեք»)» (Հուդա 23):
- Եվ Հիսուսը հորդորում է մեզ. «Եվ մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն սպանում են և հոգին չեն կարող սպանել, բայց *ավելի վախեցեք* Նրանից, որ կարող է հոգին էլ, մարմինն էլ կորցնել գեհենի մեջ» (Մատթեոս 10.28):

Ես կարող էի շարունակել, և անկասկած, ընթացքում կանեմ դա, բայց հուսով եմ՝ հասկացաք այն, ինչ ուզում եմ ասել. *սուրբ երկյուղը* նորկտակարանյան ճշմարտություն է: Վերևում թվարկվածներն ընդամենը մի քանիսն են այն խոսքերից, որոնք Տերը հիշեցրեց, երբ աղոթում էի:

Այդ առավոտյան հասկացա, որ այդ հովիվը շփոթել էր վախի հոգին Տիրոջ երկյուղի հետ: Այս երկուսի միջև մեծ տարբերություն կա, որը մենք տեսնում ենք, երբ կարդում ենք, որ Մովսեսը բերեց Իսրայելի ժողովրդին Սինա սարի մոտ՝ Աստծուն հանդիպելու համար:

Երբ ամբողջ ժողովուրդը տեղ հասավ, Մովսեսը բարձրացավ սարը՝ նախապես Աստծո հետ առանձին հանդիպելու: Ամենակարողը հայտնեց նրան Իր զորավոր փրկության նպատակը.

> «Այսպե՛ս ասա Հակոբի տանը և իմացրո՛ւ Իսրայելի որդիներին. «Դուք տեսաք՝ ինչ որ արեցի եգիպտացիներին, և ձեզ արծվի թևերի վրա տարա և Ինձ մոտ բերեցի»» (Ելից 19.3,4):

Աստծո զորավոր փրկության գլխավոր նպատակը *ամբողջ ժողովրդին* Իր մոտ բերելն էր: Նա փափագում էր նրանց. Նա ցանկանում էր հանդիպել նրանց, որպեսզի նրանք ճանաչեին Իրեն, ինչպես Մովսեսը: Այնուամենայնիվ, երեք օր անց, երբ Աստված իջավ սարի վրա՝ ժողովրդին ներկայանալու համար, նրանք արձագանքեցին՝ արագ հեռանալով: Նրանք սարսափահար բացականչեցին՝ ասելով Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեզ հետ, և մենք կլսենք, բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք» (Ելից 20.19): Փորձելով հանդարտեցնել ժողովրդին՝ նրանց առաջնորդը պատասխանեց. «Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել՝ այնպես, որ Նրա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչեք» (Ելից 20.20):

Առաջին հայացքից թվում է, թե Մովսեսը հակասում է ինքն իրեն. «Մի՛ վախեցեք», որովհետև Աստված եկել է, «որ Նրա վախը ձեր առջև լինի»: Նրա խոսքերը հակասական են: Պատասխանն է՝ ո՛չ: Մովսեսը պարզապես տարբերակում էր անում Աստծուց սարսափած լինելու և Տիրոջ երկյուղն ունենալու միջև: Կրկին, այս երկուսի միջև մեծ տարբերություն կա:

Այն մարդը, որը սարսափած է Աստծուց, թաքցնելու բան ունի: Հիշեք, որ պարտեզում, հենց որ Ադամը մեղանչեց, նա և Եվան թաքնվեցին Տիրոջ ներկայությունից: Նրանց արձագանքը եզակի չէր. այլ մարդիկ Աստվածաշնչում, որոնք ընտրում էին խավարի ճանապարհը, նման կերպով էին վարվում:

Այնուամենայնիվ, Աստծուց երկյուղ ունեցող մարդը թաքցնելու ոչինչ չունի: Նա սարսափած է Աստծուց հեռու լինելուց: Այս սկզբունքը պատկերվում է հետևյալում. երբ ժողովուրդը ետ քաշվեց, Մովսեսը մոտեցավ Աստծուն: Աստծուց երկյուղ ունեցող մարդը չի մտածում՝ «Որքա՞ն կարող եմ մոտենալ մեղքի սահմանին՝ առանց դրա մեջ ընկնելու»: Նա մտածում է՝ «Ես ուզում եմ հնարավորինս մոտ լինել Աստծուն և այնքան հեռու լինել մեղքի սահմանից, որ այն նույնիսկ իմ տեսադաշտում չլինի»:

Այսպիսով, մինչև սուրբ երկյուղը սահմանելը և դրա առավելությունները դիտարկելը, նախ, պարզորեն նշենք, թե ինչ այն չի նշանակում: *Այն չի նշանակում սարսափել Աստծուց և, որպես արդյունք, ետ*

քաշվել Նրանից: Ինչպե՞ս կարող ենք մտերմորեն հաղորդակցվել ինչ-որ մեկի հետ, ումից վախենում ենք: Աստված չի ցանկանում, որ ետ քաշվենք Իրենից: Սաղմոսներում գրված է. «Իմ սիրտը լսեց, որ Դու ասում ես. «Եկ և զրուցի՛ր Ինձ հետ»: Եվ իմ սիրտն արձագանքում է. «Տեր, ես գալի՛ս եմ»» (Սաղմոս 27.8, NLT): Դուք լսո՞ւմ եք այս մտերմության կանչը: Նա ցանկանում է, որ մոտենաք Իրեն, հաղորդակցվեք Իր հետ և ծիծաղեք, որպեսզի անցկացնեք ձեր կյանքն Իր հետ: Սաղմոսերգուն նաև գրում է. «Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից» (25.14): Ինչպես տեսանք, Աստված ցանկանում է մտերմորեն հաղորդակցվել ձեզ հետ: Այսպիսով, վստա՛հ եղեք, որ Սուրբ երկյուղը չի հանգցնում մտերմությունը: Այն անում է ճիշտ հակառակը. այն ավելի լիարժեք է դարձնում մեր հաղորդակցությունը Նրա հետ:

Անձնական կիրառում

Հատված. «Մի՛ վախեցեք: Աստված եկել է, որպեսզի փորձի ձեզ և խոր ու ակնածալի երկյուղածություն պատվաստի ձեր ներսում, որպեսզի չմեղանչեք» (Ելից 20.20, MSG):

Եզրահանգում. Սուրբ երկյուղը չի նշանակում սարսափել Աստծուց և արդյունքում ետ քաշվել Նրանից: Այն նշանակում է սարսափել Նրանից հեռու լինելուց:

Մտորում. Ինչո՞ւ Աստված ազատեց Իսրայելը Եգիպտոսի ստրկությունից: Ո՞րն էր գլխավոր պատճառը: Ինչո՞ւ Աստված ազատեց ինձ այս աշխարհի ստրկությունից: Ո՞րն է գլխավոր պատճառը:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, շնորհակալություն, որ ազատում ես ինձ վախի հոգուց՝ իմ Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Ես խնդրում եմ, որ պատվաստես ինձանում սուրբ երկյուղը, որպեսզի չմեղանչեմ Քո դեմ, քանի որ դա կհեռացնի ինձ այն մտերմությունից, որը Դու ցանկանում ես ունենալ ինձ հետ, և որը ես եմ ցանկանում: Ես խնդրում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Աստված կանչել է ինձ Իր հետ մտերիմ լինելու համար. ես չեմ սարսափում Աստծուց, այլ ցանկանում եմ երկյուղ ունենալ Նրանից, որպեսզի չմեղանչեմ:

Աստծուց երկյուղ ունենալը Իր բանական արարածների առաջին և մեծագույն պարտականությունն է:

– ՉԱՐԼԶ ԻՆԳԼԻՍ

3| ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂԸ

Անհնար է սահմանել սուրբ երկյուղը մեկ նախադասության, մեկ պարբերության կամ մեկ գլխի միջոցով: Դա նույնն է, ինչ եթե փորձենք բացատրել Աստծո սիրո ամբողջական լայնությունը՝ նույն ծավալն ունեցող հատվածներում: Դա կգբաղեցնի ամբողջական գլուխներ, և նույնիսկ այդ դեպքում մեր ըմբռնումը ոչ լիարժեք կլինի: Իրականում, ես համոզված եմ, որ մենք շարունակելու ենք բացահայտել սուրբ սերը և սուրբ երկյուղը ամբողջ հավիտենության ընթացքում:

Հաշվի առնելով սա՝ թույլ տվեք առաջարկել սուրբ երկյուղի սահմանման ընդհանուր ուրվագիծը: Հիշե՛ք ձեր մանկությունը, երբ ձեզ նվիրում էին գունազարդման գիրք և մատիտներ: Դուք բացում էիք գիրքը որևէ էջի վրա և տեսնում այն ուրվապատկերը, որը պետք է գունազարդեիք: Նմանապես, այս գլուխը կներկայացնի սուրբ երկյուղի ընդհանուր ուրվագիծը, սակայն կպահանջվի ընթերցել ամբողջ գիրքը՝ այն գունազարդելու համար: Եթե ընթերցեիք միայն այս գլուխը, դուք կստանայիք ընդհանուր գաղափար սուրբ երկյուղի մասին, բայց ոչ այն ճշմարտությունները, որոնք կարող են վերափոխել ձեզ:

Նախորդ գլխում ցույց տվեցինք, որ Տիրոջ երկյուղը չի հեռացնում մեզ Աստծո ներկայությունից, այլ՝ ընդհակառակը: Այս բարի և հրաշալի երկյուղը մոտեցնում է Նրան, և անչափ կարևոր է, որ այս ճշմարտությունը հաստատուն հիմք դառնա մեզ համար, մինչև շարունակելը:

Ոմանք ասում են, որ Տիրոջ երկյուղը միայն նշանակում է ակնածանքով երկրպագել Աստծուն: Ես լսել եմ այս խոսքերը շատ հայտնի ծառայողների շուրթերից՝ ամբիոնից, նաև զրույցների և ճաշկերույթների ժամանակ: Թեև այս սահմանումը կարող է սկզբնական համարվել, այն

շատ հեռու է ամբողջական պատկերը լինելուց: Այն կարելի է համեմատել Աստծո սերը միայն որպես «երկայնամիտ և քաղցր» սահմանելու հետ (տե՛ս Ա Կորնթ. 13.4): Եթե կանգ առնենք այդտեղ, բոլորովին թյուր կերպով կհասկանանք թե՛ դրա իմաստը, թե՛ նպատակը:

Երբ Լիզան և ես արդեն քառասունն անց էինք, մի պատվարժան ծառայողի փեսա հյուր եկավ մեզ, որպեսզի խոսեր իր ընկերության մեջ ներդրում կատարելու հնարավորության մասին: Մեր հանդիպումը տևեց երկու ժամ, և ես հստակորեն հիշում եմ, թե որքան սիրալիր և համբերատար էր նա մեր հանդեպ: Եթե հետևեիք նրա վարքին, ինքներդ կհամոզվեիք, որ նա սիրով լցված մարդ էր: Այնուամենայնիվ, մի քանի օր տևող աղոթքից հետո Լիզան և ես առաջնորդություն չզգացինք ներդրում կատարելու համար: Այժմ՝ տարիներ անց, ես ուրախ եմ, որ մենք չարեցինք դա, քանի որ նա տարիներ շարունակ անցկացրեց բանտում՝ խոշոր ֆինանսական բուրգ ղեկավարելու պատճառով:

Արդյո՞ք այդ մարդը համբերատար և բարի էր: Անկասկած: Սակայն արդյո՞ք նա սիրով էր վարվում: Իհարկե՝ ո՛չ: Ինչո՞ւ: Քանի որ Աստվածաշունչը պատվիրում է մեզ. «Սա է Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհաննես 5.3): Գողությունը եսակենտրոն արարք է, որը խախտում է Աստծո սիրո պատվիրանը (տե՛ս Եփես. 4.28): Երեխաների հանդեպ բռնություն գործադրող մարդը կարող է բարի և նույնիսկ համբերատար լինել, սակայն, միևնույն ժամանակ, նա կործանում է ինչ-որ երեխայի կյանքը: Նա սիրո՞ւմ է այդ երեխային: Իհարկե՝ ո՛չ:

Նույն կերպով, եթե սահմանափակենք սուրբ երկյուղը միայն որպես ակնածալի երկրպագություն, մենք թյուր կերպով կհասկանանք դրա իմաստը և նպատակը: Այսպիսով, եկեք կազմենք դրա ուրվապատկերը, իսկ հաջորդ գլուխներում կգունազարդենք այն ուսուցումներով, աստվածաշնչյան օրինակներով և այլ պատմություններով: Մինչ սկսելը՝ ուզում եմ զգուշացնել, որ սուրբ երկյուղի սահմանման մեջ կտեսնեք բառեր, որոնք կարող են վախեցնել ձեզ, բայց հավաստիացնում եմ, որ ամեն ինչ ճիշտ հակառակն է: Շարունակե՛ք ուսումնասիրել այս ուղերձը մինչև վերջ և կբացահայտեք, որ սուրբ երկյուղը սիրո պարգև է մեր պաշտպանության համար՝ տրված մեր Արարչից, Ով խորապես հոգում է մեր մասին և փափագում է մեզ:

Կան բազմաթիվ հատվածներ Նոր կտակարանից, որոնցով կարող ենք սկսել, բայց համոզված եմ, որ հետևյալն ամենից հարմարն է.

> «Այսպիսով, քանի որ մենք ընդունում ենք այնպիսի Թագավորություն, որը չի կարող սասանվել, եկեք շնորհք ունենանք, որով կարող ենք ծառայել Աստծուն ընդունելի կերպով՝ *ակնածանքով* և *աստվածավախությամբ:* Որովհետև մեր Աստված սպառող կրակ է» (Եբրայեցիների 12.28,29, NKJV):

Այս հատվածը շեշտադրում է երկու բառ. *«ակնածանք»* և *«աստվածավախություն»,* ինչը հստակ ցույց է տալիս, որ աստվածային երկյուղը չի կարող սահմանափակվել միայն ակնածանքով. հակառակ դեպքում, հեղինակը պարզապես կրկնում է՝ երկրորդ բառը նշելով: Այս բառերը տարբերվում են ոչ միայն մեր լեզվում, այլև հունարենում. *«աիդո՛ս»* և *«էուլա՛բեիա»:*

«Ակնածանք» բառն առաջին հունարեն բառի գերազանց թարգմանությունն է: *«Աստվածաշնչի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանը»* սահմանում է *ակնածանքը* որպես «խոր, մեծարող, երկյուղալի հարգանք»[1]: Ինձ դուր է գալիս այս չորս բառերի համադրությունը. երբ կանգ ենք առնում և մտորում յուրաքանչյուրի շուրջ, մենք ավելի լավ ենք հասկանում այս բառի իմաստը:

Երկրորդ բառը՝ *«աստվածավախությունը»,* կրում է *երկյուղի* իմաստ: Ես փնտրեցի *«երկյուղ»* բառի սահմանումը Նոյ Վեբսթերի բառարանի սկզբնական՝ 1828 թվականի հրատարակության մեջ, և ահա թե ինչ գտա. «վախ, զարհուրանք՝ ներշնչված ինչ-որ մեծ և ահարկու բանից. զարկել վախով և երկյուղածությամբ. ազդեցություն թողնել՝ վախով, սարսափով կամ հարգանքով»[2]: Մի՛ տագնապեք «զարհուրանք» և «սարսափ» բառերից: Թեև հունարենի այս բառարանում օգտագործվում են նաև այս բառերը, սուրբ երկյուղն ունի գրավիչ, ոչ թե վանող ազդեցություն: Մենք պետք է տանք հետևյալ հարցը. արդյո՞ք այս բառերը դրական և ողջամիտ կողմ ունեն: Համոզված եմ, որ, համաձայն Աստվածաշնչի, այդպես է, և մենք կտեսնենք դա հաջորդ գլուխներում, երբ գա գունազարդման ժամանակը:

Թվարկենք մեր սահմանումները:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է *ակնածել* Նրանից և բացարձակ *երկյուղածություն* ունենալ Նրա հանդեպ:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է *սրբացնել* Նրան: Սրբացնելը նշանակում է խոր հարգանք տածել:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է արժևորել, հարգել, պատվել և պաշտել Նրան, նաև պատկառել Նրանից՝ ավելի, քան ցանկացած բանից կամ ցանկացած անձից:

Երբ երկյուղ ունենք Աստծուց, մենք ընդունում ենք այն, ինչ Նրա սրտում է: Մենք սիրում ենք այն, ինչ Նա է սիրում, և մենք ատում ենք այն, ինչ Նա է ատում (ուշադրություն դարձրեք, որ մենք ոչ թե ուղղակի չենք հավանում այն, ինչ Նա ատում է, այլ ատում ենք դա): Այն, ինչ կարևոր է Նրա համար, դառնում է կարևոր մեզ համար: Այն, ինչ այնքան էլ կարևոր չէ Նրա համար, դառնում է ոչ այնքան կարևոր մեզ համար:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է ատել մեղքը:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է ատել անարդարությունը:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է հեռանալ չարից՝ բոլոր

իմաստներով. մտքով, խոսքով և գործով: Այն նշանակում է զերծ մնալ ստախոսությունից: Աստծո երկյուղը չի խոսի և չի ձևացնի այն, ինչը չի համապատասխանում մարդու սրտին և մտքերին: Աստծո երկյուղի շնորհիվ մեր վարքը համապատասխանում է մեր մտքերին, շարժառիթներին և համոզմունքներին:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է քայլել ճշմարիտ ողորմությամբ Աստծո և մարդկանց առջև:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է տալ Նրան այն փառքը, պաշտամունքը, գոհությունը և երկրպագությունը, որոնց Նա արժանի է:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է տալ Նրան այն ամենը, ինչը պատկանում է Նրան:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է դողալ Նրա առջև՝ պատկառանքով և ակնածանքով: Այն նշանակում է ուղղել մեր ամբողջ ուշադրությունը Նրա Խոսքին և ներկայությանը:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է հնազանդվել Նրան: Դա ոչ միայն ցանկություն է, այլև՝ ներքին ուժ, որը վճռականորեն կատարում է Նրա կամքը՝ անկախ այն գնից, որը պետք է վճարել: Մենք հնազանդվում ենք ջանասիրաբար, հոժարաբար և անմիջապես, նույնիսկ եթե չենք տեսնում որևէ օգուտ, կամ՝ եթե դա անիմաստ է թվում, և մենք հնազանդվում ենք մինչև վերջ:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է զերծ մնալ ցանկացած տրտունջից, բողոքից և փնթփնթոցից:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է հարգել, պատվել և հպատակվել Նրա անմիջական իշխանությանը: Դա նաև նշանակում է հնազանդվել Նրա կողմից լիազորված իշխանությանը՝ միայն մեկ բացառությամբ, երբ այդ իշխանությունը կրողը պատվիրում է ձեզ մեղք գործել:

Տիրոջ երկյուղը ձևավորում է մեր դիտավորությունները, մտքերը, խոսքերը և գործերը:

Այժմ թվարկենք սուրբ երկյուղի առավելությունների մի մասը: Ահա մի քանիսն այն բազմաթիվ աստվածաշնչյան խոստումներից, որոնք տրվել են սուրբ երկյուղով վարվող մարդկանց:

Տիրոջ երկյուղն Աստծո հետ մտերմության սկզբնակետն է: Մենք դառնում ենք Նրա ընկերները, և Նրա գաղտնիքները հայտնի են դառնում մեզ:

Տիրոջ երկյուղն իմաստության, հասկացողության և գիտելիքի սկիզբն է: Այն տալիս է կանխատեսություն և պարզ աստվածային առաջնորդություն:

Տիրոջ երկյուղով է, որ հասունանում ենք մեր փրկության մեջ և կերպարանվում Քրիստոսի պատկերին:

Տիրոջ երկյուղը սուրբ է. այն առաջացնում է ճշմարիտ սրբություն մեր կյանքում: Տիրոջ երկյուղի մեջ բնակվելը նշանակում է ապահովել հավիտենական ժառանգություն:

Տիրոջ երկյուղը տալիս է վստահություն, խիզախություն և ապահովություն: Այն կլանում է մյուս բոլոր վախերը, ներառյալ՝ մարդու հանդեպ վախը: Տիրոջ երկյուղն ինքնություն է տալիս մեզ, արդյունավետ է դարձնում և զորացնում է՝ շատանալու կամ բազմապատկման համար:

Տիրոջ երկյուղը շնորհում է հրեշտակային աջակցություն, ցանկությունների իրագործում, տևական հաջողություն, վեհանձնություն, ազդեցություն, երկարակեցություն, արդյունավետ օրեր, կյանքի բերկրանք, երջանկություն, հաճույք՝ աշխատանքի մեջ, բժշկություն՝ մեր մարմնին, և ավելին:

Տիրոջ երկյուղը մնում է հավիտյան. այն երբեք չի վերջանա: Տիրոջ երկյուղը թանկ պարգև է մեր երկնային Հորից:

Անձնական կիրառում

Հատված. «Այսպիսով, քանի որ մենք ընդունում ենք այնպիսի Թագավորություն, որը չի կարող սասանվել, եկեք շնորհք ունենանք, որով կարող ենք ծառայել Աստծուն ընդունելի կերպով՝ ակնածանքով և աստվածավախությամբ: Որովհետև մեր Աստված սպառող կրակ է» (Եբրայեցիների 12.28,29, NKJV):

Եզրահանգում. Տիրոջ երկյուղը նշանակում է սիրել այն, ինչ սիրում է Աստված, և ատել այն, ինչ ատում է Աստված: Այն, ինչ կարևոր է Նրա համար, դառնում է կարևոր մեզ համար: Այն, ինչն այնքան էլ կարևոր չէ Նրա համար դառնում է ոչ այնքան կարևոր մեզ համար:

Մտորում. Ինչպե՞ս կարող եմ գործնականորեն արժևորել, հարգել, պատվել և պաշտել Նրան, նաև պատկառել Նրանից՝ ավելի, քան ցանկացած բանից կամ ցանկացած անձից:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրո՛ւմ եմ, սովորեցրո՛ւ ինձ, թե ինչպես երկյուղ ունենալ Քո անունից, Խոսքից, ներկայությունից և այն ամենից, ինչ առնչվում է Քեզ հետ: Թող որ ես սիրեմ սուրբ երկյուղը և բերկրանքով վերաբերվեմ դրան: Սո՛ւրբ Հոգի, այս գիրքն ընթերցելու ընթացքում սովորեցրո՛ւ ինձ Աստծո ճանապարհները և հաստատի՛ր դրանք իմ ներսում. թող որ այն, ինչ ես ընթերցում եմ, պարզապես տեղեկություն չլինի, այլ՝ թող այս խոսքերը վերափոխեն իմ կյանքը՝ իմ Տեր Հիսուս Քրիստոսի պատկերով: Ես խնդրում եմ այս ամենը Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Թող որ իմ խոսքերը և իմ սրտի մտածմունքները հաճելի լինեն Աստծուն:

Նրա բնավորությունն ամբողջությամբ պահանջում է մեր ակնածանքը, քանի որ այն առավելագույնս սուրբ է, և Նրա անունը մեզ համար երկյուղալի խոսք է, որը երբեք չպետք է ասվի անհարգալից կերպով, և երբեք չպետք է մեջբերվի՝ առանց լրջորեն մտածելու և մեր սիրտը Նրա առջև խոնարհեցնելու:

– Չ.Հ. ՍՓԵՐՋԵՆ

4| ԱՍՏԾՈ ՇՈՇԱՓԵԼԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշեցինք, Աստծո երկյուղն անտրամաբանական է թվում: Լսելով *«երկյուղ»* կամ *«վախ»* բառը՝ մեր միտքը կապակցում է այն անառողջ կամ, նույնիսկ, վնասակար երևույթի հետ: Այնուամենայնիվ, ես հավաստիացնում եմ, որ Աստծո երկյուղն իրականում վստահության, մխիթարության և պաշտպանության մեծագույն աղբյուրն է, որը հասանելի է տիեզերքում ցանկացած արարածի: Մենք կբացահայտենք այս ճշմարտությունը՝ գիրքն ընթերցելիս: Բայց մինչ այդ, սուրբ երկյուղը կարելի է բաժանել երկու մեծ կարգի.

1. *Աստծո ներկայությունից դողալը* և
2. *Նրա Խոսքից դողալը*

Մենք խոսելու ենք միաժամանակ երկուսի մասին, բայց սկսենք առաջինից: Սաղմոսերգուն հայտարարում է. «Աստծուց պետք է մեծապես երկյուղել սրբերի ժողովում, և Նրանից պետք է ակնածեն նրանք, ովքեր Նրա շուրջն են» (Սաղմոս 89.7, NKJV): Ուշադրություն դարձրեք. գրված չէ, որ Աստծուց պետք է պարզապես երկյուղել, այլ՝ *«մեծապես երկյուղել»:* Կա մի անփոփոխ ճշմարտություն. դուք երբեք չեք գտնի Աստծո հրաշալի ներկայությունն այնպիսի մթնոլորտում, որտեղ չկա երկյուղածություն և ակնածանք Նրա հանդեպ:

Այս ճշմարտությունն իրական դարձավ ինձ համար 1997 թվականին: Ինձ խնդրել էին քարոզել Բրազիլիայի մայրաքաղաքում անց-

կացվող մի համազգային համաժողովում: Ես ոգևորված էի, քանի որ առաջին անգամ էի լինելու այդ հրաշալի երկրում:

Ինքնաթիռը վայրէջք կատարեց մայրաքաղաք Բրազիլիայում վաղ առավոտյան, և ես ազատ էի ամբողջ օրվա ընթացքում, որպեսզի աղոթեի, պատրաստվեի և հանգստանայի իմ հյուրանոցային համարում: Երեկոյան, երբ մարզադահլիճ հասանք, ես չէի կարող չնկատել, որ փողոցների եզրերին բազմաթիվ մեքենաներ էին կայանված: Ինչպես և սպասվում էր, ավտոկայանատեղիում չկային ազատ տեղեր. նշանակում է՝ այդ համաժողովը բազմաթիվ այցելուներ էր ունենալու:

Ինձ ուղեկցեցին մարզադահլիճ, և մի քանի առաջնորդների հանդիպելուց հետո անմիջապես բեմահարթակ բարձրացա: Ես խանդավառված էի և ակնկալում էի երկրպագել Աստծուն հոգևոր քաղց ունեցող հազարավոր հավատացյալների հետ: Այնուամենայնիվ, իմ խանդավառությունը երկար չտևեց, քանի որ շուտովնկատեցի, որ մթնոլորտը զուրկ էր Աստծո ներկայությունից: Ես շփոթվեցի. դա հավատացյալների համաժողով էր, որի երկրպագության թիմը լավագույններից էր այդ երկրում. այդ դեպքում, ի՞նչն էր պատճառը, որ Աստծո ներկայությունը չկար:

Մինչև շարունակելը, թույլ տվեք մի քանի պարզաբանում անել Աստծո ներկայության վերաբերյալ: Աստվածաշունչը խոսում է Աստծո ներկայության երկու տեսակի մասին: Առաջինը Նրա ամենագոյությունն է: Դավիթը վկայում է. «Ես երբեք չեմ կարող փախչել Քո ներկայությունից: Եթե երկինք գնամ, Դու այնտեղ ես. եթե իջնեմ գերեզմանը, դու այնտեղ ես... Նույնիսկ խավարի մեջ ես չեմ կարող թաքնվել Քեզնից» (Սաղմոս 139.7,8,12, NLT): Աստծո այս ներկայության մասին է հետևյալ խոստումը. «Ես երբեք չեմ թողնի քեզ և չեմ լքի» (Եբրայեցիների 13.5, NKJV):

Երկրորդը կարելի է տեսնել Հիսուսի հետևյալ խոսքերում. «Ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհաննես 14.21): *«Հայտնել»* բառը հունարենում *«էմֆանի՛զո»* բառն է, որը նշանակում է «բացահայտ դարձնել... սեփական անձը մտերմորեն ճանաչելի և հասկանալի դարձնել»: Սա տեղի է ունենում, երբ Աստված հայտնում է Իրեն մեր մտքին և զգայարաններին: Հիսուսը պնդում է. «Որտեղ երկու կամ երեք հոգի Իմ անունով ժողովված լինեն, Ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» (Մատթեոս 18.20): Անկասկած, Նա նկատի չունի Աստծո ամենագոյությունը, քանի որ այդ դեպքում այս պնդման կարիքը չէր լինի: Փոխարենը, Նա նկատի ունի Աստծո հայտնված ներկայությունը: Այս ներկայությունը բացակայում էր մարզադահլիճում այդ երեկո: Հստակ գիտակցելով դա՝ ես փակեցի աչքերս և հարցրի Սուրբ Հոգուն. *«Որտե՞ղ է Քո ներկայությունը»:*

Ես բացեցի աչքերս և մի քանի ակնթարթ անց տեսա այն, ինչը չէի նկատում, և ինչն այժմ ակնհայտ դարձավ: Ներկաների մեծ մա-

սը չէր մասնակցում երկրպագությանը: Ոմանք, ձեռքերը գրպաններում դրած կամ ծալած, անփութորեն իրենց շուրջն էին նայում կամ, թվում էր, ձանձրացած էին: Կանայք ինչ-որ բան էին փնտրում իրենց պայուսակներում: Շատերը շրջում էին դահլիճով կամ գնում էին դեպի թեթև ուտեստների գործող տաղավարները: Բազմաթիվներկաներ զրուցում և ծիծաղում էին: Իրենց վարքովնրանք ոչնչով չէին տարբերվում որևէ միջոցառմանը ներկա եղող մարդկանցից: Ես մտածեցի. «*Շուտով սա կդադարի, և մարդիկ կմիանան երկրպագությանը»,* սակայն դա տեղի չունեցավ:

Ի զարման ինձ, հենց որ երկրպագության երգերը դադարեցին, և այդ շարժման առաջնորդներից մեկը մոտեցավ ամբիոնին՝ Աստվածաշունչ ընթերցելու համար, ոչինչ չփոխվեց՝ բացի նրանից, որ այժմ, երբ երաժշտությունը դադարեց, ես լսում էի զրուցող մարդկանց ձայների շշուկները: Բարկությունս ավելանում էր, քանի որ չէի կարողանում հավատալ, որ տեսնում էի դա:

Ես լսեցի, որ Աստծո Հոգին շշնջաց սրտիս. *«Ուզում եմ, որ անմիջապես ընդդիմանաս այս վիճակին»:*

Հենց որ ինձ ներկայացրին, թարգմանչի հետ մոտեցա ամբիոնին: Ես որոշեցի ոչինչ չասել, այլ միայն նայել մարդկանց: Ես եզրակացրի, որ միակ հնարավոր տարբերակը՝ բոլորի ուշադրությունը գրավելու համար, բեմի վրա ցանկացած գործողություն դադարեցնելն էր: Ինձ հաջողվեց դա, քանի որ ուղիղ մեկ րոպեանոց լռությունը գրավեց բոլորի ուշադրությունը: Մարդկանց տեղաշարժը դադարեց, հայացքներն ուղղվեցին բեմին, և մթնոլորտում լռություն տիրեց: Այդ պահին ես գիտեի, որ բոլորը մարզադահլիճում ինձ էին նայում:

Ես չսկսեցի իմ ուղերձն այսպես. «Հրաշալի՜ է Բրազիլիայում լինել», կամ՝ «Շնորհակալություն ինձ հրավիրելու համար»: Ես նույնպես չներկայացա: Փոխարենը՝ խստորեն հարցրի.

- Ձեզ դուր կգա՞ր, եթե սեղանի շուրջ ինչ-որ մեկի հետ խոսելու ընթացքում ձեր դիմացինն անտեսեր ձեզ, հառեր հայացքն առաստաղին, ասես նա բոլորովին հետաքրքրված չէ, կամ զրուցեր իր կողքին նստած մարդու հետ:

Մի պահ լռելուց հետո ես պատասխանեցի իմ հարցին.

- Իհա՛րկե, դա ձեզ դուր չէր գա:

Եվ շարունակեցի.

- Իսկ եթե ամեն անգամ, երբ թակեիք ձեր հարևանի տան դուռը, ձեզ ողջունեին անտարբեր հայացքով և ասեին. «Նորից դո՞ւ ես...», դուք կշարունակեի՞ք այցելել նրանց:

Կրկին, մի պահ դադարից հետո, ես պատասխանեցի.

- Ո՛չ մի դեպքում:

Այնուհետև ասացի.

- Կարծում եք՝ տիեզերքի Թագավորը կհայտնի՞ Իր ներկայությունը կամ կխոսի՞ այնպիսի վայրում, որտեղ Նա պատիվ և ակնածանք չի ստանում:

Այս անգամ ես լրջորեն պատասխանեցի իմ հարցին.

- Երբե՛ք:

Ես շարունակեցի.

- Եթե ձեր երկրի նախագահը կանգներ այս բեմին, նա կարժանանար ձեր ամբողջ ուշադրությանը և հարգանքին: Կամ՝ եթե ձեր սիրելի ֆուտբոլիստներից մեկն այստեղ կանգնած լիներ, շատերը ոգևորությամբ գրեթե վեր կցատկեին նստարաններից՝ սպասելովնրա յուրաքանչյուր խոսքին: Սակայն մեկ րոպե առաջ, երբ ընթերցվում էր Աստծո Խոսքը, դուք բոլորովին ուշադրություն չդարձրիք դրան. դա դատարկ աղմուկ էր ձեզ համար:

Հաջորդ իննսուն րոպեների ընթացքում ես խոսեցի ներկաների հետ Տիրոջ երկյուղից: Այնպիսի լռություն էր, որ կարելի էր լսել նույնիսկ ընկնող ասեղի ձայնը: Թվում էր՝ նման ընդդիմությունը մի փոքր շփոթեցրել էր նրանց, սակայն նրանք ուշադրությամբ լսում էին:

Ավարտելուն պես ես կոչ արեցի.

- Եթե դուք հավատացյալ եք, բայց չունեք սուրբ երկյուղը և ուզում եք ապաշխարել, կանգնե՛ք:

Ներկաների 75 տոկոսն անվարան կանգնեց: Մի քանի րոպե անց՝ մինչև նրանց հետ աղոթելը, Աստծո հայտնված ներկայությունը լցրեց այդ մարզադահլիճը: Մարդիկ արտասվում էին և լաց լինում, մինչ Աստծո հրաշալի ներկայությունը հպվում էր նրանց: Սուրբ երկյուղը չսարսափեցրեց նրանց՝ դրդելով հեռանալ Աստծուց, այլ՝ մոտեցրեց նրանց Աստծուն:

Այն, ինչ կատարվեց դրանից հետո, ամենազարմանալի փորձառությունն էր, որ երբևէ ունեցել եմ իմ ծառայության քառասուն տարում: Բայց մինչև այս պատմությունը շարունակելը, ավարտենք այս գլուխը հետևյալ խոսքերով.

> «Եվ լսեցի Նրա խոսքերի ձայնը, և երբ որ Նրա խոսքերի ձայնը լսեցի, ես թմրած եղա, ընկա երեսիս վրա, և երեսս գետնին էր: Եվ ահա մի ձեռք դիպավ ինձ և կանգնեցրեց ծնկներիս և ձեռքերիս թաթերի վրա և ասաց. «Ո՛վ Դանիել, ցանկալի՛ մարդ, հասկացի՛ր այն խոսքերը, որ ես ասում եմ քեզ, և կանգնի՛ր կանգնած տեղդ, որովհետև հիմա քեզ մոտ ուղարկվեցի»: Եվնա այս խոսքը ինձ հետ խոսելիս՝ ես կանգնեցի՝ դողալով» (Դանիել 10.9,10):

Դանիելն անչափ թանկ էր Աստծո համար, սակայն նա չդիմացավ և ընկավ: Թեև նա օգնություն ստացավ ծնկների վրա կանգնելու համար, նա դողում էր ամբողջ ընթացքում: Եթե սա տեղի է ունենում միայն ավետաբերի՝ հրեշտակի ներկայության մեջ, ի՞նչ տեղի կունենա, եթե Ինքը՝ Աստված, գա:

Անձնական կիրառում

Հատված. «Աստծուց պետք է մեծապես երկյուղել սրբերի ժողովում, և Նրանից պետք է ակնածեն նրանք, ովքեր Նրա շուրջն են» (Սաղմոս 89.7, NKJV):

Եզրահանգում. Մենք կգտնենք Աստծո հայտնված ներկայությունը միայն այնպիսի մթնոլորտում, որտեղ Նա մեծագույն հարգանքն է ստանում:

Մտորում. Ի՞նչ է նշանակում դողալ Աստծո ներկայությունից: Ինչպե՞ս գործնականորեն անել դա, երբ մենակ ես, երբ ընկերներիդ հետ ես, երբ հանրային վայրերում ես, և երբ եկեղեցական հավաքույթների ես:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ ներես ինձ այն դեպքերի համար, երբ մուտք եմ գործել երկրպագության մեջ անփույթ, աներկյուղ վերաբերմունքով: Ես ապաշխարում եմ, որ Քո ներկայությանը սովորականի պես եմ վերաբերվել, այն հասարակ եմ համարել: Թող Հիսուսի արյունը մաքրի ինձ: Ես խոնարհվում եմ Քո առջև և խնդրում եմ Քո շնորհքը՝ փոխվելու համար: Ես ուզում եմ գիտակցել Քո ներկայությունը և հարգանքով վերաբերվել՝ անկախ այն բանից, թե որտեղ եմ և ինչ եմ անում: Ես ուզում եմ ապրել՝ ունենալով ակնածալի երկյուղ Քեզնից ամեն ժամանակ: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես մշտապես տալիս եմ իմ ամբողջ ուշադրությունն Աստծո Խոսքին և պատվում եմ Նրա ներկայությունը իմ բոլոր խոսքերում և գործերում:

Մինչև աղոթելը ջանք արեք,
որ հասկանաք, թե Ում
ներկայությանն եք մոտենում և
Ում հետ եք խոսելու, և
մտապահեք, թե
Ում եք դիմում:

– ՍՈՒՐԲ ԹԵՐԵԶԱ ԱՎԻԼԱՑԻ

5| ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԵՐԵԿՈ

Մարկոսի Ավետարանը վկայում է, որ Տերը գործակցում էր Իր աշակերտներին «և խոսքը հաստատում էր այն նշաններով, որ հետևում էին» (Մարկոս 16.20): Այդ համագործակցությունը սկսվեց, հենց որ Հիսուսը երկինք համբարձվեց, և ոչ մի տեղ Նոր կտակարանում գրված չէ, որ այն դադարելու է մինչև Նրա վերադարձը:

Այնպես որ, վերադառնանք այդ երեկոյին Բրազիլիայում: Երբ կոչ արեցի ապաշխարել աներկյուղ վերաբերմունքից, ներկաների 75 տոկոսը կանգնեց: Ես խոնարհեցրի գլուխս և բարձրաձայն աղոթեցի.

- Տեր Աստված, հաստատիր Քո Խոսքը, որը հռչակվեց այս երեկո:

Մի քանի վայրկյան անց ես լացի ձայն լսեցի: Հաջորդ մի քանի րոպեի ընթացքում Աստծո ներկայության մի ալիք պատեց մթնոլորտը՝ թարմություն բերելով և մաքրելովներկաների սրտերը: Նույնիսկ այն բանից հետո, երբ ալիքն անցավ, դահլիճում հրաշալի խաղաղություն էր տիրում:

Մարդիկ շուրթերովներողություն չխնդրեցին և չաղոթեցին, սակայն Աստծո ներկայությունը հայտնվեց՝ նրանց փոխված սրտերի շնորհիվ: Հետագայում, մտածելով այս մասին, ես հասկացա, որ անառակ որդու հայրը չէր սպասում, որ իր որդին ներում խնդրեր, մինչև նրա մոտ վազելը: Ո՛չ, միայն որդու փոխված սիրտը, միաժամանակ և տուն վերադառնալու քայլը, դրդեց հորը ոգևորությամբ գրկել և համբուրել նրան: Թվում էր՝ նույնը կատարվում էր այդ մարզադահլիճում:

Մենք հատուկ պահ էինք վերապրում: Ներկաները երկյուղած՝

լության մեջ էին. նրանց սրտերը փափկել էին: Այդ պահին ինձ պատշաճ թվաց ապաշխարության աղոթքի առաջնորդել նրանց, և անհրաժեշտ չէր մեծ զանազանություն ունենալ՝ հասկանալու համար, որ նրանց խոսքերն անկեղծ և սրտանց էին: Աղոթքից մի քանի վայրկյան անց Աստծո հայտնված ներկայության ևս մեկ ալիք հորդեց այդ մարզադահլիճ: Եվս մեկ անգամ լսեցի արտասվելու և լացի ձայներ, բայց այս անգամ դրանք ավելի արտահայտիչ էին: Դա ճշմարտապես գեղեցիկ էր, բայց այդ ալիքը նույնպես անցավ մի քանի րոպեից:

Ես շնորհակալ էի այն թարմության համար, որը բոլորս զգացինք Աստծո խաղաղարար և հրաշալի ներկայության այդ երկու դրսևորումներից: Բոլորս սպասման մեջ էինք, քանի որ ամբողջ մթնոլորտը հագեցած էր աստվածային անդորրով: Այդ լռության մեջ ես լսեցի Աստծո Հոգուն, որ շշնջաց իմ սրտում. *«Ես հայտնելու եմ Ինձ ևս մեկ անգամ»:*

Ես բարձրաձայն կրկնեցի իմ լսածը. այնուամենայնիվ, մեզնից ոչ ոք չէր գիտակցում, թե ինչ էր կատարվելու դրանից հետո. մենք հանդիպելու էինք այլ տեսակի ներկայության: Դժվար է պատմել, թե ինչ տեղի ունեցավ, քանի որ բառերը չեն կարող ճշտորեն նկարագրել դա: Այն, ինչ ես գրելու եմ, անհավանական և, նույնիսկ, անիրական կթվա, բայց այդ դեպքից ավելի քան քսան տարի անց, բազմաթիվ մարդիկ հաստատել են այն, ինչ տեղի ունեցավ այդ ժամանակ:

Պատկերացրեք, որ կանգնած եք անտառում, երբ հանկարծ ուժգին փոթորիկ է սկսվում: Դուք լսում եք քամու բարձր սուլոցը ծառերի վերևում: Դա նման է այն քամու ձայնին, որը լցրել էր այդ մարզադահլիճը: Մենք չզգացինք դա, այլ՝ լսեցինք: Գրեթե անմիջապես ներկաները պոռթկացին եռանդուն աղոթքներով և աղաղակներով: Նրանք բարձրացրին իրենց ձայները, սակայն այդ քամու ձայնն ավելի բարձր էր նրանց ձայներից: Ես ապշել էի, երկյուղած էի և գրեթե սարսափած էի Նրա ներկայությունից: Ես չէի կարողանում շարժվել, չէի կարողանում խոսել, և ամբողջ մարմնովս սարսուռ էր անցնում: Մթնոլորտում այնպիսի իշխանություն կար, որ ես երբևէ չէի հանդիպել: Ես մտածեցի. «Սա Աբբա Հոր ներկայությունը չէ, այլ՝ մեր սուրբ, ահավոր և հզոր Թագավորի»[1]:

Այդ քամու մռնչյունը տևեց գրեթե իննսուն վայրկյան: Աստիճանաբար թուլանալով՝ այն իր ետևում թողեց լաց եղող մարդկանց: Մի քանիսն անշարժ պառկած էին, մի քանիսն ընկել էին իրենց առջևի նստարանի թիկնակին, բայց բոլորս երկյուղած էինք և դողում էինք: Այդ հանդիսավոր հետևանքները շարունակվեցին ևս գրեթե տասը րոպե: Ես ոչինչ չէի կարողանում ասել. բոլորս հանդարտ և լուռ էինք: Դրանից հետո ես փոխանցեցի ծառայությունը համաժողովի ղեկավարին, և ինձ աննկատ ուղեկցեցին դեպի այն մեքենան, որով եկել էի:

Մի քանի վայրկյան անց այդ երեկոյի փառաբանության առաջնորդը և նրա ամուսինը նստեցին այդ մեքենան: Եվ կինն անմիջապես բացականչեց.

- Դուք լսեցի՞ք այդ քամու ձայնը:

Ես չէի ուզում ինքս անմիջապես ընդունել դա: Ես ուզում էի, որ ինչ-որ մեկը՝ բացի ինձնից, հաստատեր, որ դա իրականում տեղի էր ունեցել: Այնպես որ, ես պատասխանեցի.

- Գուցե դա մարզադահլիճի վրայով ցածր թռչող ինքնաթիռ էր:

Այդ մարզադահլիճի պատերի և առաստաղի միջև բացվածք կար՝ օդափոխություն ապահովելու համար. այնպես որ, դրսից եկող ձայները հեշտորեն էին լսվում, քան ամբողջովին փակ շինություններում: Այդ կինը, որը նստած էր առջևի նստարանին, շրջվեց՝ զարմացած հայացքով, և հուզված առարկեց.

- Ո՛չ, դա Աստծո Հոգին էր:

Նրա ամուսինը, որն ավելի հանդարտ բնավորությամբ մարդ էր, միջամտեց.

- Պարո՛ն, դա ինքնաթիռ չէր:

- Որտեղի՞ց գիտեք,- հարցրի ես:

Նա պատասխանեց.

- Մարզադահլիճի դրսում անվտանգության աշխատակիցներ և ոստիկաններ կային, և նրանցից շատերը հավատացյալներ չեն: Երբ նրանք լսեցին քամու ձայնը, շտապ ներս եկան և հարցրին մեր թիմին շենքի ներսից եկող ուժգին քամու ձայնի մասին: Ավելին, ես գլխավոր ձայնային վահանակի մոտ էի (նա այդտեղ էր, որպեսզի կարգավորեր ձայնը իր կնոջ ելույթի համար): Մեր ձայնային համակարգը նույնիսկ աննշան ցույց չտվեց այդ ձայնը. դեցիբելային չափիչները ոչինչ չէին գրանցում այդ քամու փչելու ամբողջ ընթացքում:

Նրա կինը շարունակեց՝ աչքերից առատորեն հոսող արցունքներով.

- Ես շենքի վրա իջնող կրակի ալիքներ էի տեսնում և զգում էի, որ ամենուր հրեշտակներ էին:

Ես խնդրեցի, որ ինձ տանեն ուղիղ իմ հյուրանոցային համարը: Մենք լուռ էինք այդ ուղևորության ընթացքում: Ավելի ուշ, այդ երեկո, ես նստեցի իմ հյուրանոցային համարի պատշգամբում ժամեր շարունակ. միակ բանը, որը կարող էի անել, Աստծուն երկրպագելն էր: Ես լիովին համակված էի այդ երեկո տեղի ունեցածով:

Հաջորդ առավոտյան, երբ մարզադահլիճ եկանք, մթնոլորտը լիովին այլ էր: Աստծո հայտնված ներկայությունը, որն ազդել էր մեզ վրա նախորդ հավաքույթին, դեռևս զգացվում էր: Աստծո երկ-

յուղը վերականգնվել էր մարդկանց սրտերում, և նրանք հրաշալի կերպով վերապրում էին Նրա ներկայությունը և օրհնությունները:

Ինչպես արդեն նշեցի, մինչև օրս մի քանիսը հաստատել են այն, ինչ տեղի ունեցավ այդ երեկո, և պատմել են, թե ինչպես դա ազդեց իրենց կյանքերի վրա՝ փոստով, էլեկտրոնային նամակներով և անձամբ: 2016 թվականին ես ուղևորվեցի Գոյանիա, Բրազիլիա՝ քարոզելու տասներկու հազար առաջնորդների: Ինձ դիմավորող հովվի առաջին խոսքերը, որոնք նա ուղղեց ինձ՝ սեղմելով ձեռքս, հետևյալն էին.

- Ես ներկա էի այդ հավաքույթին Բրազիլիայում քսան տարի առաջ, երբ քամին փչեց: Այդ պահից ի վեր իմ կյանքը նույնը չի եղել:

Այդ ծառայողը մի շարք եկեղեցիներ է առաջնորդում, որոնց անդամների թիվը ավելի քան 300.000 է՝ ընդամենը տասնվեց տարում:

Երբ կինս Բրազիլիայում էր 2019 թվականին՝ մի համաժողովում ծառայելու համար, մի կին, որն այլ եկեղեցական շարժման առաջնորդներից էր, պատմեց նրան, որ ներկա էր այդ ծառայությանը, երբ քամին փչեց. դա ավելի քան քսան տարի առաջ էր: Այդ կինը նույնպես վկայում էր, որ իր կյանքը մեկընդմիշտ փոխվել էր:

Աստծո ներկայության մեջ լինելն էապես կարևոր է յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր առողջության համար: Կար ժամանակ, երբ ինձ համար շատ դժվար էր մուտք գործել Աստծո ներկայության մեջ աղոթքի ընթացքում: Բայց մի անգամ ես արեցի հետևյալը՝ գրեթե հանպատրաստից: Ես որոշեցի չսկսել իմ աղոթքը երգով կամ որևէ բան ասելով. ես պարզապես սկսեցի մտածել, թե որքան զարմանալի և սուրբ է Աստված: Գրեթե անմիջապես զգացի Նրա ներկայությունը: Ես որոշեցի անել նույնը հաջորդ օրը, և արդյունքը նույնն էր: Երրորդ օրը դա կրկին տեղի ունեցավ:

Տարակուսած՝ ես հարցրի. «Տե՛ր, ինչո՞ւ եմ այսքան հեշտ մուտք գործում Քո ներկայության մեջ վերջին երեք օրում»:

Ես լսեցի Աստծո Հոգուց. *«Ինչպե՞ս Հիսուսը սովորեցրեց Իր աշակերտներին աղոթել»:*

Ես սկսեցի մեջբերել Տերունական աղոթքը. «Մեր Հա՛յր, որ երկնքում ես, *սո՛ւրբ լինի* Քո անունը...»: Ես բացականչեցի. «Ճի՛շտ է: Հիսուսը սովորեցնում էր Իր աշակերտներին գալ Աստծո ներկայության մեջ սուրբ երկյուղով և ակնածանքո՛վ»: Այդ պահին ես հստակ հասկացա այդ խոսքը:

Դավիթը հաստատում է այս ճշմարտությունը՝ գրելով. «Դեպի Քո սուրբ տաճարը երկրպագություն կանեմ՝ *Քո երկյուղով»* (Սաղմոս 5.7): Աստված մեր Հայրն է, Հիսուսը մեր Տերը և Փրկիչն է, և Աստծո Հոգին խորապես սիրում է մեզ: Բայց նաև հիշեք, որ Նոր կտակարանում Աստծուն կոչում են «սպառող կրակ»: Երբ Հիսուսը հայտնվեց Հով-

հաննեսին, որը Նրա սիրելի աշակերտն էր և ամենից մոտն էր Նրան, նա ընկավ իր երեսի վրա՝ մահացածի պես (տե՛ս Հայտն. 1.17), և Աստծո Հոգին Նա է, որ հայտնում է Աստծո զորությունը՝ ամբողջ քաղաքի ուշադրությունը գրավելու համար (տե՛ս Գործք 2-րդ գլուխ), շենքեր է ցնցում (տե՛ս Գործք 4-րդ գլուխ) և շատ այլ զարմանալի գործեր անում:

Հիմնական ճշմարտությունը հետևյալն է. «Տիրոջ ներկայությունը հայտնվում է այնտեղ, որտեղ Նրան երկյուղածությամբ են վերաբերվում»:

Անձնական կիրառում

Հատված. «Եվ ես... վախով և շատ դողով եղա ձեզ մոտ: Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ՝ Հոգու և զորության ապացուցմամբ, որ ձեր հավատքը մարդկանց իմաստությամբ չլինի, այլ՝ Աստծո զորությամբ» (Ա Կորնթացիների 2.3-5):

Եզրահանգում. Տիրոջ երկյուղը փոխում է մթնոլորտը: Այն ձևավորում է այնպիսի միջավայր, որտեղ Սուրբ Հոգու զորությունը կարող է փոխել մեր և այլ մարդկանց կյանքերը:

Մտորում. Արդյո՞ք ես սպասել և հավատացել եմ Աստծո ներկայության և զորության դրսևորմանը: Ինչպե՞ս կփոխվի իմ աղոթքի կյանքը, եթե ես մոտենամ Նրան սուրբ երկյուղով: Ինչպե՞ս կարող եմ կատարել այս անցումը:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, եթե ես սահմանափակել եմ Քո ներկայության դրսևորումը՝ անցյալի փորձառությունների պատճառով, կամ լսելով այլ մարդկանց կարծիքները, որոնք սահմանափակում են Քո կարողությունը, խնդրում եմ, ների՛ր ինձ: Ես մուտք կգործեմ Քո ներկայության մեջ՝ սուրբ երկյուղով, և որևէ կերպով չեմ սահմանափակի Քեզ: Խնդրո՛ւմ եմ, գերազանցի՛ր այն, ինչ ես կարող եմ խնդրել, մտածել կամ հուսալ՝ հայտնելով Քո զորությունը: Արա՛ սա՝ փառավորելու համար իմ Տեր Հիսուսին, և որպեսզի ես ծառայեմ իմ ազդեցության շրջանակում գտնվող մարդկանց: Ես խնդրում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ամեն ինչ հնարավոր է, եթե միայն հավատամ և մոտենամ Աստծուն սուրբ երկյուղով:

Երբ մենք տեսնենք Նրան երես առ երես՝ Իր զարմանալի սրբությամբ և բոցավառ փառքով, անհավանական կթվա, որ մենք, թեկուզ մեկ անգամ, հասարակ կերպով ենք մտածել Նրա մասին:

– ՋՈՅ ԴՈՈՒՍՈՆ

6| ՆՐԱՆ ՏԵՍՆԵԼԸ

Սուրբ երկյուղը մեզանում ավելանում է Աստծո մեծությունը ճանաչելուն զուգահեռ: Այնուամենայնիվ, իրականում, «Նրա մեծությանը չափ չկա» (Սաղմոս 145.3), քանի որ Նրա փառքը վեր է մեր հասկացողությունից: Նրա փառքն անքննելի է. այն չունի որևէ սահման կամ սահմանափակում, և այն անզուգական է: Նույնիսկ այդ դեպքում պետք է ձգտենք ավելացնել մեր ճանաչողությունը:

Հուդայի Ոզիա թագավորի մահվան տարում՝ մոտավորապես մ.թ.ա. 742 թվականին, Եսայի մարգարեն երկինք տարվեց: Նա տեսավ Տիրոջը՝ նստած Գահին, բարձր և վեհ դիրքում, Նրա ամբողջ փառքով: Նրա զարմանալի փառքը լցրել էր մի ահռելի սրահ, որը, ամենայն հավանականությամբ, կարող է տեղավորել ավելի քան մեկ միլիարդ էակների:

Եսայի մարգարեն ոչ միայն ապշեց և ցնցվեց՝ տեսնելով Արարչին, այլև մեծապես տպավորվեց սերովբեներ կոչվող զորավոր հրեշտակներով, որոնք սավառնում էին Աստծո գահի վերևում: Այդ երկյուղ ներշնչող էակների շուրթերից նա լսեց հետևյալը.

> «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորաց Տերը. ամբողջ երկիրը լիքն է Նրա փառքով» (Եսայի 6.3):

Մեզնից շատերը ծանոթ են «Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես» օրհներգին, որում այս նույն բառերն են: Այն գրել է Ջոն Բաքուս Դայքսը 1800-ական թվականներին: Այն եղել է ամենատարածված եկեղեցական օրհներգը գրեթե երկու հարյուր տարի շարունակ և համարվել երկրպագության մեղմ երգեցողություն: Այնուամենայնիվ, այն, ինչին ականատես եղավ Եսային, բոլորովին նման չէր մեղմ երգեցողության:

Այդ վիթխարի էակները հաճելի երգ չէին երգում՝ Աստծուն գո-

հացնելու համար. փոխարենը, նրանք արձագանքում էին իրենց տեսածին: Նրանց շարունակ հայտնվում էին Նրա անքննելի մեծության նորանոր կողմեր, և նրանք միայն կարող էին աղաղակել. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ...»:

Սերովբեները երեք անգամ չէին կրկնում «սուրբ» բառը: Երբ որևէ հրեա հեղինակ, օրինակ՝ Եսային, ցանկանում էր շեշտադրել որևէ բառ, նա գրում էր դա երկու անգամ: Մենք տեսնում ենք դա Հիսուսի խոսքերում. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը...» (Մատթեոս 7.21): Եթե դուք լինեիք Մատթեոսի փոխարեն, որը նստած լսում էր Հիսուսին, կնկատեիք, որ «Տեր» բառն արտասանելիս Հիսուսի ձայնը զգալիորեն բարձրանում էր: Նրա շեշտադրումը փոխանցելու համար Մատթեոսը գրի առավ այդ բառը երկու անգամ: Մեր օրերում մենք օգտագործում ենք թավատառով և շեղագրով բառեր, որպեսզի փոխանցենք շեշտադրումը:

Հրեա հեղինակները շատ հազվադեպ էին ներկայացնում որևէ բառ՝ շեշտման երրորդ աստիճանով: Իրականում, Աստվածաշնչում դա տեղի է ունենում միայն մի քանի անգամ: Դա համարվում էր որևէ բառ կամ պնդում շեշտադրելու բարձրագույն աստիճանը: Ըստ էության, այդ հրեշտակների ձայներն այնպես էին որոտում, որ դրանից ցնցվում էին այդ ահռելի սրահի դռների սյուները:

Երբ մեր ընտանիքը Ֆլորիդա տեղափոխվեց, մենք պարզեցինք, որ տներն այնտեղ նկուղներ չունեն՝ ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառով: Մեր տունը կառուցող շինարարը տեղեկացրեց. «Եթե այս տարածքում փոթորիկ սկսվի, կանգնե՛ք ձեր տան ներսի սենյակներից մեկի դռնախցիկի մեջ, քանի որ դա շենքի ամենակայուն մասն է»: Ապշեցուցիչ է, որ Եսային նշում է հենց դռների սյուների դողալը այդ ահռելի սրահում: Եթե այդպես է, հավանական է, որ այդ կառույցն ամբողջությամբ ցնցվում էր զորավոր հրեշտակների գոչյուններից:

Ո՞րն էր Եսայու արձագանքը՝ Տիրոջ փառքը տեսնելիս: Նա չասաց. «Զարմանալի՛ է. ահա՛ թե ինչպիսին է Աստված»:

Ո՛չ, նա աղաղակեց. «Վա՛յ ինձ, որովհետև կորած եմ. որովհետև ես պիղծ շրթունքով մարդ եմ» (Եսայի 6.5): Մտածե՛ք սրա վերաբերյալ. նա աստվածապաշտ մարդ էր՝ մարգարե, որը բացականչում էր իր գրքի նախորդ գլխում. «Վա՛յ նրանց, որ չարը բարի են անվանում, իսկ բարին՝ չար. վա՛յ հպարտներին, վա՛յ հարբեցողներին» (Եսայի 5.20-22, հեղինակի շրջասությունը): Սակայն մեկ գլուխ անց, մի ակնթարթ տեսնելով Աստծո մեծությունը, նա այլևս չէր աղաղակում. «Վա՛յ մեղավորներին», այլ՝ «Վա՛յ ինձ, որովհետև կորած եմ» (Եսայի 6.5): Նա կարծում էր, թե ճանաչում էր Աստծուն, բայց այժմ ավելի լավ հասկացավ, թե ով է Ամենակարող Աստված: Կանգնելով սուրբ Աստծո առջև՝

նա նույնպես ավելի լավ հասկացավ, թե ով էր ինքը: Սուրբ երկյուղի մակարդակը նրա կյանքում մեծապես աճեց:

Մենք տեսնում ենք նմանատիպ արձագանքներ ամբողջ Աստվածաշնչում այն մարդկանցից, որոնք տեսան Տիրոջը՝ Նրա փառքով: Դիտարկենք Հոբին: Ամենակարողն ասաց նրա մասին. «Ուշադրությունդ դարձրի՞ր Իմ ծառա Հոբի վրա, որ նրա նմանը չկա երկրի վրա» (Հոբ 1.8): Պատկերացնո՞ւմ եք, որ Աստված նման բան ասի ձեր կամ իմ մասին: Մենք ուրախությունից վերուվար կցատկեինք: Սակայն այդ մարդը հանդիպեց Աստծո փառքին և աղաղակեց. «Ես լսել էի Քո մասին ականջի լսելով, բայց այժմ իմ աչքերը տեսնում են Քեզ: Այդ պատճառով, ես խորշում եմ ինձնից» (Հոբ 42.5,6, NKJV):

> Հաջորդը Եզեկիելն է: Նա տեսավ Տիրոջը և գրեց. «Ահա թե ինչպիսին էր Տիրոջ փառքն ինձ համար: Երբ ես տեսա այն, երեսնիվայր գետնին ընկա» (Եզեկիել 1.28, NLT):
>
> Իսկ ի՞նչ արեց Աբրահամը: Գրված է, որ երբ նա տեսավ Աստծուն, «... իր երեսի վրա ընկավ» (Ծննդոց 17.3):
>
> Երբ Աստված փառավոր կերպով հայտնեց Իրեն Սինա սարի վրա, «այնպես ահավոր էր տեսիլքը, որ Մովսեսն ասում էր, թե՝ զարհուրում եմ և դողում» (Եբրայեցիների 12.21):
>
> Հովհաննես առաքյալը՝ ում Հիսուսը սիրում էր, գրում է մեր փառավորված Հիսուսի հետ իր հանդիպման մասին. «Եվ երբ որ տեսա Նրան, մեռածի պես ընկա Նրա ոտքերի առջև» (Հայտնություն 1.17):

Այս ցուցակը սպառիչ չէ: Աստվածաշնչում գրված է այլ նմանատիպ իրադարձությունների մասին:

Արդեն եկեղեցու պատմության ընթացքում՝ մոտավորապես 1266-1273 թվականներին, Թովմա Ակվինացին գրում էր «Աստվածաբանության համագումարը», որը համարում էր իր ամենակարևոր աշխատությունը: Բայց մի օր նա այնպիսի ազդեցիկ կերպով հանդիպեց Աստծուն, որ նրա պատկերացումն ամեն ինչի մասին հավիտյան փոխվեց, և նա բոլորովին դադարեց գրելուց: Նրա ընկեր Ռեգինալդը հորդորում էր նրան շարունակել, բայց Ակվինացին պատասխանեց. «Եկել է իմ գործերի վերջը: Այն ամենը, ինչ ես գրել եմ, ծղոտի պես է ինձ համար՝ այն բանից հետո, ինչ հայտնվեց ինձ»[1]:

Իսրայելի պատմության մեջ եղավ մի պահ, երբ Աստված ձգտում էր ավելացնել սուրբ երկյուղն Իր ժողովրդի կյանքում՝ մի շարք հար-

ցեր տալով: Եսային, որը տեսել էր Աստծո փառքը, հարցնում էր. «Ո՞վ քննեց Տիրոջ Հոգին և, իբրև Նրա խորհրդական, Նրան հասկացրեց: Ումի՞ց խորհուրդ հարցրեց Նա, որ Նրան իմացներ, և Նրան սովորեցներ իրավունքի ճանապարհը, և Նրան սովորեցներ գիտելիք և իմաստության ճանապարհը Նրան իմացներ... Ուրեմն ո՞ւմ եք նմանեցնում Աստծուն, և ի՞նչ նմանություն հավասարեցնում Նրան» (Եսայի 40.13,14,18):

Այս խոսքերից հետո Աստված ուղղակիորեն հարցնում է.

«Ո՞ւմ եք Ինձ նմանեցնում: Ո՞վ է Ինձ հավասար» (Եսայի 40.25, NKJV):

Եթե պատմության մեջ երբևէ եղել է այնպիսի ժամանակաշրջան, երբ այս հարցերի շուրջ անհրաժեշտ է եղել լրջորեն խորհել, և ոչ թե դրանք մակերեսորեն դիտարկել, ապա՝ հիմա է: Մեր օրերում շատերը այն աստիճան կլանված են տեղեկությունների տարափով, որը շարունակաբար լցնում է մեր միտքը, որ տեղ կամ ժամանակ չի մնում այս կարևորագույն հարցերի շուրջ խորհելու համար: Սուրբ երկյուղի զարգացումը մեզանում խոչընդոտվել է, և հետևաբար բազմաթիվ հավատացյալներ խոցելի են և հեշտորեն հրապուրվում են այս աշխարհի համակարգով, որի հիմքում են ցանկությունը, շահը և մարդկային ձեռքբերումներից առաջացող հպարտությունը:

Նմանապես, մեզ շարունակ ռմբակոծում են գովեստներով՝ ուղղված տաղանդավոր մարզիկների, գեղեցիկ հոլիվուդյան աստղերի, օժտված երաժիշտների, հայտնի գործարարների, ազդեցիկ առաջնորդների և այլ կարևոր մարդկանց: Նրանց գովաբանում են հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ներում և այլ հանրային հարթակներում: Ողբերգական է այն, որ այս անվաս թվացող տեղեկությունը մարդկային ձեռքբերումների մասին՝ շեղում է կամ, նույնիսկ, հեռացնում մեզ Աստծուն մոտենալու և տեսնելու վեհ հրավերից:

Եթե մենք պարզապես կանգ առնենք, նայենք մեր ներսը և ուղղենք մեր հայացքը Նրա վեհությանը, ներքուստ կնորոգվենք, կզորանանք և խաղաղություն կունենանք: Մեզ տրված է հետևյալ խոստումը.

> «Որովհետև Աստված, որ ասաց՝ թող լո՛ւյս լինի խավարում, շողացրեց այս լույսը մեր սրտերում, որպեսզի մենք ճանաչենք Աստծո փառքը, որը տեսնվում է Հիսուս Քրիստոսի դեմքում» (Բ Կորնթացիների 4.6, NLT):

Հանդարտվելով մեր անձերում և միանալով Սուրբ Հոգուն՝ կարող ենք տեսնել Հիսուսին, երբ խորհում ենք Նրա Խոսքի շուրջ: Նրա երեսին նայելն ավելացնում է Աստծո փառքի լույսը մեր սրտերում և, որպես արդյունք, *սուրբ երկյուղը* մեզանում բարձրանում է նոր մակարդակի: Մենք նմանվում ենք Եսայուն և այլ մեծերի, որոնց քիչ առաջ թվարկեցինք, որոնք հանդիպեցին Նրան, վարվեցին Նրա հետ, հաճեցրին Նրան, ստացան ուխտի խոստումներ և բարեհաջող ավարտ ունեցան: Ավելին՝ մենք խոստում ունենք, որ նայելովնրան, կդառնանք «ավելի ու ավելի Նրա պես՝ կերպարանվելովնրա փառավոր պատկերին» (Բ Կորնթացիների 3.18, NLT):

Ո՞ւմ պատկերին եք ձգտում կերպարանվել. մեր օրերի հայտնի մարդկանց, թե՝ Ով ստեղծել է տիեզերքը: Խելամի՛տ ընտրություն կատարեք և զգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում և ինչին եք տալիս ձեր ուշադրությունը:

Անձնական կիրառում

Հատված. «Երկրպագությո՛ւն արեք Տիրոջը սուրբ զարդարանքով. վախեցե՛ք Նրա երեսից, ո՛վ ամեն երկիր» (Սաղմոս 96.9):

Եզրահանգում. Սուրբ երկյուղը մեզանում ավելանում է՝ Աստծո մեծությունը ճանաչելուն զուգահեռ:

Մտորում. Ի՞նչ կկատարվեր, եթե օրը երեք անգամ տասը րոպե ժամանակ հատկացնեի, փակվեի բոլոր արտաքին ազդակներից և մտորեի Աստծո մեծության շուրջ: Արժե՞ արդյոք ժամանակ տրամադրել դրան: Հնարավո՞ր է ավելի արդյունավետ լինել առօրյայում, եթե բարձրացնեմ սուրբ երկյուղի մակարդակն իմ մեջ, ինչն, ի վերջո, ավելի իմաստուն կդարձնի ինձ:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ նորովի հայտնես ինձ Հիսուսին: Քո Խոսքը խոստանում է, որ եթե նայեմ Նրան իմ սրտում, ես կկերպարանվեմ Նրա պատկերին՝ փառքի մի մակարդակից մյուսը: Թող սուրբ երկյուղն ինձանում ավելանա այնքանով, որքանովնրա փառքն ավելի իրական է դառնում ինձ համար: Ես խնդրում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կերպարանվում եմ Հիսուսի պատկերին՝ փառքից դեպի փառք:

Մարդիկ ակնածում
են միմյանց, սակայն՝
ոչ Աստծուն:

– ՀԵՆՐԻ ԴԵՅՎԻԴ ԹՈՐՈ

7| ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ

Անկարելի է խոսել սուրբ երկյուղից՝ առանց ուղղելու մեր ուշադրությունն *Աստծո փառքին:* Մենք անդրադարձանք Աստծո փառքին նախորդ գլխում, բայց եկեք շարունակենք:

Մահկանացու մարմինը չի կարող կանգնել Աստծո փառքի ներկայության մեջ: Ամբակում մարգարեն հայտարարում է, որ այն «...արևի լույսի պես պայծառ է: Լույսի ճառագայթները բխում են Նրա ձեռքերից, որոնցում թաքնված է Նրա զարմանալի զորությունը» (3.4, NLT): Պողոսը գրում է, որ Հիսուսը բնակվում է *«անմատույց լույսի* մեջ... որ մարդկանցից ոչ ոք չտեսավ, և ո՛չ էլ կարող է տեսնել» (Ա Տիմոթեոս 6.16): Նույն կերպով, Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է, որ Աստված «սպառող կրակ է» (12.29): Կարդալով սա՝ մի՛ պատկերացրեք փայտի կրակ, որը սպառող է, բայց որին, միևնույն է, կարելի է մոտենալ: Փոխարենը, պատկերացրեք ավելի ուժգին սպառող կրակ, օրինակ՝ արևը, որը լուսավորում է մեր երկիրը: Այն սպառող է և անմատույց է, բայց նույնիսկ այս օրինակը լիարժեք չէ, քանի որ գրված է. «Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում» (Ա Հովհաննես 1.5): Արևը, որքան էլ վառ լինի, խավար հատվածներ ունի: Պողոսը գրում է. «Կեսօրվա ժամանակին ճանապարհի վրա տեսա, ո՛վ արքա, որ երկնքից արեգակի լույսից ավելի մի լույս ծագեց իմ չորս կողմով, և նրանցով էլ, որ ինձ հետ գնում էին» (Գործք 26.13):

Պողոսը չտեսավ Հիսուսի դեմքը. նա միայն տեսավնրանից բխող լույսը, որը գերազանցեց Միջին Արևելքի պայծառ արևը: Եվ խոսքը ոչ թե առավոտյան կամ ուշ ցերեկվա արևի մասին է, այլ՝ կեսօրվա արևի:

Ես շատ եմ ճանապարհորդել և եղել եմ աշխարհի բազմաթիվ երկրներում: Երբեմն մոռանում եմ վերցնել իմ արևային ակնոցը: Գրեթե բոլոր երկրներում կարող եմ առանց ակնոցի մնալ, բայց ոչ՝ Միջին Արևելքում: Իմ առաջին այցելության ժամանակ հասկացա, թե որքան անհրաժեշտ

է այն. առանց ակնոցի ես ստիպված էի մշտապես կկոցել աչքերս, մինչև որ արդեն դժվարությամբ էի տեսնում՝ արևի պատճառով: Այն շատ ավելի վառ է երեք պատճառով՝ չոր անապատային կլիմայի, տեղանքի բաց գույների և արտացոլող հատկության, նաև հասարակածին մոտ լինելու: Թեև այն չափազանց ուժգին չէ վաղ առավոտյան կամ ուշ ցերեկը, կեսօրին այն կուրացնող է՝ առանց պաշտպանիչ արևային ակնոցի:

Այժմ մտածենք այն մասին, ինչ կարդացինք: Պողոսը պնդում է, որ Հիսուսից բխող լույսն ավելի վառ է, քան Միջին Արևելքի կեսօրվա արևը: Նրա փառքը բազում անգամներ գերազանցում է արևի պայծառությունը:

Այս պնդումը բացատրում է, թե ինչու և՛ Հովելը, և՛ Եսային գրում են, որ արևը և լուսինը կխավարեն, և աստղերը չեն տա իրենց լույսը այն օրը, երբ Հիսուսը վերադառնա (տե՛ս Եսայի 13.9,10, Հովել 2.31,32): Թույլ տվեք ավելի մանրամասն բացատրել սա: Երբ դուրս ենք գալիս գիշերային պարզ երկնքի տակ, ի՞նչ ենք տեսնում: Աստղազարդ երկինք: Իսկ ի՞նչ է կատարվում առավոտյան, երբ արևը ծագում է: Աստղերն անհայտանում են: Հարց. մի՞թե բոլոր աստղերն արագորեն փախչում են, երբ արևը ծագում է, իսկ հետո, երբ մայր է մտնում, դրանք արագորեն վերադառնում են իրենց տեղերը գիշերվա երկնքում: Պատասխանն է՝ իհարկե՝ ո՛չ: Ի՞նչ է տեղի ունենում: Աստղերի փառքը որոշակի մակարդակի վրա է, իսկ արևի փառքը շատ ավելի բարձր է: Այնպես որ, երբ արևը ծագում է, քանի որ այն շատ ավելի պայծառ է, քան աստղերը, այն խավարեցնում է դրանք:

Երբ Հիսուսը վերադառնա, Նրա փառքն այն աստիճան կգերազանցի արևի փառքը, որ Նա կխավարեցնի այն, թեև արևը շարունակելու է լույս տալ: Դուք կարողանո՞ւմ եք ավելի լավ պատկերացնել Նրա փառքը: Համոզված եմ, որ հենց այս պատճառով են երկրի բոլոր ժողովուրդներն աղաղակելու «սարերին և ժայռերին. «Վա՛յր ընկեք մեզ վրա և ծածկե՛ք մեզ աթոռի վրա Նստողի երեսից և Գառան բարկությունից»» (Հայտնություն 6.16):

Այսպիսով, հիմնական հարցը հետևյալն է. ի՞նչ է Աստծո փառքը: Այս հարցին պատասխանելու համար՝ դիտարկենք Մովսեսի խնդրանքը. «Աղաչո՛ւմ եմ, Քո փա՛ռքը ցույց տուր ինձ» (Ելից 33.18):

«Փառք» բառը եբրայերենում *«կաբոդ»* բառն է: «Սթրոնգի աստվածաշնչյան բառարանը» սահմանում է այն որպես «ինչ-որ բանի կշիռը»: Այն նույնպես ունի մեծության և պատվի իմաստ: Այսպիսով, Մովսեսը խնդրում է. «Հայտնի՛ր ինձ Քեզ՝ Քո ամբողջ շուքով»: Ուշադրությա՛մբ կարդացեք Աստծո պատասխանը.

> «Ես *կանցկացնեմ* Իմ ամբողջ բարությունը քո առջևից, և Ես *կազդարարեմ* Տիրոջ *անունը* քո առջև» (Ելից 33.19, NKJV):

Աստված պատասխանեց Իր փառքը ցույց տալու Մովսեսի խնդրանքին՝ Իր «ամբողջ *բարությամբ»:* Եբրայերեն «բարություն» բառի սահմանումն է. «բարին՝ ամենալայն իմաստով»: Այլ կերպ ասած՝ անվերապահորեն տրվող բարություն:

Հաջորդը՝ Աստված ասում է. «Ես կազդարարեմ Տիրոջ անունը քո առջև»: Մինչդեռ երկրային թագավորը մուտք է գործում իր գահի սրահը, նախ մունետիկն ազդարարում է նրա անունը: Շեփորները փչում են, և թագավորը մուտք է գործում իր գահի սրահը՝ ամբողջ շուքով: Թագավորի մեծությունն ի հայտ է գալիս, և իր արքունիքում բոլորն անսխալաբար գիտեն, թե ով է թագավորը: Այնուամենայնիվ, եթե թագավորը քայլեր իր երկրի փողոցներով՝ սովորական հագուստով և առանց շքախմբի, մարդիկ, հավանաբար, առանց ճանաչելու կանցնեին նրա կողքով:

Նախորդ գլխում կարդացինք, որ Տիրոջ փառքը հայտնվում է Հիսուս Քրիստոսի դեմքում: Շատերը պնդել են, որ տեսիլքով տեսել են Հիսուսին: Իհարկե, դա հավանական է, սակայն նրանք չեն տեսել Նրան՝ Իր ամբողջ փառքով: Պողոսն այսպես է նկարագրում սա. «Որովհետև հիմա մենք տեսնում ենք ապակու միջով՝ խավարած կերպով, բայց այն ժամանակ՝ երես առ երես» (Ա Կորնթացիների 13.12, KJV): Նրա փառքը ծածկված է, ինչպես որ այն ծածկված էր խավար ամպով Հին կտակարանում: Ինչո՞ւ: Ոչ մի մարմին չի կարող նայել Նրա բացահայտ փառքին և ողջ մնալ:

Կային մարդիկ, որոնք տեսան Տիրոջը Հին կտակարանում, բայց Նա հայտնված չէր Իր փառքով: Տերը հայտնվեց Աբրահամին Մամբրեի կաղնիների մոտ, բայց ոչ՝ Իր փառքով (տե՛ս Ծննդ. 18.1,2): Հակոբը մարտնչեց Աստծո հետ, սակայն Աստված Իր փառքով չէր (տե՛ս Ծննդ. 32.24-30): Հեսուն, մոտենալով Երիքովին, տեսավ Տիրոջը՝ մերկացրած սրով, և հարցրեց, թե արդյո՞ք Նա Իսրայելի կողմից էր: Հասկանալով, որ ինքը խոսում էր Տիրոջ հետ, նա ընկավ իր երեսի վրա և երկրպագեց Նրան: Այս ցուցակը կարելի է շարունակել՝ խոսելով Գեդեոնի, Սամսոնի ծնողների և այլ մարդկանց մասին:

Ի հակադրություն, Պատմոս կղզում Հովհաննես առաքյալը տեսավ Տիրոջը Հոգով՝ Նրա ամբողջ փառքով: Հովհաննեսը համեմատեց Նրա երեսը ամբողջ ուժով ճառագող արևի հետ, և նա ընկավ մահացածի պես: Ինչպե՞ս Հովհաննեսը կարող էր նայել Նրան: Պատճառն այն է, որ Նա այդտեղ էր ոչ թե իր մարմնով, այլ՝ իր հոգով: Նույնը վերաբերում է Եսայուն և մի քանի այլ մարդկանց: Մյուս կողմից, Մովսեսը չէր կարող տեսնել Աստծո երեսը, քանի որ նա իր մահկանացու մարմնով էր:

Տիրոջ փառքն այն ամենն է, ինչ Աստծուն Աստված է դարձնում. Նրա բոլոր հատկանիշները, Նրա իշխանությունը, զորությունը, իմաստությունը, այսինքն՝ բառացիորեն Աստծո անչափելի կշիռը և մեծութ-

յունը՝ արտահայտված բացարձակ և անվերապահ կերպով: Աստված Նա է, Ով Իր մատներով տեղադրել է աստղերը և անվանել է դրանցից յուրաքանչյուրը: Նա է, որ չափել է ամբողջ տիեզերքն Իր մատներով՝ Իր ձեռքի թիզով: Նա ձեռքի ափով կշռել է ջուրը՝ մինչև վերջին կաթիլը: Նա կշռել է երկիրը և բոլոր սարերը՝ Իր կշեռքով: Նա այն Աստվածն է, Ում մենք կարող ենք տեսնել մեր սրտերում և, որպես արդյունք, կերպարանվել Նրա պատկերին՝ փառքից դեպի փառք:

Նա այն Աստվածն է, Ով սիրում է մեզ այնքան, որ որոշեց զարհուրելի դատաստան կրել՝ վճարելով մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանայինք դառնալ Նրա ընտանիքի անդամները: Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց սա անչափ ոգևորում է ինձ:

Անձնական կիրառում

Հատված. «Որ իր ժամանակին ցույց կտա Երանելին և միայն Հզորը, թագավորների Թագավորը և տերերի Տերը, որ միայն Նա անմահություն ունի՝ անմատույց լույսի մեջ բնակված. որ մարդկանցից ոչ ոք չտեսավ, և ո՛չ էլ կարող է տեսնել, Նրան լինի պատիվ և զորություն հավիտյանս. ամե՛ն» (Ա Տիմոթեոս 6.15,16):

Եզրահանգում. Տիրոջ փառքն այն ամենն է, ինչ Աստծուն Աստված է դարձնում. Նրա բոլոր հատկանիշները, Նրա իշխանությունը, զորությունը, իմաստությունը, այսինքն՝ բառացիորեն Աստծո անչափելի կշիռը և մեծությունը՝ արտահայտված բացարձակ և անվերապահ կերպով:

Մտորում. Պատկերացրե՛ք մի լույս, որն այնքան պայծառ և ջինջ է, որ ոչ մի խավար, ստվեր, պղտորություն կամ կիսամութ չի կարող լինել դրանում: Պատկերացրեք, որ այդ լույսը շողում է ձեր սրտում: Ինչո՞ւ պետք է մտածեք Նրանից որևէ բան թաքցնելու մասին կամ ուզեք որևէ բան թաքցնել Նրանից. անհնա՛ր է:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ հայտնես Քո փառքը գիտակցելու խորությունը: Ես չեմ ուզում, որ ինձ համար այն անկարևոր իրողություն կամ հասարակ բան լինի՝ այնպիսին, որի մասին միայն ժամանակ առ ժամանակ եմ մտածում: Փոխարենը, ես ուզում եմ, որ դրա մեծությունը լինի մշտապես ներկա և ավելի իրական, քան ինձ շրջապատող աշխարհը: Թող Քո փառքը շարունակաբար լինի իմ սրտում և մտքում: Ես խնդրում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Քրիստոսում ես այս աշխարհի լույսն եմ. ես արտացոլում եմ Նրա փառքը ամենուրեք:

ՀԱՅՏՆՎԱԾ՝
ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՆՔ

ՇԱԲԱԹ 2

Մենք պետք է վախենանք
Աստծուց՝ սիրուց դրդված,
ոչ թե սիրենք Նրան՝
վախից դրդված:

– ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՍԱԼԻԱՑԻ

8| ՁԵՐ ԱՐԺԵՔԸ

Այս բաժինն ընդգրկում է մի քանի ծանրակշիռ և գուցե հանդիմանական թեմաներ: Այնպես որ, մինչև դրանց անցնելը, կանգ առնենք և խորապես հասկանանք Աստծո անասելի սերը մեր հանդեպ: Ես կսկսեմ Հիսուսի ազդեցիկ և գրեթե վախեցնող մի պնդումից, որը կարևոր տեղ կզբաղեցնի այս բաժնի մեր քննարկման մեջ: Առանց համատեքստը կարդալու, այս խոսքերը կարող են սխալ հասկացվել և նույնիսկ անառողջ վախ առաջացնել. այնպես որ, հորդորում եմ, որ կարդաք այս խոսքերը՝ մեր Աստծո հանդեպ հպատակված և երկյուղած սրտով:

> «Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք. *Նրանի՛ց վախեցեք,* որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու: Այո՛, ասում եմ ձեզ, Նրանի՛ց *վախեցեք»* (Ղուկաս 12.5):

Հիսուսը պատվիրում է մեզ *վախենալ Աստծուց,* և Նա մեկ անգամ չէ, որ ասում է դա. Նա շեշտում է այս ցուցումը՝ կրկնելով այն: Այս պնդման ամենից ուշագրավ մասը Նրա հանկարծակիի բերող խոսքերն են. «[ձեզ] գեհենի մեջ (կամ՝ դժոխքը) գցելու»: Այս խոսքերը խիստ են: Այնուամենայնիվ, կարդանք Նրա հաջորդ պնդումը.

> «Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու դանկի են ծախվում, և նրանցից մեկն էլ Աստծո առջև մոռացված չէ: Բայց ձեր գլխի բոլոր մազերն էլ համարված են. ուրեմն, *մի՛ վախեցեք,* որովհետև դուք շատ ճնճղուկներից ավելի լավն եք» (Ղուկաս 12.6,7):

Ուշադրություն դարձրեք, որ շեղագրովնշել եմ «Նրանի՛ց *վախեցեք»* բառերը՝ հինգերորդ խոսքում, և *«մի՛ վախեցեք»* բառերը՝ յոթերորդ խոսքում: Կրկին, մենք տեսնում ենք տարբերակում *սուրբ երկ-*

յուղի և *անսուրբ երկյուղի* միջև: Անկարելի է չափից ավելի շեշտել այն փաստը, որ սուրբ երկյուղը չի նշանակում վախենալ Աստծուց և արդյունքում հեռանալ Նրանից, իսկ *անսուրբ* երկյուղը հենց այդպիսին է: Անչափ կարևոր է, որ մենք հասկանանք տարբերությունը դրանց միջև և հաստատված լինենք այս ճշմարտության մեջ:

Հիսուսը սկսում է ուշագրավ և գրեթե սարսափեցնող պնդմամբ, սակայն անմիջապես ցույց է տալիս մեր անասելի *արժեքն* Աստծո համար: Ըստ էության, Նա հայտնում է, որ Աստված խորապես արժևորում է մեզ և այդ պատճառով է շնորհում սուրբ երկյուղի պարգևը: Այս պարգևը պաշտպանում է մեզ՝ օգնելով մոտ լինել Կյանքը Պարգևողին և հեռու լինել այն ամենից, ինչը կարող է կործանել մեզ՝ *մարդու հանդեպ վախից,* որը սուրբ երկյուղի բացարձակ հակադրությունն է: Այս պահից սկսած, այս երկու վախերը զբաղեցնելու են գրքի նյութի զգալի մասը, բայց մինչև դրանք դիտարկելը, նախ խոսենք մեր *արժեքի* մասին:

Համաձայն Հիսուսի խոսքերի, Աստված այնպիսի գորովանքով է վերաբերվում ձեզ, որ Նա գիտի ձեր գլխի մազերի թիվը: Գիտնականների գնահատմամբ, մարդիկ միջին հաշվով, գրեթե 100.000 մազ ունեն իրենց գլխամաշկին: Եթե մի սրահում 10.000 մարդ լինի, կարծում եք՝ կկարողանա՞ք որոշել, թե նրանցից որի գլխին այդ պահին 99.569 մազ կա: Նույնիսկ եթե ճշտորեն կռահեք, մի քանի րոպե անց արդեն սխալ կլինեք, քանի որ յուրաքանչյուր մարդ օրական կորցնում է միջինը 50-100 մազ: Աստված գիտի դրանց ճշգրիտ թիվը ցանկացած պահին: Ինչ է այս փաստը հայտնում մեզ: Մենք այնքա՞ն արժեքավոր ենք, որ Նա շարունակաբար մտածում է մեր մասին: Դավիթը գրում է.

> «Քանի՜ պատվական են ինձ համար Քո խորհուրդները, ո՛վ Աստված: Քանի՜ մեծ է նրանց թիվը: Եթե համարեմ նրանց, ավազից շատ են» (Սաղմոս 139.17,18):

Այսինքն՝ աշխարհի բոլոր ավազահատիկների՞ց: Մտածե՛ք այն մասին, թե որքան ավազ կա ամբողջ աշխարհում՝ յուրաքանչյուր լողափում, անապատում և գոլֆի դաշտում: Այդ թիվն անասելի է: Գիտությունը և մաթեմատիկոսներն ասում են, որ կախված խտությունից, լողափի մեկ խորանարդ ֆուտի մեջ մոտավորապես հինգ հարյուր միլիոնից մեկ միլիարդ ավազահատիկ կա[1]: Մեր մտքի համար դժվար կլինի ընկալել ավազահատիկների անասելի թիվը միայն ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի լողափերում: Բայց մտածե՛ք հետևյալը. եթե կարողանայիք հաշվել այս մոլորակի բոլոր ավազահատիկները, դուք, միևնույն է, չէիք ստանա այն մտքերի թիվը, որոնք Աստված ունի ձեր մասին:

Հարցրե՛ք ձեզ հետևյալը. որպես կանոն, ինչի՞ մասին եք մտածում: Դուք հազվադեպ եք մտածում այն բաների մասին, որոնք արժեքավոր

չեն ձեզ համար: Լիզան և ես ունենք բազմաթիվ իրեր, որոնք ես հայտնաբերում եմ ամեն անգամ, երբ բացում եմ մեր պահեստասենյակը Սուրբ Ծննդյան տոների ժամանակ: Ես օգտագործում եմ «հայտնաբերել» բառը, քանի որ մոռանում եմ դրանց մասին: Ես չեմ մտածում այդ իրերի մասին նույնիսկ մեկ անգամ ամբողջ տարվա ընթացքում, քանի որ դրանք արժեքավոր չեն: Սակայն եթե հաշվեի իմ բոլոր մտքերը Լիզայի մասին մեր ամուսնության քառասուն տարում, գուցե կոշիկի տուփի կեսի չափով ավազահատիկներ հավաքվեին: Դա մոտավորապես երկու հարյուր միլիոն միտք է, ինչը կնշանակեր, որ ես մտածել եմ նրա մասին յուրաքանչյուր 6.3 վայրկյանը մեկ: Կարելի է համարել, որ իր կնոջ մասին այդքան հաճախ մտածող ամուսինը խորապես սիրահարված է նրան:

Աստծո մտքերը ձեր մասին ավելի շատ են, քան այս մոլորակի բոլոր ավազահատիկները: Դուք հասկանո՞ւմ եք այս ճշմարտությունը: Այս ճշմարտությունն ապշեցուցիչ է նաև այն պատճառով, որ Աստված չի կարող չափազանցնել: Թեև բոլորս հանդիպել ենք մարդկանց, որոնք չափազանցրել են և ճշմարտությանը չհամապատասխանող հայտարարություններ են արել, Աստված նույնիսկ աննշան կերպով չի կարող շեղվել ճշմարտությունից. Նա չի կարող նույնիսկ մեկ սուտ խոսել: Այնպես որ, հայտարարությունն այն մասին, որ Նրա մտքերը ձեր մասին ավելի շատ են, քան բոլոր ավազահատիկներն այս մոլորակում, աներևակայելի՜ է:

Շարունակենք խոսել այս մասին: Իրականում, ո՞րն է մեր արժեքը: Արժեքը որոշվում է գնորդի կողմից: Իմ որդին մի սպորտային աճուրդի էր մասնակցել. այն ընկերությունը, որտեղ նա աշխատում էր, շահագրգռված էր ձեռք բերելու բասկետբոլիստ Բիլ Ռասելի մարզաշապիկներից մեկը, որը նա կրում էր 1960-ական թվականների առաջնություններից մեկի ժամանակ: Նրանց չհաջողվեց գնել այն, քանի որ ամենաբարձր հայտը 1.044.000 դոլարի էր: Որքան էլ լավ մարզիկ լիներ Բիլ Ռասելը, անձամբ ես նույնիսկ երկու հարյուր դոլար չէի տա նրա մարզաշապիկի կամ ԱՄՆ-ի Ազգային բասկետբոլային ասոցիացիայի ցանկացած մարզիկի սպորտային համազգեստի համար: Այն պարզապես հագուստի կտոր է:

Հարցն այն չէ, թե որքան են մարդիկ արժևորում մեզ, քանի որ մարդկանց գնահատականը տարբեր է: Ավելին՝ այս աշխարհը երբեք էլ պատշաճ կերպով չի արժևորել մարդկանց: Միլիոնավոր երեխաներ սպանվել են իրենց մայրերի որովայններում: Մի՞թե մարդիկ արժևորում էին այդ երեխաների կյանքերը: Իսկ որքա՞ն աղջիկներ և կանայք են առևանգվել՝ սեռական ստրկության և մարմնավաճառության համար: Նրանց արժեքը, իրենց առևանգողների գնահատմամբ, նվազեցվել է՝ հասցվելով ընդամենը մի քանի հարյուր դոլարի:

Աստված է, որ սահմանում է տիեզերքի արժեհամակարգը, ոչ թե մարդը: Եվնույնիսկ այն բաների վերաբերյալ, ինչը մենք արժեքավոր ենք համարում, Հիսուսը հիշեցնում է, որ «մարդկանց առջև բարձրը պիղծ է Աստծո առջև» (Ղուկաս 16.15): Նա նույնպես անում է այս ուշագրավ պնդումը. «Որովհետև ի՞նչ օգուտ ունի մարդը, որ ամբողջ աշխարհն ստանա և իր անձը կորցնի: Կամ՝ ի՞նչ գին կտա մարդը՝ իր անձը փրկելու համար» (Մատթեոս 16.26):

Մի պահ մտածե՛ք այս աշխարհի հարստության մասին: Մտածե՛ք միլիոնավոր դոլարներ արժեցող առանձնատների, գեղեցիկ հողատարածքների, թանկարժեք քարերի և մետաղների, առաջնակարգ մեքենաների, զբոսանավերի և ինքնաթիռների մասին: Այս ամենը գրեթե անըմբռնելի է: Ըստ վերջին ուսումնասիրությունների, համաշխարհային համախառն արդյունքը գնահատվում է 84.97 տրիլիոն դոլար: Սա անըմբռնելի գումար է: Այնուամենայնիվ, Հիսուսն ասում է մեզ, որ եթե դուք փոխանակեիք ձեր կյանքն այդ ամենի հետ, ձեզ համար այդ գործարքն անշահավետ կլիներ:

Այսպիսով, ո՞րն է ձեր արժեքը: Պողոսը գրում է. «Աստված գնեց ձեզ բարձր գնով» (Ա Կորնթացիների 6.20, NLT): Աստծո հայտը ձեզ համար՝ Նրա կողմից սահմանված գինը երևում է հետևյալ խոսքերում. «Որովհետև Աստված այնպես սիրեց այս աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհաննես 3.16): Զարմանալի՜ է... սա ավելին է, քան Բիլ Ռասելի մարզաշապիկը: Աստված համարում է, որ մեր արժեքը հավասար է այն բանին, ինչն ամենաթանկն է Նրա համար: Զարմանալին այն է, որ եթե մեր արժեքը Նրա համար նույնիսկ մեկ լումայով պակաս լիներ Հիսուսի արժեքից, այս փոխանակումը տեղի չէր ունենա, որովհետև Աստված անշահավետ գործարք չէր կնքի՝ տալով այն, ինչն ավելի արժեքավոր է, պակաս արժեքավորի դիմաց: Դուք սկսում եք հասկանա՞լ, թե որքան արժեքավոր եք Աստծո համար:

Որքա՞ն մեծ է Աստծո սերը ձեր հանդեպ: Հիսուսն անում է ամենից ապշեցուցիչ հայտարարությունը Իր աղոթքներից մեկում.

> «...որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու (Աստված) ուղարկեցիր Ինձ (Հիսուսին) և սիրեցիր նրանց՝ ինչպես Ինձ սիրեցիր» (Հովհաննես 17.23):

Սա գրեթե ավելին է, քան կարող ենք հասկանալ: Աստված սիրում է ձեզ նույնքան, որքան սիրում է Հիսուսին: Գուցե մտածեք. *«Նա միայն խոսում է Իր տասներկու աշակերտների մասին»:* Դա ճիշտ չէ, քանի որ Հիսուսը պարզաբանում է. «Ես աղոթում եմ ոչ միայն այս աշակերտների համար, այլև նրանց, ովքեր երբևէ կհավատան Ինձ՝ նրանց

ուղերձի միջոցով» (Հովհաննես 17.20, NLT): Եթե հավատում եք Հիսուս Քրիստոսին, դուք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդունել եք Նրա աշակերտների վկայությունը: Աստծո սիրո խորությունը ձեր հանդեպ և այն, թե որքան է Նա արժևորում ձեզ, անըմբռնելի են:

Հաստատվելով այս ճշմարտության մեջ՝ շարունակենք բացահայտել, թե ինչու է սուրբ երկյուղի պարգևն էապես կարևոր Նրա հետ մեր հարաբերության մեջ:

Անձնական կիրառում

Հատված. «Մարդիկ չեն կարող իրենց փրկագնել մահից՝ Աստծուն փրկագին վճարելով: Փրկագնումն այդքան հեշտ չի տրվում, քանի որ ոչ ոք երբևէ չի կարող բավականաչափ վճարել՝ հավերժ ապրելու համար» (Սաղմոս 49.7-9, NLT):

Եզրահանգում. Ոչ մի իմաստուն անձ անշահավետ գործարք չէր կնքի՝ տալով այն, ինչն ավելի արժեքավոր է, պակաս արժեքավորի դիմաց: Նույն կերպով, Աստված երբեք անշահավետ գործարք չէր կնքի: Այն գինը, որն Աստված վճարեց ձեզ համար, Իր միածին Որդու կյանքն էր, ինչը նշանակում է, որ Նա արժևորում է ձեզ նույնքան, որքան արժևորում է Հիսուսին: Նա արժևորում է ձեզ շրջապատող մարդկանց նույնքան, որքան արժևորում է Հիսուսին:

Մտորում. Հաշվի առնելով այն մեծ արժեքը, որը Հիսուսը սահմանեց ինձ համար, ինչպե՞ս եմ դիտարկում ինքս ինձ: Ի՞նչ կերպով է սա փոխում իմ կարծիքն այն մարդկանց մասին, որոնց ամեն օր հանդիպում եմ, նաև իմ վերաբերմունքը նրանց հանդեպ:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, շնորհակա՛լ եմ, որ այնքան արժեքավոր համարեցիր իմ կյանքը, որ կամեցար ուղարկել Հիսուսին՝ մահանալու իմ փոխարեն: Հիսո՛ւս, շնորհակա՛լ եմ, որ արժևորեցիր ինձ նույնիսկ ավելի, քան Ինքդ Քեզ՝ զբաղեցնելով իմ տեղը և Քեզ վրա վերցնելով իմ դատավճիռը: Սո՛ւրբ Հոգի, խնդրում եմ, որ տաս հստակ գիտակցում իմ սրտում և մտքում այն մասին, թե որքան ես սիրում և արժևորում ինձ: Թող որ ես սիրեմ մարդկանց նույն կերպով: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կսիրեմ և կարժևորեմ մարդկանց նույն կերպով, ինչպես որ Աստված է սիրում և արժևորում ինձ:

Երբ մենք քարոզում ենք Աստծո սերը, կա վտանգ, որ կարող ենք մոռանալ, որ Աստվածաշունչն առաջին հերթին հայտնում է ոչ թե Աստծո սերը, այլ՝ Աստծո սաստիկ, կրակոտ սրբությունը, իսկ Նրա սերն այդ սրբության կենտրոնում է:

– ՕՍՎԱԼԴ ՉԵՄԲԵՐՍ

9| ՄԱՀԱՑՈՒ ԲԱԽՈՒՄ

Առաջին բաժնում խոսեցինք Աստծո փառքի մասին և միայն մակերեսորեն դիտարկեցինք այն: Այս գլխում կխոսենք Աստծո ներկայության տարբեր աստիճանների մասին: Եկեք սկսենք այն ժամանակաշրջանից, երբ Ամենակարողը որոշեց բնակվել վրանում, երբ Իսրայելի ժողովուրդն անապատում էր:

Ժամանակատար, ծավալուն և դժվարին աշխատանքից հետո արհեստագործների խումբն ավարտեց խորանի կառուցումը: Այն կառուցված էր համաձայն ճշգրիտ գծագրի, որն Աստված տվել էր Մովսեսին սարի վրա, և երկնային խորանի մոտավոր նմուշն էր (տես Եբր. 8.1-5): Հենց որ աշխատանքն ավարտվեց, Աստված հայտնեց Իր փառավոր ներկայությունը:

> «Եվ մի ամպ ծածկեց ժողովքի վրանը, և Տիրոջ փառքը լցրեց խորանը: Եվ Մովսեսը չէր կարողանում մտնել» (Ելից 40.34,35):

Եվս մեկ անգամ Աստված ծածկեց Իր փառքն Իսրայելից՝ թավ ամպով: Նա բնակվելու էր Իր սիրելի ժողովրդի հետ՝ այն կերպով, որովնրանք կարող էին դիմանալ: Միայն քահանայապետին էր թույլատրված մուտք գործել Ամենասուրբ վայրը տարին մեկ անգամ՝ կենդանիների արյամբ: Այդ պաշտոնը զբաղեցնող մարդն ընտրվում էր Աստծո կողմից, և առաջին քահանայապետը Մովսեսի եղբայր Ահարոնն էր:

Մեկ օր Ահարոնի երկու որդիները, որոնք նույնպես քահանաներ էին, մտան խորանը «և Տիրոջ առջև *օտար* (կամ՝ *պիղծ)* կրակ

մատուցեցին, որ Ինքը չէր պատվիրել նրանց» (Ղևտացիների 10.1): Կան տարբեր կարծիքներ այն մասին, թե իրականում ինչ կատարվեց, սակայն, տեղի ունեցածի էությունը հասկանալու համար, եկեք շրջանցենք նրանց արարքը և կենտրոնանանք նրանց շարժառիթի վրա: Այս խոսքում օգտագործված *«օտար»* կամ *«պիղծ»* բառի սահմանումներից մեկն է. «աներկյուղ կերպով վարվել սուրբ բանի հետ»: Այն նշանակում է հասարակի կամ սովորականի պես վերաբերվել այն բանին, ինչը սուրբ է: Ըստ էության, Ահարոնի որդիները մուտք գործեցին Աստծո փառավոր ներկայության մեջ՝ աներկյուղ վերաբերմունքով: Այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո, սթափեցնող է և նույնիսկ՝ վախեցնող.

> «Եվ Տիրոջ առջևից կրակ ելավ և սպառեց նրանց, և նրանք մահացան Տիրոջ առջև» (Ղևտացիների 10.2):

Այդ երկու տղամարդիկ, որոնք լիազորված էին մուտք գործելու Աստծո ներկայության մեջ, անմիջապես մահացան՝ իրենց աներկյուղ վերաբերմունքի պատճառով: Մի՞թե Աստված դաժանորեն հարձակվեց նրանց վրա: Ո՛չ, նրանք էին, որ փորձանքի ենթարկեցին իրենց: Մտածե՛ք այս մասին հետևյալ կերպով. երկիրը 150 միլիոն կիլոմետրով հեռու է արևից: Շատերն արևային լոգանք են վայելում լողափում, բայց եթե արևային լոգանք ընդունելիս նույն արևի հեռավորությունն ընդամենը 15.000 կիլոմետր լիներ, նրանք անմիջապես կմահանային:

Նրանց սխալն այն էր, որ նրանք սկսել էին հասարակի պես վերաբերվել Աստծո սուրբ և փառավոր ներկայությանը, ինչի արդյունքում այնպիսի բան արեցին, ինչը փորձանք բերեց իրենց կյանքում: Ահա թե ինչ ասաց Մովսեսն Ահարոնին՝ անմիջապես նրա որդիների մահից հետո.

> «Սա այն է, որ Տերը խոսեց՝ ասելով. «Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ»» (Ղևտացիների 10.3):

Մովսեսի պնդումը համընդհանուր և հավիտենական վճիռ է: Այն համընդհանուր է, քանի որ վերաբերում է յուրաքանչյուր արարածի տիեզերքում՝ մարդկանց և հրեշտակների: Եվ այն հավիտենական է, քանի որ այդպես էր անցյալում և միշտ այդպես է լինելու. դա երբեք չի փոխվելու: Դուք կարող եք մուտք գործել Աստծո ներկայության մեջ միայն երկյուղած սրտով և վերաբերմունքով:

Հիշենք այն երեկոն Բրազիլիայում: Աստծո ահեղ ներկայության մեջ, երբ քամին փչում էր, ես կաթվածահար էի եղել սուրբ երկյուղից: Կար մի միտք, որը զարկերակի հաճախականությամբ հնչում էր իմ

ներսում. *«Ջոն Բիվեր, եթե մեկ սխալ շարժում անես, եթե մեկ սխալ բառ ասես, դու կմահանաս»:*

Արդյո՞ք դա տեղի կունենար: Ես համոզված չեմ, բայց կարող եմ ասել, որ մի անգամ Նոր կտակարանում մի տղամարդ և կին սխալ վարվեցին այդպիսի մթնոլորտում, և երկուսն էլ մահացած ընկան: Այո՛, այնպես, որ նրանց թաղում են երկու մետրանոց փոսի մեջ (տե՛ս Գործք 5.1-10): Այդ զույգը ֆինանսական զոհաբերություն մատուցեց՝ իրենց եկեղեցու առաջնորդների և այլ հավատացյալների ներկայությամբ, սակայն երկուսն էլ անմիջապես մահացան և նույն օրը թաղվեցին: Երբ դա տեղի ունեցավ, ինչպե՞ս արձագանքեցին հավատացյալները:

> «Եվ *մեծ ահ* եղավ ամբողջ եկեղեցու վրա և ամենքի վրա, որ այս լսեցին» (Գործք 5.11):

Անհրաժեշտ է երկու նշում անել: Գրված չէ՝ «մեծ ահ եղավ ամբողջ քաղաքի վրա»: Ո՛չ, գրված է՝ «մեծ ահ եղավ ամբողջ եկեղեցու վրա»: Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք, որ գրված չէ պարզապես «ահ», այլ՝ «մեծ ահ»: Հրեա հեղինակները չեն չափազանցնում, ինչպես որ մենք ենք հաճախ անում Արևմուտքի մշակույթում: Եթե Աստվածաշնչում գրված է «մեծ», նշանակում է՝ խոսքը խիստ ազդեցիկ սուրբ երկյուղի մասին է:

Գործքի 2-րդ գլխում, երբ Աստծո Հոգին սկզբնապես հայտնեց Իրեն Պենտեկոստեի օրը, այնտեղ գտնվող մարդկանցից մի քանիսը կարծեցին, թե աշակերտները հարբած են գինով առավոտվա ժամը իննին: Մի պահ մտածեք, թե ինչպես է վարվում հարբած մարդը: Նա սովորաբար լուռ և զուսպ չէ. փոխարենը, որպես կանոն, ծիծաղում և ուրախանում է: Ահա թե ինչպիսին էր մթնոլորտն այդ ուշագրավ օրը: Մեր սիրառատ Աստված ներկա էր՝ թարմացնելով և բերկրանք պարգևելով: Բայց երբ Նրա ահեղ և նույնիսկ զարհուրելի ներկայությունը հայտնվեց նույն մարդկանց միջև՝ դատաստանի համար, եկեղեցին բռնվեց մեծ վախով և ահով: Այդ իրադարձության պատճառով մարդկանց գիտակցումն Աստծո սրբության մասին մեծապես ավելացավ:

Ինձ հաճախ հարցնում են. «Ինչո՞ւ մարդիկ մահացած չեն ընկնում մեր օրերում»: Սա ճիշտ և տեղին հարց է: Այդ զույգը ստեց Պետրոսին և, ի վերջո, Սուրբ Հոգուն: Քսանմեկերորդ դարում բազմաթիվ հովիվներ ստել են. ուրեմն, ինչո՞ւ այդ օրինազանցները չեն արժանացել նույն ճակատագրին: Եկեք տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ անմիջապես այս զույգի մահից հետո.

> «Հիվանդներին հանում էին հրապարակները և իրենց պատգարակներով և մահիճներով այնտեղ էին դնում, որ Պետ-

> րոսն անցնելիս գոնե նրա շուքը նրանցից մեկի վրա ընկնի... որ ամենն էլ բժշկվում էին» (Գործք 5.15,16):

Սա անհավատալի է, եթե մտածեք այս մասին: Ուշադրություն դարձրեք, որ գրված է հրապարակների մասին՝ հոգնակի թվով: Եվ բժշկվում էին ոչ թե մի քանիսը, այլ՝ բոլորը: Պատկերացնենք սա ժամանակակից ձևով: Սա նույնն է, թե Պետրոս առաքյալը մտներ մի մեծ հիվանդանոց և դատարկեր բոլոր հարկերի հիվանդասենյակների մահճակալները՝ պարզապես միջանցքներով քայլելով: Զորության նման աստիճան կա միայն Տիրոջ փառքի մթնոլորտում:

Եկեք հաստատենք մեր պնդումը ևս մեկ սուրբգրային օրինակով: Ահարոնի երկու որդիների հետ տեղի ունեցածից հարյուրավոր տարիներ անց, այլ քահանայի երկու որդիներ, որոնք նույնպես քահանաներ էին՝ Ոփնին և Փենեհեսը, շնություն էին գործում նույն խորանի դռանը հավաքված կանանց հետ: Խորանի դուռը երեսուն մետրից պակաս հեռավորության վրա էր այն վայրից, որտեղ Ահարոնի որդիները տեղում մահացան: Ասես դա բավական չէր, նրանք նույնպես ահաբեկում էին զոհաբերություններ մատուցող մարդկանց՝ նրանց զոհերը հարկադրաբար խլելով: Նրանք «անպիտան մարդիկ էին, որոնք չունեին պատիվ Տիրոջ հանդեպ, ո՛չ էլ՝ իրենց քահանայական պարտականությունների» (Ա Թագավորաց 2.12,13, NLT): Աստված ասաց այդ մարդկանց մասին. «Ես երդվել եմ, որ Հեղիի և նրա որդիների մեղքերը երբեք չեն ներվելու» (Ա Թագավորաց 3.14, NLT): Ոչ ոք չէր ցանկանա նման խոսքեր լսել Ամենակարող Աստծո բերանից:

Նրանց արարքները խիստ հանցավոր էին Աստծո առջև: Դրանք շատ ավելի աներկյուղ էին, քան Ահարոնի որդիների արարքները, սակայն նրանք անմիջապես չմահացան նույն խորանի մոտ: Ինչո՞ւ: Պատասխանը հետևյալ խոսքերում է. «Այն օրերը Տիրոջ Խոսքը հազվագյուտ էր, հայտնի տեսիլք *չկար»* (Ա Թագավորաց 3.1): Աստծո հայտնված Խոսքի հազվագյուտ լինելը նշանակում է, որ Նրա ներկայությունը չկար: Այն բացակայում էր, ինչպես որ Բրազիլիայում անցկացվող այդ համաժողովի երկրպագության ժամանակ: Այնուամենայնիվ, Մովսեսի օրերում Աստծո ներկայությունն առատ էր:

Ի՞նչ կարող ենք եզրակացնել այս օրինակներից: Որքան ավելին է Աստծո հայտնված փառքը, այնքան ավելի մեծ և արագահաս է դատաստանը աներկյուղ վերաբերմունքի համար: Այսպիսով, *դատաստանի ուշացումը չի նշանակում, որ այն տեղի չի ունենալու:* Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Կան մարդիկ, որոնց մեղքերը հայտնի են և առաջուց դատաստանի հասած: Իսկ ոմանցն էլ ետևից են գալիս» (Ա Տիմոթեոս 5.24):

Մենք իմաստուն կլինենք, եթե երբեք, ոչ մի դեպքում թույլ չտանք մեզ աներկյուղ, անփույթ և սովորականի պես վերաբերվել Աստծուն: Իրականում, նման վարքը շատ ավելի վտանգավոր է, երբ Նրա փառքը հայտնված չէ: Ինչո՞ւ: Կարելի է ավելի հեշտ սայթաքել՝ աներկյուղ վիճակում հայտնվելով, և տրվել ինքնախաբեությանը՝ հավատալով, որ դատաստանի բացակայությունը նշանակում է, որ Աստված ընդունում է մեզ: Եթե սա տեղի ունենա, մենք կարող ենք հեշտորեն կարծել, թե մեր աներկյուղ վերաբերմունքը չի մտահոգում Աստծուն, ինչպես որ կտեսնենք հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ, և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ» (Ղևտացիների 10.3):

Եզրահանգում. Որքան շատ է Աստծո հայտնված փառքը, այնքան ավելի մեծ և արագահաս է դատաստանը աներկյուղ վերաբերմունքի համար: Այսպիսով, դատաստանի ուշացումը չի նշանակում, որ այն տեղի չի ունենալու:

Մտորում. Ինչպե՞ս եմ մոտենում Տիրոջը աղոթքի մեջ, եկեղեցում, երկրպագության ժամանակ, երբ Աստծո Խոսքն ուսուցանվում է, կամ՝ առօրյայում: Արդյո՞ք ես սկսել եմ հասարակ կերպով վերաբերվել Նրան մոտենալուն: Արդյո՞ք ես մոռացել եմ այն իրողությունը, որ Նա ոչ միայն իմ Հայրն է, այլև՝ սուրբ Աստված, Ով սպառող կրակ է:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ ներես ինձ՝ Քեզ աներկյուղ վերաբերմունքով մոտենալու համար: Ես մոռացել եմ, թե Ով ես Դու, և սկսել եմ սովորականի պես վերաբերվել Քեզ: Ես ապաշխարում եմ և այլևս չեմ վերաբերվելու Քեզ հասարակ անձնավորության պես, այլ ակնածելու եմ Քեզնից՝ գիտակցելով, որ Դու սուրբ Աստված ես: Շնորհակա՛լ եմ, որ անչափ բարի և ողորմած ես, և որ ներում ես իմ աներկյուղ լինելը: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես ակնածելու եմ Աստծուց՝ անկախ այն բանից, թե որքան զորավոր կամ մեղմ ձևով է Նա հայտնում Իր ներկայությունը:

«Որովհետև Տերը հստակ տեսնում է այն, ինչ անում է մարդը՝ քննելով ամեն ճանապարհ, որովնա գնում է»:

– ԱՌԱԿԱՑ 5.21, NLT

10| ԱՍՏՎԱԾ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

Ինչպես արդեն նշեցինք, սուրբ երկյուղը մեզանում ավելանում է Աստծո մեծությունը ճանաչելուն զուգահեռ: Հակառակը նույնպես ճշմարիտ է. որքան քիչ է մեր երկյուղը Նրանից, այնքան մենք փոքրացնում ենք Նրա մեծությունը, մինչև իսկ այն աստիճան, որ մարդկային սահմանափակումներ ենք վերագրում Նրան:

Այս աշխարհի համակարգը նման է արագընթաց գետի սաստիկ հոսանքի, որը ճնշում է մարդու միտքը՝ փորձելով հեռացնել Աստծո փառքը: Այս գետը բաղկացած է բառերից, մտքերից, պատկերներից, տեսանյութերից և այլ միջոցներից, որոնք կարելի է օգտագործել մարդուն մեծարելու համար՝ մեր Արարչի մեծությունը փոքրացնելու հաշվին:

Սուրբ երկյուղ չունեցող մարդը հեշտորեն տեղի է տալիս այս ուժին և ընդունում է այնպիսի մտածելակերպ, ըստ որի Աստված չի նկատում կամ Նրա հոգը չէ, թե ինչ է ինքն անում: Նրանում ձևավորվում են այսպիսի մտքեր. *«Ես բացառություն եմ. ես ազատված եմ այդ ամենից. ես չեմ տարբերվում մեծամասնությունից. Աստված անտեսում է իմ դրդապատճառները, խոսքերը և արարքները»,* մինչև իսկ հետևյալը. *«Այս աշխարհում չափազանց շատ բան է կատարվում, և Նա չի կարող հետևել այդ ամենին»:*

> «[Ամբարիշտը...] իր սրտում ասում է. «Աստված մոռացավ, Իր երեսը թաքցրեց. Նա չի տեսնի իսպառ»» (Սաղմոս 10.11):

Այս սխալական և վտանգավոր մտածելակերպը մի քանի տարբերակ ունի, սակայն, ընդհանուր առմամբ, այն Աստծո կարողությունները համարում է ավելի ցածր, քան դրանք իրականում են: Մենք կարող ենք

նույն կերպով մտածել ծնողի, տնօրենի, ուսուցչի, մարզչի կամ այլ ղեկավարի մասին, որ նրանք կանտեսեն կամ չեն նկատի մեր վարքը: Այս ծուղակի մեջ հայտնված մարդիկ մխիթարում են իրենց՝ կարծելով, թե ցանկացած հարցում անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ մանրուքներ, և միաժամանակ փոքրացնում են Աստծո կարողությունը:

Մեկ քայլ առաջ ընթանանք: Եթե ինչ-որ մեկը շարունակի գնալ այս սայթաքուն ճանապարհով, այսինքն՝ ոչ միայն չունենա սուրբ երկյուղ, այլև երես թեքի դրանից, նրան սպառնում է այն դիվային համոզմունքը, որ *«Աստված չի կարող տեսնել իր շարժառիթները, խոսքերը և գործողությունները»:* Այլ բան է հավատալը, որ Աստված չի տեսնում, և աներկյուղ վերաբերմունքի այլ մակարդակ է կարծելը, որ Նա *չի կարող* տեսնել:

Հնարավոր է թաքցնել մեր խոսքերը, գործողությունները և շարժառիթներն այլ մարդկանցից: Մենք կարող ենք գաղտնի բաներ անել խավարում, նույնիսկ ստվերում, որոնք մարդիկ չեն նկատի: Բայց երբ հավատում ենք, որ կարող ենք թաքցնել մեր մտքերը կամ ճանապարհներն Ամենակարող Աստծուց, մենք գտնվում ենք ինքնախաբեության մեջ: Այս սխալական ենթադրությունը՝ գիտակցված, թե՝ ոչ, առկա է ցանկացած մարդու ներսում, որը զուրկ է սուրբ երկյուղից: Աստվածաշնչում գրված է.

> «Ինչպիսի՜ տրտմություն է սպասում նրանց, ովքեր փորձում են թաքցնել իրենց ծրագրերը Տիրոջից, ովքեր կատարում են իրենց չար գործերը խավարում: «Տերը չի կարող տեսնել մեզ,- ասում են նրանք,- Նա չգիտի, թե ինչ է կատարվում»» (Եսայի 29.15, NLT):

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Եսային խոսում է անօրենների մասին՝ անհավատ մարդկանց, որոնք ոչ մի դեպքում եկեղեցի չեն գնա և չեն մասնակցի երկրպագության միջոցառումների: Այնուամենայնիվ, այս հատվածը հատկապես վերաբերում է *դավանող հավատացյալներին:* Դա ճիշտ է, քանի որ դրանից առաջ գրված է.

> «Այսպիսով, Տերն ասում է. «Այս ժողովուրդն ասում է, թե իրենք Իմն են: Նրանք պատվում են Ինձ իրենց շուրթերով, բայց նրանց սրտերը հեռու են Ինձնից: Նրանց երկրպագությունը ընդամենը անգիր սովորած մարդկային կանոններ են»» (Եսայի 29.13, NLT):

Թույլ տվեք կրկնել սա ժամանակակից լեզվով: Այս մարդիկ դավանում են, որ իրենք հաղորդակցվում են Հիսուսի հետ, քանի որ փրկված են Նրա շնորհքով: Նրանք բերանացի պատվում են Նրան, մասնակցում են քրիստոնեական համաժողովների, երկրպագության երաժշտություն են լսում իրենց սմարթֆոնների հավելվածներով, սակայն

ինչ-որ տեղ իրենց մտքում կարծում են, թե Տերը *չի կարող* տեսնել և լսել այն, ինչ իրենք մտածում և անում են: Նրանց մտքի վիճակն ավելի վատ է, քան՝ որոնք բոլորովին չեն հետևում Հիսուսին: Նրանք հավատում են ստի, ավելին՝ նրանք չեն գիտակցում իրենց անմտությունը:

Գուցե հակադարձեք ինձ. «Անհնա՞ր է: Նման բան չի՛ կարող պատահել»: Հիշենք այն զույգին Նոր կտակարանում, որոնց մասին խոսեցինք նախորդ գլխում՝ Անանիային և Սափիրային (տե՛ս Գործք 5-րդ գլուխ): Այս իրադարձության նախապատմությունը կարևոր է՝ այս զույգի սխալական վարքը հասկանալու համար: Իրականում, այս պատմությունը սկսվում է 4-րդ գլխում.

> «Եվ Հովսեսը, որ առաքյալներից Բառնաբաս կոչվեց, որ Մխիթարության որդի կթարգմանվի, ղևտացի, ծնունդով կիպրացի, նա մի ագարակ ուներ, ծախեց և գինը բերեց առաքյալների ոտքերի մոտ դրեց» (Գործք 4.36,37):

Այդ ժամանակաշրջանում Կիպրոսն անչափ հարուստ կղզի էր, որտեղ կային թանկարժեք քարերի, պղնձի և երկաթի խոշոր հանքեր, ինչպես նաև փայտանյութի մեծ պաշարներ: Այն հայտնի էր իր ծաղիկներով, մրգերով, գինիով և ձեթով: Եթե դուք հողատարածք ունենայիք Կիպրոսում, ամենայն հավանականությամբ, հարուստ կհամարվեիք:

Պատկերացրեք մի հարուստ ղևտացու՝ Կիպրոսից, որը բերում է իր հողատարածքի վաճառքից ստացված մեծ գումար և բացահայտ նվիրաբերում է ամբողջ եկեղեցու առջև: Ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո:

> «Եվ մի մարդ՝ անունն Անանիա, իր Սափիրա կնոջ հետ մի կալվածք ծախեց» (Գործք 5.1):

Ուշադրություն դարձրեք առաջին «և» բառին: Այս կապը միացնում է նախորդ միտքը հաջորդին՝ շարունակելով այն: Նոր գլուխ սկսելու պատճառով մենք հեշտորեն կարող ենք չնկատել, որ պատմությունը շարունակվում է:

Այդ հարուստ նորեկը միանում է եկեղեցուն և շատ մեծ նվիրատվություն կատարում, ինչը հայտնի է դառնում բոլորին: Նրա նվիրատվությունն արձագանք է առաջացնում այս զույգի մոտ: Նրանք անմիջապես մի հողատարածք են վաճառում և...

> «Նրա գնից թաքցրեց, որ կինն էլ գիտեր, և մի բաժինը բերեց, առաքյալների ոտքերի մոտ դրեց» (Գործք 5.2):

Ի՞նչն առաջացրեց այդ արձագանքը: Հնարավո՞ր է, որ մինչև այդ իրադարձությունը, զույգը եկեղեցու ամենախոշոր նվիրատուների

համբավն ուներ: Եթե այդպես է, արդյո՞ք դա գրավում էր եկեղեցու առաջնորդների և անդամների ուշադրությունը: Մենք պետք է հիշենք, որ բաշխելը պարգև է, և ինչպես որ մարդիկ նկատում են և նույնիսկ գովում են տարբեր պարգևները, օրինակ՝ ծառայելը, քարոզելը, հյուրասիրությունը, սովորեցնելը, վերակացություն անելը ևն, այնպես էլ վերաբերվում են առատաձեռնությանը, որը բացառություն չէ. այն գովեստի է արժանանում (տես Բ Կորնթ. 9.12,13): Հնարավո՞ր է, որ այս զույգը չափից շատ էր սիրում այն հարգանքը և ուշադրությունը, որ ստանում էր: Գուցե իրենց անապահովության զգացումի պատճառովնրանք սպառնալի՞ք զգացին, երբ այդ նորեկը գերազանցեց իրենց: Արդյո՞ք այն, որ բոլորը եկեղեցում ուրախանում էին Բառնաբասի անչափ մեծ նվիրատվության շնորհիվ՝ մտածելով, թե որքան էր այն օգնելու ավետարանչության գործին և աղքատներին մասին հոգալուն, հեռացրեց եկեղեցու ուշադրությունը Անանիայից և Սափիրայից:

Գուցե այս զույգը կորցրած ուշադրությունը ետ ստանալու մեծ ցանկություն ուներ. այնպես որ, նրանք արձագանքեցին՝ վաճառելով մի հողատարածք, որը, հավանաբար, նրանց ամենաթանկ ունեցվածքն էր: Նրանք մտածում էին. «Մենք պատրաստ չենք բաժանվել այսքան մեծ գումարից, բայց թող մարդիկ *համարեն*, որ մենք տալիս ենք ամբողջը: Եկեք տանք մի մասը, բայց հայտարարենք, որ սա մեր ստացած ամբողջ գումարն է»: Նրանք կարող էին արդարացնել իրենց մոլորված մտածելակերպը՝ տրամաբանելով, որ դա կխրախուսեր մարդկանց ավելի խոշոր նվիրատվություններ կատարել:

Համբավը նրանց համար ավելի կարևոր էր ճշմարտությունից, և դա մոլորության դրդեց: Ինչպե՞ս այս զույգը կարող էր մտածել, որ Աստված չէր տեսնում իրենց արարքը:

Նրանք դիտավորությամբ և համաձայնությամբ ծրագրեցին այդ մոտեցումը: Հավատալով, որ կարող էին թաքցնել իրենց ծրագիրը Տիրոջից, նրանք գործեցին իրենց չար արարքը խավարում: Եվ, ինչ-որ առումով, նրանք մտածում էին. «*Տերը չգիտի, թե ինչ է կատարվում*» (գրեթե ուղիղ մեջբերում Եսայի 29.15-ից): Նրանք վճարեցին դրա համար իրենց կյանքերով. երկուսն էլ թաղվեցին նույն օրը:

Ինչպե՞ս կարող էին Հիսուսին դավանող երկու հավատացյալները կարծել, թե հնարավոր էր թաքցնել իրենց շարժառիթներն Ամենակարող Աստծուց, երբ նրանք ականատես էին եղել Գործք առաքելոց գրքի նախորդ գլուխներում նկարագրված ակնառու հրաշքներին՝ երկնային քամուն, որը փչեց և գրավեց ամբողջ քաղաքի ուշադրությունը, հազարավոր փրկված մարդկանց՝ չհայտարարված հավաքույթներին, կաղ մարդու հրաշքով քայլելուն, Աստծո զորությանը, որը շենքը ցնցեց, և ավելիին:

Կամ՝ ինչպե՞ս Ադամն ու Եվան, որոնք զբոսնում էին Աստծո հետ

պարտեզում, կարող էին հավատալ, որ հնարավոր էր թաքնվել Նրանից՝ մեղանչելուց հետո (տե՛ս Ծնն. 3.8):

Ինչպե՞ս Իսրայելի ժողովուրդը կարող էր ասել. «Տերը չի տեսնում» (Եզեկիել 9.9):

Կամ՝ ի՞նչ կասեք հետևյալ ապշեցուցիչ հայտարարության մասին. «Մարդո՛ւ որդի, տեսնո՞ւմ ես՝ ինչ են անում Իսրայելի տան ծերերը խավարում, ամեն մարդ՝ իր նկարների սենյակներում, որովհետև ասում են, թե՝ Տերը մեզ չի տեսնում» (Եզեկիել 8.12):

Որքա՞ն հաճախ ենք մենք անմտորեն մտածում, որ կարող ենք թաքցնել մեր հեռացած սրտերը Տիրոջից:

Կարճ ասած, բոլոր այս օրինակներն ունեն ընդհանուր արմատ, որը խթանում է այս ծանր սխալմունքը՝ սուրբ երկյուղի բացակայությունը: Այն չափով, որով մենք զուրկ ենք դրանից, Նրա կարողությունները փոքրացվում են մեր մտքում, և ամենից սարսափելին այն է, որ մենք չենք գիտակցում մեր վիճակը. մեր զանազանելու կարողությունը բթանում է: Հաջորդ մի քանի գլուխներում խոսելու ենք հենց այս վիճակի մասին:

Անձնական կիրառում

Հատված. «Եվ բոլոր եկեղեցիները կճանաչեն, որ Ես եմ երիկամունքները և սրտերը քննողը, և կտամ ձեզ՝ ամեն մեկիդ, ձեր գործերի համեմատ» (Հայտնություն 2.23):

Եզրահանգում. Աստված գիտի ոչ միայն մեր գործերը, այլև դրանց ետևում գտնվող շարժառիթները:

Մտորում. Արդյո՞ք ես մշտապես ապրում եմ՝ գիտակցելով, որ Աստված գիտի իմ ծածուկ մտքերը, շարժառիթները և դիտավորությունները: Ինչպե՞ս կարող եմ ավելի գիտակցել այս ճշմարտությունը:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ես խնդրում եմ, որ իմ շարժառիթները և դիտավորությունները լինեն նույնքան մաքուր, որքան Հիսուսի շարժառիթներն ու դիտավորություններն են: Թող ես զտեմ իմ բոլոր մտքերը, ցանկությունները, խոսքերը և գործերն այն գիտակցմամբ, որ Դու շարունակ քննում ես իմ ճանապարհները: Թող ես երբեք չընկալեմ Քեզ այնպես, որ փոքրացնեմ այս ճշմարտությունը: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կապրեմ՝ գիտակցելով, որ Աստված լիովին տեղյակ է իմ շարժառիթներից, մտքերից, խոսքերից և գործերից:

«Ինչո՞ւ են այս մարդիկ մնում
իրենց ինքնակործանարար
ճանապարհին»:

– ԵՐԵՄԻԱ 8.5, NLT

11| ԱՀՈՎ ԵՎ ԴՈՂԱԼՈՎ

Աստծո ահեղ ներկայությունը և դրան հետևող Անանիայի և Սափիրայի դատաստանը «մեծ վախ» բերեց եկեղեցու վրա: Կրկին, անհրաժեշտ է շեշտադրել, որ այստեղ օգտագործվում է ոչ թե *«քաղաք»* բառը, այլ՝ *«եկեղեցի»* բառը, այսինքն՝ սրբերի հավաքույթը: Ուսումնասիրելով «մեծ ահ» արտահայտությունը հունարենում՝ մենք ավելի պարզ կհասկանանք այս հատվածի իմաստը:

Առաջինը «մեծ» բառն է, որը թարգմանված է հունարեն *«մե՛գաս»* բառից: Այն սահմանվում է որպես «սանդղակի ամենաբարձր գիծը... մեծ չափով, սաստիկ, սարսափելի»[1]: Այս բառից է առաջացել միջազգային *«մեգա»* բառը: Այս բառի իմաստը միանշանակ է. ըստ էության, այս արտահայտությունը կարելի է թարգմանել որպես «մեգա վախ»: Մտապահեք, որ Աստվածաշնչի հեղինակները չեն չափազանցնում:

Երկրորդը «վախ» բառն է, որը թարգմանված է հունարեն *«ֆո՛բոս»* բառից, որը հաճախ է օգտագործվում *սուրբ երկյուղի* իմաստով ամբողջ Նոր կտակարանում: Այն սահմանվում է որպես «վախ, սարսափ, ակնածանք, հարգանք, պատիվ»: Մեկ այլ աղբյուր սահմանում է այս բառը որպես «խորին հարգանք և երկյուղածություն աստվածության հանդեպ. ակնածանք, երկյուղ»[2]: Կրկին, մենք հանդիպում ենք «երկյուղ» և «սարսափ» բառերին, որոնք ունեն մեծ վախի իմաստ: Պողոսն օգտագործում է նույն բառը, երբ գրում է.

> «Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունում, այլև հիմա էլ ավելի՝ իմ բացակայությունում, *ահով և դողալո՛վ* գործեք ձեր ան-

ձերի փրկությունը, որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպեցիների 2.12,13):

Մեր փրկությունը չի գործվում *սիրով և բարությամբ,* այլ՝ *ահով և դողալո՛վ,* ինչը մանրակրկիտ կդիտարկենք ավելի ուշ: Եվս մեկ անգամ, մեզ փոխանցվող ուղերձն ավելի ազդեցիկ է դառնում նոր բառի միջոցով, որը *«դողալն»* է: Այն թարգմանված է հունարեն *«տրո՛մոս»* բառից, որի սահմանումն է «դողալը՝ վախից, սարսափից... կամ խոր ակնածանքից, հարգանքից, սոսկումից»: Այս երկու բառերի գործածությունը եզակի երևույթ չէ, քանի որ Պողոս առաքյալն օգտագործում է դրանք միասին չորս անգամ Նոր կտակարանում:

Թեև դեռևս սպառիչ կերպով չենք ուսումնասիրել *սուրբ երկյուղը,* մենք արդեն բավականաչափ գիտենք՝ հարցնելու համար, թե ինչպե՞ս Աստծո Խոսքի որևէ ուսուցիչ կարող է սահմանափակել այն «ակնածալի երկրպագությամբ»: Միայն այս գլխում դիտարկած մի քանի աստվածաշնչյան հատվածներում հանդիպեցինք բավականին ծանրակշիռ բառապաշարի: Ահա այդ ցուցակը՝ մեգա վախ, ահ, սարսափ, խորին հարգանք, դող և սոսկում:

Այս բառերը չեն նկարագրում Քրիստոսում մեր կյանքի որևէ աննշան ոլորտ. դրանք ցույց են տալիս, թե ինչպես ենք *գործում* մեր փրկությունը՝ մի հասկացություն, որը նկարագրում է, թե ինչպես են մեր ջանքերը՝ Սուրբ Հոգու համագործակցությամբ և զորությամբ, լիարժեք հասունության բերում այն, ինչ Հիսուսը ձրիաբար շնորհել է մեզ: Այս պահից ի վեր մենք կարող ենք պնդել հետևյալը. *մեր փրկությունը հասունանում է ահով և դողալով:*

Այդ դեպքում, ինչո՞ւ սուրբ երկյուղը մեր եկեղեցիներում, փոքր խմբերում և աստվածաշնչյան դպրոցներում ուսուցանվող առաջնահերթ ճշմարտությունների թվում չէ: Գուցե հենց այս պատճառո՞վ է, որ Արևմուտքում այդքան շատ անարդյունավետ և գաղջ քրիստոնյաներ կան: Եվ գուցե այս պատճառո՞վ է, որ Աստվածաշունչը զգուշացնում է հավատքից մեծ նահանջի մասին վերջին օրերում: Պողոսը գրում է, որ հակաքրիստոսը չի կարող հայտնվել, քանի դեռ «նախ՝ չի եկել նահանջը [քանի դեռ այն մարդկանց կանխասված մեծ նահանջը, որոնք դավանել են, որ քրիստոնյա են, չի եկել]» (Բ Թեսաղոնիկեցիների 2.3, AMPC): Հնարավո՞ր է, որ այս նահանջը թափ է հավաքում, քանի որ մենք ճնշում ենք սուրբ երկյուղը: Քառասուն տարի շարունակ աղոթքի, ուսումնասիրության և Ամերիկայի յուրաքանչյուր նահանգում, ինչպես նաև վաթսուն երկրներում ծառայելուց հետո ես համոզված եմ, որ այդպես է:

Եկեք մեկ քայլ առաջ գնանք: Եկեղեցու սկզբնական կամ հիմնա-

կան ուսմունքներից մեկը «հավիտենական դատաստանն» է: Ուշադրությամբ կարդացեք այս խոսքերը.

> «Ուստի, Քրիստոսի մասին *սկզբնական* խոսքը թողնելով՝ դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին *հիմք* դնելու... հավիտենական դատաստանի» (Եբրայեցիների 6.1,2):

Փաստ է, որ բոլորս հաշիվ ենք տալու այն բանի համար, թե ինչպես ենք ապրել: Այս դատաստանի որոշումները հավիտենական հետևանքներ են ունենալու. դրանք հավերժ են լինելու: Այն դատաստանը, որի առջև կանգնելու է հավատացյալը, կոչվում է «Քրիստոսի ատյանը»:

Եկեք քննարկենք այս խոսքում շեղագրովնշված երկու բառերը: Առաջին բառը *սկզբնականն* է: Ի՞նչ է երեխան սովորում տարրական դպրոցում. կարդալ, գրել, գումարել, հանել նաև այլ հիմնական հմտություններ: Ըստ էության, մենք ստանում ենք այն հիմքը, որն անհրաժեշտ է՝ մեր կրթությունը շարունակելու համար: Կարո՞ղ եք պատկերացնել, որ սովորեք ավագ դպրոցում կամ համալսարանում՝ առանց կարդալու, գրելու, գումարելու կամ հանելու հմտությունների. անհնա՞ր է:

Ես տեսնում եմ, որ շատ հավատացյալներ տեղյակ չեն այն դատաստանից, որի առջև կանգնելու են, կամ, լավագույն դեպքում, միայն ծանոթ են այդ հասկացությանը, բայց սպառիչ կերպով չեն ուսումնասիրել այն: Սա կարելի է համեմատել այն բանի հետ, որ դուք միայն գիտեք, որ տարրական դպրոցական գիտելիքը կարևոր է, բայց այդպես էլ չեք յուրացրել: Մենք պետք է տանք հետևյալ կարևոր հարցը. ինչպե՞ս են հավատացյալները կառուցում իրենց կյանքը Քրիստոսում՝ առանց այս *սկզբնական* ճշմարտությունների:

Դիտարկենք շեղագրովնշված հաջորդ բառը՝ *հիմքը:* Կարո՞ղ եք պատկերացնել, որ շենք եք կառուցում՝ առանց հիմքի: Հանգիստ եղանակի դեպքում շենքը կարող է բարձրանալ և կանգուն մնալ: Բայց երբ ուժգին փոթորիկներ սկսվեն, այդ շենքը փուլ կգա: Սա կարող է խորհրդանշել հավատքից հեռանալը: Քրիստոնեական սոցիալական հարցումներ անցկացնող «Բարնա գրուպ» ընկերությունը տեղեկացնում է, որ ավելի քան քառասուն միլիոն հավատացյալ հեռացել է հավատքից 2000-2020 թվականներին[3]: Այդ մարդկանց կեսն այսօր համարում է իրեն ոչ քրիստոնյա՝ աթեիստներ կամ ագնոստիկներ: Հնարավո՞ր է, որ հիմքային ուսմունքների բացակայությունը խթանում է այս աղետալի վիճակագրությունը:

Եկեք հակիրճ դիտարկենք, թե ինչ է գրված մեր դատաստանի մասին.

> «Բայց վստահ ենք և ավելի ընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել» (Բ Կորնթացիների 5.8):

Մենք անմիջապես հասկանում ենք, որ Պողոսը դիմում է միայն հավատացյալներին: Երբ անհավատը դուրս է գալիս մարմնից, նա չի մտնում Աստծո ներկայության մեջ:

> «Նրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ կենանք, և թե՛ դուրս գանք, հաճո լինենք նրան» (Բ Կորնթացիների 5.9):

Երբ մեր որդիները դեռահասներ էին, Լիզան և ես հնարավորություններ էինք փնտրում՝ նրանց աստվածապաշտությամբ դաստիարակելու համար: Նրանց դաստիարակության կարևոր կողմերից մեկն այն էր, որ պաշտպանեինք նրանց արտոնյալ լինելու վերաբերմունք ունենալուց: Մի երեկո ասացի նրանց.

- Տղանե՛ր, դուք չեք կարող ոչինչ անել, որ մայրիկը և ես սիրենք ձեզ ավելի շատ կամ ավելի քիչ, քան՝ որ արդեն սիրում ենք:

Նրանք հասկացան, որ մեր սերը նրանց հանդեպ անպայմանական է: Բայց մի քանի րոպե անց շարունակեցի.

- Բայց դուք պատասխանատու եք այն բանի համար, թե որքանով ենք մենք գոհ ձեզնից:

Դա իսկական բացահայտում էր նրանց համար:

Ճշմարտությունն այն է, որ մենք ոչինչ չենք կարող անել, որ Աստված ավելի շատ կամ քիչ սիրի մեզ, բայց մենք պատասխանատու ենք այն բանի համար, թե որքանով ենք մենք հաճելի Նրան: Ահա թե ինչու է Պողոսն ասում, որ մեր նպատակը Նրան հաճելի լինելն է: Ինչո՞ւ:

> «Որովհետև մենք ամենս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար: Արդ, *Տիրոջ ահավորությունը* գիտենալով՝ մարդկանց համոզում ենք» (Բ Կորնթացիների 5.10,11):

Այս ատյանում մենք չենք դատվելու մեր մեղքերի համար, որոնցից ապաշխարել ենք. դրանք արդեն ջնջվել են Հիսուսի արյամբ: Աստված «հեռացրեց մեզնից մեր հանցանքները... որքան որ արևելքը հեռու է արևմուտքից» (Սաղմոս 103.12): Կրկին, գրված է. «նրանց անօրինությունները ներող կլինեմ և նրանց մեղքերը և նրանց անօրինություններն այլևս չեմ հիշի» (Եբրայեցիների 8.12):

Այդ դեպքում, ինչի՞ն է վերաբերելու մեր դատաստանը: Մենք դատվելու ենք այն բանի համար, թե ինչպես ենք ապրել՝ որպես հավատացյալներ. քննվելու է թե՛ բարին, թե՛ չարը:

Մեր ներկա քննարկման համար կարևոր է, որ Պողոսը վերագրում է «Տիրոջ *ահավորությունը*» հավատացյալների դատաստանին:

Այս բառը նույնպես թարգմանված է հունարեն «Φόβος» բառից, որն օգտագործվում է՝ նկարագրելու համար եկեղեցու արձագանքն Անանիայի և Սափիրայի դատաստանին: Այսպիսով, մենք պետք է մի կարևոր հարց տանք. հնարավո՞ր է, որ այս զույգի հետ տեղի ունեցածը հավատացյալների դատաստանի նախադիտումն է: Մենք կխոսենք այս հավանականության մասին հաջորդ երկու գլուխներում:

Անձնական կիրառում

Հատված. «Որպեսզի դուք քայլեք (ապրեք և վարվեք) Տիրոջն արժանի կերպով՝ լիովին հաճեցնելովնրան և ցանկանալով հաճելի լինել Նրան ամեն ինչում, պտուղ բերելով ամեն բարի գործում» (Կողոսացիների 1.10, AMPC):

Եզրահանգում. Դուք ոչինչ չեք կարող անել, որ Աստված ավելի շատ կամ քիչ սիրի ձեզ, քան՝ որ Նա արդեն սիրում է ձեզ: Բայց դուք պատասխանատու եք այն բանի համար, թե որքանով եք հաճելի Նրան:

Մտորում. Իմ կյանքը հաճելի՞ է Աստծուն: Ինչպե՞ս իմանալ, թե ինչն է հաճելի Նրան, իսկ ինչը՝ ոչ:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ես խնդրում եմ, որ Քո Խոսքի միջոցով և Քո Հոգով հայտնես ինձ, թե ինչն է հաճելի Քեզ, և ինչն է տհաճ: Տո՛ւր ինձ այնպիսի սիրտ և միտք, որոնք կձգտեն Քո հաճությանը և բերկրանքին ավելի, քան ցանկացած այլ բանի: Այսկերպ վարվելով՝ ես կճանաչեմ Քո սիրտը և կվարեմ այնպիսի կյանք, որը պատիվ կբերի Քեզ: Թող որ իմ խնդրանքը պատրաստի ինձ, որ մեկ օր կանգնեմ հավատացյալների ատյանի առջև և ստանամ այն հավիտենական վարձատրությունները, որոնք կամենում ես տալ ինձ: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Աստծուն հաճելի լինելն իմ կյանքի առաջնահերթությունն է: Նա ներգործում է ինձանում և՛ կամենալը, և՛ անելը, որպեսզի կատարեմ այն, ինչ հաճելի է Նրան:

Աստծո երկյուղի ուշագրավ կողմերից մեկն այն է, որ երբ վախենում եք Աստծուց, այլևս չեք վախենում ոչնչից, սակայն երբ չեք վախենում Աստծուց, վախենում եք ամեն ինչից:

– ՕՍՎԱԼԴ ՉԵՄԲԵՐՍ

12| ՎԱՐԱԿԻՉ ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է պարզաբանել մի փաստ այն զույգի վերաբերյալ, որոնց կյանքն ավարտվեց Գործք առաքելոց գրքում: Խնդիրն Անանիայի և Սափիրայի արարքը չէր. նրանք պարզապես նվիրատվություն կատարեցին եկեղեցական հավաքույթի ժամանակ: Աստծո գործի համար ֆինանսական նվիրատվություն կատարելն աստվածահաճո, սուրբ և գեղեցիկ արարք է: Խնդիրը նրանց մեղսալի շարժառիթն էր. նրանք ուզում էին, որ մարդիկ տեսնեին իրենց որոշակի լույսի ներքո:

Այս փաստն առաջացնում է մի կարևոր հարց. արդյո՞ք Քրիստոսի ատյանում քննվելու են միայն մեր խոսքերը և գործերը, թե՞ նաև մեր մտքերը և շարժառիթները:

Եկեք սկսենք. ահա մի զգուշացում, որը Հիսուսն ուղղեց Իր աշակերտներին.

> «Այն միջոցին, երբ որ հազարներով ժողովուրդները դիզվում էին, մինչև որ իրար կոխ էին տալիս, սկսեց Իր աշակերտներին ասել. «Առաջ ձեր անձերը զգույշ պահեք փարիսեցիների խմորից, որը կեղծավորությունն է: Որովհետև ոչինչ չկա ծածուկ, որ չհայտնվի, և թաքուն, որ չիմացվի»» (Ղուկաս 12.1,2):

Այս երկու խոսքերն այնքա՜ն շատ բան են պարունակում: Պատկերացրեք, որ դուք Ավետարանի ծառայող եք, և ձեզ լսելու համար հավաքվում է մեծ բազմություն, ինչպես գրված է՝ «հազարներով»: Սա քարոզիչների մեծ մասի երազանքն է: Սակայն ի՞նչ է անում Հիսուսը: Նա չի շշնջում Իր թիմին. «Տղանե՛ր, Ես եկել եմ հենց սրա

համար: Մի կո՛ղմ գնացեք, մինչ կանեմ Իմ գործը»: Ո՛չ: Փոխարենը, Նա երեք բան է անում.

Առաջինը՝ Նա օգտագործում է այդ հնարավորությունը, որպեսզի սովորեցնի նրանց պատկերավոր օրինակով, թե *ինչպես չհայտնվել պահի ազդեցության ներքո:* Նա զգուշացնում է այդ ապագա առաջնորդներին՝ օրինակով և ուսմունքով, *կեղծավորության* մասին: Այս խոսքում գրված է հունարեն *«հուպո՛կրիսիս»* բառը, որի սահմանումն է «թողնել որոշակի մտադրությունների և շարժառիթների տպավորություն, այն դեպքում, երբ ունեք բոլորովին այլ մտադրություններ և շարժառիթներ»[1]:

Փարիսեցիները կեղծավորության մասնագետներ էին. նրանց արարքները ցուցադրական և ձևական բնույթ էին կրում: Հիսուսը զգուշացնում է, որ չընկնենք այս ծուղակը՝ մաքուր շարժառիթներ պահպանելու միջոցով: Ըստ էության, Նա նկատի ունի հետևյալը. «Թույլ մի՛ տվեք ձեզ գործել հանուն համբավի կամ մարդկանց հավանության. փոխարենը՝ առաջնորդվե՛ք Հոգով և հաստատ կանգնեք ճշմարտության մեջ և՛ ձեր ուսմունքով, և՛ ձեր կյանքով»:

Երկրորդը՝ Հիսուսը ցույց է տալիս, թե որքան արագ կեղծավորությունը կարող է տարածվել: Նա համեմատում է այն թթխմորի հետ, որն ամբողջությամբ տարածվում է խմորի մեջ և բարձրացնում է ամբողջ զանգվածը: Հիսուսի օրինակը ցույց է տալիս, որ կեղծավորությունը վարակիչ է, բայց, ի տարբերություն թթխմորի, այն կործանարար է մեզ համար:

Երրորդը՝ Նա վճռականորեն հայտարարեց, որ կեղծավորությունը չի կարող թաքնված մնալ: Ի վերջո, մարդու խոսքերի և գործերի ետևում գտնվող դիտավորությունն անպայման բացահայտվելու է: Նրա հաջորդ խոսքերը ցույց են տալիս, թե ինչն է պաշտպանում մեզ անմաքուր շարժառիթներից.

> «Բայց ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն սպանում են և նրանից հետո ավել բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք: Նրանից վախեցեք, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու: Այո՛, ասում եմ ձեզ, Նրանի՛ց վախեցեք»» (Ղուկաս 12.4,5):

Հիսուսը կրկին խիստ բառ է օգտագործում՝ խոսելով վախի մասին: Այստեղ գրված *«ֆոբե՛ո»* բառը նման է *«ֆո՛բոս»* բառին, որը դիտարկեցինք նախորդ գլխում: «Ֆոբե՛ո» բառի սահմանումն է. «սարսափեցնել, ահաբեկել, վախեցնել»: Հիսուսը կապակցում է «գեհենի մեջ գցվելը» սուրբ երկյուղն անարգելու հետ: Սա զարհուրեցնող գաղափար է, որին

չպետք է թեթևամտորեն վերաբերվենք: Կրկին, մենք տեսնում ենք սուրբ երկյուղի կարևորությունը, և կրկին, այս հատվածը հաստատում է, որ սուրբ երկյուղն ավելին է, քան ակնածալի երկրպագությունը:

Հիսուսը պատվիրում է մեզ վախենալ Աստծուց, ոչ թե մարդկանցից: Պարզ ասած, *Աստծո երկյուղն ազատում է մեզ մարդու հանդեպ վախից*, և *մարդու հանդեպ վախը ստրկացնում է մեզ՝ թույլ չտալով երկյուղ ունենալ Աստծուց:* Համոզվա՛ծ եղեք, որ երբ երկյուղ ունենանք մարդկանցից, դա կազդի մեր դրդապատճառների վրա: Մտածեք մարդկանցից երկյուղ ունենալու մասին նույն կերպով, ինչպես Աստծուց երկյուղ ունենալու: Պարտադիր չէ, որ այն նշանակի փախչել մարդկանցից. փոխարենը, այն դրդում է մեզ հաճեցնել մարդկանց՝ սեփական բավականության, պաշտպանության և շահի շարժառիթով: Մարդու հանդեպ վախը գցում է մեզ կեղծավորության թթխմորի ծուղակը: Այն դրդում է մեզ ապրել մարդկանց հավանությանն արժանանալու համար:

Կրկին, Անանիայի և Սափիրայի արարքներն անմեղ էին թվում: Այնուամենայնիվ, նրանց շարժառիթները դրդեցին նրանց որոշակի տպավորություն թողնել իրենց եկեղեցու վրա, և դա էր նրանց անկման պատճառը: Մարդիկ կարող են աստվածահաճո արարքներ անել կամ խոսքեր ասել, սակայն, եթե նրանք սուրբ երկյուղ չունեն, նրանք մեղանչում են՝ իրենց դիտավորություններով:

1980-ական թվականներին, երբ ծառայում էի իմ տեղական եկեղեցում, սարսափելիորեն կապված էի մարդկանց հանդեպ վախով: Ես չէի հասկանում դա, մինչև որ Սուրբ Հոգին չբացահայտեց իմ շարժառիթը: Այդ ժամանակ ես տեսանելի դիրք ունեի մեր մեգա-եկեղեցում: Հետևողականորեն սիրալիր կերպով էի շփվում բոլորի հետ և պատրաստ էի հաճոյախոսություններ անել, նույնիսկ երբ իմ խոսքերը ճիշտ չէին: Ես տանել չէի կարողանում ընդհարումները և խուսափում էի դրանցից՝ ինչպես ժանտախտից: Ես սկսեցի լսել, թե ինչպես էին բոլորը խոսում իմ մասին՝ անվանելով ամենից սիրով լցված մարդը եկեղեցում: Դա ուրախություն և գոհություն էր պատճառում ինձ:

Մի օր աղոթքի ժամանակ Տերն ասաց. «Որդի՛ս, մարդիկ ասում են, որ դու սիրառատ և բարի մարդ ես»: Ես հստակորեն հիշում եմ, թե ինչպես Նա դիմեց իմ սրտին. ես հավանություն չզգացի Նրա ձայնի մեջ:

Եվ զգուշորեն ասացի. «Այո՛, մարդիկ այդպես են ասում»:

Նա պատասխանեց. «Գիտե՞ս, թե ինչու ես հաճոյախոսություններ անում բոլորին, նույնիսկ եթե դա ճիշտ չէ»:

«Ինչո՞ւ»:

«Քանի որ վախենում ես, որ նրանք կարող են մերժել քեզ: Այսպի-

սով, ո՞վ է քո սիրո կենտրոնում, դո՞ւ, թե՞ նրանք: Եթե իսկապես սիրեիր մարդկանց, դու ճիշտ կխոսեիր, ոչ թե կստեիր, նույնիսկ եթե նրանք մերժեին քեզ»:

Ես ապշեցի: Բոլորը սիրով լցված մարդ էին համարում ինձ, բայց ճշմարտությունը լիովին այլ էր:

Առաջին եկեղեցու անդամները, ամենայն հավանականությամբ, համարում էին, որ Անանիան և Սափիրան աստվածահաճո մարդիկ էին, հատկապես երբ Անանիան խոշոր նվիրատվություն փոխանցեց իր հովվին եկեղեցու անդամների ներկայությամբ: Այնուամենայնիվ, նրանց ճշմարիտ շարժառիթները բացահայտվեցին: Նույն կերպով, իմ շարժառիթը սեփական համբավը, պաշտպանությունը և շահն էր: Իրականում, իմ վարքի հիմքում կեղծավորությունն էր:

Մենք հեշտորեն կարող ենք աստվածահաճո և օգտակար գործեր անել, երբ բոլորը տեսնում են, սակայն եսակենտրոն շարժառիթ ունենալ: Մենք կարող ենք ոգևորել բազմությանը հրաշալի ավետարանական ուղերձով, բայց ներքուստ առաջնորդվել թաքնված եսակենտրոն ձգտումներով (տե՛ս Փիլիպ. 1.15,16): Մենք կարող ենք մեծ նվիրատվություններ կատարել աղքատների համար, բայց անել դա առանց սիրո (տե՛ս Ա Կորնթ. 13.3): Մենք կարող ենք երկրպագության առաջնորդել մարդկանց, սակայն ճանաչված կամ հանրահայտ լինելու ծածուկ մտադրություն ունենալ: Մենք կարող ենք սիրալիր լինել շփման մեջ, սակայն ներքուստ տնտղել և քննադատել մարդկանց: Մենք կարող ենք ասել, որ ցավում ենք որևէ հովվի համար, որին խնդրել են թողնել ծառայությունը՝ բարոյական վատ վարքի պատճառով, բայց ներքուստ ուրախանալ, որ նա ստացավ այն, ինչին արժանի էր: Մենք կարող ենք խոնարհ թվալ և ազդարարել. «Ամբողջ փառքը պատկանում է Հիսուսին», սակայն ներքուստ սիրել մարդկանց հավանությունը և գովեստը: Այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել:

Ճշմարտությունը հետևյալն է. առաջինը՝ Աստծուց անկարելի է թաքցնել որևէ շարժառիթ կամ մտադրություն, և երկրորդը՝ դրանցից յուրաքանչյուրը մեկ օր բացահայտվելու է: Անհրաժեշտ է կարևոր մի հարց տալ. հնարավո՞ր է, որ մենք չենք նկատում դրանք: Տիրոջ երկյուղն օգնում է մեզ հասկանալ մեր շարժառիթները, ինչն առանցքային նշանակություն ունի, քանի որ մեր շարժառիթները չհասկանալը դարձնում է մեզ խոցելի մոլորության և կեղծավորության համար:

Բոլորը եկեղեցում ցնցված էին Անանիայի դատաստանով, բայց ամենից մեծ էր հենց Անանիայի, իսկ քիչ անց նաև Սափիրայի զարմանքը: Սուրբ երկյուղի բացակայությունն այդ զույգի կյանքում կուրացրել էր նրանց՝ թույլ չտալով տեսնել իրենց չար շարժառիթ-

ները: Կրկին, մենք պետք է հարց տանք. արդյո՞ք պատմությունը նրանց մասին Քրիստոսի ատյանի նախադիտումն է: Մենք կտեսնենք դա հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է... և քննող է սրտի մտքերը և խորհուրդները» (Եբրայեցիների 4.12):

Եզրահանգում. Տիրոջ երկյուղն օգնում է մեզ հասկանալ մեր շարժառիթները, ինչն առանցքային նշանակություն ունի, քանի որ մեր շարժառիթները չհասկանալը դարձնում է մեզ խոցելի մոլորության և կեղծավորության համար:

Մտորում. Ի՞նչն է դրդում ինձ հաճեցնել մարդկանց՝ ներքուստ բարի համբավ, պաշտպանություն և շահ փնտրելով: Արդյո՞ք ես ինքնաբերաբար եմ ձգտում դրան, երբ գտնվում եմ ճնշման ներքո: Ո՞ր ոլորտներում է դա դրդել ինձ փոխզիջման գնալ իմ անկեղծության հետ:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, ների՛ր, որ ձգտել եմ հաճեցնել մարդկանց՝ իմ շահի համար: Սո՛ւրբ Հոգի, խնդրում եմ, բացահայտի՛ր իմ կյանքի բոլոր ոլորտները, որոնցում հեշտորեն տեղի եմ տալիս այս ճնշմանը: Ես ապաշխարում եմ, որ դարձրել եմ մարդկանց իմ ուրախության և երջանկության աղբյուրը՝ Հիսուսին իմ աղբյուրը դարձնելու փոխարեն: Ես խնդրում եմ, որ լցնես իմ սիրտը սուրբ երկյուղով, որպեսզի միշտ ճշմարտապես սիրեմ մարդկանց, և որպեսզի տեղի չտամ կեղծավորությանը: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կսիրեմ այն մարդկանց, որոնց հետ հաղորդակցվում եմ՝ խոսելով ճշմարտությունը և իմ շահից առավել ձգտելովնրանց շահին:

«Որովհետև բոլորս պետք է
երևանք և հայտնվենք՝
ինչպես որ ենք, Քրիստոսի
ատյանի առջև»:

– Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.10, AMPC

13| ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ

Ուշադրություն դարձրեք «հայտնվենք՝ ինչպես որ ենք» արտահայտությանը վերոնշյալ աստվածաշնչյան խոսքում: Յուրաքանչյուր մարդ ունի երեք պատկեր՝ *ընկալելի* պատկեր, *ներկայանալի* պատկեր և *փաստացի* պատկեր:

Մեր *ընկալելի* պատկերն այն է, թե ինչպես են մարդիկ տեսնում մեզ: Մեր *ներկայանալի* պատկերն այն է, թե ինչպես ենք մենք ցանկանում, որ մարդիկ տեսնեն մեզ: Մեր փաստացի պատկերն այն է, թե ով ենք մենք իրականում, ու թեև այն կարող է լինել մարդկանցից թաքնված կամ աննկատ՝ նրանց համար, այն լիովին տեսանելի է Աստծո համար: Մենք հենց այդ կերպով ենք հայտնվելու բոլորին Քրիստոսի ատյանի առջև:

Մտածեք Հիսուսի մասին. Նրան սխալ հասկացան, սուտ մեղադրանքներ ներկայացրին, անվանեցին հարբեցող և շատակեր, պիտակեցին որպես հերետիկոս և նույնիսկ մեղադրեցին դևերից ներշնչված լինելու մեջ: Նա մերժվեց կրոնական առաջնորդներից և ժողովրդից: Նրա ընկալելի պատկերն անբարենպաստ էր շատերի համար, հատկապես՝ նշանավոր մարդկանց:

Հիսուսի խորթ եղբայրները, որոնք այդ ժամանակ թերահավատորեն էին տրամադրված, փորձում էին դրդել Նրան վարվել ըստ *ներկայանալի* պատկերի. «Գնա՛ այնտեղ, որտեղ Քո հետևորդները կտեսնեն Քո հրաշքները,- ծաղրում էին նրանք,- Դու չես կարող հայտնի դառնալ, եթե այսպես թաքնվես... Ցո՛ւյց տուր Քեզ աշխարհին» (Հովհաննես 7.3,4, NLT): Նրանք կախված էին մարդկանց կարծիքներից և փորձում էին տանել Հիսուսին դեպի նույն ստրկությունը՝ մարդու հանդեպ վախը:

Այնուամենայնիվ, Հիսուսի *փաստացի* պատկերը մեծապես տարբերվում էր այն պատկերից, որը շատերն *ընկալում* էին, քանի որ «Նա անտեսանելի Աստծո տեսանելի պատկերն է» (Կողոսացիների 1.15, NLT):

Թեև շատերը մերժում էին Նրան, Ամենակարող Աստված լսելի ձայնով հաստատեց. «Սա իմ անչափ սիրելի Որդին է, Ով մեծ ուրախություն է պատճառում Ինձ» (Մատթեոս 3.17, NLT): Մնայուն էր ոչ թե Հիսուսի *ընկալելի* պատկերը, այլ՝ Նրա *փասփացի* պատկերը:

Երկրի վրա լինելու ընթացքում Նա խուսափում էր ինքնագովազդումից և համբավ կառուցելու ցանկացած փորձից: Որևէ մեկին բժշկելուց հետո Նա հաճախ պատվիրում էր. «Զգո՛ւյշ կացեք, որ ոչ ոք չիմանա» (Մատթեոս 9.30): Նա խուսափում էր հայտնի և հռչակավոր լինելուց, ինչպես նաև մարդկանց գովեստներից և հավանությունից[1]: Երբ մարդիկ ցանկացան թագավոր դարձնել Նրան, Նա հեռացավ: Նա խաբուսիկ արտաքին տպավորություն չէր թողնում, և Նրանում չկային կեղծ պատրանքներ կամ մոլորություն: Նրա բերկրանքը Տիրոջ երկյուղի մեջ էր, որը պահում էր Հորը Իր ուշադրության կենտրոնում: Մենք պետք է լինենք Հիսուսի ճշգրիտ պատկերը: Մենք ապրում ենք ազատության մեջ, երբ մեր ներսում ճշմարտությամբ ենք վարվում, միաժամանակ խուսափելով ինքնագովազդումից և ինքնապահպանումից: Առաջին անգամ եսակենտրոն վարքն ի հայտ եկավ Ադամի ու Եվայի կյանքում: Գրված է, որ նրանց անկման պահից «...նրանց աչքերը բացվեցին, և նրանք հանկարծ ամոթ զգացին» (Ծննդոց 3.7, NLT): Նրանց ուշադրությունը հեռացավ Աստծուց և ուղղվեց իրենց, և նրանք փորձեցին քողարկել իրենց նորագյուտ թերությունները: Առաջին զույգը փորձեց *ծածկել* սեփական մերկությունը: Մեր կյանքում այս ձգտումը կարող է այլ կերպ դրսևորվել, բայց այն բխում է միևնույն հիմքային խնդրից: Եթե ես կենտրոնացած եմ ինձ վրա, կփորձեմ ներկայացնել այնպիսի պատկեր, որը ծածկելու է այն թերությունները, որոնց տեղյակ եմ: Հիսուսը զոհաբերեց կյանքը, որպեսզի ազատի մեզ այս ստրկությունից: Պողոսը գրում է. «Որովհետև մենք չենք համարձակվում դասակարգել մեզ կամ համեմատել մեզ նրանց հետո, ովքեր իրենց հանձնարարում են: Բայց նրանք, իրենց անձերն իրենցով չափելով և իրենց միմյանց հետ համեմատելով, իմաստուն չեն» (Բ Կորնթացիների 10.12, NKJV): Եթե տեղի տանք համեմատության ճնշմանը, մենք կկենտրոնանանք մեր թերությունների վրա և կանցնենք ինքնագովազդման և ինքնապաշտպանության, և այդ ամենը սկիզբ կառնի մեր շարժառիթներից և դիտավորություններից: Ժամանակակից աշխարհում մեր *ընկալելի* պատկերն ավելի մեծ կշիռ ունի, քան *փասփացի* պատկերը: Պարզ ասած, մենք ձգտում ենք պաշտպանել մեր համբավը: Մեր ջանքերն ուղղված են մեր արտաքին տեսքին, կարգավիճակին, տիտղոսներին, հռչակավոր և ընդունված լինելուն, հեղինակությանը ևն, քանի որ դրանք *ծածկում* են մեր թերությունները: Սա չէ, որ հայտնվելու և քննվելու է Նրա ատյանում. փոխարենը, ատյանի առջև կանգնելու է մեր *փասփացի* պատկերը, որն արտացոլում է մեր շարժառիթները և դիտավորությունները:

> «Ուրեմն, ժամանակից առաջ մի՛ դատեք, մինչև Տերը գա, որ խավարի *ծածուկ* բաները (կամ՝ գաղտնիքները) կբերի լույսի մեջ, և սրտերի խորհուրդները կհայտնի, և այն ժամանակ ամեն մեկին *գովասանք* կլինի Աստծուց» (Ա Կորնթացիների 4.5):

Շատերն ուշադրություն չեն դարձնում այս խոսքին՝ կարծելով, թե վերաբերում է անհավատների դատաստանին: Այնուամենայնիվ, դա ճիշտ չէ, քանի որ ոչ մի անհավատ գովասանք չի ստանա Աստծուց՝ իր դատաստանի ժամանակ: Սա կարող է վերաբերել միայն հավատացյալներին:

Երբ լսում եք այն մասին, որ ձեր «ծածուկ գաղտնիքները» և «սրտերի խորհուրդները» հայտնվելու են ամբողջ երկնային բազմության առջև, դա կարող է առողջ վախ առաջացնել ձեզանում: Գուցե սա այն պատճառներից մեկն է, թե ինչու է Պողոսը հավատացյալների դատաստանը անվանում «Տիրոջ ահավորությունը»: Գիտակցումն այս իրողության մասին սուրբ երկյուղ է առաջացնում, ինչն իր հերթին զգոն է պահում մեզ և կարողություն է տալիս ապրելու՝ ելնելով մեր *փաստացի* պատկերից: Այնուամենայնիվ, հակառակը նույնպես ճշմարիտ է. որքան Տիրոջ երկյուղը պակասում է մեր կյանքում, այնքան ավելի ենք հենվում մեր *ներկայանալի* պատկերի վրա:

Հենց սա էր Անանիայի և Սափիրայի մահացու ծուղակը: Նրանք ավելի շահագրգռված էին այն բանում, թե ինչպես էին իրենց *ընկալում* այն մարդիկ, որոնց իրենք համարում էին իրենց մրցակիցները, ընկերները, եկեղեցու անդամները և առաջնորդները:

Այս պատմությունն ավելի հասկանալի դարձնելու համար պատկերացնենք, թե ինչպես նրանց անկման տանող ընթացքը կարող էր տեղի ունենալ մեր օրերում: Այդ եկեղեցին ընդամենը մի քանի ամսական էր: Առաքյալները և եկեղեցու անդամները սպասում էին, թե ովքեր էին կայանալու որպես առաջնորդներ տարբեր ոլորտներում:

Այս զույգը վերապրեց այն երջանիկ օրը, երբ իրենք ընդունեցին Հիսուսին, և նրանց մեղքերը ներվեցին: Նրանք համակված էին Աստծո սիրով և վայելում էին շփումն իրենց հավատակիցների հետ:

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում նրանց շեշտադրումները փոխվեցին: Հետաքրքրական է, որ դա, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ, երբ Աստված սկսեց գործել նրանց միջոցով՝ գուցե զոհաբերություն տալու, սփոփանքի խոսք ասելու կամ փառաբանության թիմում երգելու միջոցով... գոյություն ունեն անթիվ հնարավոր տարբերակներ: Նրանց ծառայությունը ճանաչում էր ստանում, և դա մեծ գոհունակություն էր պատճառում նրանց: Էնդորֆինները շրջում էին նրանց մարմնով մեկ՝ երջանկության և բավականության հուզիչ զգացումներ պարգևելով:

Նրանց ճանաչումը մեծանում էր: Սակայն իրենց նոր ձևավորված համբավը պահպանելու համար, նրանք պետք է *ծածկեին* որոշ վիճարկելի վարքագծեր՝ անվնաս թվացող խոսքերով և արարքներով: Ենթադրենք, նրանք սաստիկ ընտանեկան տարաձայնություն ունեին, որը վերածվել էր տևական վեճի: Նրանց բարկությունը և վեճերը տհաճ և տևական էին դառնում, բայց երբ գալիս էր հավատացյալների հետ համախմբվելու ժամանակը, նրանք կտրուկ փոխում էին իրենց վարքը՝ իրենց թերությունը *ծածկելու* համար: Այդ զույգը չէր ուզում, որ իրենց հավատակիցները տեսնեին իրենց անհամաձայնությունները և վեճերը, ինչը վնաս կհասցներ նրանց *ընկալելի* պատկերին. այնպես որ, նրանք *ներկայացնում* էին սիրող և հոգատար վերաբերմունք միմյանց հանդեպ:

Նրանք լուսանկարներ և տեսանյութեր էին տեղադրում Ինստագրամում և Տիկտոկում, որոնցում իրենք գրկախառնված էին և միասին հաճելի ժամանակ էին անցկացնում: Նրանց հրապարակումները հետևյալ վերնագրերն ունեին. «Կյանքի կոչված երազանք», «Մեր հարաբերության նպատակները» կամ «Սիրում եմ իմ կյանքը նրա հետ»: Նրանք ունեին բազմաթիվ այլ հրապարակումներ, որոնցում պատկերված էր իրենց հաջողակ կյանքը (թեև նրանք դժվարություններով էին անցնում), աճող ձեռնարկությունը (թեև այն անկում էր ապրում), օրինակելի երեխաները (որոնց վարքն անարգանքով լի, հանդուգն և եսակենտրոն էր) և այլ ձեռքբերումներ: Թվում էր՝ այդ ամենը գործում էր, քանի որ նրանց սոցիալական ցանցերի հետևորդների թիվն արագորեն ավելանում էր:

Անանիան և Սափիրան հետևողականորեն պահպանում էին իրենց *ներկայանալի* պատկերը: Այդ ամենը անվնաս էր թվում, սակայն աստվածային երկյուղը նրանցում աստիճանաբար պակասում էր՝ յուրաքանչյուր կեղծավոր արարքի հետ մեկտեղ: Նրանք այլևս հանդիմանություն չէին զգում՝ երկդիմի լինելու պատճառով: Թվում էր՝ ամեն ինչ լավ էր, և նրանք բարի համբավ էին վայելում, որի մի կողմն էլ այն էր, որ նրանք ամենից առատաձեռն բաշխողներն էին եկեղեցում:

Եկավ այն օրը, երբ Բառնաբասը բերեց իր նվիրատվությունը եկեղեցու առջև: Նրանց հավատակիցների ուշադրությունը հանկարծակի հեռացավնրանցից: Ինչ-որ մեկը գերազանցեց նրանց, և դա սպառնալիք դարձավնրանց *ներկայանալի* պատկերի համար: Ցավոք, մինչև այդ պահը նրանք արդեն ապրում էին իրենց ստեղծած պատկերով: Եվ մենք գիտենք, թե ինչ կատարվեց դրանից հետո:

Թվում էր՝ այդ ամենը անվնաս էր, և նրանք միայն ոգեշնչում էին մարդկանց, սակայն նրանք գնում էին վտանգավոր և կործանարար ճանապարհով: Կարելի՞ է եզրակացնել, որ Սուրբ Հոգին ցույց տվեց մեզ այս զույգի դառը վախճանը Աստվածաշնչում, որպեսզի զգուշաց-

նի մեզ և նախապես հայտնի, թե որքան լուրջ է լինելու Քրիստոսի ատյանը: Պողոսը գրում է.

> «Ոմանց մեղքերն ուշագրավ են (բացահայտ կերպով աչքի ընկնող) և գնում են նրանց առջևից դեպի դատաստանը [ատյանը] *և* նախապես ազդարարում են նրանց դատավճիռը, բայց մյուսների մեղքերը երևում են ավելի ուշ [հետևելով օրինազանցին դեպի մեղադրյալի աթոռը և ի հայտ գալով այդտեղ]» (Ա Տիմոթեոս 5.24, AMPC):

Անանիայի և Սափիրայի մեղքը բացահայտ կերպով երևաց բոլորին այդ հիշարժան օրը: Նրանց դատաստանը նախապես ազդարարվեց: Այնուամենայնիվ, ավելի տագնապալին պետք է լինի այն, որ մեծամասնության մեղքերը բացահայտվելու են հետագայում: Խնդրում եմ հիշել, որ Աստծո դատավճիռը վերաբերում էր նրանց ծածուկ շարժառիթներին, ոչ թե նրանց արարքին:

Բարի լուրն այն է, որ մենք կարող ենք ապաշխարել մեր խավար շարժառիթներից, և Աստված ոչ միայն կների մեզ, այլև, երբ աղաղակենք Նրան և խնդրենք սուրբ երկյուղ և մտքի նորոգում՝ Աստծո Խոսքի միջոցով, Նա կօրհնի մեզ՝ մաքուր շարժառիթներ տալով:

Անձնական կիրառում

Հատված. «Որովհետև ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և ոչ էլ թաքուն բան, որ չիմացվի և չհայտնվի» (Ղուկաս 8.17):

Եզրահանգում. Յուրաքանչյուր մարդ ունի երեք պատկեր՝ *ընկալելի* պատկեր, *ներկայանալի* պատկեր և *փաստացի* պատկեր:

Մտորում. Ո՞ր պատկերին եմ ես հարում: Արդյո՞ք ապրում եմ՝ հիմնվելով ճշմարտության վրա, թե՞ ստում եմ կամ խաբուսիկ պնդումներ եմ անում՝ իմ համբավը պաշտպանելու համար: Արդյո՞ք ես անկեղծ և շիտակ եմ ինձ շրջապատող մարդկանց հետ:

Աղոթք. Ես ապաշխարում եմ, որ առավել շեշտադրել եմ իմ ընկալելի և ներկայանալի պատկերները, քան փաստացի պատկերը: Ես փոխզիջման եմ գնացել՝ անկեղծ չլինելով, և խնդրում եմ Քո ներումը: Մաքրի՛ր իմ շարժառիթները և դիտավորությունները: Թող որ ես կենտրոնանամ Հիսուսի և մարդկանց վրա, ոչ թե ինձ վրա:

Դավանություն. Ես թույլ կտամ, որ Աստծո Խոսքի երկսայրի սուրը բացահայտի իմ սրտի մտքերը և խորհուրդները:

Մահվան և դատաստանի վախը հեռանում է մեզնից, երբ գալիս է Աստծո ճշմարիտ երկյուղը, և այդ երկյուղը տանջանք չունի, այլ թեթև ու քաղցր լուծ է անձի համար, որը հանգստացնում է՝ սպառելու փոխարեն:

– Է. Ու. ԹՈՋԵՐ ԵՎ ՀԱՐԻ ՎԵՐՓԼՈԳ

14| ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Եթե համեմատենք հավիտենության հետ, այս կյանքը գոլորշի է: Այնուամենայնիվ, եթե ավելի ճշգրիտ լինենք, այս կյանքը ոչինչ է, քանի որ հասարակ մաթեմատիկան պնդում է, որ ցանկացած թիվ անվերջությանը բաժանելու դեպքում ստացվում է զրո: Այսպիսով, իննսուն տարին՝ հավիտենության համեմատ, ոչինչ է: Հաշվի առնելով այս ապշեցուցիչ իրողությունը՝ մենք իմաստուն կվարվենք՝ պատրաստվելով հավիտենությանը:

Այն որոշումները, որոնք Հիսուսը կայացնում է Իր ատյանում՝ մեզնից յուրաքանչյուրի վերաբերյալ, հավիտենական են (տե՛ս Եբր. 6.1,2): Պարզ ասած, Նրա վճիռները երբեք չեն փոփոխվելու և չեն վերանայվելու: Ըստ էության, այն, թե ինչպես ենք մենք արձագանքում խաչին, վճռում է, թե *որտեղ* կանցկացնենք հավիտենությունը, սակայն մեր կյանքը՝ որպես հավատացյալներ, որոշում է, թե *ինչպես* կապրենք հավիտենության մեջ:

Շատերի պատկերացմամբ, երկինքն անմարմին, աննյութական վերապրում է, որտեղ կա սեր, խաղաղություն, և չկա ոչ մի տառապանք: Մյուսները համարում են, որ սրբերը լինելու են եթերային էակներ, որոնք տեղաշարժվելու են ամպերի վրա, տավիղ են նվագելու և խաղող են ուտելու: Կան նաև մարդիկ, որոնք կարծում են, թե երկնքում լինելու է ձանձրալի մշտական երկրպագության ծառայություն: Երկնքով ոգեշնչվելը դժվար կլինի, եթե դիտարկեք երկնային կյանքը՝ որպես տաղտկալի հավերժական գոյություն:

Այնուամենայնիվ, դրանք առասպելներ են, որոնց մասին ոչ մի տեղ գրված չէ Աստվածաշնչում: Լավագույնը այս կյանքում ընդամե-

նը հավիտենության շուքն է: Մեզ սպասում են բնակելի համայնքներ, որոնք պետք է նախագծել, քաղաքներ, որոնք պետք է կառուցել, ազգեր, որոնց պետք է առաջնորդել, գալակտիկաներ, որոնք պետք է հետազոտել և կազմավորել, և անսահմանորեն ավելին, ինչի համար սկզբնապես ստեղծված ենք եղել: Գոյություն ունեն իշխանական դիրքեր Տիրոջ հավիտենական քաղաքում, որոնք պետք է զբաղեցված լինեն: Այնպես որ, դիտարկեք Քրիստոսի ատյանը որպես հարցազրույց և գնահատում, որը որոշելու է ձեր հավերժական դիրքը Նրա Նոր երկնքի և Նոր երկրի մայրաքաղաքում:

Մտապահելով սա՝ վերադառնանք քննարկմանն այն մասին, թե ինչպես է մեր կյանքն այս երկրի վրա քննության ենթարկվելու Նրա ատյանում.

> «Որովհետև բոլորս պետք է երևանք և հայտնվենք՝ ինչպես որ ենք, Քրիստոսի ատյանի առջև, որպեսզի յուրաքանչյուրը ստանա [իր վճարը] ըստ այն բանի, թե ինչ է նա արել իր մարմնում եղած ժամանակ՝ թե՛ բարի, թե՛ չար [հաշվի առնելով, թե ինչպիսին են եղել նրա դիտավորությունները և շարժառիթները, և ինչ ձեռքբերումներ է նա ունեցել, ինչով է զբաղված եղել և ինչ որ բան իրագործելու համար ինչի՞ն է նվիրել իրեն և իր ուշադրությունը]» (Բ Կորնթացիների 5.10, AMPC):

Որպես հավատացյալներ, մեր մեղքերը, որոնք կդատապարտեին մեզ դժոխքի, ջնջված են Հիսուսի արյամբ և հավիտյան մոռացված են (տե՛ս Եբր. 8.12): Այնուամենայնիվ, մեր կյանքում դեռևս չար կամ վատ վարք կա, որի համար մենք պետք է հաշիվ տանք հավատացյալների դատաստանի ժամանակ: Սա պետք է որ գրավի մեր ուշադրությունը:

«Չար» բառը հունարենում *«կակո՛ս»* բառն է, որի սահմանումն է. «վատ լինելուն վերաբերող՝ վնասակար և կործանարար լինելու իմաստով», նաև «ետ քաշվել, հեռանալ, նահանջել կռվի ժամանակ»: Այս բառը մատնանշում է կործանարար հետևանք, որը կարող է առաջանալ ոչ միայն այն պատճառով, թե ինչ ենք մենք անում, այլև ետ քաշվելու կամ նահանջելու պատճառով, կամ, ավելի պարզ ասած, այն ամենի պատճառով, ինչ մենք *չենք* անում: Այսպիսով, այն ընդգրկում է ոչ միայն մեր արարքները, այլև բաց թողնված հնարավորությունները: Սուրբ երկյուղը զգոն է պահում մեզ Աստծո թագավորության մեջ մեր պարտականությունների հանդեպ, ինչպես և ցանկացած թյուր շարժառիթների և վարքագծերի, որոնք կարող են վնասել Աստծուն սիրող մարդկանց:

Հաճախ Աստվածաշունչը շինարարներ է անվանում մեզ: Մենք կա-

րող ենք դիտարկել մեզ որպես կապալառուների, որոնք կառուցում են Աստծո տունը, որտեղ Նա հավիտյան բնակվելու է: Նրա տունն անվանում ունի. այն կոչվում է Սիոն (տե՛ս Սաղմ. 132.13,14): Այն բաղկացած է կենդանի քարերից՝ Իր բոլոր սրբերից (տե՛ս Ա Պետր. 2.5), և դրա անկյունաքարը Հիսուսն է (տե՛ս Եսայի 28.16):

Պողոսը հստակ ցույց է տալիս մեր առաջադրանքները. «[Մենք] Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ դրանցում վարվենք» (Եփեսացիների 2.10): Ուշադրություն դարձրեք, որ մեր առաջադրանքները կատարելը կախված չէ մեր ցանկությունից. մենք պետք է կատարենք դրանք: Եթե հրաժարվենք մեր առաջադրանքներից՝ որոշելով առաջնորդվել մեր ժամանակավոր շահերով, դա «չար» վարքագիծ կհամարվի:

Պողոսը նույնպես գրում է. «Յուրաքանչյուր մարդ, որ կառուցում է այս հիմքի վրա, պետք է շատ զգույշ լինի» (Ա Կորնթացիների 3.10, NLT): Ակնհայտ է, որ այն, թե ինչպես ենք մենք կառուցում, էապես կարևոր է: Արդյո՞ք կառուցում ենք Նրա հավիտենական Խոսքով, թե՞ լսում ենք այս աշխարհի հոգուն: Արդյո՞ք մենք զբաղված ենք Նրա Հոգով կառուցելով, թե՞ մեր եսակենտրոն ցանկությունները կատարելով: Պողոսը շարունակում է.

> «Յուրաքանչյուրը, ով կառուցում է այդ հիմքի վրա, կարող է օգտագործել տարատեսակ նյութեր՝ ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, փայտ, խոտ կամ հարդ: Բայց դատաստանի օրը կրակը կհայտնի, թե ինչ տեսակի աշխատանք է կատարել յուրաքանչյուր շինարար: Կրակը ցույց կտա յուրաքանչյուրի գործը, թե արդյո՞ք այն որևէ արժեք ունի» (Ա Կորնթացիների 3.12,13, NLT):

Մենք կարող ենք որոշել ծախսել Աստծուց մեզ տրված ժամանակը տարբեր կերպերով: Եթե ապրենք և կառուցենք մեր անձնական շահի, այսինքն՝ ժամանակավոր բաների համար, դա դյուրավառ նյութ կհամարվի: Եթե մենք ապրենք, որպեսզի անձնազոհաբար կառուցենք Նրա թագավորությունը, դա կհամարվի նյութ, որը ոչ թե սպառվում է կրակից, այլ մաքրվում է կրակով: Մեր կյանքերը քննող կրակը լինելու է Աստծո Խոսքը, այսինքն, թե ինչպես են մեր շարժառիթները, խոսքերը և վարքը համապատասխանում դրան:

Պողոսը շարունակում է՝ գրելով. «Եթե գործը դիմանա, շինարարը վարձատրություն կստանա» (խոսք 14, NLT): Եթե մեր վարքը և աշխատանքը բխում են Նրա Խոսքին հնազանդվելուց և Նրա կամքից, մեր ձեռքբերումները հավիտյան կմնան: Կա երկու բան, ինչը պետք է

հաշվի առնել: Առաջինը՝ մեր ձեռքբերումների թվում է այն, թե ինչպիսի ազդեցություն ենք թողել մարդկանց վրա, և թե ինչպես ենք օգտագործել Աստծուց մեզ տրված տաղանդները՝ Նրա թագավորությունը կառուցելու համար: Երկրորդը՝ մեր հավիտենական վարձատրությունը կորոշի մեր հավիտենական դիրքը Նրա թագավորության մեջ:

Պողոսի հաջորդ խոսքերն ուշագրավ են.

> «Բայց եթե գործն այրվի, շինարարը *մեծ* կորուստ կկրի: Շինարարը *կփրկվի,* բայց՝ կրակի բոցերի միջից մի կերպ ազատվածի պես» (Ա Կորնթացիների 3.15, NLT):

Այս խոսքի մեջ այնքա՛ն նյութ կա՝ մեկնելու համար: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ շինարարը *կփրկվի:* Այս խոսքը չի վերաբերում անհավատի, որը հավիտյան դատապարտված է կրակի լճին, այլ՝ այնպիսի մարդու, որը հավիտյան բնակվելու է Աստծո թագավորության մեջ:

Երկրորդը՝ կորուստը մեծ է: Այս խոսքում օգտագործված հունարեն բառը կարող է վերաբերել պատժի կամ կորստի: Աստվածաբանների մեծ մասը չի կարծում, որ խոսքը պատժի մասին է, ես նույնպես այդպես չեմ կարծում: Սակայն այս բառը մեծագույն կորստի իմաստ է կրում: Մտապահեք, որ այս անասելի կորուստը ոչ միայն զգացվելու է Քրիստոսի ատյանի առջև, այլև ազդելու է մեր հավիտենական կյանքի վրա:

Երրորդը՝ կրակի բոցերից մի կերպ ազատված մարդու համեմատությունն է: Եկեք փորձենք ներկայացնել սա ժամանակակից կերպով: Արևմուտքում ապրող մարդիկ, որպես կանոն, նախապես պատրաստվում են թոշակի անցնելուն (անձամբ ես համաձայն չեմ այս մտածելակերպին, քանի որ թոշակի անցնելը ենթադրում է հեռանալ որևէ առաջադրանքից, ինչը «չար» [«կակո՛ս»] բառի սահմանումներից է: Այնուամենայնիվ, ես կօգտագործեմ թոշակի անցնելը՝ որպես օրինակ):

Պատկերացրե՛ք մի մարդու, որի բանկը սնանկանում է նրա թոշակի անցնելու առաջին իսկ օրը: Նրա բոլոր կենսաթոշակային խնայողությունները կորսվում են. այն ամենը, ինչը մնում է, մի փոքր գումար է նրա դրամապանակում: Նույն օրը պետական սոցիալական ապահովության գրասենյակը և բոլոր ընկերությունները, որոնցում գտնվում էին նրա անհատական կենսաթոշակային հաշիվները, նույնպես սնանկանում են: Բացի այդ, այն տունը, որտեղ նա պատրաստվում էր ապրել՝ որպես թոշակառու, հիմնովին այրվում է, և նա հազիվ փրկում է իր կյանքը՝ մի վերնաշապիկ հագին: Նա կորցնում է ամեն ինչ: Սա կարելի է դժբախտություն համարել: Այնուամենայնիվ, հենց

սա նկատի ունի Պողոսը, երբ նկարագրում է, թե ինչպես են որոշ հավատացյալներ մտնելու երկինք: Եվ սա չի տևելու քսանհինգ տարի (որը կենսաթոշակի միջին տևողությունն է), այլ՝ հավիտյան:

Կրկին, Պողոսը գրում է, որ այդ հավատացյալը փրկվում է, սակայն ամեն ինչ հիմնովին այրվում և հավիտյան կորսվում է: Հիշեք՝ խոսքը հավիտենական դատավճռի (որոշման) մասին է: Խնդրում եմ, սխալ մի՛ հասկացեք ինձ. փրկություն ստանալը աննշան բան չէ. դա անհամեմատ ավելի լավ է, քան կրակի լճում հավիտյան կորսված լինելը: Մենք կցնծանք ավելի, քան կարող ենք պատկերացնել, բայց նույնպես կգիտակցենք, որ ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել:

Զարմանալի չէ, որ Պողոսը հաջորդում է այս հատվածը հետևյալ խոսքերով. «Արդ *Տիրոջ ահավորությունը* գիտենալով՝ մարդկանց համոզում ենք» (Բ Կորնթացիների 5.11): Խնդրում եմ, լսե՛ք այն, ինչ կա իմ սրտում. հուսով եմ, որ այն սուրբ երկյուղը, որը Պողոսը բացահայտում է, կհամոզի ձեզ չվատնել ձեր ժամանակն այն բաների վրա, որոնք անօգուտ են լինելու, և չանցկացնել ձեր կյանքը՝ կենտրոնանալով ձեր ընկալելի և ներկայանալի պատկերների վրա: Հուսով եմ, որ այն ժամանակը, որը շնորհված է ձեզ, կնվիրեք Նրա Խոսքին և Նրա Հոգուն հնազանդվելուն:

Անձնական կիրառում

Հատված. «Որովհետև մենք ամենս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար: Արդ Տիրոջ ահավորությունը գիտենալով՝ մարդկանց համոզում ենք» (Բ Կորնթացիների 5.10,11):

Եզրահանգում. Այն, թե ինչպես ենք արձագանքում խաչին, վճռում է, թե *որտեղ* կանցկացնենք հավիտենությունը, սակայն մեր կյանքը՝ որպես հավատացյալներ, որոշում է, թե *ինչպես* կապրենք հավիտենության մեջ:

Մտորում. Արդյո՞ք ամեն օր կենտրոնանում եմ հավիտենականը կառուցելու վրա. արդյո՞ք կառուցում եմ մարդկանց կյանքերը՝ ճշմարտությամբ և սիրով, թե՞ ներդնում եմ իմ ուժերը, կարողությունը և ժամանակը, որպեսզի կառուցեմ ինձ համար:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ, որ տրամադրել եմ իմ ուշադրությունը, ուժերը, կարողությունը և ժամանակը՝ ժա-

մանակավորը կառուցելու համար: Խնդրում եմ, որ ցույց տաս, թե ինչպես կառուցեմ Հիսուսի թագավորության համար ամեն օր: Խնդրում եմ, որ զորացնես ինձ, որպեսզի ազդեցություն ունենամ մարդկանց կյանքերի վրա՝ հավիտենության համար: Շնորհակալ եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կփնտրեմ և կօգտագործեմ հավիտենական հնարավորություններ, ոչ թե պարզապես այնպիսի հնարավորություններ, որոնք կանցնեն այս կյանքի հետ:

ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

ՇԱԲԱԹ 3

Մարմնավոր մարդը վախե-
նում է մարդուց, ոչ թե Աստծուց:
Ուժեղ քրիստոնյան վախենում է
Աստծուց, ոչ թե մարդուց: Թույլ
քրիստոնյան չափազանց շատ
է վախենում մարդուց, և չափա-
զանց քիչ՝ Աստծուց:

– ՋՈՆ ՖԼԱՎԵԼ

15| ՄԱՐԴՈՒ ՀԱՆԴԵՊ ՎԱԽԸ

Ճշմարիտ սրբությունը նշանակում է լիովին պատկանել Աստծուն: Սրբության հիմնական սահմանումն է «Աստծո համար առանձնացված լինելը»[1]: Դրա իմաստն այնքան լայն է, որ այդ մասին կարելի է ամբողջ հատորներ գրել: Մենք կանդրադառնանք դրա կարևորագույն կողմերին, քանի որ աստվածային երկյուղը սրբության անբաժանելի մասն է: Բայց մինչև սկսելը, կարևոր է հստակորեն հայտարարել հենց սկզբից. սրբությունը ստրկություն չէ. այն ճշմարիտ ազատություն է:

Միանգամայն հնարավոր է, որ Անանիայի և Սափիրայի դատաստանն այն բանի նախադիտումն է, ինչին մեկ օր բախվելու է յուրաքանչյուրը, այսինքն՝ դատաստանի: Կա մի վաղեմի հարց՝ կապված այս պատմության հետ. արդյո՞ք այս զույգն այն մարդկանց օրինակն է, որոնք «մեծ կորուստ» են կրելու երկնքում, թե՞ նրանք հայտնվեցին դժոխքում:

Այն աստվածաշնչյան խոսքը, որը հաճախ են օգտագործում որպես փաստարկ այն մասին, որ այս զույգը հավիտյան դատապարտվել է, Հիսուսի խոսքերից մեկն է Ավետարաններում. «Բայց ով որ Սուրբ Հոգուն հայհոյի, հավիտյան թողություն չի ունենա» (Մարկոս 3.29): Այս կարծիքի սխալ լինելը բացահայտվում է *«հայհոյություն»* բառի սահմանմամբ, որը հետևյալն է. «խոսել ինչ-որ մեկի մասին՝ նրա համբավին վնաս հասցնելով կամ նրան վիրավորելով»[2]: Այդ զույգը *սրեց* Սուրբ Հոգուն, բայց, ըստ այս սահմանումի, նրանք *չհայհոյեցին:* Այսպիսով, այս տարբերակը նրանց վախճանի մասին համոզիչ չէ: Ամեն դեպքում, հազիվ թե մեզնից ինչ-որ մեկը նախանձի նրանց վախճանին:

Արդյո՞ք կա որևէ աստվածաշնչյան օրինակ այնպիսի մարդու մասին, որը, ինչպես մենք գիտենք, երկնքում է, բայց որը միանշանակ կորուստ կկրի դատաստանի ժամանակ: Կարծում եմ՝ այո: Թույլ տվեք սկսել Պողոսի խոսքերով.

> «Մի՞թե այս խոսքերից թվում է, թե ես փորձում եմ մարդկային հավանություն շահել: Ո՛չ մի դեպքում: Իմ ուզածը Աստծո՛ հավանությունն է: Մի՞թե ես փորձում եմ համբավ ձեռք բերել մարդկանց մոտ: Եթե դեռ այդպես վարվեի, ես Քրիստոսի ծառա չէի լինի» (Գաղատացիների 1.10, GNT):

Ինչպիսի՜ խիստ պնդում: Մենք զրկվում ենք Քրիստոսի ծառա լինելու արտոնությունից, եթե տեղի ենք տալիս համբավ ձեռք բերելու ձգտմանը: Նման դեպքում մենք պատրաստ ենք լինում ներկայանալ ցանկացած կերպով՝ նպաստավոր տպավորություն թողնելու համար: Պողոսը չէր պատրաստվում այդպես վարվել, և մենք էլ չպետք է այդպիսին լինենք:

Պողոսը վարվում էր սուրբ երկյուղի բարձր մակարդակով. հիշեք, որ նրա գրչին են պատկանում հետևյալ խոսքերը. «Ահով և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպեցիների 2.12): Նա կենտրոնացած էր մնում իր *փասպացի* պատկերի վրա (այն պատկերի, որը հայտնվելու էր դատաստանի ժամանակ), ոչ թե իր *ներկայանալի* պատկերի վրա: Ահա թե ինչու նա մնաց ճշմարիտ սրբության մեջ և շարունակեց ճշմարտապես հնազանդվել Քրիստոսին, նույնիսկ բախվելով մարդկանց կողմից հիասթափության, անհավանության և մերժվածության:

Մենք պետք է մշտապես հիշենք հետևյալ ճշմարտությունը. *դուք ծառայելու եք նրան, ումից վախենում եք:* Եթե վախենաք Աստծուց, դուք հնազանդվելու եք Աստծուն: Եթե վախենաք մարդուց, ի վերջո հնազանդվելու եք մարդկանց ցանկություններին: Հաճախ ավելի շատ անհանգստանում ենք, որ կարող ենք վիրավորել մեր առջև գտնվող մարդուն, քան Նրան, Ում չենք տեսնում բնական աչքերով, հատկապես եթե ձգտում ենք դիմացինի սիրուն կամ ընկերությանը: Ահա թե ինչու է գրված. «Մարդկանցից վախենալը վտանգավոր ծուղակ է» (Առակաց 29.25)՝ այն ծուղակը, որում, անկասկած, հայտնվեցին Անանիան և Սափիրան:

Ավելի ուշ նույն նամակում Պողոսը նկարագրում է մի պատմություն առճակատման մասին, որը տեղի ունեցավ մի խումբ առաջնորդների հետ հանդիպման ժամանակ: Ես միայն կարող եմ պատկերացնել, թե ինչպիսի կրակ էր բորբոքվում նրա ներսում, երբ գրում էր հետևյալ տողերը.

«Բայց երբ որ Պետրոսը եկավ Անտիոք, ես նրան հակառակ կեցա, որ մեղադրելի էր: Որովհետև մի քանի մարդիկ դեռ չեկած Հակոբից, նա անխտիր ուտում էր հեթանոսների հետ, բայց երբ որ եկան, ետ էր քաշվում և իր անձը ջոկում, վախենալովնրանցից, որ թլփատությունից էին: Եվնրա հետ ուրիշ հրեաներ էլ կեղծավորություն արեցին, մինչև որ Բառնաբասն էլ ծռվեց նրանց կեղծավորությունով: Բայց երբ որ տեսա, որ Ավետարանի ճշմարտության համեմատ ուղիղ չեն գնում, ամենքի առջև ասացի Պետրոսին. «Եթե դու, հրեա լինելովդ, հեթանոսի պես ես վարվում, և ոչ թե հրեայի պես, էլ ինչո՞ւ ես բռնադատում հեթանոսներին, որ հրեայի պես վարվեն» (Գաղատացիների 2.11-14):

Պետրոսը, Բառնաբասը և այլ հրեա հավատացյալներ վախենում էին այն մարդկանց անհավանությունից, որոնց իրենք հարգում էին: Ընդունված լինելու ցանկությունը դրդեց նրանց կեղծավոր վարքի, առաջինը՝ Պետրոսին, իսկ հետո նաև մյուսներին: Նրանց *ներկայանալի* պատկերը դարձավ ավելի առաջնահերթ, քան նրանց անկեղծությունը՝ դրդելով անսուրբ վարքի: Առակաց 29.25-ում՝ մեկ այլ թարգմանությամբ, գրված է. «Վտանգավոր է մտահոգված լինել այն բանով, թե ինչ են մարդիկ մտածում քո մասին» (GNT):

Պողոսը, որը պահպանեց իր անկեղծությունը, ուղիղ հանդիմանեց Պետրոսին, ինչպես նաև Բառնաբասին և մյուսներին, որոնք տեղի տվեցին իրենց միջավայրի ճնշմանը: Պողոսն անմիջապես մատնացույց արեց, որ քանի դեռ պահպանողական հրեա առաջնորդները ներկա չէին, Պետրոսը և նրա թիմակիցներն ապրում էին ըստ ճշմարտության՝ իրենց *փաստացի* պատկերի: Նրանք օժտված էին Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ներկայացուցիչներ լինելու զորությամբ, այսինքն՝ ընդունելու, սիրելու և հաղորդակցվելու հեթանոսներից դարձի եկած հավատացյալների հետ: Բայց հենց որ հանգամանքները փոխվեցին, Պետրոսը և նրա ընկերները սկսեցին վարվել ըստ *ներկայանալի* պատկերի, որպեսզի հաճեցնեին իրենց ազգակիցներին: Նրանց վարքագիծը կառուցողական չէր. այն կործանարար էր:

Պետրոսը սուրբ է. նա երկնքում է: Այնուամենայնիվ, սա օրինակ է այնպիսի չար և վնասակար շարժառիթների, բառերի և արարքների, որոնք քննվելու են Քրիստոսի ատյանում: Եթե մեր կյանքի նպատակը լինի մշտապես Հիսուսին հաճեցնելը, մենք չենք սայթաքի և չենք վերահսկվի այն բանով, թե ինչպես են մարդիկ *ընկալում* մեզ. փոխարենը, կապրենք՝ համաձայն ճշմարտության: Սա ճշմարիտ սրբության կարևոր կողմն է: Ուշադրությամբ կարդացե՛ք հետևյալը.

> «Աստծո Խոսքը կենդանի է և գործող, երկսայրի սրից ավելի սուր է: Այն կտրում է՝ թափանցելով մեր ներսը, որտեղ անձը և հոգին միացած են, դեպի մեր հոդերի և ոսկորների մեջտեղը: Եվ այն դատում է մեր սրտերի մտքերն ու զգացմունքները: Ամբողջ աշխարհում ոչինչ չի կարող թաքնված լինել Աստծուց: Ամեն ինչ ակնհայտ է և բաց է Նրա առջև, և մենք հենց Նրա՛ն պետք է բացատրենք, թե ինչպես ենք ապրել» (Եբրայեցիների 4.12,13, NCV):

Հասկացա՞ք այս խոսքերը: Եթե արագորեն ընթերցեցիք այս հատվածը, քանի որ ծանոթ եք դրան, կրկի՛ն դանդաղորեն ընթերցեք և խորհեք յուրաքանչյուր մտքի շուրջ:

Ուշադրություն դարձրեք, որ Աստծո Խոսքը խորապես թափանցում է դեպի մեր ներսի մտքերը և ցանկությունները: Այն բացահայտում է մեզ՝ ցույց տալով, թե ով ենք իրականում, ոչ թե այն, թե ինչպես ենք ներկայացնում մեզ: Եթե լսենք և հնազանդվենք, Աստծո Խոսքը կպաշտպանի մեզ ինքնախաբեությունից, օրինակ՝ *«Տերը չի տեսնում մեզ»* մտքից, որն անաստված և անսուրբ վարքագծի պատճառ է դառնում:

Աստծո Խոսքին ուշադրությամբ ականջ դնելը արթուն է պահում Տիրոջ երկյուղը մեր սրտերում: Այն օգնում է մեզ լիովին գիտակցել այն փաստը, որ «չկա մի արարած՝ աներևույթ Նրա երեսից, բայց ամենն էլ մերկ և բաց է Նրա աչքերի առջև» (Եբրայեցիների 4.13): Այժմ ավելի լավ ենք հասկանում Սուրբ Հոգու խորհուրդը՝ ուղղված մեզ.

> «Որդյա՛կս, եթե Իմ խոսքերն ընդունես և Իմ պատվերները պահես քեզ մոտ, որ ականջ դնես իմաստությանը և սիրտդ ուղղես հանճարին, երբ որ հասկացողությանը կանչես և ձայն տաս հանճարին, եթե դու նրան որոնես՝ ինչպես արծաթը, և գանձերի նման նրան պտրտես, այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը և Աստծո գիտությունը կգտնես» (Առակաց 2.1-5):

Մենք իմաստությամբ կվարվենք, եթե ձգտենք Աստծո Խոսքին մեր ներսում՝ այնտեղ, որտեղ ձևավորվում են մեր շարժառիթները և դիտավորությունները: Երբ դիտարկենք Աստծո Խոսքը որպես մեծագույն գանձ, որը հնարավոր է գտնել, և հնազանդվենք այն ամենին, ինչ հայտնվում է մեզ, մենք մուտք կգործենք *անվտանգության գոտի:* Երբ ջանասիրաբար ձգտենք ճանաչել Նրա ճանապարհներն այնպես, ասես չկա այլ վարձատրություն՝ դրանից առավել, մենք կճանաչենք և կհասկանանք Տիրոջ երկյուղը և կխուսափենք կեղծ պատկերովներ-

կայանալու մոլորությունից: Մենք զորություն կստանանք՝ ապրելու անկեղծությամբ և ճշմարտությամբ, և ապահով ու հաստատ կանգնած կլինենք սրբության պողոտայում (ճանապարհին):

Անձնական կիրառում

Հատված. «Սո՛ւրբ արեք Երկնքի զորքերի Տիրոջ անունը ձեր կյանքում: Նրանից է, որ դուք պետք է վախենաք: Նրանից է, որ դուք պետք է դողաք: Նա ապահով կպահի ձեզ» (Եսայի 8.13,14, NLT):

Եզրահանգում. Դուք ծառայելու եք նրան, ումից վախենում եք: Եթե վախենում եք Աստծուց, կինազանդվեք Աստծուն: Եթե վախենում եք մարդուց, ի վերջո հնազանդվելու եք մարդկանց ցանկություններին: Եթե ձգտում եք հնազանդվել մարդկանց ցանկություններին, դուք այլևս չեք կարող Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ծառան լինել:

Մտորում. Ինչո՞ւ եմ ես ավելի շատ փորձում չվիրավորել իմ առջև գտնվող մարդուն, քան Նրան, Ում չեմ տեսնում իմ բնական աչքերով: Ինչո՞ւ եմ ես ավելի շատ ցանկանում ստանալ սեր, ընդունելություն և ընկերություն մարդկանցից, քան Աստծուց: Ինչպե՞ս կարելի է փոխել դա:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ ներես ինձ այն դեպքերի համար, երբ ձգտել եմ արժանանալ մարդկանց հավանությանը՝ Քո հավանությանը ձգտելու փոխարեն: Հիսո՛ւս, ես ապաշխարում եմ, որ ձգտել եմ մարդկանց մոտ համբավ ունենալուն՝ անտեսելով Քո հավանությունը: Ես որոշում եմ կայացնում լինել սուրբ և առանձնացված Քեզ համար: Այս պահից ի վեր առավելագույնս ձգտելու եմ հաճելի լինել Քեզ: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես Քրիստոսի ծառան եմ: Ես ձգտում եմ Նրա հավանությանը՝ մարդկանց հավանությունից առավել:

Երբ Աստծո երկյուղն իշխում է մեր սրտերում, այն դրսևորվում է թե՛ մարդասիրության, թե՛ աստվածապաշտության գործերով, և սրանցից որևէ մեկը չպետք է արդարացում լինի՝ մյուսը թողնելու համար:

– ՄԵԹՅՈՒ ՀԵՆՐԻ

16| «ԱՐՏՈՆՅԱԼ» ԴԻՐՔ

Գաղատացիներին ուղղված նամակը գրվել է մոտավորապես մ.թ. 49 թվականին. այնպես որ, մենք կարող ենք եզրակացնել, որ Պողոսի հանդիմանությունը՝ ուղղված Պետրոսին և այլ հրեա առաջնորդներին, տեղի էր ունեցել դրանից առաջ: Ավելի քան մեկ տասնամյակ անց՝ մոտավորապես մ.թ. 63 թվականին, Պետրոսը գրեց իր առաջին նամակը: Համոզված եմ, որ այն առճակատումը, որը հայտնի դարձավ Գաղատիայի եկեղեցուն, դեռ թարմ էր նրա հիշողության մեջ, երբ գրեց հետևյալ խոսքերը.

> «...չնմանվելով այն ձեր տգիտության ժամանակվա առաջին ցանկություններին... Եվ եթե Հայր եք կանչում Նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն մեկի գործի պես, ապա ձեր պանդխտության ժամանակը *վախով* վարվեք» (Ա Պետրոս 1.14,17):

Ակնհայտ է, որ Պետրոսը գրում է հավատացյալներին՝ նրանց, ովքեր ուրացել են իրենց անձերը, խաչվել են այս աշխարհի համար և լիովին նվիրվել են Հիսուսին հետևելուն: Ցանկացած վերստին ծնունդ, որն այս հիմքի վրա չէ, վավերական չէ (տես Մատթ. 16.24, Մարկ. 8.34, Ղուկ. 9.23, Գաղատ. 6.14): Հենց որ վերածնումը տեղի է ունենում, մեր մեջ աստվածային բնություն է ձևավորվում: Երբ տեղի ենք տալիս այս բնությանը, այն ազատում է մեզ մեր զգայարանների թելադրանքից, և մենք զորություն ենք ստանում, որ ապրենք այդկերպ՝ Աստծո Հոգով և Նրա հայտնված Խոսքով (տես Բ Պետր. 1.4):

Առաքյալը զգուշացնում է մեզ, որ չվերադառնանք այն ցանկություններին, որոնք անցյալում վերահսկում էին մեզ: Մեծագույն ձգտումներից մեկը, որ պետք է մերժենք և խաչենք, *ինքնապահպանման* ձգտումն է: Սա այն հիմքային շարժառիթն է, որը դրդում է մեզ նպաստավոր կերպովներկայանալ մարդկանց, ինչը, այլ խոսքերով, մարդու հանդեպ վախն է: Այն դրդեց կործանարար վարքի ոչ միայն Պետրոսին, այլև Անանիային, Սափիրային, Բառնաբասին և այլոց:

Պետրոսը զգուշացնում է, որ մենք արժանանալու ենք անբարենպաստ դատաստանի, թե՛ այս կյանքում, թե՛ հաջորդում, եթե տեղի տանք այս ձգտումներին: Մյուս կողմից, մենք կվարձատրվենք՝ Աստծո ցանկություններին սերտորեն հարելու համար: Այս հրահանգները տալու ընթացքում նա խիստ զգուշացում է անում. *Ասփված անաչառ է:* Եկեք մտածենք, թե ինչը կարող էր դրդել Պետրոսին գրել այս խոսքերը:

Որպես առաքյալ, նա ազդեցիկ ծառայություն էր ստացել Հիսուսից: Նա Առաջին եկեղեցու գլխավոր առաջնորդներից էր, սակայն տարիներ առաջ, Անտիոքում նա և այլ հրեա առաջնորդներ ընկան եսակենտրոնության ծուղակը: Հնարավոր է, որ Պողոսի բացահայտող առճակատումը դրդեց նրան անկեղծորեն գնահատել իր շարժառիթները և գործերը: Ըստ էության, Պետրոսը պետք է առերեսվեր իր կեղծավորության պատճառների հետ:

Գուցե այդ առճակատման պահին նա մտածում էր այլ աստվածաշնչյան առաջնորդների սխալական վարքի մասին, օրինակ՝ Սավուղ և Դավիթ թագավորների: Սավուղը չհնազանդվեց երկնքից տրված պարզ հրահանգին, որ շահեր իր զորքի հավանությունը, այսինքն՝ մարդկանցից վախենալու պատճառով: Դավիթը շնություն գործեց, իսկ հետո սպանեց այդ կնոջ ամուսնուն, որպեսզի պահպաներ իր բարի անունը, կրկին՝ մարդկանցից վախենալու պատճառով: Երկու առաջնորդներն էլ հանդիմանություն ստացան, և երկուսն էլ դատաստաններ բերեցին իրենց վրա: Սավուղի պարագայում, նա կորցրեց իր թագավորությունը: Դավթի պարագայում, թուրը երբեք չէր հեռանալու նրա ընտանիքից: Ընկնելով այն մտքի ծուղակը, որ իրենք վայելում էին Աստծո բարեհաճությունը, երկուսն էլ փոխզիջման գնացին՝ ողջամիտ միջանձնային սահմաններ խախտելով, և արդյունքում շեղվեցին՝ անաստված կամ անհնազանդ արարքներ գործելով:

Պետրոսը տեղյակ էր, թե որքան հեշտ դա կարող է տեղի ունենալ: Նա զգուշացրեց մեզ, որ խուսափենք մեզ «արտոնյալ» համարելուց, և չկարծենք, թե դա կազատի դատաստանից: Որպես օրինակ՝ «ես ջանասիրաբար գործում եմ Աստծո համար», «ես շատ նվիրատվություններ եմ կատարել՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար», «ես տարիներ շարունակ բարեխոսել և աղոթել եմ» կամ՝ «ես մեծ ձեռքբե-

րումներ ունեմ՝ որպես եկեղեցական առաջնորդ»: Եկեք խոստովանենք, որ նման խաբուսիկ դատողություններին վերջ չկա, բայց դրանց իմաստը հետևյալն է. «Ինձ կարելի է խախտել Աստծո օրենքը»: Այս մտածելակերպը մերժում է սուրբ երկյուղը՝ որպես գանձ:

Պետրոսը սկսեց լիարժեք հասկանալ Հիսուսի հետևյալ պնդման կշիռը. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք, ասեք, թե՝ մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկաս 17.10): Հունարեն «անպիտան» բառի սահմանումն է. «ոչ արժանի հատուկ գովեստի կամ գովասանքի»[1]: Անկախ այն բանից, թե որքան ջանասիրաբար ենք ծառայել Աստծուն, մենք երբեք չպետք է «արտոնյալ» համարենք մեզ: Դա խաբուսիկ հոգեվիճակ է, որը հեշտորեն ծուղակն է գցում բոլորիս, հատկապես՝ առաջնորդներին:

Պետրոսը գրում է իր նամակները՝ արդեն իսկ փորձառություն և հայտնություն ունենալով: Նա գիտի, որ մարդու հանդեպ վախի հակաթույնն ակնածալի երկյուղով ապրելն է: Կրկին, սա նշանակում է խորին հարգանք և պատկառանք: Նա տալիս է մեզ այն բանալին, որի շնորհիվ կարող ենք վարձատրություն ստանալ Աստծուց, այլ ոչ թե արժանանալ ոչ նպաստավոր դատաստանի:

Եթե դիտարկենք Հիսուսի «նեղ դռան և նեղվածք ճանապարհի» մասին ուսմունքն այս լույսի ներքո, մենք հստակ կհասկանանք մի իրողություն, որը շատերը չեն նկատում.

> «Նեղ դռնովներս մտեք, որովհետև լայն *է* դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատ են նրանով գնացողները: Քանի՞ նեղ է դուռը և նեղվածք է *ճանապարհը (ուղին),* որ տանում է կյանք, և քիչ են այն գտնողները» (Մատթեոս 7.13,14):

Հիսուսը խոսում է նեղ դռան մասին, որը, շատերի համոզմամբ, մուտքն է դեպի հավիտենական կյանքը՝ Հիսուսին որպես Տեր ընդունելու միջոցով: Ես համամիտ եմ:

Այնուամենայնիվ, հայտնաբերել եմ, որ, շատերի կարծիքով, «ճանապարհը» անհավատի ուղին է, որը կործանման է տանում: Բայց եթե ուշադրությամբ կարդաք, Նա չի խոսում ճանապարհի մասին՝ դուռը գտնելուց *առաջ.* ճանապարհն ի հայտ է գալիս միայն դռնով մտնելուց *հետո:* Լեոն Մորիսը գրում է. «Մենք մուտք ենք գործում դռնով հենց սկզբում (այսինքն՝ մենք նվիրում ենք մեզ Քրիստոսին հետևելուն), ինչից հետո գնում ենք մեր առջև գտնվող ճանապարհով»[2]: Խոսելով ճանապարհի մասին՝ Հիսուսը նկատի ունի մեր կյանքն Իրենում՝ այն բանից հետո, երբ փրկվում ենք: Նա հայտնում է, որ այն նեղվածք է (կամ նեղ է):

Շնորհքի մասին ուսմունքը, որը խիստ տարածված է Արևմուտքի եկեղեցիներում, լայնացրել է այդ ճանապարհը: Այն ազդարարում է. «Մեր բոլոր մեղքերը՝ անցյալ, ներկա և ապագա, ներված են»: Սա ճշմարիտ է պատշաճ համատեքստում, բայց մեզ այնպես են ասում այդ մասին, որ կարծում ենք, թե կարող ենք ապրել լայն կյանքով՝ գրեթե չտարբերվելով կորսված աշխարհից, և, միևնույն է, հաղորդակցվել Աստծո հետ: Սա ճիշտ չէ, քանի որ այն հատվածը Պետրոսի խոսքերից, որը բաց թողեցինք նախորդ մեջբերման մեջ, պնդում է հետևյալը.

> «...չնմանվելով այն ձեր տգիտության ժամանակվա առաջին ցանկություններին, այլ՝ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»» (Ա Պետրոս 1.14-16):

Սրբությունն առաջարկ չէ. այն պատվիրան է: Մենք իմաստուն կլինենք, եթե ուշադրություն դարձնենք առաջարկներին, բայց անմտորեն կվարվենք, եթե անտեսենք Աստծո պատվիրանները: Պետրոսը չի խոսում Քրիստոսի մեջ մեր դիրքի մասին, այլ՝ մեր գործերի: Մենք պետք է ապրենք *«ֆո՛բոսի»* (սուրբ երկյուղի) մեջ՝ այս կենսաոճին հասնելու համար: Աստված տվել է մեզ երկու մեծ ուժ, որպեսզի օգնի հեռու մնալ նեղ ճանապարհի երկու կողմերում գտնվող փոսերից, որոնք կարող են ծուղակը գցել մեզ: Այդ փոսերից առաջինը *օրինապաշտությունն* է, երկրորդը՝ *անօրինությունը:*

Տարիներ առաջ շատերը եկեղեցում *օրինապաշտության* փոսում էին: Այդ ժամանակաշրջանում սրբությունը բաղկացած էր հատուկ կենսաոճի վերաբերող ինքնահնար պահանջներից, որոնք չէին համապատասխանում Աստվածաշնչին: Մարդիկ քարոզում էին սուտ ավետարան, որում փրկությունը գործերով էր: Դա սարսափելի ստրկություն էր, որը վրդովմունք առաջացրեց շատերի մոտ, իսկ ոմանց նույնիսկ հեռացրեց հավատքից: Մի մեծ հայտնություն ազատեց մեզ այդ զարհուրելի փոսից. *Աստված բարի Աստված է:* Մեր երկնային Հոր *սերն* իրական դարձավ և դուրս հանեց շատերին օրինապաշտության փոսից:

Այնուամենայնիվ, մենք վարվեցինք մարդկային բնությանը հատուկ կերպով. մենք վճռեցինք այնքան հեռանալ օրինապաշտության փոսից, որ մոլորվեցինք հակառակ ուղղությամբ և ընկանք *անօրինության* փոսը: Այս փոսը ծուղակն է գցում մեզ՝ դրդելով հավատալ, որ մենք փրկված ենք Աստվածաշնչին հակասող շնորհքով, որը թույլ է տալիս մեզ ապրել՝ բոլորովին չտարբերվելով այս աշխարհից: Համաձայն այս ուսմունքի, այժմ կարող ենք ապրել ըստ այն ցանկությունների, որոնք բխում են մեր զգայարաններից, ոչ թե խաչված կյանքով,

որի աղբյուրը մեր ներսում բնակվող Քրիստոսի զորությունն է: Այս գաղափարը սուտ է, որը թույլ չի տալիս շատերին վերապրել Աստծո ներկայությունը, օրհնությունը և զորությունը:

Սրբությունը ստրկություն չէ, այլ՝ իրական ազատություն, որը ճանապարհ է բացում վայելելու համար թե՛ Աստծուն, թե՛ այս կյանքը: Մենք կանչված ենք այնպիսի կյանք վարելու, որն արժանի է մեր Փրկչին: Տիրոջ երկյուղով է, որ մուտք ենք գործում այդ կյանքի մեջ, և մենք ավելի մանրամասն կխոսենք այս մասին հաջորդ մի քանի գլուխներում:

Անձնական կիրառում

Հատված. «Եվ մի մեծ ճանապարհ է անցնելու այդ երբեմնի անապատ երկրով: Այն կոչվելու է Սրբության պողոտա: Չարամիտ մարդիկ երբեք չեն գնա դրանով: Այն կլինի միայն նրանց համար, ովքեր վարվում են Աստծո ճանապարհներում. հիմարները երբեք չեն քայլի այդտեղով» (Եսայի 35.8, NLT):

Եզրահանգում. Աստծո սերը պաշտպանում է մեզ օրինապաշտության փոսից: Նույնպես, Տիրոջ երկյուղը պաշտպանում է մեզ անօրինության փոսից: Սուրբ երկյուղը զորացնում է մեզ, որ մնանք ճշմարիտ սրբության պողոտայի վրա:

Մտորում. Ինչ կերպերով եմ ես անտեսում սուրբ երկյուղը և հանդուրժում անօրեն վարքն իմ կյանքում: Ինչ կերպով է իմ ծառայությունն Աստծո թագավորությանը թույլ տվել ինձ անտեսել սուրբ լինելու պատվիրանը. որ ես պետք է սուրբ լինեմ, ինչպես որ Աստված է սուրբ: Եվ «արտոնյալ» դիրքի ինչ զգացում է դրդել ինձ շեղվել ճանապարհից և ընկնել անօրինության փոսը:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, ների՛ր ինձ, որ ենթադրել եմ, որ ազատ եմ դատաստանից, քանի որ ծառայում եմ Քո թագավորության մեջ: Ես ապաշխարում եմ դրանից և հետևում եմ Քո պատվիրանին՝ լինել սուրբ, ինչպես որ Դու ես սուրբ: Ես որոշում եմ ընդունել այն սերը, որն ունես իմ հանդեպ, բայց նաև ունենալ սուրբ երկյուղ Քեզնից: Քո Խոսքը խոստանում է, որ, ընտրելով երկուսն էլ, ես կմնամ այն պողոտայի վրա, որը տանում է դեպի կյանք: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ սուրբ լինել, ինչպես որ Աստված է սուրբ:

Մանուկներ, վախեցեք Աստծուց, այսինքն՝ ձեր մտքում սուրբ երկ-յուղ ունեցեք, որ խուսափեք չարից, և խստորեն հետևեք, որ ընդունեք և կատարեք այն, ինչ բարի է:

– ՎԻԼՅԱՄ ՓԵՆՆ

17| ՉԱՐԻՑ ՀԵՌԱՆԱԼԸ

Տիրոջ երկյուղը մեր սիրող երկնային Հորից տրված պարգև է, որը պաշտպանում է մեզ Հիսուսից հեռանալուց: Նա հավիտենական կյանքի, սիրո, ուրախության, խաղաղության, բարության, հույսի և բազմաթիվ այլ սքանչելիքների աղբյուրն է: Նրանից հեռանալը նշանակում է քայլ անել դեպի մահը, խավարը և, ի վերջո, հավիտենական գերեզմանը: Գրված է. «Տիրոջ վախով մարդը կհեռանա չարից» (Առակաց 16.6):

Թույլ տվեք պատմել, թե երբ այս ճշմարտությունն իրական դարձավ ինձ համար: 1980-ական թվականներին մի հայտնի հեռուստատեսային ավետարանչի հանցանքները լայնորեն բացահայտվեցին: Նա դարձավ աշխարհի ամենահայտնի մարդկանցից մեկը՝ սխալ պատճառներով: Այդ ժամանակ նրա ծառայությունն ամենամեծն էր՝ թե՛ ազդեցությամբ, թե՛ ֆինանսական միջոցներով, բայց բոլորը սկսեցին խոսել նրա մասին, երբ յուրաքանչյուր խոշոր լրատվամիջոց ամեն օր հաղորդում էր նրա հանցագործությունների, դատավարության, դատավճռի և, ի վերջո, բանտարկության մասին:

Նա դատապարտվեց 45 տարվա ազատազրկման, բայց ավելի ուշ, բողոքարկման արդյունքում, նրա պատիժը կրճատվեց մինչև հինգ տարի: 1994 թվականին, որը նրա բանտարկության չորրորդ տարին էր, իմ օգնականը մի անսպասելի հեռախոսազանգ ստացավ: Թեև այդ ավետարանիչը չէր ճանաչում ինձ, ինչ-որ մեկը տվել էր նրան իմ առաջին գիրքը, որը կոչվում էր «Հաղթանակ անապատում» (այժմ այդ գրքի վերնագիրն է՝ «Աստվա՛ծ, որտե՞ղ ես»): Նա կարդացել էր գիրքը բանտում, և այն խորապես հպվել էր նրան: Նա խնդրել էր իր օգնականին՝ կապ հաստատեմ և այցելեմ նրան:

Ես այցելեցի նրան և երբեք չեմ մոռանա այդ հանդիպումը: Նա այցելության սենյակ եկավ բանտարկյալի հագուստով: Մոտեցավ, պարզեց ձեռքերը և ամուր գրկեց ինձ. նրա գրկախառնությունը տևեց գրեթե մեկ րոպե: Դրանից հետո գրկեց ուսերս, արցունքն աչքերին նայեց ինձ և անկեղծորեն հարցրեց.

- Դո՞ւք եք գրել այս գիրքը, թե՞ այլ հեղինակ է գրել այն՝ ձեզ համար:

- Ես եմ գրել,- պատասխանեցի:- Ես ինքս եմ տառապանքներ կրել, թեև դա համեմատելու չէ այն ամենի հետ, ինչով դուք եք անցել:

Նա ասաց.

- Ես այնքա՜ն բաների մասին եմ ուզում խոսել ձեզ հետ, իսկ մենք ընդամենը 90 րոպե ժամանակ ունենք:

Ես մի փոքր շփոթված էի, քանի որ առաջին անգամ էի հանդիպում նրան: Այդ մարդու մասին այնքա՜ն էին չարախոսել, և նրա անունն այնքա՜ն էին արատավորել, որ ես անկեղծորեն չգիտեի, թե ում հետ էի խոսում: Բայց երբ մենք նստեցինք, նա զինաթափեց ինձ՝ իր առաջին իսկ դիտարկմամբ: Նայելով ուղիղ աչքերիս՝ ասաց.

- Ջո՛ն, այս բանտն Աստծո դատաստանը չէր ինձ համար, այլ՝ Նրա ողորմությունը: Եթե ես շարունակեի քայլել այն ճանապարհով, որով գնում էի, ես հավիտյան դժոխքում կհայտնվեի:

Նա լիովին գրավեց իմ ուշադրությունը: Նա շարունակեց պատմել այն մասին, թե որքան չար մարդ էր ինքը, և որքան մեծ էր Աստծո փրկությունն իր կյանքում: Շատ ժամանակ չպահանջվեց, մինչև հասկացա, որ խոսում էի Աստծո անկեղծ, կոտրված և փշրված ծառայողի հետ: Նա պատմեց ինձ, թե ինչպես Աստված ազատեց իրեն խավարից իր բանտարկության առաջին տարում:

Ես իմացա, որ ամեն օր նա ժամեր շարունակ Աստվածաշունչ էր կարդում և աղոթում էր՝ թե՛ մենակ, թե՛ ուրիշների հետ: Նա խանդավառությամբ պատմեց ինձ իրենց բանտային եկեղեցու և այդ եկեղեցու հովվի մասին, որը բանտարկյալներից մեկն էր: Զգալով, որ նա լավագույնս պատրաստ էր այդ դերի համար, ես հարցրի, թե ինչու նա՛ չէր բանտային եկեղեցու հովիվը: Նա բացատրեց, որ չէր ուզում որևէ առաջնորդական դիրք ստանձնել, քանի դեռ նրա վերափոխման ընթացքը չէր ավարտվել: Նա ասաց.

- Ջո՛ն, ես վարպետացած էի մարդկանց շահագործելու մեջ, բայց չեմ ուզում թույլ տալ, որ այդ վարքագիծը կրկին դրսևորվի:

Նա ապացուցեց իր խոսքերի ճշմարտացիությունը մեկ տարի անց: Բանտից ազատվելով՝ նա միացավ մի միսիոներական կազմակերպության Լոս Անջելեսի կենտրոնում: Երկու տարի շարունակ ծառայում էր փողոցներում՝ հոգ տանելով անտուն-թափառականների

մասին: Նա սիրում էր այդ ծառայությունը, քանի որ անտուն-թափառականներն այն քչերից էին մեր երկրում, որոնք նույնիսկ գաղափար չունեին, թե ով էր նա:

Գրեթե քսան րոպե նրան լսելուց հետո զգացի, որ կարող էի հարցեր տալ: Եվ սկսեցի ամենակարևոր հարցից, որը մտքիս եկավ.

- Ե՞րբ դադարեցիք սիրել Հիսուսին:

Ես հարցրի այդ մասին, քանի որ անցյալում՝ նրա ծառայության մեջ, նրա սերը Հիսուսի հանդեպ պարզապես ճառագում էր նրանից: Նրա կրակը և ավյունն ակնհայտ էին նրան լսողների համար: Ես ուզում էի իմանալ, թե երբ նրա սերը սառեց, և ավելին՝ ինչն էր դրա պատճառը:

Նայելով ուղիղ աչքերիս՝ մեծ անկեղծությամբ նա ասաց.

- Ես երբեք չեմ դադարել սիրել Հիսուսին:

Ես զարմացա և մի փոքր բարկացա նրա խոսքերից. *«Ինչպե՞ս է նա համարձակվում ասել դա»,*- մտածեցի և անմիջապես հակադարձեցի.

- Ի՞նչ նկատի ունեք: Դուք շնություն էիք գործում յոթ տարի շարունակ, մինչև որ մեղադրանք ստացաք փոստային խարդախության մեջ, ինչի պատճառով էլ հիմա ազատազրկման եք դատապարտված: Ինչպե՞ս կարող եք ասել, որ սիրում էիք Հիսուսին այդ յոթ տարիների ընթացքում:

Առանց հայացքը հեռացնելու՝ նա հանդարտորեն ասաց.

- Ջո՛ն, ես սիրում էի Հիսուսին ամբողջ այդ ընթացքում:

Իմ տարակուսանքն ակնհայտ էր: Նա մի պահ լռեց և շարունակեց.

- Ջո՛ն, ես չէի վախենում Աստծուց:- Նա կրկին լռեց և ավելացրեց.- Ես սիրում էի Հիսուսին, բայց չէի վախենում Աստծուց:

Ես ապշել էի և ոչինչ չէի կարողանում ասել: Անկեղծ ասած, նրա խոսքերը երկյուղ առաջացրին: Գրեթե տասնհինգ վայրկյան լռություն էր տիրում, մինչ իմ միտքն ընկալում էր այդ խոսքերը: Դրանից հետո նա այնպիսի պնդում արեց, որը մինչև հիմա արձագանքում է էությանս մեջ.

- Ջո՛ն, միլիոնավոր ամերիկացիներ ճիշտ ինձ նման են. նրանք սիրում են Հիսուսին, սակայն չեն վախենում Աստծուց:

Թվում էր, թե Աստված խոսեց նրա շուրթերով: Նրա խոսքերը պատասխանեցին բազմաթիվ հարցերի: Դրանք պտտվում էին իմ մտքում, և մեծագույն բացահայտումն ինձ համար այն էր, որ, պատմելով իր պատմությունը, նա ձևակերպեց հավատքից նահանջելու սկզբնապատճառը մեր երկրում: Եվ ցավոք, այն նահանջը, որը համատարած էր այդ ժամանակ, ավելի է տարածվել:

Աստվածաշունչը հստակ ասում է, որ Աստծուն մտերմորեն ճա-

նաչելու սկզբնակետը Տիրոջ երկյուղն է: Առանց դրա մենք կկառուցենք հորինված հարաբերություն կեղծ Հիսուսի հետ՝ այնպիսի Հիսուսի, որը փառքի Տերը չէ: Մենք կհավատանք անիրական փրկչի: Ես խորապես կանդրադառնամ այս ճշմարտությանը ավելի ուշ այս գրքում: Բայց թույլ տվեք, նախ, հաստատել իմ պնդումը երկու կարճ օրինակով:

Այս պահին, երբ գրում եմ այս գիրքը, մեկ շաբաթ էլ չի անցել, որ ինձ ցավալի մի լուր հայտնեցին մի երիտասարդ կնոջ մասին, որին ճանաչել եմ այն ժամանակվանից, երբ դեռ փոքրիկ աղջիկ էր: Նա մեծացել էր հավատքի մեջ և դավանում էր, որ հետևում է Հիսուսին, բայց ապրում էր անառակ կյանքով և «հասանելի» աղջկա համբավ ուներ իր հասակակից տղաների մոտ: Վերջերս նա մի հրապարակում էր տեղադրել «Ինստագրամում» այն մասին, որ Հիսուսը բռնել էր իր ձեռքը ամբողջ ընթացքում, երբ նա արհեստականորեն հեռացնում էր իր դեռևս չծնված երեխային. ո՞ր Հիսուսին նա նկատի ուներ:

Եվս մեկ երիտասարդ կին, որն ամուսնացած էր մի աստվածապաշտ տղամարդու հետ, ասաց ուղիղ երեսիս, որ Հիսուսը խոստացել էր հոգալ իր մասին, եթե որոշեր հեռանալ ամուսնուց: Նա այդպես էլ վարվեց. ամուսնալուծվեց՝ տարակուսանքի մեջ թողնելով իր ամուսնուն, երեխաներին, ընտանիքին և ընկերներին: Նրա ամուսնալուծությունը չուներ որևէ վրդովեցուցիչ պատճառ. պարզապես նա այլևս չէր սիրում ամուսնուն: Չկար բռնություն, անբարոյություն կամ ֆինանսական խնդիրներ. նա ինքն ասաց այդ մասին: Իրականում, այդ կինն ասաց, որ այդ տղամարդը բարի և հոգատար ամուսին և հայր էր: Ո՞ր Հիսուսին նա նկատի ուներ:

Ահա միայն երկուսը այն անթիվ օրինակներից, որոնք կարող եմ բերել նրանց մասին, ովքեր դավանում են, թե հաղորդակցվում են Հիսուսի հետ, սակայն նրանց կյանքը հակառակն է պնդում: Ինչպե՞ս է, որ այդ երկու կանայք և շատ ուրիշներ այդ աստիճան մոլորված են: Ես հավատում եմ, որ պատճառը սուրբ երկյուղի բացակայությունն է:

> «Իմ թանկագի՛ն ընկերներ, դուք միշտ հնազանդվում էիք Աստծուն, երբ ես ձեզ հետ էի: Ավելի կարևոր է, որ հնազանդվեք հիմա, երբ հեռու եմ ձեզնից: Շարունակե՛ք գործել, որպեսզի կատարեք ձեր փրկությունը՝ վախով և դողալով» (Փիլիպեցիների 2.12, NCV):

Պողոսը չի գրում, որ մենք պետք է հասունանանք մեր փրկության մեջ՝ *սիրով* և *բարությամբ:* Շատերը կհաստատեն, որ այդ երկու կանայք սիրող և բարի են: Մարդիկ կհաստատեն, որ տարիներ շա-

ռունակ այդ կանայք եկեղեցի են հաճախել և դավանել են, որ հավատարիմ են Հիսուսին: Բայց ինչպե՞ս նրանք կարող էին գլխիվայր սուզվել նման անօրեն վարքագծի մեջ: Նրանք չունեն այն, ինչ չուներ այդ հայտնի ավետարանիչը: Տիրոջ երկյուղով է, որ մենք հեռանում ենք չարից, ոչ թե Աստծո սիրով: Աստծո սերը մոտեցնում է մեզ Նրան. Աստծո վախը հեռու է պահում մեզ այն չարիքից, որի նպատակը մեզ կործանելն է:

Անձնական կիրառում

Հատված. «Տիրոջ երկյուղը չարն ատելն է. հպարտությունն ու ամբարտավանությունը, և չար գնացքը, և նենգավոր բերանը Ես ատում եմ» (Առակաց 8.13):

Եզրահանգում. Տիրոջ երկյուղը մեր սիրող երկնային Հորից տրված պարգև է, որը պաշտպանում է մեզ Աստծուց հեռանալուց: Հենց որ մենք հանդուրժում ենք մեղքը՝ այն ատելու փոխարեն, սկսում ենք հեռանալ Նրանից:

Մտորում. Նահանջը տեղի չի ունենում այն պահին, երբ մարդը հայտնվում է անկողնում ինչ-որ մեկի հետ, որի հետ ամուսնական ուխտի մեջ չէ: Այն չի առաջանում, երբ նա գողանում է իր գործատուի միջոցները: Այն սկիզբ է առնում այդ ամենից առաջ, երբ սկսում ենք հանդուրժել այն, ինչից մեզ ազատելու համար Հիսուսը զոհել է կյանքը: Արդյո՞ք ես հանդուրժում եմ այնպիսի բան, ինչից ինձ ազատելու համար Հիսուսը զոհել է կյանքը:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, խնդրում եմ, ների՛ր, որ հանդուրժում եմ մեղքը՝ ոչ միայն իմ կյանքում, այլև այն հավատացյալների կյանքում, որոնց հետ շփվում եմ: Ների՛ր ինձ, որ մեղմորեն և սիրով չեմ ընդդիմանում նրանց և չեմ հորդորում չշարունակել իրենց սխալ ճանապարհը: Ես ապաշխարում եմ այս հանդուրժողականության համար: Շնորհակալություն, որ ներում ես ինձ: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես սիրելու եմ մարդկանց, քանի որ Աստված սիրում է մարդկանց: Ես ատելու եմ այն մեղքը, որը կործանում է նրանց, ում ես սիրում եմ:

«Իմ քայլերը մնացել են Քո շավ-
իղի վրա. ես չեմ տատանվել
Քեզ հետևելիս»:

– ՍԱՂՄՈՍ 17.5, NLT

18| ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

1994 թվականին ես ունեցա երկու ուշագրավ փորձառություն. այն եկեղեցական համաժողովը, որտեղ իմ ուղերձը Տիրոջ երկյուղի մասին քննադատվեց, և այցելությունը բանտում գտնվող հեռուստատեսային ավետարանչին: Այդ դեպքերից հետո իմ մեջ սուրբ երկյուղը հասկանալու և դրանում աճելու մեծ ձգտում առաջացավ: Երկու իրադարձություններն էլ նմանատիպ ուղերձ էին կրում, սակայն՝ երկու տարբեր տեսանկյուններից:

Այդ եկեղեցին, որն ամենամեծն էր և ամենից ազդեցիկը իր տարածաշրջանում, այլևս գոյություն չունի: Եվ դրա հովիվը, որը սովորեցնում էր, որ Նոր կտակարանի հավատացյալներն Աստծուց երկյուղ ունենալու կարիք չունեն, այլևս ծառայության մեջ չէ: Այն ծառայողը, որին ես հանդիպեցի բանտում, կորցրեց իր մեգա ծառայությունը. այնուամենայնիվ, Աստծո երկյուղը բացահայտելուց և ընդունելուց հետո նա մնաց Աստծուն և Նրա ժողովրդին հավատարմորեն ծառայելու ուղու վրա: Ներկայումս նա ունի այլ ծառայություն, որն ազդեցություն է գործում շատերի վրա:

Այս երկու ոչ կապակցված իրադարձությունները ցույց են տալիս, որ Տիրոջ երկյուղն էապես կարևոր է՝ խուսափելու համար մեզ ծուղակը գցող չարիքից, որը կրճատում է Քրիստոսի արդյունավետ դեսպաններ լինելու մեր ժամանակը: Եթե ամփոփենք Տիրոջ երկյուղի այս կողմը մեկ բառով, այն կոչվում է *երկարակեցություն:* Վերջերս մի հարգարժան հովիվ պատմեց ինձ իր զրույցի մասին մի աստվածաբանական համալսարանի պրոֆեսորի հետ, որը ծավալուն հետազոտություն էր կատարել՝ ուսումնասիրելով այն անհատներին Աստվածաշնչում, որոնց Աստված կանչել էր և հանձնարարական տվել: Նա պարզել էր,

որ Աստծո կողմից ընտրված մարդկանց 75 տոկոսի արդյունավետությունը կրճատվել է, և նրանցից շատերը բարեհաջող ավարտ չեն ունեցել: Հաշվի առնելով մեր ժամանակակից ծառայողական ողբերգությունները՝ այդ ծառայողի հետազոտության հետ մեկտեղ, կարելի է ասել, որ երկարակեցությունը ծառայության մեջ այնպիսի մարտահրավեր է, որին բոլորս պետք է ավելի լուրջ վերաբերվենք:

1990-ական թվականներին սուրբ երկյուղի կարևորությունը՝ *երկարակեցության* առումով, կրկին հաստատվեց ևս մեկ անչափ կարևոր փորձառությամբ և այն հայտնությամբ, որը ստացա այդ փորձառությունից: Ես ծառայում էի Կուալա Լումպուրում, Մալազիայում: Դա տասներորդ և վերջին ծառայությունն էր, և դահլիճը լեփ-լեցուն էր հավատացյալներով, որոնք եկել էին այդտեղ ամբողջ Մալազիայից: Երբ ավարտեցի իմ ուղերձը, շատերն արձագանքեցին ծառայությանը նվիրվելու իմ կոչին: Այդ դահլիճի բեմի երկայնքով հավաքված մարդիկ, որոնք աղոթքի էին սպասում, չորսից հինգ շարք կազմեցին:

Ես իջա բեմի աստիճաններով, երբ հանկարծ Աստծո ներկայությունը հայտնվեց այդ դահլիճում անսպասելի, շոշափելի և ուշագրավ: Այն կրում էր Նրա սերը և ուրախությունը: Իմ առջևի մարդիկ սկսեցին ժպտալ, ինչը շուտով վերածվեց ծիծաղի: Այդ ուրախությունն արագորեն տարածվեց, մինչև որ բոլոր առաջ եկած մարդիկ կրեցին դրա ազդեցությունը: Թվում էր՝ Աբբա Հայրը որոշել էր թարմություն բերել Իր զավակներին: Ես արագ հասկացա, որ չպետք է ոչինչ անեմ: Պարզապես նստեցի բեմի եզրին և սկսեցի հաճույքով դիտել, թե ինչպես էր Աստված զորացնում և օրհնում Իր զավակներին:

Հինգից յոթ րոպե անց Նրա սքանչելի ներկայությունը վերցվեց՝ թողնելով անդորր մթնոլորտում: Բոլորս լուռ էինք և վայելում էինք այդ դահլիճի խաղաղության մթնոլորտը: Այնուամենայնիվ, մի քանի վայրկյան անց Աստծո ներկայությունը դրսևորվեց այլ կերպով՝ այնպես, ինչպես Բրազիլիայում էր: Ես ոտքի ելա՝ զգալով, որ փոփոխություն էր գալիս: Այն ավելի ու ավելի էր ուժգնանում: Այս անգամ փչող քամի չկար, բայց Նրա իշխանությունը և ահավորությունն այնքան իրական էին, որ անկարելի էր շփոթել դրանք այլ բանի հետ: Մի քանի րոպե առաջ ծիծաղող մարդիկ, առանց հրահանգի, գրեթե միաժամանակ սկսեցին արտասվել ու լաց լինել, իսկ ոմանք հեկեկում էին:

Աստծո ներկայությունն ավելի էր ուժգնանում, և մարդկանց լացն ավելի էր սաստկանում: Թվում էր՝ այդ հանդարտ ասիացիները մկրտվում էին Աստծո կրակով: Կրկին, այդ դրսևորումը հնարավոր չէ նկարագրել, և դա չէ այս սրբազան պահի մասին պատմելու իմ նպատակը. կարևորը Աստծո ներկայության ահեղ լինելն էր: Այն ավելի ուժգին դարձավ՝ այն աստիճան, որ կարծում եմ՝ մենք չէինք կարողանա դիմանալ ավելիին:

Աստծո հետ այս հանդիպման ժամանակ ես հստակ գիտակցեցի տարբերությունը մեր անձի և հոգու միջև: Գրված է, որ Աստծո Խոսքը «թափանցում է մինչև շնչի և հոգու... բաժանվելը» (Եբրայեցիների 4.12): Իմ միտքը (անձը) մտածում էր. *«Ես այլևս չեմ կարող դիմանալ: Ասփվածծ, սա չափազանց ուժգին է»:* Սակայն իմ սիրտը (հոգին) աղաղակում էր. «*Ասփվածծ, խնդրում եմ, մի՛ հեռացիր. խնդրում եմ, թող սա չդադարի»:*

Կրկին, ես մտածեցի. *«Ջոն Բիվեր, եթե մեկ սխալ շարժում անես, եթե մեկ սխալ բառ ասես, կմահանաս»:* Ինչպես և Բրազիլիայում, չեմ կարող ասել՝ արդյոք դա տեղի կունենար, բայց գիտեի, որ այդ մթնոլորտում աներկյուղ վերաբերմունքը չէր հանդուրժվելու:

Նրա ահեղ ներկայության դրսևորումը տևեց երեքից չորս րոպե, իսկ հետո վերցվեց: Հենց որ դա տեղի ունեցավ, առանց որևէ հրահանգի, բոլորը կրկին միասին լռեցին: Ես մի քանի րոպե լուռ մնացի այդ ներկայությունից հետո մնացած մթնոլորտում:

Երբ հեռանում էինք այդ շենքից, միջավայրը հանդիսավոր, հանդարտ և ակնածանքով լի էր: Ես կանգ առա՝ զրուցելու Հնդկաստանից եկած մի տղամարդու և նրա կնոջ հետ, որոնք խոր ազդեցություն էին կրել Աստծո ներկայությունից: Մի քանի վայրկյան մենք պարզապես զարմանքովնայում էինք միմյանց, իսկ հետո այդ կինը մեղմորեն ասաց.

- Ջո՛ն, ես այնքա՛ն մաքուր եմ զգում ինձ:

Նրա ամուսինը գլխով արեց՝ ի նշան համաձայնության:

Երբ նա ասաց դա, սիրտս ասես վեր թռավ. ի վերջո, ինչ-որ մեկը ճշգրտորեն նկարագրեց այն, ինչ զգում էի Բրազիլիայի վերապրումից հետո, ինչպես նաև այդ պահին՝ Մալազիայում: Ես պատասխանեցի՝ վերահսկելով զգացմունքներս.

- Ես՝ նույնպես:

Մենք այլևս չխոսեցինք, բայց նրա խոսքերը շարունակ արձագանքում էին իմ մեջ մինչև այդ երեկոյի ավարտը: Հաջորդ առավոտյան իմ հյուրանոցային համարում էի և պատրաստվում էի բասկետբոլ խաղալ այդ եկեղեցու և նրանց Աստվածաշնչյան դպրոցի երիտասարդ աշխատողների հետ: Հանկարծ լսեցի Սուրբ Հոգուն, որը խոսեց սրտիս. *«Որդի՛ս, կարդա՛ Սաղմոս 19-ը»:*

Ես վերցրի իմ Աստվածաշունչը, բացեցի և սկսեցի կարդալ: Հասա իններորդ խոսքին.

«Տիրոջ վախը *սուրբ* է, *մնում է հավիտյան»* (Սաղմոս 19.9):

Ես բացականչեցի իմ հյուրանոցային համարում.

- Այո՛: Ճի՛շտ է:

Ես երկյուղած էի. ճիշտ այն, ինչ այդ կինն ասաց ինձ նախորդ երեկոյան: Մենք աննկարագրելի սրբություն և խոր մաքրություն էինք զգում մեր սրտերում:

Դրանից հետո «մնում է հավիտյան» արտահայտությունն ասես առանձնացավ այդ էջից: Սուրբ Հոգին անմիջապես խոսեց.

«Որդի՛ս, Լյուցիֆերը երկրպագություն էր վարում անմիջապես Իմ գահի առջև: Նա առաջնորդում էր երկնքի զորքերը. նա կարգված և օծված էր դրա համար: Նա մոտ էր Ինձ և տեսնում էր Իմ փառքը, բայց չէր վախենում Ինձնից: Այնպես որ, նա հավիտյան չմնաց Իմ գահի առջև (տե՛ս Եզեկիել 28.13-17):

Հրեշտակների մեկ երրորդը, որոնք տեսնում էին Իմ փառքը, միացան Լյուցիֆերին: Նրանք չէին վախենում Ինձնից, և նրանք հավիտյան չմնացին Իմ ներկայության մեջ (տե՛ս Հայտն. 12.4,7):

Ադամն ու Եվան զբոսնում էին Իմ ներկայության մեջ օրվա զով ժամին: Նրանք չէին վախենում Ինձնից, և նրանք հավիտյան չմնացին Եդեմի պարտեզում:

Որդի՛ս, յուրաքանչյուր արարած, որը հավիտյան Իմ գահի շուրջ է լինելու, պետք է անցնի Տիրոջ երկյուղի սուրբ քննությունը (տե՛ս Ծնն. 3.8)»:

Իմ աչքերը բացվեցին այս ճշմարտության համար: Ես սկսեցի մտածել բոլոր այն հովիվների մասին, որոնց ծառայությունն այլևս արդյունավետ չէր, և նրանց մասին, որոնք բարեհաջող ավարտ չունեցան: Շատերը սկսել էին ավյունով, սրտանց սիրում էին Հիսուսին, հնազանդվում էին և զոհեր էին անում՝ Աստծո ժողովրդին ծառայելու համար, բայց նրանք համակվեցին գոռոզությամբ և արհամարհանքով, և շատերը հեռացան ծառայությունից. նրանք չհարատևեցին:

Մյուսները դեռևս ծառայության մեջ են, սակայն օգտագործում են այն շահի և այլ եսակենտրոն նպատակների համար: Ոմանք սեռականորեն շահագործում են իրենց հետևորդներին. նրանք օգտագործում են իրենց առաջնորդական դիրքը՝ անմեղ կանանց մոլորեցնելու համար: Ուրիշները խորհրդատուներ են դառնում և մեծ գումարներ վերցնում՝ սովորեցնելով ծառայողներին ուղերձների միջոցով շահագործել իրենց հետևորդներին, որպեսզի նրանք մեծ զոհաբերություններ տան: Այլ ծառայողներ ստում են՝ ասելով, որ մարգարեական խոսքեր են ստացել Աստծուց. նրանք միջոցներ են որոնում, որպեսզի տեղեկություն հայթայթեն այն մարդկանց մասին, որոնց իրենք իբրև թե ծառայում են, իսկ հետո հայտարարում են այն, ինչ իմացել են, ասես թե ստացել են դա Աստծուց: Այս անօրեն վարքագծերի ցուցակը գրեթե անվերջ է:

Ինչպե՞ս են սրբությամբ ծառայող մարդիկ ապականվում: Ինչո՞ւ

նրանց արդյունավետությունը տևական չէ: Պատճառը սուրբ երկյուղի բացակայությունն է: Մարդիկ անկարևոր են համարում և նույնիսկ անարգում են այն, ինչը բերկրանք էր պատճառում Հիսուսին, ինչպես այն հովիվը ԱՄՆ-ի հարավ-արևելքում: Նրանք համոզում են թե՛ իրենց, թե՛ուրիշներին անտեսել այն, ինչն Աստված Իր գանձն է անվանում: Բայց լսեք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը սուրբ երկյուղի և երկարակեցության մասին.

> «Երանելի՜ է այն մարդը, որ Տիրոջից վախենում է... նրա արդարությունը կմնա հավիտյան... հավիտենական հիշատակի համար կլինի արդարը» (Սաղմոս 112.1,3,6):

Կարիք չկա, որ ողբերգություններ վերապրենք, որպեսզի բացահայտենք սուրբ երկյուղի կարևորությունը: Խնդրո՛ւմ եմ, հանուն Աստծո փառքի և ձեր երկարակեցության, դարձրե՛ք սուրբ երկյուղը ձեր գանձը:

Անձնական կիրառում

Հատված. «Տիրոջ ողորմությունը հավիտենից մինչև հավիտյան Իրենից վախեցողների վրա է» (Սաղմոս 103.17):

Եզրահանգում. Աստծո գահի շուրջ հավիտյան լինելու են այն ստեղծված էակները, որոնք երկյուղ ունեն Նրանից:

Մտորում. Բարեհաջող կյանքի կողմերից մեկը բարեհաջող ավարտ ունենալն է: Տիրոջ երկյուղը մնում է հավիտյան: Ինչպե՞ս ես կարող եմ դարձնել սուրբ երկյուղը սյուն իմ կյանքում: Գործնականորեն ինչպե՞ս կարող եմ զտիչ դարձնել սուրբ երկյուղը իմ բոլոր խոսքերի և գործերի համար:

Աղոթք. Սիրելի՜ երկնային Հայր, Քո Խոսքը հայտնում է, որ Դու կարող ես անարատ պահել ինձ և անկեղծ կանգնեցնել Քո փառավոր ներկայության առջև՝ անբիծ ցնծությամբ: Ես գիտեմ, որ դա հնարավոր է իմ Տեր Հիսուսի փրկագնող աշխատանքի շնորհիվ, ինչպես նաև սուրբ երկյուղին հարելով, որն ապահովում է իմ հավիտենական հաղորդությունը Քեզ հետ: Խնդրում եմ, որ սուրբ երկյուղը մշտապես բնակվի ինձանում, որպեսզի ես հավիտյան ապրեմ Քո ներկայության մեջ: Ես խնդրում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Սուրբ երկյուղով ես կբնակվեմ Տիրոջ տանը՝ Նրա ներկայության մեջ հավիտյան:

Եթե դուք բերկրանք չեք զգում այն պատճառով, որ ձեր Հայրը սուրբ, սուրբ, սուրբ է, նշանակում է՝ դուք հոգևորապես մահացած եք: Գուցե դուք եկեղեցում եք: Գուցե դուք քրիստոնեական համալսարան եք հաճախում: Բայց եթե ձեր անձի մեջ չկա բերկրանք Աստծո սրբության պատճառով, դուք չեք ճանաչում Աստծուն: Դուք չունեք շփում Աստծո հետ: Դուք անհաղորդ եք Նրա բնությանը:

– Ռ.Ս. ՍՓՐՈՈՒԼ

19| ՄԵՐ ԱՆՁԵՐԸ ՄԱՔՐԵԼԸ

«Տիրոջ վախը սուրբ է, *մնում է հավիտյան»* (Սաղմոս 19.9): Սաղմոսերգուն ներկայացնում է սուրբ երկյուղի երկու ակնառու պտուղ, որոնք չպետք է անտեսվեն կամ թեթևորեն դիտարկվեն. *սրբությունը և երկարակեցությունը:* Եկեք դիտարկենք առաջինը, իսկ երկրորդին դեռ կանդրադառնանք հաջորդ գլուխներից մեկում: Պողոսը գրում է.

> «Արդ, այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, մեր անձերը *սրբենք* հոգու և մարմնի ամեն պղծությունից, *սրբությունը* կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթացիների 7.1):

Մենք տեսնում ենք նույն ճշմարտությունը, որը հայտնում է սաղմոսերգուն, սակայն ավելի մեծ խորությամբ: Նախ, ուզում եմ նշել, որ սրբությունը հասունանում է Տիրոջ երկյուղով, ոչ թե Աստծո սիրով: Հիշե՛ք հայտնի ավետարանչին, որն անբարո կյանք էր վարում, սակայն միևնույն ժամանակ սիրում էր Հիսուսին: Հենց որ նա հարեց սուրբ երկյուղին, սրբեց իրեն և ազատվեց նախկին անմաքրություններից: Դա, իր հերթին, առաջնորդեց նրան դեպի ավելի իրական հարաբերություն Հիսուսի հետ՝ ավելի, քան երբևէ ունեցել էր: Այն, ինչ նա սովորեց իր փորձառությամբ, մենք նաև տեսնում ենք Աստվածաշնչում:

Արդեն նշեցինք, որ սրբությունն ամենագրավիչ թեման չէ մեր օրերում: Շատերի համար այն բացասական երանգ ունի, քանի որ զվարճալի չէ և սահմանափակում է կյանքը: Այն դիտարկվում է կա՛մ որպես օրինապաշտական գերություն, կա՛մ այնպիսի առաքինություն, որն ազ-

նիվ է, սակայն՝ անհասանելի: Կ.Ս. Լյուիսն անդրադառնում է այս անիրազեկությանը. «Որքա՜ն սակավամիտ են նրանք, ովքեր ձանձրալի են համարում սրբությունը: Երբ մարդն իրապես հանդիպում է սրբությանը... այն անդիմադրելի է»[1]: Այնպես որ, պատրաստվե՛ք անդիմադրելիին, որքան ավելի եք խորամուխ լինում դրա մեջ:

Ինչպես արդեն նշեցի, սրբության գլխավոր սահմանումը «Աստծո համար առանձնացված լինելն է», ինչն, անկասկած, ընդգրկում է մաքրությունը: Մտածե՛ք հարսի օրինակի մասին: Նա առանձնացնում է իրեն՝ իր ամուսնու համար, ինչն ընդգրկում է այլ սիրեկաններին մերժելը: Սա խորհրդանշում է մաքրությունը, որը սրբության կողմերից մեկն է: Նույն կերպով, Պողոսը պատվիրում է սրբել մեր անձերը: Նա չի ասում. «Հիսուսի արյունը կսրբի մեզ»: Այնուամենայնիվ, թույլ տվեք պարզորեն բացատրել. Հիսուսի արյունն իսկապես սրբում է մեզ ամեն մեղքից, այնուամենայնիվ, մենք շփոթվում ենք, երբ չենք տարբերում *արդարացման* աշխատանքը *սրբացման* աշխատանքից:

Երբ մենք ապաշխարեցինք և ընդունեցինք Հիսուս Քրիստոսին որպես Տեր, մեր մեղքերը ներվեցին, և մենք կատարելապես մաքուր դարձանք: Աստված թաղեց մեր մեղքերը մոռացության ծովում: Նա չի՛ հիշում դրանք: Այս աշխատանքն ավարտված է, կատարյալ է, և այն անկարելի է բարելավել: Մենք ոչինչ չարեցինք՝ այս զարմանալի իրողությանն արժանանալու համար. այն պարգև էր Աստծուց: Սա *արդարացման* աշխատանքն է:

Բայց այն պահին, երբ արդարացվեցինք, սկսվեց *սրբացման* (սրբության) աշխատանքը: Սրբացման աշխատանքի արդյունքում այն, ինչ կատարվել է մեր ներսում, սկսվում է *արտաքուստ դրսևորվել*. մեր նոր բնությունն արտաքին իրողություն է դառնում մեր կյանքում: Պողոսը խոսում է հենց այս մասին.

> «Ահով և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը, որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպեցիների 2.12,13):

Ակնհայտ է, որ սա, միևնույն է, Աստծո շնորհքի աշխատանքն է, բայց մենք պետք է համագործակցենք այն զորության հետ, որը Նա ներգործում է մեզանում՝ և *կամենալու,* և *կատարելու* համար: Ինչպես որ ահն ու դողալը թույլ տվեցին Բրազիլիայում գտնվող մարդկանց մուտք գործել Աստծո ներկայության մեջ և ընդունել Նրանից, այնպես էլ սուրբ երկյուղը և դողալը բոցավառում են մեզ և թույլ են տալիս զորություն ստանալ Նրա շնորհքով՝ հնազանդվելու համար:

Արևմուտքի եկեղեցու ուսուցիչների մեծ մասը մի ընդհանուր սխալ է թույլ տալիս. նրանք պնդում են, որ սրբացման կամ սրբության աշխատանքը նույնն է, ինչ արդարացման աշխատանքը: Այլ կերպ ասած, կարիք չկա, որ որևէ բան անենք. Հիսուսն արդեն ամեն բան կատարել է: Նրանք սովորեցնում են, որ թեև մենք շարունակում ենք ոչնչով չտարբերվել այս աշխարհից՝ առաջնորդվելով մեր բազում կրքերով, մենք սուրբ ենք, քանի որ Հիսուսն է մեր սրբությունը: Այս դիրքորոշումն ավելի խճճված է այն պատճառով, որ թվում է՝ որոշ աստվածաշնչյան հատվածներ Նոր կտակարանում հաստատում են նրանց պնդումները: Այնուամենայնիվ, նրանց սխալմունքը բխում է այն բանից, որ նրանք շփոթում են մեր *դիրքային* սրբությունը մեր *վարքագծային* սրբության հետ: Թույլ տվեք բացատրել:

Դիրքային սրբությունը միմիայն վերաբերում է այն բանին, ինչ Հիսուսը կատարեց մեզ համար, և մատնանշում է մեր դիրքը Քրիստոսում: Այն Քրիստոսի արդարացման աշխատանքի օրհնություններից մեկն է. «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով աշխարհը ստեղծելուց առաջ, որ մենք *սուրբ* և անարատ *լինենք* Նրա առջև սիրով» (Եփեսացիների 1.4): Մենք երբեք չէինք կարողանա վաստակել այս դիրքը: Կրկին, Պողոսը գրում է. «Քրիստոսն արդարացրեց մեզ Աստծո առջև. Նա դարձրեց մեզ մաքուր և սուրբ, և Նա ազատեց մեզ մեղքից» (Ա Կորնթացիների 1.30, NLT):

1982 թվականի հոկտեմբերի երկուսին Լիզա Տոսկանոն և ես ամուսնական ուխտ կնքեցինք, և նա դարձավ Լիզա Բիվեր: Այդ օրը նա զբաղեցրեց իմ կնոջ *դիրքը:* Այսօր նա իմ կինը չէ՝ ավելի մեծ չափով, քան այն օրը, երբ ամուսնացա նրա հետ, ոչ էլ նա կլինի իմ կինը՝ ավելի մեծ չափով, քառասուն տարի անց: Դիրքային առումով, նա լիարժեք կերպով դարձավ իմ կինը մեր հարսանիքի օրը. դա արդեն լուծված հարց է: Նմանապես, Քրիստոսում մենք սրբվեցինք և մաքրվեցինք մեր փրկության օրը, և մենք երբեք ավելի սուրբ չենք լինի:

Այնուամենայնիվ, հենց որ Լիզան դարձավ իմ կինը, նրա *վարքը* սկսեց համապատասխանել նրա դիրքին: Մինչև իմ կինը լինելը, նա ժամադրվում էր այլ տղաների հետ, տալիս էր նրանց իր հեռախոսահամարը, ապրում էր իր ցանկությունների համար և անում էր այն բաները, որոնք հատուկ են չամուսնացած աղջիկներին, բայց նա դադարեց անել այդ ամենը: Նրա արարքները համապատասխանեցին այն ուխտին, որը միասին կնքեցինք: Մեր ամուսնության ամբողջ ընթացքում այս վարքն ավելի է հասունացել՝ համապատասխանելով մեր ուխտին: Ահա թե ինչ է գրում Պետրոս առաքյալը.

> «[Ապրեք] որպես [Աստծուն] հնազանդ որդիներ. մի՛ համապատասխանեք ձեր նախկին տգիտության [երբ դուք չգիտեիք Ավետարանի պահանջները] չար ցանկություններին [որոնք կառավարում էին ձեզ]: Բայց, ինչպես որ Նա, Ով կանչեց ձեզ, սուրբ է, դուք ինքներդ էլ սուրբ եղեք ձեր ամբողջ *վարքի և ապրելաոճի* մեջ: Որովհետև գրված է՝ դուք պետք է սուրբ լինեք, որովհետև Ես սուրբ եմ» (Ա Պետրոս 1.14-16, AMPC):

Ուշադրություն դարձրեք, որ Պետրոսը չի անդրադառնում մեր *դիրքային* սրբությանը. փոխարենը, նա խոսում է մեր *վարքագծային* սրբության մասին՝ նույն բանի, ինչի մասին խոսում է Պողոսը, երբ պատվիրում է մեզ սրբել մեր անձերն ամեն պղծությունից: Խոսքը սրբացման գործընթացի մասին է, ոչ թե մեր արդարացման, որը ձրիաբար տրվող դիրքային պարգև է:

Կա՞ն արդյոք այլ աստվածաշնչյան հատվածներ՝ գրված Նոր կտակարանում, որոնք խոսում են մեր վարքագծային սրբության մասին: Պատասխանն է՝ այո՛: Դրանք չափազանց շատ են՝ այստեղ թվարկելու համար, բայց թույլ տվեք նշել ևս մեկը.

> «Որովհետև սա է Աստծո կամքը՝ ձեր սրբությունը, որ դուք ետ կենաք պոռնկությունից, և ձեզնից ամեն մեկը գիտենա իր անոթը պահել սրբությամբ և պատվով, ոչ թե ցանկության կրքով, ինչպես հեթանոսներն էլ, որ Աստծուն չգիտեն» (Ա Թեսաղոնիկեցիների 4.3-5):

Վերջերս՝ մի կիրակնօրյա ծառայությունից հետո, մի մարդ ասաց.

- Ես ամուրի քրիստոնյա եմ: Կենակցում եմ կանանց հետ, քանի որ չեմ կարող ապրել՝ որպես կուսակրոն: Ես դադարեցնում եմ դա մի քանի ամսով, բայց հետո կրկին վերադառնում այդ կյանքին: Բայց դա այն հիմնական խնդիրը չէ, որն ուզում եմ պատմել: Իմ գլխավոր հարցը հետևյալն է. ինչո՞ւ եմ բազմաթիվ խնդիրների բախվում իմ գործի մեջ:

Ես ցնցված էի: Արդյո՞ք մեր անհավասարակշռված ուղերձները շնորհքի մասին հասցրել են մարդկանց այնպիսի վիճակի, որում նրանք հավատում են, որ բնակվելու են Աստծո ներկայության և օրհնության մեջ՝ միաժամանակ բացահայտ մեղքի մեջ ապրելով: Մի եկեղեցու կանանց համաժողովի հարց ու պատասխանի ընթացքում մի կին հարցրեց կնոջս.

- Ես իսկապես սիրում եմ իմ ամուսնուն, բայց նա շատ է ճանապարհորդում, և ես շարունակ կենակցում եմ այլ տղամարդկանց հետ: Ի՞նչ անեմ: Պատմե՞մ նրան:

Այդ երկուսն իսկապես հավատում են, որ հաղորդակցվում են Հիսուսի հետ, բայց արդյո՞ք խոսքն այն Հիսուսի մասին է, որը գտնվում է Հոր աջ կողմում, թե՞ *կեղծ* Հիսուսի: Այս օրինակներն ընդամենը լողացող սառցալեռան գագաթն են: Ես չափազանց հաճախ եմ նման զրույցներ ունեցել տարբեր մարդկանց հետ: Արդյո՞ք սուրբ կյանք վարելու կանչն այն աստիճան խլացվել է, որ մարդիկ բոլորովին հանդիմանություն չեն զգում: Այնուամենայնիվ, Պողոսը գրում է. «Ով որ անարգում է այս ուսմունքը, անարգում է ոչ թե մարդուն, այլ՝ Աստծուն, Ով տալիս է ձեզ Իր Սուրբ Հոգին» (Ա Թեսաղոնիկեցիների 4.8, GNT):

Մտապահեք, որ սրբությունն անդիմադրելի կողմ ունի, և մենք հստակ կտեսնենք այն՝ շարունակելով ձգտել դրան:

Անձնական կիրառում

Հատված. «Ով որ ասում է, թե՝ ճանաչեցի Նրան, և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում» (Ա Հովհաննես 2.4):

Եզրահանգում. Սրբացման (սրբության) աշխատանքը տեղի է ունենում, երբ այն, ինչը կատարվել է մեր ներսում, սկսվում է արտաքուստ դրսևորվել. մեր նոր բնությունը դառնում է արտաքին իրողություն՝ մեր կենսաոճի միջոցով:

Մտորում. Սրբությունն Աստծո շնորհքի աշխատանքն է, բայց ես պետք է համագործակցեմ այն զորության հետ, որը Նա տալիս է ինձ, որպեսզի և՛ կամենամ, և՛ կատարեմ այն, ինչ Նա ցանկանում է ինձնից: Արդյո՞ք ես հավատում եմ այս պնդմանը, թե՞ անտեսել եմ այս ճշմարտությունը և սուրբ ապրելու Նրա պատվիրանը, քանի որ շփոթել եմ դիրքային սրբությունը վարքագծային սրբության հետ: Կամ՝ արդյո՞ք ես թույլ եմ տվել, որ անցյալի ձախողումները հանգցնեն իմ հավատքն Աստծո զորության հանդեպ, որովնա գործում է իմ ներսում: Ինչպե՞ս վերադառնամ այս հավատքին, որպեսզի այն իրականություն դառնա իմ կյանքում:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ գործես ինձանում՝ որ կամենամ և կատարեմ այն, ինչ հաճելի է Քեզ: Ես ցանկանում եմ կյանքում արտաքուստ դրսևորել այն, ինչ արդեն կատարել ես իմ ներսում: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կատարում եմ իմ փրկությունը սուրբ երկյուղով և դողալով:

«Ձեր ոտքերի համար ուղիղ
շավիղ նշագծեք... և
աշխատեք սուրբ կյանք
վարելու վրա»:

– ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.13,14, NLT

20| ՄԵՐ ՁԳՏՈՒՄԸ

Սրբությունն ինքնանպատակ չէ. այն ճանապարհ է դեպի ամենակարևորը: Այժմ խոսենք դրա անդիմադրելի կողմի մասին՝ դիտարկելով մեր բացման աստվածաշնչյան խոսքն այլ թարգմանությամբ.

> «Հետևեք... սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիների 12.14):

«Հետևել» բառը հունարենում *«դիոկո»* բառն է, որի սահմանումն է «ինչ-որ բան անել՝ մեծ ջանքով և հստակ մտադրությամբ կամ նպատակով»[1]: Դիտարկելով այս երկու թարգմանությունները, ինչպես նաև «դիոկո»-ի սահմանումը, կասկած չի մնում, որ այս հատվածը վերաբերում է եռանդագին սրբությանը ձգտելուն՝ այն ձեռք բերելու մտադրությամբ:

Մեր առաջին հարցը պետք է լինի հետևյալը. այս պնդումը վերաբերում է *դիրքային*, թե՞ *վարքագծային* սրբությանը: Վերադառնանք Լիզայի և իմ ամուսնության օրինակին: Կարո՞ղ եք պատկերացնել, որ Լիզան ասեր իր մտերիմ ընկերուհիներից մեկին. «Ես մեծ ջանքով ձգտում եմ լինել Ջոնի կինը»:

Նրա ընկերուհին կծիծաղեր և կպատասխաներ. «Դու արդեն նրա կինն ես: Դու դարձար նրա կինը ձեր ամուսնության օրը»:

Կինը չի ձգտում «ամուսնացած կնոջ» *դիրքին,* որն արդեն զբաղեցնում է: Բայց նա կարող է ձգտել ամուսնացած կնոջ պատշաճ *վարքին:* Նույնը սրբության դեպքում է. մենք չենք ձգտում այն *դիրքին*, որն արդեն զբաղեցնում ենք, այլ՝ Տիրոջն արժանի *վարքին* (տե՛ս Կողոս. 1.10):

Այս խոսքը հստակ հայտնում է, որ այս պատվերն անտեսելու հետևանքը *Տիրոջը չտեսնելն է:* Այս պնդումը զգաստացնող է: Անկասկած, սա ազդելու է մեզ վրա՝ հավիտենության տեսանկյունից,

բայց այս պահին չենք կենտրոնանալու դրա վրա: Մեր ներկա քննարկման համար կարևոր հարցը հետևյալն է. ինչպե՞ս է դա ազդելու մեզ վրա այստեղ և հիմա:

Քանի որ ես Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի եմ, կարելի է ասել, որ ես «հարաբերություն» ունեմ մեր երկրի նախագահի հետ: Ես նրա իշխանության ներքո եմ, և նրա կայացրած որոշումներն ազդում են իմ կյանքի վրա, ինչպես և Ամերիկայի մյուս՝ 332 միլիոն քաղաքացիների վրա: Բայց թեև ես նման հարաբերություն ունեմ մեր երկրի նախագահի հետ, մինչև օրս երբեք ընդունելություն չեմ ստացել այդ պաշտոնը զբաղեցնող որևէ մեկի մոտ: Պարզ ասած, ես անձամբ չեմ հանդիպել և չեմ հաղորդակցվել ԱՄՆ նախագահներից ոչ ոքի հետ:

Այնուամենայնիվ, կան այլ ամերիկացիներ, որոնք պարբերաբար *տեսնում* են նախագահին. նրանք նախագահի ընկերներն են կամ աշխատում են նրա կողքին: Ամեն դեպքում, նրանք ճանաչում են Սպիտակ տանը ապրող մարդուն շատ ավելի լավ, քան ես: Նրանք ճանաչում են նրան անձամբ, իսկ ես ճանաչում եմ միայն որպես մեր երկրի ղեկավարի:

Նմանապես, կան միլիոնավոր հավատացյալներ, որոնք Հիսուս Քրիստոսի իշխանության ներքո են: Նա պաշտպանում է նրանց, սիրում է, մատակարարում է և պատասխանում է խնդրանքներին: Այնուամենայնիվ, հարցը հետևյալն է. արդյո՞ք նրանք տեսնում են Աստծուն: Այլ կերպ ասած, նրանք վերապրո՞ւմ են Նրա հայտնված ներկայությունը:

Բրազիլիայում գտնվող հազարավոր հավատացյալներ չունեին այն վարքը, որն Աստծո ներկայության մեջ կբերեր նրանց: Հենց որ նրանք ապաշխարեցին, նրանց ընդունելություն շնորհվեց Թագավորի մոտ: Այս սկզբունքը գործում է ամեն օր, ոչ թե միայն ժամանակ առ ժամանակ: Եթե մենք չունենք աստվածային երկյուղ, չենք ունենա սուրբ վարքին ձգտելու մղում, որը շնորհում է մեզ Նրա հայտնված ներկայությունը: Հիսուսն ասում է. «Ով որ Իմ պատվիրաններն ունի և դրանք պահում է... Ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհաննես 14.21):

Արժե կրկնել. *առանց վարքագծային սրբության ոչ ոք չի տեսնի Տիրոջը:* Ինչո՞ւ է սա անչափ կարևոր: Առաջինը՝ եթե չենք տեսնում Նրան, եթե մեր կյանքում չկա Նրա հայտնված ներկայությունը, մենք չենք կարող մտերմորեն ճանաչել Նրան: Միայն կարող ենք *իմանալ Նրա մասին*՝ նման իմ հարաբերությանը Միացյալ Նահանգների նախագահի հետ: Կամ, ավելի վատ, մենք խաբում ենք ինքներս մեզ՝ ստեղծելով մտացածին Հիսուսի: Այս պատրանքը խիստ վտանգավոր է, քանի որ մենք հավատում ենք, որ ճանաչում ենք Մեկին, Ում չենք

ճանաչում: Հակոբոսն ասում է. «Բայց Խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.22): Խաբված մարդը հավատում է, որ ճանաչում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան, այնինչ, իրականում այդպես չէ:

Երկրորդ պատճառը հավասարապես կարևոր է: Առանց Նրան տեսնելու, այսինքն՝ առանց Նրա ներկայության մեջ լինելու չենք կարող փոխվել կամ կերպարանափոխվել ըստ Նրա պատկերի: Պողոսը նշում է, որ Տիրոջը տեսնողները «կերպարանափոխվում են նույն պատկերին՝ փառքի մի մակարդակից մյուսը» (Բ Կորնթացիների 3.18, ESV): Կերպարանափոխումը սկսվում է ներսում, այնուհետև դրսևորվում է մարդկանց համար նկատելի կերպով:

Մեր սրբությունը չպետք է նման լինի փարիսեցիների սրբությանը: Հիսուսն ասաց. «Դրսևանց արդար եք երևում մարդկանց, բայց ներսևանց լիքն եք կեղծավորությամբ և անօրինությամբ» (Մատթեոս 23.28): Նրանց շարժառիթները նույնքան անմաքուր և պիղծ էին, որքան մահացածների դիերը: Նրանք չունեին Տիրոջ երկյուղը, այդ պատճառով էլ ձգտում էին այնպիսի արդարության, որը հիմնված էր արտաքին վարքագծի վրա, և որը կենտրոնացած էր իրենց ներկայանալի պատկերի վրա: Նման դիրքորոշումը թույլ չէր տալիս ներքին կերպարանափոխում ունենալ, ինչը ծնունդ կտար համապատասխան արտաքին վարքի: Նրանք հավատում էին, որ ճանաչում էին Աստծուն, բայց իրականությունն այն էր, որ նրանք չէին ճանաչում իրենց Արարչին, Ով կանգնած էր իրենց առջև: Հետևաբար, չէին վարվում Նրա ցանկությունների համեմատ. նրանք խաբում էին իրենք իրենց:

Այսօր էլ սրբությունը, որին ձգտում ենք, պետք է սկիզբ առնի մեր սրտերում՝ մեր մտքերում, շարժառիթներում և դիտավորություններում, և, ի վերջո, այն կձևավորի մեր արտաքին վարքը: Ահա թե ինչու է Հիսուսն ասում. «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որ նրանք Աստծուն կտեսնեն» (Մատթեոս 5.8): Եթե չտեսնենք Նրան, մենք չենք ունենա ներքին կերպարանափոխում՝ իրական սրբություն, և որպես հետևանք՝ չենք տեսնի Նրան: Այս երկուսը հաջորդում են միմյանց՝ նորանոր փուլերով:

Բավական չէ աստվածապաշտության արտաքին տեսք ունենալ, սակայն անարգել այն զորությունը, որը կարող է փոխել մեր ներքին ցանկությունները: Մենք պետք է փափագենք ճշմարտությանը մեր ներսում (շարժառիթներում և դիտավորություններում). դա պետք է լինի մեր ձգտումը: Հակոբոս առաքյալը խստորեն է խոսում այն հավատացյալների հետ, որոնք թեթևորեն են վերաբերվում սրբությանը: Նա գրում է.

> «Ձեր շարժառիթները լիովին սխալ են. դուք միայն ուզում եք այն, ինչ հաճույք է պատճառում ձեզ: *Շնացողնե՛ր:* Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ Աստծո թշնամի է դարձնում ձեզ» (Հակոբոս 4.3,4, NLT):

Հակոբոսն օգտագործեց «շնացողներ» բառը՝ մի հասկացություն, որը վերաբերում է ամուսնական ուխտը զանց անելուն: Աստված հաճախ է օգտագործում ամուսնությանն առնչվող համեմատություններ՝ պատկերելու համար մեր ուխտն Իր հետ: Պողոսը պնդում է, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև Հիսուս Քրիստոսի և եկեղեցու միությունը պատկերող օրինակներից մեկն է (տե՛ս Եփես. 5.31,32):

Այս աշխարհն ապրում է եսասիրական շահի և հպարտալի ձեռքբերումների համար: Այդ պատճառով է, որ այն կենտրոնանում է ընկալելի և ներկայանալի պատկերների վրա: Երբ մենք համապատասխանում ենք այս աշխարհի ցանկություններին՝ անտեսելով սրբությանը ձգտելը, դառնում ենք շնացողներ: Դա այնպիսի անարգանք է մեր Ամուսնու հանդեպ, որ մենք, փաստորեն, դառնում ենք Նրա թշնամիները: Այդ պատճառով, Հակոբոսը շարունակում է. «Մաքրե՛ք ձեր սրտերը, քանի որ ձեր նվիրումը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև» (Հակոբոս 4.8, NLT): Մենք կարող ենք մաքրել մեր սրտերը՝ միայն ընդունելով Տիրոջ երկյուղը, որը դրդում է ձգտել իրական սրբությանը:

Ավելի քան քառասուն տարի է՝ ամուսնացած եմ Լիզայի հետ, և կան հիմնավոր պատճառներ, թե ինչու շնություն չեմ գործել նրա դեմ: Առաջինը և գլխավորն այն է, որ վախենում եմ Աստծուց: Ես ուխտ եմ կնքել Նրա հետ, որ սիրեմ և փայփայեմ Լիզային՝ անկախ նրա արձագանքից կամ վարքից:

Երկրորդ պատճառն այն է, որ ես չեմ ցանկանում կորցնել մտերմությունն այս սքանչելի կնոջ հետ: Ինձ դուր է գալիս, որ նա վստահում է ինձ, կիսում է գաղտնիքները և սրտի ձգտումները: Ըստ էության, ես սիրում եմ մեր մտերմությունը:

Նույնը Հիսուսի պարագայում է: Ես ամեն գնով խուսափում եմ Նրա դեմ շնություն գործելուց, քանի որ չեմ ցանկանում կորցնել մեր մտերմությունը: Ես սիրում եմ Նրա սերտ ներկայությունը և մեր մտերիմ զրույցները: Ես սիրում եմ, երբ Նա կիսում է ինձ հետ այնպիսի գաղտնիքներ, որոնք չգիտեի: Գուցե այս պատճառով է, որ գրված է.

> «Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից, և Իր ուխտը սովորեցնում է նրանց» (Սաղմոս 25.14):

Մենք դեռ նոր ենք սկսում բացահայտել սրբության անդիմադրելի կողմը: Մենք կշարունակենք բացահայտել դրա գեղեցկությունը հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Սրտի մաքրություն սիրողին, որ շնորհք ունի իր շրթունքի վրա, թագավորը բարեկամ է» (Առակաց 22.11):

Եզրահանգում. Առանց վարքագծային սրբության ձգտելու, առանց այն ձեռք բերելու մտադրության, մենք չենք կարող մուտք գործել Տիրոջ ներկայության մեջ: Հարցն այն չէ, թե երբ կհասնենք կատարյալ սրբության, այլ՝ թե երբ կդարձնենք դա մեր սրտի փափագը:

Մտորում. Աստված գիտի՝ արդյո՞ք ես ձգտում եմ սուրբ վարքի, թե՞ շարունակ արդարացնում եմ իմ սերը կամ հանդուրժողականությունն աշխարհային ցանկությունների և հպարտալի ձեռքբերումների հանդեպ: Արդյո՞ք ես կձգտեմ սրտի և մտքի սրբության, որը կփոխի իմ վարքը: Արդյո՞ք ես կանեմ դա, նույնիսկ եթե իմ մտերիմներն այդպես չվարվեն:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ սրբության չձգտելու համար: Ես անտեսել եմ դրա կարևորությունը, բայց այժմ հասկանում եմ, որ այն պետք է լինի իմ փափագը, քանի որ այն դուռ է բացում Քեզ մոտ ընդունելություն ստանալու համար: Խնդրո՛ւմ եմ, ների՛ր իմ աշխարհիկ վարքը և ձգտումները և մաքրի՛ր ինձ Հիսուսի արյունով: Ես ապաշխարում եմ սրբության հանդեպ անփույթ վերաբերմունքի համար, Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես ձգտում եմ սրբությանը՝ այն ձեռք բերելու լիարժեք մտադրությամբ: Իմ նպատակն է լինել սուրբ, ինչպես որ Աստված է սուրբ:

«Արդարի ճանապարհն ուղիղ է.
Դու՝ Ուղիղդ, հարթում
ես արդարի շավիղը»:

– ԵՍԱՅԻ 26.7

21| ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Գուցե այս պահին ափսոսում եք, որ թեև *փորձել եք* սուրբ կյանք վարել, բայց ձեր ձախողումներն ավելի շատ են եղել, քան հաջողությունները: Դուք փափագում եք Աստծո հետ մտերմության, սակայն ձեզ համար դժվար է հնազանդ լինելը: Խնդրում եմ, հենց սկզբից իմացեք հետևյալը. Նա փափագում է ձեզ շատ ավելի, քան դուք՝ Նրան: Ցնծացեք, քանի որ Աստված ձեր կողմն է: Թող այս ճշմարտությունը մեղմի ձեր լարվածությունը:

Ամենայն հավանականությամբ, խնդիրը կարող է լինել հենց այն, որ դուք *փորձել եք:* Մովսեսի օրենքն ապացուցեց, որ մենք անկարող ենք պահել Աստծո պատվիրանները. մեզ աստվածային օգնություն է անհրաժեշտ: Այս անհրաժեշտ օգնությունը հենց Աստծո շնորհքն է: Հավատացյալների մեծամասնությունը գիտի, որ Հիսուս Քրիստոսի շնորհքն ազատում է մեզ օրենքի պահանջներից, սակայն շատերը չգիտեն, որ այն անում է ավելին. այն նոր բնություն է շնորհում մեզ և տալիս է մեղքից ազատ ապրելու կարողություն (տե՛ս Հռոմ. 6.6,7):

Պողոսը պատվիրում է մեզ սրբել մեր անձերը հոգու և մարմնի ամեն պղծությունից, սակայն այս պատվերին նախորդում է մի պնդում, որը հաճախ անտեսվում է: Մի քանի պարբերություն առաջ նա գրում է հետևյալը.

> «Եվ մենք, գործակից լինելով, աղաչում ենք նաև, որ դուք Աստծո շնորհքը զուր տեղը չընդունեք: Որովհետև ասում է. «Ընդունելի ժամանակում... օգնեցի քեզ»» (Բ Կորնթացիների 6.1,2):

Ընդունելի ժամանակը եկել է. մենք կարող ենք սուրբ կյանք վարել Նրա օգնությամբ: Ցավոք, Աստծո շնորհքը ներկայացվել է մարդկանց ոչ լիարժեք կերպով: Այն ուսուցանվել է որպես հավիտենական փրկություն, մեղքերի ներում, ազատություն մեղքի պատժից և անարժանաբար տրվող պարգև: Թեև այս իրողությունները բացարձակապես ճշմարիտ են, նույնքան լայնորեն չի ուսուցանվել այն իրողությունը, որ շնորհքը զորություն է տալիս մեզ: Աստված ասում է Պողոս առաքյալին. «Իմ շնորհքն այն ամենն է, ինչ քեզ պետք է: Իմ զորությունը լավագույնս գործում է տկարության մեջ» (Բ Կորնթացիների 12.9, NLT): Պարզ ասած, «Պողո՛ս, այն, ինչ դու չէիր կարող անել քո ուժերով, այժմ կարող ես՝ Իմ զորությամբ, որը կոչվում է «շնորհք»»:

Պետրոսը հաստատում է այս ճշմարտությունը. «Շնորհք... շատանա... ինչպես որ Նրա աստվածային զորությունը [շնորհքը] շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է» (Բ Պետրոս 1.2,3): «Նոր կենդանի թարգմանությունն» ավելի պարզ է. «Նրա աստվածային զորությամբ [շնորհքով] Աստված տվեց մեզ այն ամենը, ինչ մեզ պետք է՝ աստվածապաշտ կյանք վարելու համար» (NLT): Շնորհքը զորություն է տալիս մեզ՝ սուրբ կյանք վարելու համար:

Ինչո՞ւ է այս ճշմարտությունն անչափ կարևոր: Քրիստոնեությունը հավատքի կյանք է: Ամբողջ քրիստոնեական ուղերձը կոչվում է «հավատքի խոսք» (Հռոմեացիների 10.8): Այլ կերպ ասած, մենք ոչինչ չենք ստանա Աստծուց, եթե չհավատանք, և մենք չենք կարող հավատալ այն բանին, ինչ չգիտենք: Այսպիսով, եթե չգիտենք, որ շնորհքը զորություն է տալիս մեզ, մենք կշարունակենք մեր ուժերով Աստծուն հաճելի լինելու փորձերը: Եվ դա կդրդի մեզ անպտուղ, թշվառ գոյության:

Օգտագործենք վերստին ծնունդի փորձառությունը՝ որպես օրինակ: Կան բազմաթիվ չփրկված մարդիկ, որոնք, իրենց խոսքերով, հավատում են, որ Աստված կարող է փրկել: Այնուամենայնիվ, եթե նրանք չապաշխարեն և չհավատան Ավետարանին, զուրկ են մնալու փրկարար շնորհքից: Նույնը վերաբերում է մեր կողմից սրբությանը ձգտելուն: Կան բազմաթիվ քրիստոնյաներ, որոնք հավատում են, որ Աստված կարող է սուրբ կյանք վարելու կարողություն տալ իրենց, բայց քանի դեռ նրանք սրտանց չեն հավատացել, որ *շնորհքը զորություն է տալիս,* օգուտ չեն ստանա դրանից:

Պողոսն աղաչում է Կորնթոսի հավատացյալներին. «...դուք Աստծո շնորհքը զուր տեղը չընդունեք» (Բ Կորնթացիների 6.1): Ի՞նչ է նշանակում շնորհքը զուր տեղն ընդունելը: Դա պարզապես նշանակում է չօգտագործել այն՝ իր առավելագույն ներուժով: Եթե ինչ-որ մեկին նվիրեն հողագործության սարքավորումներ, ինչպես նաև սերմեր, նա կարող է հունձք ստանալ, սնվել և ապրել դրանով: Բայց եթե նա չօգ-

տագործի այն ամենը, ինչ իրեն տրվել էր, սովից կմահանա: Ինչ կասի նրա հարևանը՝ նրա մահանալուց հետո. «Նա զուր ստացավ այդ սարքավորումները և սերմերը»:

Ահա թե ինչ նկատի ունի Պողոսը. Աստված շնորհք է տվել, որպեսզի օգնի ձեզ ապրել այնպես, ինչպես որ չէիք կարող ձեր ուժերով: Շնորհքը զորություն է տալիս ձեզ՝ սուրբ կյանքի ձգտելու և այդ կերպով ապրելու համար: Մի՛ անտեսեք այս զորությունը՝ անհավատության պատճառով:

Եթե Աստծո շնորհքն ընդամենը այն է, ինչ լայնորեն ուսուցանվել է Արևմուտքում՝ ընդամենը փրկություն, ներում և տոմս դեպի երկինք, ինչպե՞ս մարդը կարող է զուր տեղն ընդունել այն: Չկա ներուժ, որը հնարավոր է վատնել, և Պողոսի պնդումն անիմաստ է դառնում:

Եթե հետևենք առաքյալի դատողությունների շղթային, ամբողջ պատկերն ի մի է գալիս: Կորնթոսի եկեղեցին աշխարհիկ էր. նրանք ջանասիրաբար չէին ձգտում սրբությանը: Որպես այս պնդման հաստատում, մի քանի գլուխ անց նույն նամակում Պողոսը գրում է. «Ձեզնից շատերը չեն թողել իրենց անցյալի մեղքերը: Դուք չեք ապաշխարել ձեր պղծությունից, սեռական անբարոյությունից և կրքով լի հաճույքին պատրաստակամորեն ձգտելուց» (Բ Կորնթացիների 12.21, NLT): Դեռևս վեցերորդ գլխում Պողոսը սկսեց՝ աղաչելով այս հավատացյալներին չվատնել Աստծո շնորհքը, ինչից հետո նա հայտնում է իր սերը նրանց հանդեպ՝ հարցնելով, թե ինչու այն փոխադարձ չէ: Նա շարունակում է՝ վերադառնալով գլխավոր մտքին և նշելով, որ Աստծո շնորհքն անտեսելը նրանց կյանքում ակնհայտ էր այն բանով, որ նրանք անբարո մարդկանց ազդեցության ներքո էին:

Դուք նույնը չեք, ինչ անհավատները: Այնպես որ, մի՛ միացեք նրանց: Լավը և վատը չպետք է միասին լինեն: Լույսը և խավարը չեն կարող հաղորդություն ունենալ (Բ Կորնթացիների 6.14, NCV):

Մենք պետք է հիշենք, որ այլ բան է անհավատներին հասնելու համար այս աշխարհ գնալը, և այլ բան է նրանց հետ միաբանվելովնրանց ազդեցությունը կրելը: Դա միայն հանգեցնելու է այնպիսի վարքագծի, որը կարող է հեռացնել մեզ կյանքի ճանապարհից: Կրկին, սա հոգևոր շնություն է համարվում:

Պողոսը շարունակում է՝ հիշեցնելով այդ մարմնավոր հավատացյալներին, որ նրանք Աստծո բնակավայրն են, և հայտնելովնրանց Աստծո ցանկությունը. «Նրանցում կբնակվեմ և նրանցում ման կգամ և նրանց Աստված կլինեմ, և նրանք՝ Իմ ժողովուրդը: Նրա համար նրանց միջից դո՛ւրս գնացեք և բաժանվե՛ք,- ասում է Տերը,- և պիղծ բաների մի՛ դիպչեք, *և Ես կընդունեմ ձեզ»* (Բ Կորնթացիների 6.16բ-18ա):

Կրկին, մենք տեսնում ենք խոստում Աստծո հայտնված ներկայության մասին, բայց՝ ավելի մեծ չափով: Խոսքը՝ մեզ պարբերաբար այցելելու մասին չէ, այլ՝ մեր ներսում և մեզ հետ բնակվելու: Մենք կրկին տեսնում ենք, որ խոստումը՝ Աստծուն (Նրա հայտնված ներկայությունը) տեսնելու մասին, պայմանական է: Եթե զերծ մնանք եսասեր և հպարտալի ցանկություններից, որոնց հարում է այս աշխարհը, մեզ խոստացվում է տևական ընդունելություն Թագավորի մոտ. «...և Ես կընդունեմ ձեզ»: Հակառակը նույնպես ճշմարիտ է. եթե աղտոտենք մեզ այս աշխարհի պղծությամբ, մենք ընդունելություն չենք ստանա: Պողոսն ամփոփում է խոսքը հետևյալ պնդմամբ.

> «Այսպիսով, ունենալով այս խոստումները, սիրելինե՛ր, թող որ մենք մաքրենք մեզ մարմնի և հոգու ամեն աղտոտումից՝ կատարելագործելով սրբացումն Աստծո վախով» (Բ Կորնթացիների 7.1, YLT):

Այժմ կարող ենք լիարժեք հասկանալ Պողոսի պնդումը Փիլիպեի եկեղեցուն. «Ահով և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը, որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ *կամենալն էլ, անելն էլ*՝ Իր հաճության պես» (Փիլիպեցիների 2.12,13): Տիրոջ երկյուղը դրդում է մեզ *կամենալ* (տալիս է ցանկություն), իսկ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը թույլ է տալիս *կատարել* (տալիս է զորություն):

Մեկ քայլ առաջանալով, որտեղ չկա ցանկություն (սուրբ երկյուղի բացակայության պատճառով), զորությունն առաջնահերթ չի լինի և այդ պատճառով էլ չի գործադրվի. այն զուր ստացված կլինի: Ահա թե ինչու է սուրբ երկյուղն անչափ կարևոր մեր արդյունավետության և երկարակեցության համար:

Հուսով եմ՝ այժմ պարզ է, թե ինչու է մեր անձերը մաքրելը սրբության կարևոր կողմերից մեկը, թեև այն սրբության լիարժեք սահմանումը չէ: Կրկին, սրբության գլխավոր սահմանումն է՝ *Նրան ընծայված լինելը, ամբողջովին Նրանը լինելը:* Եկեք առավել լիարժեք պատկերենք սրբության գլխավոր իմաստը: Երբ հարսն ամուսնանում է փեսայի հետ, նա լիովին տրվում է նրան: Այս նվիրումը ենթադրում է անձի մաքրություն՝ և՛ իր դիրքի, և՛ իր վարքի մեջ: Մեծագույն նպատակը, սակայն, անձի մաքրությունը չէ, այլ՝ իր փեսային ընծայված հարս լինելը, և անձի մաքրությունը դրա կողմերից մեկն է:

Այսպիսով, ճշմարիտ սրբությունը գերբնական, ընծայված մաքրություն է, որը դուռ է բացում Աստծո հետ մտերմության համար: Սա այն *անդիմադրելի* կողմն է, որը կշարունակենք դիտարկել մինչև գրքի ավարտը: Բայց, նախ, մենք պետք է շարունակենք խո-

սել այն մասին, թե ինչպես գործնականորեն նվիրված լինենք մեր Փեսային: Պատասխանը մեկ բառի մեջ է. *ինազանդությամբ:*

Անձնական կիրառում

Հատված. «Զորացի՛ր այն շնորհքով, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթեոս 2.1):

Եզրահանգում. Եթե անտեղյակ ենք այն մասին, որ շնորհքը զորություն է տալիս, մենք կշարունակենք Աստծուն հաճեցնելու մեր փորձերը՝ մեր կարողությամբ: Մենք զուր տեղն ընդունած կլինենք Աստծո շնորհքը:

Մտորում. Արդյո՞ք ես փորձել եմ սուրբ կյանք վարել, և իմ ձախողումները եղել են ավելի շատ, քան հաջողությունները: Արդյո՞ք ես փորձել եմ անել դա իմ կարողությամբ: Ես կախվա՞ծ եմ եղել Աստծո շնորհքից, որը զորացնում է ինձ՝ սուրբ կյանք վարելու համար: Եթե ոչ, ինչպե՞ս կարող եմ փոխել դա:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ես գիտակցում եմ, որ միայն Քո շնորհքի զորությամբ է, որ կարող եմ աստվածապաշտ կյանք վարել՝ այնպիսին, որը գրավում է Քո փառավոր ներկայությունը: Ների՛ր ինձ, որ փորձել եմ անել դա իմ կարողությամբ: Սկսած այս պահից, ես կզորանամ Քո շնորհքով, որպեսզի առանձնացված կյանք վարեմ, որը փառավորում է Հիսուսին: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կձգտեմ սրբության՝ սուրբ երկյուղի դրդմամբ, և սուրբ կյանք կվարեմ՝ Աստծո շնորհքի զորությամբ:

Մեր արձագանքն

Աստծո խոսքին

ՇԱԲԱԹ 4

«Քայլեցրո՛ւ ինձ Քո պատվիրանների շավիղով, որովհետև այդտեղ է իմ երջանկությունը»:

– ՍԱՂՄՈՍ 119.35, NLT

22| ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻՑ ԴՈՂԱԼԸ

Առաջին բաժնում նշեցինք, որ Տիրոջ երկյուղի սահմանումը կարելի է բաժանել երկու կարգի. Աստծո ներկայությունից դողալը և Նրա Խոսքից դողալը: Մենք խոսեցինք Աստծո փառավոր ներկայության մասին, իհարկե՝ ոչ լիարժեք, քանի որ մենք շարունակ բացահայտելու ենք Աստծո ներկայությունը ամբողջ հավիտենության ընթացքում: Այս բաժնում կխոսենք Նրա Խոսքին արձագանքելու մասին:

Որպես սկիզբ, դիտարկենք մի ժամանակահատված, երբ Աստծո ժողովուրդը շեղվել էր Նրա հետ իրական հաղորդակցությունից և փոխարինել էր այն զուտ ձևականությամբ: Նրանց ուշադրությունը գրավելու համար Աստված հարցնում է. «Երկինքն Իմ աթոռն է, և երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը: Դա ինչ տուն (կամ՝ տաճար) է, որ շինում եք Ինձ համար» (Եսայի 66.1):

Եթե կարդանք այս գլխի առաջին հինգ խոսքերը՝ որպես համատեքստ, կտեսնենք, որ Ամենակարողը դիմում է ժողովրդին, որոնք փորձում էին կառուցել և պահպանել հարաբերություն Իր հետ՝ իրենց պայմաններով: Նրանք հետևում էին Նրա ճանապարհներին, սակայն ոչ սրտանց՝ ենթադրելով, որ դրանով կխաղաղեցնեին Նրան: Աստված հստակ ցույց է տալիս, որ նրանց ընտրած ուղին վիրավորական է Իր համար, բայց անմիջապես հայտնում է, թե ինչ է անհրաժեշտ՝ ճշմարիտ հարաբերության մեջ մուտք գործելու համար:

> «Ես կօրհնեմ նրանց, ովքեր սրտով խոնարհ և կոտրված են, *ովքեր դողում են Իմ Խոսքից»* (Եսայի 66.2, NLT):

«Ես կօրհնեմ» արտահայտությունը եբրայերեն *«նաբակ»* բայն է, որի սահմանումը հետևյալն է՝ «նայել, հետևել, հաշվի առնել. այն ունի մեծ ուշադրությամբ և կենտրոնացած կերպով ինչ-որ բանին նայելու իմաստ»: Աստված, ըստ էության, նկատի ունի. «Ահա այն մարդը, որին Ես մեծ ուշադրություն եմ դարձնում»: Այս խոսքում թվարկված է երեք առաքինություն. խոնարհություն, կոտրված սիրտ և «Իմ խոսքից» դողալը, որի մասին խոսելու ենք այս բաժնում:

Աստծո Խոսքից դողացող մարդը մշտապես մեծարում է Նրա ասածը՝ ամեն ինչից առավել: Նման մարդու համար Աստծո Խոսքից ավելի կարևոր ոչինչ չկա. սա սուրբ երկյուղի ճշմարիտ ապացույցն է: Նա երանելի է: Նույն կերպով, Պողոս առաքյալը գրում է.

> «Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ *ոչ միայն իմ ներկայությունում,* այլև *հիմա էլ ավելի՝ իմ բացակայությունում,* ահով և դողալո՛վ գործեք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպեցիների 2.12):

Դիտարկե՛ք այս հորդորը ոչ թե որպես Պողոսի խոսքերը՝ ուղղված Փիլիպեի հավատացյալներին, այլ որպես Աստծո խոսքերը՝ ուղղված մեզ: Ուշադրություն դարձրեք «ամեն ժամանակ հնազանդվեցիք» արտահայտությանը: Խոսքն անպայմանական հնազանդության մասին է, անկախ այն բանից՝ զգո՞ւմ եք Նրա ներկայությունը, թե՞ ոչ, տեսնո՞ւմ եք, որ Նա գործում է ձեր փոխարեն, թե՞ ոչ, ձեր աղոթքը պատասխանվո՞ւմ է ձեր սպասված ժամանակում, թե՞ ոչ:

Հեշտ է հնազանդվել Աստծուն, երբ գտնվում եք որևէ համաժողովում, որտեղ մարդիկ բարի են միմյանց հանդեպ, և Աստծո ներկայությունն ուժգին է: Բայց ի՞նչ կանեք, եթե ձեր թիմի վստահելի անդամը ստի ձեր մասին, և ձեզ հեռացնեն աշխատանքից: Դուք կներե՞ք՝ Աստծո Խոսքի համաձայն, թե՞ վրեժ կլուծեք՝ նույնը հատուցելով:

Ի՞նչ կանեք, եթե գործուղման եք և միայնակ եք զգում, և հանկարծ սկսում եք հիշել, որ ձեր կինը քննադատում էր ձեզ: Հակառակ սեռի մի բարետես թիմակից հաճոյախոսություններ է անում, ցույց է տալիս, որ հասկանում է ձեզ, իսկ հետո շողոքորթելով առաջարկում է երեկոն միասին անցկացնել իր հյուրանոցային համարում: Ոչ ոք չի իմանա այդ մասին. դուք կփախչե՞ք այդ առաջարկից, թե՞ կընդունեք:

Ի՞նչ կանեք, եթե ուշ ժամին աշխատում եք համակարգչով և տեղեկություն եք փնտրում համացանցում ձեր աշխատանքի համար, երբ հանկարծ պոռնոգրաֆիկ նյութերի եք հանդիպում. դուք կանցնե՞ք այդ հղումներով:

Սրանք այնպիսի դեպքերի օրինակներ են, երբ, թվում է, թե Աստծո ներկայությունը չկա: Եթե դողում եք Նրա Խոսքից, դուք կհնազանդ-

վեք՝ անկախ հանգամանքներից, քանի որ Խոսքը մեծագույն առաջնահերթությունն է ձեզ համար: Սա ցուցանիշ է, որ դուք վարվում եք սուրբ երկյուղով, քանի որ «Տիրոջ վախով մարդը կհեռանա չարից» (Առակաց 16.6):

Սաղմոսերգուն գրում է.

> «Երանելի է այն մարդը, որ Տիրոջից վախենում է, և Նրա պատվիրանները շատ է հավանում» (Սաղմոս 112.1):

Աստծուց երկյուղ ունեցող տղամարդը կամ կինը ոչ միայն հնազանդվում է, այլև մեծ բերկրանք է ապրում հնազանդությունից: Հնազանդությունը բեռ չէ, այլ՝ ուրախություն: Այդ անձնավորությունն ունի հիմքային պատկերացում այն մասին, որ Աստված մեր Արարիչն է, և ուրեմն գիտի, թե ինչն է օգտակար և ինչն է կործանարար մեզ համար:

Հիշում եմ՝ երբ մեր չորս որդիները դեռ փոքր երեխաներ էին, Սուրբ Ծննդյան տոնը, ըստ էության, աշխատանքային օր էր: Փոքր երեխաներ ունեցող հայրերը կհասկանան այն, ինչ ես կասեմ: Հենց որ բոլոր նվերները բացվում էին, կային նվերներ, որոնք պետք էր հավաքել: Ես վարվում էի սովորական հոր պես. բացում էի տուփը, շուռ էի տալիս բոլոր մասերը հատակին, մի կողմ էի նետում տուփը և օգտագործման ձեռնարկը և սկսում էի հավաքել: Ես ավարտում էի մոտավորապես մեկ ժամից, նայած թե ինչ խաղալիք էր, բայց, ի զարման ինձ, հատակին դեռ մասեր էին մնում: Ես միացնում էի խաղալիքը, բայց ոչինչ չէր կատարվում: Եվ ի՞նչ էի անում. ես գտնում էի օգտագործման ձեռնարկը, վերցնում էի այն, քանդում էի խաղալիքը և կրկին հավաքում՝ ըստ արտադրողի ձեռնարկի: Եվ, իհարկե, այն աշխատում էր:

Այն մարդը, որը վախենում է Աստծուց, մշտապես հնազանդվում է: Իր էության խորքում նա չի սասանվում հետևյալ հիմնարար ճշմարտություններից.

1. Աստված գիտի, թե ինչն է ճիշտ ինձ համար:
2. Աստված անարատ սեր է, և ես Նրա սիրո ուշադրության կենտրոնում եմ:
3. Աստված երբեք չի պատվիրի ինձ այնպիսի բան, ինչը կործանարար է ինձ համար: Այն, ինչ Նա հանձնարարում է, մշտապես լավագույն արդյունքն է ունենում:
4. Այդ իսկ պատճառով, ես ուրախությամբ որոշում եմ կայացնում հնազանդվել՝ անկախ այն բանից, թե ինչ է Նա հանձնարարում:

Իսրայելի զավակները մշտապես տրտնջում էին: Նրանք դժգոհում էին այն պատճառով, թե ինչպես էին իրենց առաջնորդում, և թե ինչ էր տեղի ունենում իրենց կյանքում: Նրանք մեղադրում էին Աստծուն

իրենց անհարմարավետության, կարիքների և ցանկացած բանի համար, ինչը չէր գոհացնում իրենց: Նրանք չունեին սուրբ երկյուղ և չէին դողում Նրա Խոսքից: Այդ իսկ պատճառով, Աստված ասաց.

> «Որովհետև քո Տեր Աստծուն ծառայություն չարեցիր՝ *ուրախությամբ և հոժար սրտով,* ամեն բանի առատության համար, դրա համար դու կծառայես քո թշնամիներին» (Երկրորդ Օրինաց 28.47,48):

Նրա Խոսքից դողալը ենթադրում է ուրախություն՝ ձեր էության խորքում: Հակառակ դեպքում, միայն ժամանակի հարց է, մինչև որ հանգամանքներն ի հայտ կբերեն դրա բացակայությունը ձեր մեջ: Ես երբեք չեմ մոռանա այն պահը, երբ բացահայտեցի այն հինգ մեղքերը, որոնք թույլ չտվեցին Իսրայելի ժողովրդին մուտք գործել իրենց կոչման մեջ. չար բաներ ցանկանալը, կռապաշտությունը, պոռնկությունը, Քրիստոսին փորձելը և տրտունջը (տես Ա Կորնթ. 10.6-10): Երբ կարդացի «տրտունջ» բառը, գրեթե վեր թռա աթոռից: Ես բացականչեցի. «Ինչ: Տրտունջը: Ինչպե՞ս կարող է տրտունջը նույն ցուցակում լինել այս *խոշոր* մեղքերի հետ»:

Ես լսեցի Սուրբ Հոգու ձայնը: Նա ասաց ինձ. «Որդի՛ս, Ես լուրջ մեղք եմ համարում տրտունջը»: Նա ցույց տվեց, որ տրտունջն ընդդիմանում է Աստծուն՝ ասելով. «Աստվա՛ծ, ինձ դուր չի գալիս այն, ինչ Դու անում ես իմ կյանքում, և եթե ես Քո փոխարեն լինեի, այլ կերպ կվարվեի»:

Նա շարունակեց. «Դա վիրավորանք է Իմ բնավորության հանդեպ. ապստամբություն է Իմ կամքի դեմ և, ըստ էության, սուրբ երկյուղի լուրջ պակաս է»:

Ես պատմեցի այս մասին Լիզային, և մենք համաձայնեցինք, որ խրատելու էինք մեր երեխաներին տրտնջալու համար՝ դիտարկելով դա որպես ապստամբություն: Ես լուրջ վերաբերվեցի դրան: Սկսեցի խուսափել ցանկացած տեսակի տրտունջից և հետևել, որ բողոքի նույնիսկ մեկ բառ դուրս չգա իմ բերանից: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց, երբ չորսօրյա ծոմի մեջ էի, լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. «Որդի՛ս, Ես լսում եմ քո սրտի տրտունջը»:

Ես անմիջապես ծնկի եկա և սկսեցի ապաշխարել: Ավելի ուշ Աստված ցույց տվեց ինձ, որ ես չէի ծառայում Տիրոջը *ուրախությամբ և հոժար սրտով,* և իմ թշնամիներն առավելություն ունեին իմ հանդեպ: Կրկին կարդանք Պողոսի խոսքերը.

> «Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունում, այլև հիմա էլ ավելի՝ իմ բացակայությունում, *ահով և դողալո՛վ* գործեք ձեր անձերի փրկությունը, որովհետև Աստված է, որ ներգործում է ձե-

զանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես: *Ամեն բան գործե՛ք առանց տրտնջանքի»* (Փիլիպեցիների 2.12-14):

Այդ չորսօրյա ծոմից կարճ ժամանակ անց ես խորապես բացահայտեցի, թե ինչ է նշանակում այս աստվածաշնչյան հատվածը: Իմ աչքերը բացվեցին այն ճշմարտության համար, որ տրտունջը սուրբ երկյուղի հակադրությունն է. այն *չի դողում Նրա Խոսքից:* Մենք անարգում ենք Աստծուն և Նրա Խոսքը, երբ մտածում կամ խոսում ենք դժգոհության դիրքից:

Աստծո երկյուղն ունեցող մարդիկ հստակորեն համոզված են, որ չկա ոչինչ ավելի կարևոր կամ օգտակար, քան հնազանդությունը: Նրանք հնազանդվում են՝ անկախ գնից, որը պետք է վճարել, և չեն զտում Աստծո Խոսքը մերօրյա հասարակության մշակույթով կամ միտումներով: Նույնպես, նրանց հնազանդությունն Աստծո Խոսքին հիմնված չէ այլ հավատացյալների վարքի վրա. նրանք պարզապես հնազանդվում են:

Անձնական կիրառում

Հատված. «Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.19):

Եզրահանգում. Սուրբ երկյուղի ապացույցը հնազանդությունն է, ինչը ենթադրում է և՛ ճիշտ վերաբերմունք, և՛ համապատասխան գործողություններ՝ անկախ հանգամանքներից:

Մտորում. Արդյո՞ք ես հնազանդվում եմ միայն բարենպաստ հանգամանքների դեպքում: Արդյո՞ք ես հակված եմ տրտնջալուն, երբ ամեն ինչ իմ ուզածով չի լինում: Ինչպե՞ս կարող եմ ուրախ և գոհունակ վերաբերմունք ունենալ ամեն ժամանակ: Ինչպե՞ս կարող եմ հաստատակամ լինել հնազանդվելու որոշման մեջ:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ Քո Խոսքից չդողալու համար: Իմ հնազանդությունը պայմանական է եղել, և ես չեմ ունեցել ուրախ և գոհունակ վերաբերմունք: Ես ապաշխարում եմ և խնդրում Քո ներումը: Ես ընդունում եմ սուրբ երկյուղը: Խնդրում եմ, սովորեցրո՛ւ և զորություն տո՛ւր, որ հնազանդվեմ ամեն ժամանակ՝ ուրախ վերաբերմունքով: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես վախենում եմ Աստծուց, և այդ պատճառովնրա բարի կամքը ներգործում է ինձանում՝ և՛ կամենալը, և՛ կատարելը:

Ավելի լավ է լուռ դողալ
Տիրոջ Խոսքից և խոնարհվել
աստվածային սիրո
անսահման մեծության առջև,
քան գոչել մինչև
խռպոտության հասնելը:

– Չ.Հ. ՍՓԵՐՋԵՆ

23| ԱՆՄԻՋԱՊԵՍ

Աստվածային երկյուղի գլխավոր հատկանիշներից է անպայմանական հնազանդությունը Նրա Խոսքին, ինչն ապշեցուցիչ առավելություններ կտա մեզ: Գոյություն ունի Աստծո Խոսքից դողալու հինգ հստակ կողմ, և հաջորդ հինգ օրերում առանձին կդիտարկենք յուրաքանչյուրը: Ահա առաջինը.

1. **Հնազանդվե՛ք Աստծուն անմիջապես.**

Հնազանդությունն ամենակարևոր բանն է Աստծուց վախեցողների համար: Նրանք վեր չեն դասում անձնական շահերն այն բանից, ինչ Աստված պատվիրել է իրենց: Սուրբ երկյուղը պատվաստում է մեր սրտում հետևյալ գաղափարը. *այն, ինչ կարևոր է Աստծո համար, առաջնահերթ է ինձ համար:*

Գոյություն ունեն բազմաթիվ սուրբգրային հատվածներ, որոնք կարող ենք դիտարկել, սակայն եկեք դիտարկենք Հիսուսի պնդումներից երկուսը՝ նախադրյալ սահմանելու համար.

> «Ահա թե ինչպես եմ ուզում, որ վարվեք այս հարցերում: Եթե գնաք ձեր երկրպագության վայրը և, երբ արդեն պատրաստվում եք զոհաբերություն մատուցել, հանկարծ հիշեք, որ ձեր ընկերներից մեկը ոխ ունի ձեր դեմ, թողե՛ք ձեր զոհը, *անմիջապես* հեռացե՛ք, գնացե՛ք այդ ընկերոջ մոտ և հաշտվեք նրա հետ: Հետո և միայն դրանից հետո վերադարձեք և կարգավորեք ամեն ինչ Աստծո հետ» (Մատթեոս 5.23,24, MSG):

Ուշադրություն դարձրեք *«անմիջապես»* բառին: Կրկին, ինչպես և Եսայի 66-րդ գլխում, Հիսուսը շեշտում է, որ մենք չպետք է որևէ բան անենք Աստծո համար՝ անտեսելով այն, ինչ Նա արդեն հանձնարարել

է մեզ: Այս դեպքում Հիսուսը խոսում է կոնկրետ իրավիճակի մասին, որում ինչ-որ մեկը ոխ էր պահել, բայց սա ընդհանուր սկզբունք է, որը կիրառելի է բոլոր հանգամանքներում:

Հիշե՛ք պատմությունն այն մարդու մասին, որը կիսվեց ինձ հետ, որ ապրում էր տևական պոռնկության մեջ, սակայն զարմացած էր, թե ինչու իր աղոթքները չէին պատասխանվում, և ինչու իր գործը չէր հաջողվում՝ այնպես, ինչպես որ ակնկալում էր: Եկեք կանգ առնենք և մտածենք այս մասին: Եթե Աստծուն հնազանդվելը՝ սեռական անբարոյությունից փախչելու հարցում, նրա առաջնահերթությունը չէր, ինչո՞ւ էր նա ակնկալում, որ Աստծո առաջնահերթությունը պետք է լիներ իր գործն օրհնելը:

Հեղին, որն Իսրայելի քահանայապետն էր, երկու որդի ուներ, որոնք նույնպես քահանաներ էին՝ նրա առաջնորդության ներքո, բայց նրա որդիները չար էին: Նրանք շնություն էին գործում և հարկադրաբար խլում էին մարդկանց զոհաբերությունները: Հեղին *ուշացնում էր* իր որդիների անօրինությունը պատժելը: Տիրոջ պատասխանն այդ անտեսմանը հետևյալն էր. «Ինչո՞ւ ես ավելի շատ պատիվ տալիս քո որդիներին, քան Ինձ» (Ա Թագավորաց 2.29, NLT):

Երբ ուշացնում կամ անտեսում ենք Աստծուն հնազանդվելը՝ որևէ անձի կամ նպատակի պատճառով, մենք պատվում ենք այդ անձին կամ նպատակը ավելի, քան Աստծուն: Դա սուրբ երկյուղի բացակայություն է: Նման դեպքերում, Աստված ասում է.

> «Ես կպատվեմ նրանց, ովքեր պատվում են Ինձ, և *կանարգեմ* նրանց, ովքեր *թեթևորեն են վերաբերվում* Ինձ» (Ա Թագավորաց 2.30, NLT):

Այս խոսքերը սթափեցնող են: Մենք *թեթևորեն ենք վերաբերվում* Աստծուն, երբ ուշացնում կամ անտեսում ենք Նրա Խոսքին հնազանդվելը: Մենք, ըստ էության, ասում ենք, որ Նա առաջնահերթ չէ մեզ համար: Աստված ասում է, որ *կանարգի* նրանց, ովքեր *թեթևորեն են վերաբերվում* Իրեն: «Անարգել» բառը լավագույն թարգմանությունը չէ. եբրայերենում օգտագործվում է *«քալալ»* բառը, որի սահմանումն է «լինել աննշան, լինել *չնչին»: «Չնչին»* բառը նշանակում է փոքր արժեք կամ կարևորություն ունեցող: Այս պնդման մեկնություններից մեկն այն է, որ Աստված չնչին կհամարի այն, ինչը կարևոր է մեզ համար, եթե մենք թեթևորեն վերաբերվենք Նրա Խոսքին: Ոչ մի խելամիտ մարդ չի ցանկանա, որ դա կատարվի իր հետ:

Եթե այդ գործարարը պատվեր Աստծո Խոսքը սեռական մաքրության մասին, գուցե Աստված կարևոր համարեր նրա գործը: Փոխարենը, դա չնչին բան էր համարվում:

Եվս մեկ հատված, որը պատկերում է անմիջապես հնազանդվելու

կարևորությունը, Հիսուսի խոսքերն են՝ ուղղված Եփեսոսի եկեղեցուն.

> «Զղջա և առաջին գործերն արա, ապա թե ոչ, կգամ շուտով քեզ մոտ և քո ճրագակալը կշարժեմ տեղից, եթե չապաշխարես» (Հայտնություն 2.5):

Ապաշխարելը նշանակում է փոխել մտածելակերպը և նորովի վարվել՝ Աստծո Խոսքին համապատասխանելու համար: Եթե այդ եկեղեցին ուշացներ հնազանդվելը, նրանք բաց կթողնեին օրհնված մնալու իրենց հնարավորությունը: Հիսուսը *շուտով* կգար և վերջ կդներ նրանց ազդեցությանը: Կրկին, սա զգաստացնող միտք է:

Ղուկասի Ավետարանում տեսնում ենք մի պատմություն, որը ժամանակի և առաջնահերթությունների պատճառով բաց թողնված հնարավորությունների մասին է: Հիսուսն ասաց. «Մի մարդ մեծ ընթրիք արեց և շատերին հրավիրեց: Եվ ընթրիքի ժամանակ իր ծառային ուղարկեց, որ հրավիրվածներին ասի. «Եկեք, որովհետև արդեն ամենը պատրաստ է»» (Ղուկաս 14.16,17): Անկասկած, սա Տիրոջ Խոսքն է. «Ընթրիքը պատրաստ է»: Այս դեպքում ժամանակի դերը որոշիչ է:

Ուշադրություն դարձրեք հրավիրվածների պատասխանին.

> «Բայց բոլորը սկսեցին արդարացումներ անել»
> (խոսք 18, NLT):

Նրանց չմասնակցելու պատճառները հիմնավոր էին թվում: Մեկը հողատարածք էր գնել, մյուսը պետք է զբաղվեր իր ձեռնարկությամբ, իսկ երրորդը կին էր առել, որը նրա ուշադրության կարիքն ուներ: Այդ արդարացումների թվում չկային շնություն, գողություն, սպանություն կամ ցանկացած մեղսալի բան: Այնուամենայնիվ, *երբ այն, ինչը մեղք չէ, սակայն ավելի առաջնահերթ է, քան Տիրոջ Խոսքը, մեղք է դառնում:*

Ծառան վերադարձավ՝ փոխանցելով հրավիրվածների պատասխանները, և գրված է. «Նրա տերը սաստիկ բարկացավ» (խոսք 24, NLT): Ոչ թե դժգոհեց, այլ՝ սաստիկ բարկացավ: Ինչո՞ւ: Քանի որ նրա հրավերին թեթևորեն վերաբերվեցին. այն առաջնահերթ չէր:

Ի՞նչ արեց տերը: Նա հրավիրեց այնպիսի մարդկանց, որոնք սկզբնապես հրավիրված չէին: Հիսուսն ավարտեց հետևյալ խոսքերով. «Այն կանչված մարդկանցից ոչ մեկն իմ ընթրիքը չի ճաշակի» (խոսք 24): Նրանք բաց թողեցին իրենց հնարավորությունը: Նրանց արդարացումներն անվնաս էին թվում, բայց կարևոր է հիշել, որ նույնիսկ անվնաս բաները կարող են հեռացնել մեզ Աստծո կամքը կատարելուց: Դա հեշտորեն տեղի է ունենում, երբ մեր սրտերում չկա Տիրոջ երկյուղը:

Աստվածաշունչը նկարագրում է բաց թողնված հնարավորությունների բազմաթիվ դեպքեր՝ ուշացրած հնազանդության պատճառով: Իրականում, դրանք չափազանց շատ են այստեղ թվարկելու համար, բայց ես ընտրել եմ ևս մեկը, որն ուշագրավ է: Ղուկասի 9-րդ գլխում Հիսուսը հրավեր է ուղղում երկու մարդու՝ ասելով. «Իմ ետևից եկ»: Ինչպիսի՜ հրավեր. ամբողջ արարչագործության Տերը հրավիրում է ձեզ հետևել Իրեն: Առաջինը *համաձայնեց,* սակայն՝ մեկ պայմանով. «Տե՛ր, *նախ,* թույլ տուր ինձ տուն վերադառնալ և թաղել իմ հորը» (խոսք 59, NLT):

Այդ մարդը համաձայնեց հետևել Հիսուսին, սակայն *ուշացրեց* դա՝ առաջնահերթություն տալով իր անձնական շահերին: Աստվածաբաններն ասում են, որ այդ ժամանակ, երբ առաջնեկը թաղում էր իր հորը, կրկնակի ժառանգություն էր ստանում, մինչդեռ մյուս որդիները ստանում էին ժառանգության մեկ բաժին: Եթե նա չկատարեր իր պարտքը, կրկնակի ժառանգությունը կտրվեր երկրորդ որդուն: Նրա արդարացումը տրամաբանական էր թվում, և այդ ուշացումը չէր կարելի մեղք համարել: Այնուամենայնիվ, նա ետ մնաց: Ցավոք, նա բաց թողեց իր հնարավորությունը:

Երկրորդը, ստանալով նույն հրավերը, պատասխանեց. «Այո՛, Տե՛ր, ես կհետևեմ Քեզ, բայց, *նախ,* թույլ տուր ցտեսություն ասել իմ ընտանիքին» (խոսք 61, NLT): Կրկին, մենք լսում ենք *«նախ»* բառը, և կրկին, նրա ուշացման պատճառը չէր կարելի մեղսալի համարել: Սակայն նա բաց թողեց երկնքի և երկրի Արարչին մոտ լինելու իր հնարավորությունը:

Հաջորդ գլխում գրված է. «Սրանից հետո Տերն ուրիշ յոթանասուն հոգի էլ կարգեց, նրանց երկու-երկու Իր երեսի առջև ուղարկեց» (Ղուկաս 10.1): Այդ երկուսը պետք է լինեին այդ յոթանասունի թվում, բայց նրանք, հավանաբար, դուրս մնացին, քանի որ ուշացրին իրենց հնազանդությունը՝ աստվածային երկյուղի պակասի պատճառով:

Թեև տարիներ շարունակ ծառայել եմ Աստծո ժողովրդին, ես դեռ ապշում եմ (հակառակ իմաստով), երբ լսում եմ հավատացյալների, որոնք անփութորեն ասում են. «Աստված արդեն երկու ամիս է՝ այսինչ բանն է ասում ինձ»: Նրանք ժպտում են և երբեմն ծիծաղելով փոխում են թեման, ասես դա զվարճալի բան է: Երանի՜ նրանք հասկանային, որ պարծենում են սուրբ երկյուղ չունենալով: Չեմ կարծում, որ նրանց վերաբերմունքն այդքան անլուրջ կլիներ:

Ի՞նչ կլիներ, եթե Մովսեսն ուշացներ վառվող մորենու կողմը դառնալը և այն տեսնելը, քանի որ զբաղված էր ոչխարների հոտերը հովվելով (տե՛ս Ելից 3-րդ գլուխ):

Ի՞նչ կլիներ, եթե Նոյն ուշացներ տապանը կառուցելը:

Ի՞նչ կլիներ, եթե Աբրահամն ուշացներ Քանան գնալը: Նրա հայրն

արեց դա, քանի որ սկզբում նա էր կանչվել՝ Քանան գնալու համար: Աբրահամը կատարեց այն, ինչ նրա հայրը բաց թողեց՝ ուշացման պատճառով (տե՛ս Ծնն. 11.31):

Ի՞նչ կլիներ, եթե Նեեմիան ուշացներ պարսպի կառուցումը՝ կատարելով երկու առաջնորդներ Սանաբաղատի և Գեսամի պահանջը, և թողներ իր աշխատանքն ու նրանց հետ հանդիպման գնար: Բայց Նեեմիան վախենում էր Աստծուց: Նրա պատասխանը հետևյալն էր. «Ես մեծ գործով զբաղված եմ և չեմ կարող իջնել: Ինչի՞ համար գործը դադարի, երբ որ ես ձգեմ այն և իջնեմ ձեզ մոտ» (Նեեմիա 6.3):

Նման օրինակներն անվերջ են: Իմաստը հետևյալն է. երբ դողում ենք Աստծո Խոսքից, անմիջապես հնազանդվում ենք Նրան:

Անձնական կիրառում

Հատված. «Շտապում եմ և չեմ ուշանում, որ քո պատվիրաններ-ը պահեմ» (Սաղմոս 119.60):

Եզրահանգում. Եթե ուշացնում ենք հնազանդությունն Աստծո Խոսքին՝ անձնական պատճառներով, մենք ցույց ենք տալիս, որ Նրա կամքը երկրորդական է՝ իր կարևորությամբ:

Մտորում. Հնարավոր է, որ անվնաս թվացող բաները հեռացնեն մեզ Աստծո կամքը կատարելուց: Երբ այն, ինչը մեղք չէ, սակայն ավելի առաջնահերթ է, քան Տիրոջ Խոսքը, մեղք է դառնում: Արդյո՞ք թույլ եմ տվել ինձ շեղվել անձնական շահերի պատճառով և ուշացնել իմ հնազանդությունը: Ինչպե՞ս կարելի է փոխել սա:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ այն դեպքերի համար, երբ վերաբերվել եմ Քո Խոսքին կամընտիր կերպով, կամ առաջնահերթություն չեմ տվել դրան՝ ամենից կարևորը համարելով: Ես գիտակցում եմ, որ այդպես վարվելով, ակամա ցույց եմ տվել, որ այն, ինչ կարևոր է Քեզ համար, չնչին է ինձ համար: Ես ապաշխարում եմ և խնդրում Քո ներումը: Ես առավել առաջնահերթ կհամարեմ այն, ինչ Դու ես ցանկանում: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Հենց որ իմանամ Աստծո կամքը, ես անմիջապես կհնազանդվեմ:

Մենք կանչված չենք
մարդկային դատողությամբ ապ-
րելու համար: Կարևոր է միայն
հնազանդությունը
Աստծո Խոսքին և Նրա
առաջնորդությանը մեր
կյանքում: Երբ Նրա կամքի մեջ
ենք, մենք աշխարհի
ամենաապահով վայրում ենք:

– ԵՂԲԱՅՐ ՅՈՒՆ

MessengerX

Ձեր հավելվածը ամենօրյա աշակերտության համար

Լիովին անվճար

Պարզապես ներբեռնե՛ք ձեր շարժական սարքի վրա և օգտագործե՛ք:
Կամ օգտագործե՛ք վեբ-տարբերակը՝ հետևյալ հասցեով.

MessengerX.com

125 + լեզուներ, որոնց թիվն ավելանում է

- Դիտեք և ներբեռնեք նյութեր ավելի քան 125 լեզուներով:
- Կիսվեք նյութերով ձեր ընկերների հետ կամ ուսումնական խումբ սկսեք:
- Մենք մշտապես ավելացնում ենք նոր նյութեր:

Դիտեք: Կարդացեք: Լսեք:

Հետազոտեք նյութերի ընդարձակ դարան, որն ընդգրկում է դասընթացներ, էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր և ավելին, որոնք կարող եք դիտել, կարդալ և լսել:

Աճ ամենակարևոր բնագավառներում

Հետազոտեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխհարաբերությունները, ձեր կյանքի նպատակը, ազատագրում պոռնոգրաֆիայից, ձեր հավատքը կառուցելը, Աստծո ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և ավելին:

Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզ, որ անեք հաջորդ քայլը ձեր կյանքում: Մենք ստեղծել ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք կօգնեն ձեզ մնալ այդ ուղու վրա:



Ավելի շատ հնարավորություններ, որոնք ձեզ դուր կգան

- Պարզ և հեշտ գործիքներ, որոնք կօգնեն ձեզ կիսվել այս նյութերով և նույնիսկ ուսումնական խմբեր սկսել:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռուստացույցերով դիտելու համար:
- Պահպանեք ձեր առաջադիմությունը ձեր բոլոր սարքերի վրա: Պահպանեք ձեր նախընտրելի նյութերը ձեր գրադարանում՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեք նյութերը ձեր սարքի վրա՝ անցանց դիտման համար:
- Խելացի որոնում և զտում՝ գտնելու համար հենց այն, ինչ փնտրում եք:
- Ինքնաշխատ կերպով նվագարկեք աուդիո գրքերի, աուդիո Աստվածաշնչերի և նույնիսկ երկրպագության երգերի հաջորդական գլուխներ՝ ձեր լեզվով:

MessengerX - Այնքան հեշտ, որքան 1-2-3-ը



1 Ներբեռնեք **MessengerX** հավելվածը «App Store»-ից և «Google Play»-ից

2 Ստեղծեք հաշիվ և օգտվեք հավելվածից ձեր լեզվով

3 Որոնեք, կարդացեք, դիտեք, լսեք և ներբեռնեք ձեր նախընտրելի նյութերը և կիսվեք դրանցով

Աշակերտ դարձեք և աշակերտեք

Լինելով **MessengerX**-ի մաս, դուք կօգնեք մեզ տրամադրել այս թարգմանված նյութերն աշխարհով մեկ գտնվող մարդկանց:

Որովհետև յուրաքանչյուրն արժանի է իմանալու:

MessengerX.com

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է բոլոր բրաուզերներով

24| ԴԱ ԱՆԻՄԱՍՏ Է ԹՎՈՒՄ

Երբևէ պատահել է, որ Սուրբ Հոգին առաջնորդել է ձեզ անելու այնպիսի բան, ինչն անիմաստ է թվացել: Ովքեր գոնե ինչ-որ ժամանակ մտերմորեն են վարվել Աստծո հետ, կպատասխանեն՝ այո: Բայց թույլ տվեք այլ հարց տալ: Դուք հասկացա՞ք ձեր հնազանդության արարքի իմաստը՝ հնազանդվելուց հետո, երբեմն անմիջապես, իսկ երբեմն՝ որոշ ժամանակ անց: Գրեթե մշտապես պատասխանն է՝ այո (ես ասում եմ «գրեթե մշտապես», քանի որ կան *հազվագյուտ* դեպքեր, երբ մենք չենք հասկանա մեր հնազանդության արարքի իմաստը մինչև Քրիստոսի ատյանի առջև կանգնելը): Շարունակելով ուսումնասիրել, թե ինչ է նշանակում Աստծո Խոսքից դողալը, ահա ճշմարտապես սուրբ երկյուղ ունեցող մարդու հաջորդ հատկանիշը.

1. Հնազանդվե՛ք Աստծուն անմիջապես.
2. **Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում.**

Այն, որ Աստված խնդրում է մեզ անել այնպիսի բան, ինչն անիմաստ է թվում, սովորական երևույթ չէ: Սակայն դա, անկասկած, տեղի է ունենում: Թույլ տվեք մի քանի հարց տալ:

Մի՞թե անիմաստ չէր թվում հողի վրա թքելը, ստացված ցեխը կույր մարդու աչքերին քսելը և նրան պատվիրելը, որ գնար և լվացվեր: Այդ պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհուրդը (իմաստությունը) տեսողություն տվեց կույրին:

Մի՞թե անիմաստ չէր թվում գինու կարասների մեջ ջուր լցնելը հարսանիքի ժամանակ, երբ անհրաժեշտ էր ոչ թե ջուր, այլ՝ գինի: Այդ

պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհրդի (իմաստության) արդյունքն էր լավագույն հարսանեկան գինին:

Միթե անիմաստ չէր թվում հորդորելը փորձառու նավաստիներին վարվել հակառակ իրենց փորձառությանը, այսինքն՝ չլքել խորտակվող նավը, թեև նրանք փրկարար նավակներ ունեին: Այդ պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհուրդը (իմաստությունը) փրկեց այդ նավում գտնվող բոլոր 276 մարդկանց կյանքերը. նրանցից ոչ ոք չմահացավ (տե՛ս Գործք 27.27-36):

Միթե անիմաստ չէր թվում, որ ինչ-որ մեկը, որին Աստված գործածել էր՝ համաքաղաքային արթնության հավաքույթ սկսելու համար, թողնում է այն՝ հնազանդվելով անապատ գնալու հանձնարարությանը: Այդ պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհուրդը (իմաստությունը) հնարավորություն ստեղծեց, որ Եթովպիայի երրորդ իշխանավորը փրկություն ստանար:

Միթե անիմաստ չէր թվում մեծ քաղաքի բարձր և ամուր պարիսպների շուրջ վեց օր շարունակ անձայն պտտվելը, իսկ յոթերորդ օրը նույն բանը յոթ անգամ կրկնելը և վերջում փողեր փչելը և գոչելը: Այդ պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհրդի (իմաստության) շնորհիվ թշնամու պարիսպները փուլ եկան:

Միթե անիմաստ չէր թվում թունավոր ապուրի կաթսայի մեջ ալյուր լցնելը, իսկ հետո բոլոր ծառայողներին պատվիրելը, որ ուտեին: Այդ պահին դա անիմաստ էր թվում, բայց այդ խորհուրդը (իմաստությունը) սննդարար կերակուր տվեց բոլորին, և ոչ ոք չթունավորվեց:

Միթե անիմաստ չի թվում այն մարդկանց ներելը, ովքեր ցավ են պատճառել ձեզ, ձեր ընտանիքին կամ ձեր մտերիմներից որևէ մեկին: Միթե նրանք չպետք է վճարեն դրա համար:

Միթե անիմաստ չի թվում ձեր թշնամիներին սիրելը: Միթե նրանց չպետք է սառը վերաբերմունք ցուցաբերել:

Միթե անիմաստ չի թվում ձեզ ատողներին բարիք անելը: Միթե չպետք է ձեր հաշիվները մաքրեք նրանց հետ:

Միթե անիմաստ չի թվում անօրեն պետական պաշտոնյաներին պատվելը: Միթե մենք չպետք է տրտնջանք և ապստամբենք:

Միթե անիմաստ չի թվում ձեզ անարգանքով վերաբերվող մարդկանց պատվելը: Միթե չպետք է նախատենք նրանց:

Ես կարող էի շարունակել մինչև այս գլխի և, հավանաբար, մինչև այս գրքի ավարտը՝ ներկայացնելով այնպիսի աստվածաշնչյան պատվերներ, որոնք անիմաստ էին թվում, սակայն, համաձայն արդյունքների, յուրաքանչյուրն Աստծո իմաստությունն էր: Դրանք ստացող մարդիկ կամ դողում էին Աստծո հրահանգներից, հնազանդվում էին և օրհնություն էին ստանում, կամ, աստվածային երկյուղ չունենալու պատճառով, անտե-

սում էին և չէին հնազանդվում՝ կրելով հետևանքները: Հուսով եմ՝ դուք սկսում եք ավելի հստակ հասկանալ, որ Տիրոջ երկյուղը ճշմարտապես իմաստության սկիզբն է (Սաղմոս 111.10): Գրված է.

> «Վստահիր Տիրոջը քո ամբողջ սրտով. *կախված մի՛ եղիր քո հասկացողությունից:* Փնտրիր Նրա կամքը քո բոլոր գործերում, և Նա ցույց կտա, թե որ ճանապարհն ընտրել» (Առակաց 3.5,6, NLT):

Տիրոջ իմաստությունը մեծապես գերազանցում է մերը. այդ իսկ պատճառով, մենք չպետք է կախված լինենք մեր հասկացողությունից: Մենք կարող ենք հեշտորեն շեղվել հնազանդությունից, որն, ի վերջո, օգուտ է բերելու մեզ, երբ որևէ անտրամաբանական քայլ կատարելու հրահանգ ստանանք: Աստծուց երկյուղ ունեցող մարդը հնազանդվում է, նույնիսկ երբ դա անիմաստ է թվում:

Մի քանի տարի առաջ ես հանդիպեցի մի միլիարդատիրոջ: Նա պատմում էր, որ իր կարիերայի սկզբում նա մեծ դժվարությունների էր բախվում: Նա կարդացել էր բոլոր հանրաճանաչ գրքերը հաջողակ ձեռնարկություններ կառուցելու մասին և կիրառել էր դրանցից ստացված իմաստությունը, սակայն նրա դժվարությունները շարունակվում էին:

Մի անգամ, երբ նա նստած էր եկեղեցում և լսում էր իր հովվի ուղերձը, մտածեց. *«Նա կանչված է քարոզելու Ավետարանը և կախված է Սուրբ Հոգուց՝ իր կյանքի առաքելությունը կատարելու համար: Ես կանչված եմ գործարար ոլորտում. այդ դեպքում, ինչո՞ւ ես կախված չեմ Սուրբ Հոգուց՝ իմ կոչումը կատարելու համար»:*

Նա որոշում կայացրեց արթնանալ ամեն առավոտ և խնդրել Աստծո առաջնորդությունն այդ օրվա համար: Նա նոթատետր ուներ, որտեղ գրում էր այն ամենը, ինչը անելու համար մղում էր զգում: Նա նույնպես որոշում կայացրեց մշտապես ուշադիր լինել Սուրբ Հոգու մղումներին օրվա ընթացքում, նույնիսկ իր գործարար հանդիպումների ժամանակ:

Նա մի քանի մասնավոր օրինակ բերեց: Մի առավոտ՝ խոշոր գործնական հանդիպումից առաջ, նա զգում է, որ Սուրբ Հոգին կարգադրում է իրեն աննշան թվացող մի բան անել: Դա անիմաստ է թվում, բայց նա կատարում է այն մինչև վերջ:

Սուրբ Հոգին կարգադրել էր նրան շարունակաբար որոշակի գործողություն կատարել: Այդ ընթացքում նա շարունակ մտածում էր այն թագավորի մասին, որին Եղիսե մարգարեն պատվիրեց նետերով գետնին զարկել: Թագավորը զարկեց երեք անգամ և հանդիմանվեց մարգարեից՝ ավելի շատ չզարկելու համար (տե՛ս Դ Թագ. 13.14-19):

Նա կատարեց այն, ինչ Տերը կարգադրել էր իրեն, քսան անգամ: Նա ասաց ինձ.

- Այդ օրը իմ ընկերությունը քսան հիվանդանոց գնեց Վիետնամում:

Հաջորդը՝ նա պատմեց, թե ինչպես էր գնել աշխարհի խոշորագույն բանկերից մեկը, որը գտնվում է Եվրոպայում: Այդ գործընթացը շատ ավելի անսովոր էր թվում, քան հիվանդանոցների ձեռքբերումը: Ես ապշել էի: Պարզ ասած, այդ գործարարը որոշեց հնազանդվել Աստծուն՝ կատարելով այն, ինչ ստանում էր աղոթքի մեջ, անկախ այն բանից՝ դա տրամաբանական էր թվում, թե՞ ոչ: Դրա պտուղն ակնհայտ է. նա այլևս դժվարությունների չի բախվում:

Երբ մեր որդիներից մեկը պատանի էր, ես խնդրեցի նրան ինչ-որ բան անել, ինչն անիմաստ էր նրա համար: Նա ընդդիմացավ՝ ասելով, որ իմ կարգադրությունն անիմաստ էր, բայց ես տեղի չտվեցի: Նա վրդովված ասաց.

- Հայրի՛կ, մենք՝ երիտասարդներս, պետք է հասկանանք ինչ-որ բանի պատճառը, մինչև դա անելը:

Ես պատասխանեցի.

- Լա՛վ, արի պայմանավորվենք: Ես մի իրական պատմություն կպատմեմ: Աստված պատվիրեց Հուդայում ապրող մի երիտասարդ մարգարեի գնալ Բեթել, մարգարեանալ Իսրայելի թագավորին և չվերադառնալ Հուդա նույն ճանապարհով, որով գնացել էր, և ավելին՝ ոչինչ չուտել ամբողջ ճանապարհորդության ընթացքում: Այդ երիտասարդ մարգարեն չհնազանդվեց Սուրբ Հոգու հրահանգներին և կրեց դրա հետևանքները. մինչև նրա ճանապարհորդության ավարտը, մի առյուծ սպանեց նրան (տե՛ս Գ Թագ. 13.16,23-26): Ահա իմ պայմանը. այն օրը, երբ կասես ինձ, թե ինչու Աստված այդպիսի հրահանգ տվեց այդ երիտասարդ մարգարեին, ես էլ կասեմ քեզ իմ հրահանգների պատճառը:

Մինչև օրս նա չի կարողացել բացատրել ինձ այդ հրահանգների պատճառը: Իրականում, ես նույնպես ունեմ այդ հարցը: Կան դեպքեր, երբ Աստված պատվիրելու է անել այնպիսի բան, ինչն անիմաստ է թվում մեր մտքին, բայց Նրա իմաստությունը մշտապես հաստատվում է արդյունքներով: Ահա թե ինչու Հիսուսն ասաց. «Իմաստության ճշմարիտ լինելը երևում է իր արդյունքներից» (Մատթեոս 11.19, NLT):

Թող որ բոլորս նման լինենք Պետրոսին, որը ամբողջ գիշեր ծովում անցկացնելուց և ոչ մի արդյունք չունենալուց հետո ականջ դրեց Հիսուսի կարգադրությանը՝ վերադառնալ ավելի խոր ջրերը և կրկին գցել ցանցերը: Այդ կարգադրությունը պահանջում էր մեծ հավելյալ աշխատանք, իսկ ձկնորսներն արդեն սաստիկ հոգնած էին: Մի՞թե ձեզ

դուր չի գալիս Պետրոսի պատասխանը. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո Խոսքի համար ուռկանը կգցեմ» (Ղուկաս 5.5): Դրա արդյունքը ձկներով բեռնված երկու նավ էր:

Անձնական կիրառում

Հատված. «Ովքեր վստահում են իրենց մտքին, հիմար են, բայց ով իմաստությամբ է վարվում, ապահով է» (Առակաց 28.26, NLT):

Եզրահանգում. Տիրոջ իմաստությունը մեծապես գերազանցում է մերը. այնպես որ, մենք չպետք է կախված լինենք մեր հասկացողությունից: Այն հեշտորեն կարող է հեռացնել մեզ շահավետ հնազանդությունից: Աստծուց երկյուղ ունեցողը հնազանդվում է, նույնիսկ երբ դա անիմաստ է թվում:

Մտորում. Արդյո՞ք ինձ համար դժվար է վստահել Աստծո իմաստությանը: Արդյո՞ք նախկինում ես կասկածում էի Նրա խորհրդին և վերադառնում էի այն բանին, ինչը տրամաբանական էր թվում: Ի՞նչ է եղել դրա արդյունքում: Ի՞նչ տեղի կունենար, եթե ես առաջնորդության սպասեի Աստծուց և վստահեի Նրան: Կարո՞ղ եմ որոշում կայացնել, որ այսպես եմ վարվելու:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ, որ վստահել եմ իմ իմաստությանը՝ Քո իմաստությունից առավել: Ես հավատքով խնդրում եմ, որ տաս ինձ Քո իմաստությունը, երբ ընթերցում եմ Քո Խոսքը, աղոթում եմ և աստվածապաշտ խորհուրդներ եմ լսում Քո երկյուղն ունեցող մարդկանցից: Տո՛ւր ինձ զորություն՝ հավատալու և հնազանդվելու համար, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ կայացնում հնազանդվել Աստծո իմաստությանը՝ ավելի, քան իմ իմաստությանը, և այն մարդկանց ձայներին, որոնք հավատում են մարդկային կարողությանը՝ Աստծո կարողությունից առավել:

Մարդու պարտքն է սիրել Աստ-
ծուն և երկյուղել Նրանից, նույ-
նիսկ առանց վարձատրության
հույս ունենալու կամ պատժից
վախենալու:

– ՄԱՅՄՈՆԻԴԵՍ

25| ԱՌԱՆՑ ԱԿՆՀԱՅՏ ՇԱՀԻ

Որևէ ծնողից լսած կլինեք գանգատ այն մասին, որ նրա ուսանող որդին կամ դուստրը զանգում է միայն՝ երբ նրան փող է պետք: Նման դեպքում այդ հազվագյուտ հնչած հեռախոսազանգի ընթացքում երեխան գուցե ձևացնի, թե հետաքրքրված է իր մոր կամ հոր հետ զրուցելով, սակայն նրա ներքին շարժառիթը շահն է՝ անհրաժեշտ միջոցներ ստանալը: Սուրբ երկյուղը պաշտպանում է մեզ մեր երկնային Հոր հետ այդպես վարվելուց. սա Աստծո Խոսքից դողալու հաջորդ կողմն է: Վերանայենք այն, ինչ արդեն սովորեցինք, և ավելացնենք հաջորդ ցուցանիշը.

1. Հնազանդվե՛ք Աստծուն անմիջապես.
2. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում.
3. **Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ երբ անձնական շահ չեք տեսնում.**

Ավելի քան քառասուն տարի ծառայության մեջ լինելով՝ նկատել եմ մի ցավալի միտում, հատկապես Արևմուտքի եկեղեցում: Չափազանց հաճախ, որպեսզի հավատացյալները հետաքրքրված լինեն հնազանդությամբ, անհրաժեշտ է շեշտադրել դրա օգուտները: Մտածե՛ք այս մասին: Արդյո՞ք մենք երեսուն րոպե շուտ կգանք եկեղեցի՝ առաջին շարքերում նստելու համար, որպեսզի լսենք ուղերձ սրբության մասին: Արդյո՞ք հնազանդության մասին գրքերն ամենից շատ վաճառվողների թվում են: Կարելի՞ է ասել, որ առաջնորդները հեռացել են մարտահրավեր նետող ճշմարտությունից՝ այս միտմանը հարմարվելու համար: Այլ կերպ ասած, արդյո՞ք անթիվ ծառայողներ տեղի են տվել մարմա-

ջող լսելիքներին գոհացնելու ճնշմանը և ոգեշնչող պատմություններ են պատմում, փոխարենը կոչ անեն Աստծո ժողովրդին ուրանալ իրենց և հետևել Հիսուսին:

Ի՞նչն է ցավալի դարձնում այս միտումը: Հեռանալով Աստծո իմաստությունից՝ մենք իրականում վնասում ենք ինքներս մեզ: Նրա պատվիրանները, խորհուրդը և իմաստությունն ի վերջո տալիս են մեզ մեծագույն օրհնություններն այս կյանքում և գալիքում: Գրված է, որ Աստծո Խոսքին հնազանդվելու մեջ «շատ հատուցում կա» (Սաղմոս 19.11): Դուք երբեք չեք կարող տալ Աստծուն ավելի, քան կստանաք Նրանից. հնազանդության առավելություններն ավելին են, քան ցանկացած բան, ինչ կարող եք անել Նրա համար:

Մյուս կողմից, վտանգավոր է տարբեր խթաններով շահագրգռված լինելը: Ինչո՞ւ: Եթե շահն ակնհայտ չէ, արդյո՞ք մենք նույն վճռականությամբ կհնազանդվենք Աստծո կարգադրություններին: Ամենայն հավանականությամբ, մեր շարժառիթը կփոխարինվի անձնական շահերով: Ահա թե ինչու է Տիրոջ երկյուղն այդքան կարևոր. այն խթանում է հնազանդությունը, անկախ այն բանից՝ վարձատրությունն ակնհա՞յտ է, թե՞ ոչ:

Մեծ Պարսից կայսրության ժամանակաշրջանում այն զավթել էր բոլոր շրջակա պետությունները, և դրա թագավոր Ասվերոսն ամենաազդեցիկ մարդն էր աշխարհում: Նա ամուսնացած էր Եսթեր անունով մի հրեա կնոջ հետ:

Թագավորի առաջին պաշտոնյա Համանը խորապես վիրավորված էր Եսթերի հորեղբորորդի Մուրթքեից, որը նույնպես արքունական պաշտոնյա էր: Համանը վճռեց պատժել ոչ միայն Մուրթքեին, այլև ամբողջ հրեա ժողովրդին: Նա, ինչպես և շատերը, տեղյակ չէր այն մասին, որ Եսթեր թագուհին հրեա էր:

Համանը սկսեց սաստիկ զրպարտել հրեաներին թագավորի մոտ և առաջարկեց մեկ օրում ոչնչացնել ամբողջ ազգը: Նրա դավերը հաջողությամբ պսակվեցին: Թագավորը համաձայնեց, հրաման գրեց և կնքեց իր մատանիով:

Մուրթքեն, իմանալով այդ հրամանի մասին, լուր ուղարկեց իր հորեղբոր դստերը՝ Եսթեր թագուհուն: Նա խնդրեց նրան գնալ թագավորի մոտ և աղաչել հրեա ժողովրդի փրկության համար:

Եսթերը պատասխանեց. «Թագավորի բոլոր ծառաները և թագավորի գավառների ժողովուրդը գիտեն, որ ամեն մարդ կամ կին, որ չկանչված մտնի թագավորի մոտ՝ ներքին գավիթը, մեկ օրենք կա, որ նրան կսպանեն՝ բացի նրանից, որին որ թագավորը մեկնի ոսկե գավազանը, նա կապրի. Բայց ես ահա երեսուն օր է՝ չեմ կանչվել, որ թագավորի մոտ գնամ» (Եսթեր 4.11): Թեև Եսթերն Ասվերոսի

կինն էր, եթե նա գնար թագավորի գահի սրահը և մոտենար նրան՝ կանչված չլինելով, ամենայն հավանականությամբ, մահապատժի կենթարկվեր:

Մտածենք այս մասին. նա թագուհի էր, նրա կյանքն աներևակայելի էր, և նա ուներ այն ամենը, ինչ իր սիրտը կարող էր ցանկանալ: Անձամբ նա ոչ մի օգուտ չէր ստանա, եթե ռիսկի դիմեր և գնար թագավորի գահի սրահը՝ հանուն Աստծո ժողովրդի, սակայն կարող էր զրկվել ամեն ինչից, մինչև իսկ իր գլխից: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք այն պատասխանին, որը նա տվեց Մուրթքեին.

> «Եվ Եսթերը պատասխան ուղարկեց Մուրթքեին՝ ասելով. «Գնա, ժողովի՛ր Շուշանում գտնվող բոլոր հրեաներին և ծոմ պահեք ինձ համար, և երեք օր՝ գիշեր և ցերեկ, ո՛չ կերեք, և ո՛չ խմեք: Ես էլ իմ աղախինների հետ այդպես ծոմ եմ պահելու, այնուհետև թագավորի մոտ պիտի գնամ, թեև օրենք չէ, և եթե կմեռնեմ, թող մեռնեմ»» (Եսթեր 4.15,16):

Սուրբ երկյուղը դրդեց նրան առաջնահերթություն տալ Աստծո թագավորությանը՝ իր բարեկեցությունից ավելի: Նրա հարմարավետությունը, ապահովությունը, հարստությունը և դիրքը վտանգվելու էին՝ նրա հնազանդության պատճառով: Նա ոչ մի շահ չուներ դրանում, սակայն այն, ինչ կարևոր էր Աստծո համար, անչափ կարևոր էր նրա համար՝ առանց որևէ վերապահման: Նա դողում էր Աստծո Խոսքից. նա վախենում էր Աստծուց:

2015 թվականին Լիզան և ես Հայաստանում էինք՝ Երևան քաղաքում, և ծառայում էինք մի համաժողովում, որտեղ ներկա էր 3.500 հոգևոր առաջնորդ: Այդ համաժողովին հովիվներ էին եկել ամբողջ Արևելյան Եվրոպայից և Մերձավոր Արևելքից (Երևանը հիսուն կիլոմետրով հեռու է Իրանի սահմանից): Այդ ժամանակ Իրանի քաղաքացիներին թույլատրվում էր այցելել Հայաստան. այնպես որ, համաժողովին մասնակցում էին բազմաթիվ առաջնորդներ ընդհատակյա եկեղեցիներից: Այդ համաժողովի հավաքույթները փառավոր էին:

Վերջին հավաքույթից հետո Լիզան և ես որոշեցինք զբոսնել Երևանի գլխավոր փողոցով՝ մաքուր օդ շնչելու համար: Երկու երիտասարդ աղջիկ, որոնք քսանն անց էին, շտապելով դուրս եկան այդ փողոցում գտնվող ռեստորաններից մեկից՝ մեզ ողջունելու համար: Պարզվեց, որ երկուսն էլ առաջնորդներ էին Իրանից: Նրանք ապշեցուցիչ գեղեցկություն և կենսուրախ տեսք ունեին: Մի պահ մտածեցի. *«Ես կարող եմ ծանոթացնել նրանց իմ երեք չամուսնացած որդիներից երկուսի հետ»:*

Լիզան և ես գրեթե քսան րոպե զրուցեցինք նրանց հետ: Մենք իմացանք, որ կրոնական ոստիկանությունը հետևում էր նրանց. հա-

մաժողովի ընթացքում Իրանի պետական մարմինները մի քանի անգամ զանգել էին նրանց և հարցրել, թե որտեղ էին: Այդ երիտասարդ աղջիկներից մեկը պատմեց, որ մի հեռախոսային հաղորդագրություն էր ստացել, որը տագնապ էր առաջացրել:

Այդ պահին ես տվեցի ամենից անշրջահայաց հարցերից մեկը, որ տվել եմ իմ ծառայության չորս տասնամյակում.

- Ինչո՞ւ եք վերադառնում: Ինչո՞ւ չեք փախչում:

Նա անկեղծորեն, սիրով և վճռականությամբ նայեց ինձ և պատասխանեց.

- Ո՞վ կպատմի պարսիկներին Հիսուսի մասին, եթե մենք չվերադառնանք:

Ես երկյուղած էի նրանց պատասխանից: Մենք տեսանք, որ այդ աղջիկները մի կողմ էին դրել բնական ինքնապաշտպանական ձգտումը. այն կլանվել էր Աստծո թագավորությունն իրենց երկրում տարածելու ցանկությամբ: Նրանք վարվում էին նույն սուրբ երկյուղով, որն ուներ Եսթերը: Նրանք հնազանդվել էին Աստծուն, թեև չկար որևէ ակնհայտ անձնական շահ, և շատ հավանական է, որ նրանց կյանքին վտանգ էր սպառնալու: Ես և՛ հանդիմանվեցի, և՛ խրախուսվեցի:

Այն վճռականությունը, որը տեսա այդ երիտասարդ աղջիկների մեջ, չի վերաբերում հնազանդության մեկանգամյա արարքի: Դա սրտի դիրք է, որը նրանք ձևավորել էին, և որով ապրում էին: Դա մեր բնական վիճակն է նույնիսկ աննշան թվացող որոշումների մեջ, որոնք կայացնում ենք ամեն պահին: Մենք որոշում ենք, նույնիսկ փոքր հարցերում, հնազանդվել Աստծո Խոսքին և Սուրբ Հոգու առաջնորդությանը: Գուցե զբաղված լինենք, բայց հանկարծակի ինչ-որ մեկին զանգելու մղում զգանք: Չկա ոչ մի պատճառ, ոչ մի ակնհայտ շահ, բայց չենք շարժվում դրանով: Մենք զանգում ենք և հաճախ «պատճառը» հասկանում ենք այդ քայլն անելուց հետո:

Կամ, գուցե, լսում ենք, որ ինչ-որ մեկը չարախոսել է մեր մասին: Մենք չունենք ակնհայտ շահ ներելու, հաշտության ձգտելու և այդ մարդուն օրհնելու մեջ, բայց որոշում ենք անել դա՝ միմիայն հնազանդվելով հետևյալ պատվիրաններին. «[ներեք], ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց», և «օրհնե՛ք ձեզ անիծողներին, աղո՛թք արեք ձեզ նեղացնողների համար» (Եփեսացիների 4.32, Ղուկաս 6.28):

Գուցե մեզ վատ է վերաբերվել մեկը, ով ատում է մեզ: Ո՞րն է շոշափելի օգուտն այն բանում, որ հնազանդվեք Հիսուսի խոսքերին. «Բարի՛ արեք ձեզ ատողներին և աղո՛թք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար» (Մատթեոս 5.44): Կամ մտածեք հետևյալը՝ ի՞նչ շահ ունեն հալածված երկրներում ապրող հավատացյալները, երբ օրհնում են այն մարդկանց, որոնք հալածում են իրենց, կտտանքների

են ենթարկում և նույնիսկ մահվան են մատնում իրենց սիրելիներին՝ հավատքի համար: Այնուամենայնիվ, Լիզան և ես շփվել ենք այնպիսի երկրներում գտնվող հովիվների հետ, որոնց կյանքում այս ամենը տեղի է ունեցել, և տեսել ենք առատ ուրախություն և կյանք նրանց մեջ:

Ինչ շահ կա օտար երկրներում գտնվող մարդկանց համար ջանասիրաբար աղոթելու մեջ: Կամ նվիրատվություններ անելու այլ ազգերին, որոնք երբեք չեն կարողանալու հատուցել ձեզ: Այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել: Հարցը հետևյալն է. դուք հետևողականորեն կինազանդվե՞ք Աստծուն՝ ի պատասխան ձեր սրտում վառվող սուրբ երկյուղի, թե՞ կսպասեք մինչև անձնական շահը տեսնելը:

Անձնական կիրառում

Հատված. «Եթե կառչես քո կյանքից, կկորցնես այն: Բայց եթե հրաժարվես քո կյանքից՝ հանուն Ինձ, կփրկես այն» (Մատթեոս 16.25, NLT):

Եզրահանգում. Շատ հաճախ մենք բաց ենք թողնում մեծագույն օրհնությունները՝ վանելով մեզնից Աստծո իմաստությունը, որը շահավետ չի թվում: Ըստ էության, մենք վնաս ենք հասցնում մեզ՝ երկարաժամկետ տեսանկյունից: Մենք երբեք չենք կարող տալ Աստծուն ավելին, քան կստանանք Նրանից:

Մտորում. Ինչ նկատի ունի Հիսուսը՝ խոսելով սեփական կյանքից կառչելու մասին: Արդյո՞ք ես դիտարկել եմ այս խոսքը միայն ծայրահեղ դեպքերի համար, օրինակ՝ նահատակության: Ես կիրառե՞լ եմ այն ամեն օր՝ փոքր որոշումներ կայացնելիս: Ինչ տեղի կունենար, եթե այդպես վարվեի: Ինչ կերպով դա կփոխեր իմ կյանքը:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ, որ սահմանափակել եմ իմ քաղցը և հնազանդությունը՝ իմաստության այն չափով, որը շահավետ եմ համարել: Ես ապաշխարում եմ այս մտածելակերպի համար և խնդրում եմ, որ ներես ինձ: Այս պահից որոշում եմ կայացնում այլևս չկառչել իմ կյանքից, այլ հրաժարվել դրանից՝ հանուն Հիսուսի: Այսպիսով, ես քաղց ու ծարավ կունենամ Քո իմաստության հանդեպ, նույնիսկ եթե դրանում անմիջական շահ չկա: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ ամեն վայրկյան հանձնել կյանքս իմ Տեր Հիսուսի ցանկություններին և իմաստությանը:

Առանց հնազանդության չի կարող լինել ոչ մի փրկություն, քանի որ փրկությունը՝ առանց հնազանդության, ինքնահակասող է և անհնարին:

– Է. Ու. ԹՈԶԵՐ

26| ԴՐԱԿԱՆ ՑԱՎ

Ծննդաբերությունը հաճելի փորձառություն չէ կնոջ համար. այն դժվարին է, նույնիսկ ցավոտ է: Այնուամենայնիվ, արդյունքը՝ ընտանիքի նոր ցանկալի անդամն է: Առանց հղիության և ծննդաբերության, այդ նոր անձնավորությունն այս աշխարհի չէր գա: Այս օրինակը ցույց է տալիս Աստծո Խոսքից դողալու հաջորդ կողմը: Ահա այն՝ առաջին երեքից հետո.

1. Հնազանդվե՛ք Աստծուն անմիջապես.
2. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում.
3. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ երբ դուք անձնական շահ չեք տեսնում.
4. **Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա ցավոտ է.**

Փիլիպեցիների 2.12,13-ը, որը մեր հիմքային աստվածաշնչյան հատվածն է, հիշեցնում է, որ գործենք մեր փրկությունը՝ ահով և դողալո՛վ: *Հնազանդության* կոչ անող այս հատվածին նախորդող խոսքերում Պողոսը մատնացույց է անում Հիսուսին՝ որպես օրինակ: Մեր Տերը թողեց Իր աստվածային արտոնությունները և «խոնարհեցրեց Իրեն՝ *հնազանդվելով* Աստծուն, և մահացավ հանցագործի մահով՝ խաչի վրա» (Փիլիպեցիների 2.8, NLT): Հիսուսը հոժարաբար հնազանդվեց Հոր խնդրանքին, թեև դրա համար անհրաժեշտ էր անասելի չարչարանք կրել:

Խաչելությանը նախորդող գիշերը Գեթսեմանիի պարտեզում Հիսուսը, սաստիկ տրտմած, աղաղակում էր. «Հա՛յր Իմ, եթե հնարավոր է, թող այս չարչարանքի բաժակը վերցվի Ինձնից: Սակայն ես ցանկանում եմ, որ կատարվի Քո՛ կամքը, ոչ թե Իմը» (Մատթեոս 26.39, NLT): Այդ բախումը հնազանդության և ինքնապահպանման միջև այնքան լարված էր, որ Հիսուսի քրտինքի փոխարեն արյան

խոշոր կաթիլներ էին դուրս գալիս: Հիշեք՝ Նա «բախվեց բոլոր այն փորձություններին, որոնց մենք ենք բախվում, սակայն չմեղանչեց» (Եբրայեցիների 4.15, NLT): Իմանալով առջևում Իրեն սպասող զարհուրելի չարչարանքի մասին, Նա այլ ճանապարհ խնդրեց՝ Հոր կամքը կատարելու համար, սակայն դա հնարավոր չէր: Ինչն է դրդում հնազանդության նման աստիճանի:

> «Մինչ Հիսուսն այս երկրի վրա էր, Նա մատուցում էր աղոթքներ և աղաչանքներ՝ բարձր աղաղակով և արցունքներով... Եվ Աստված լսեց նրա աղոթքները՝ *Ասփծո հանդեպ Նրա խոր երկյուղածության պատճառով»* (Եբրայեցիների 5.7, NLT):

Նրա խոր երկյուղածությունը զորություն տվեց Նրան՝ բախվելու և դիմանալու այնպիսի բաների, որոնցից մարդկային բնությունը կփախչեր: Նույն կերպով, գրված է.

> «Քանի որ Քրիստոսը չարչարվեց մեզ համար՝ մարմնով, *զինվեք* նույն մտքով, որովհետև նա, ով չարչարվել է մարմնով, դադարել է մեղքից» (Ա Պետրոս 4.1, NKJV):

Մինչև շարունակելը, թույլ տվեք մի կարևոր նշում անել: Սուտ կրոնները ձգտում են չարչարանքի, որպեսզի հաճեցնեն այն աստծուն, որին ծառայում են: Ճշմարիտ քրիստոնեությունը ձգտում է հնազանդվել Աստծուն և հնազանդվելիս բախվում է այս անկում ապրած աշխարհի հակառակությանը, ինչի արդյունքը հաճախ չարչարանքն է: Աստծուն հաճելի է մեր հնազանդությունը, ոչ թե չարչարանքներ փնտրելը: Չարչարանքը կարող է լինել ֆիզիկական կամ մտավոր, բայց երկուսի ցավն էլ շատ իրական է:

Պետրոսը կարգադրում է մեզ *զինվել:* Կարո՞ղ եք պատկերացնել այնպիսի զորքի, որը պատերազմի է գնում՝ առանց ինքնաթիռների, նավերի, տանկերի, հրազենի, փամփուշտների, դանակների, այսինքն՝ լիովին անզեն: Միայն միտքն այդ մասին ծիծաղելի է թվում: Հավատացյալի համար նույնպիսի անմտություն է չարչարանքներին անպատրաստ լինելը, թեև շատերն են այդ վիճակում: Անզեն հավատացյալը հեշտ կարող է շրջանցել նեղությունները՝ հանուն ինքնապահպանման: Տիրոջ երկյուղն է, որ զինում է մեզ. այն տալիս է կամքի խոր վճռականություն, որպեսզի հնազանդվենք Աստծուն՝ անկախ այն բանից, թե ինչպիսի չարչարանքների դա կարող է հանգեցնել:

Ես կարող էի պատմել բազմաթիվ պատմություններ չարչարանքների մասին, որոնք տեղի են ունեցել մեր կյանքում: Դրանք բավական են՝ մի ամբողջ գիրք կազմելու համար: Այդ պատմություններից մեկը տեղի ունեցավ մի միսիոներական ճանապարհորդության ժամանակ՝ վաղ 1990-ական թվականներին: Լիզան, մեր երեխաները և ես մի փոքրիկ

քաղաքում էինք՝ մի անհայտ վայրում, և ծառայում էինք մի եկեղեցում, որը բոլորովին վերջերս կորցրել էր իր հովվին. հովիվը թողել էր նրանց՝ գնալով ավելի մեծ եկեղեցի:

Առաջին մի քանի հավաքույթները դժվարությամբ էին անցնում: Այդ եկեղեցական համայնքի մեծ մասն անտարբեր էր. երիտասարդները, որոնք նստում էին սրահի ետնամասում, կատակում և ծիծաղում էին: Այնուամենայնիվ, երրորդ հավաքույթին ճեղքում եկավ: Բոլորը խոր ազդեցություն կրեցին. նույնիսկ երիտասարդները սկսեցին ավելի շուտ գալ՝ առջևի նստարանները զբաղեցնելու համար: Մարդկանց թիվն ավելացավ, և այդ հավաքույթները շարունակվեցին մի քանի շաբաթ: Մենք հավաքվում էինք ամեն երեկո այդ փոքրիկ եկեղեցական շենքում, որտեղ ազատ տեղեր չէին լինում. մի քանիսը փրկություն ստացան, և գրեթե բոլորն արթնություն էին վերապրում:

Երկարատև աղոթքներից հետո մենք առաջարկեցինք մնալ այդտեղ ամիսներ շարունակ՝ այնքան, որքան անհրաժեշտ էր, որպեսզի պատրաստեինք եկեղեցին նոր հովվի համար: Այնուամենայնիվ, եկեղեցական խորհուրդը դժգոհ էր, քանի որ մենք խախտում էինք նրանց բնականոն կյանքը և միջամտում այն գործընթացների մեջ, որ իրենք մշտապես վերահսկում էին: Մեզ ապշեցրեց նրանց բողոքներից մեկը. նրանք դժգոհ էին, որ երիտասարդները սկսել էին զբաղեցնել առջևի շարքերի նստարանները: Կային նաև այլ գանգատներ, սակայն դրանցից ոչ մեկը նույնիսկ չարժե հիշատակել: Կարճ ասած, քվեարկության արդյունքում նրանք որոշեցին չընդունել մեր առաջարկը և խնդրեցին մեզ հեռանալ:

Նույն երեկոյան՝ նրանց քվեարկությունից հետո, մենք հայտարարեցինք եկեղեցում, որ հաջորդ երեկոյան լինելու է մեր վերջին հավաքույթը: Մարդկանց մեծ մասն արտահայտեց իր հիասթափությունը. դա լարված, մտահոգիչ և անհարմարավետ պահ էր:

Հաջորդ օրը եկեղեցին հեռախոսազանգ ստացավ մի դժգոհ մարդուց, որի կինը հաճախել էր այդ հավաքույթներին: Նա սպառնաց ռումբ պայթեցնել եկեղեցու շենքում մեր վերջին հավաքույթին: Ես ծիծաղեցի, երբ լսեցի դա, քանի դեռ մի ոստիկան ինձ չէր ահազանգել դրա մասին:

Չհավատալով լսածիս՝ ես առարկեցի.

- Անկասկած, դա տեղի չի ունենա:

Ոստիկանը պատասխանեց.

- Պարո՛ն, ես ճանաչում եմ այդ մարդուն: Մենք կասկածում ենք, որ նա զբաղվում է թմրանյութերի մեծաքանակ վաճառքով, և ես չէի հերքի, որ նա կարող է անել դա, հատկապես մի քանի բաժակ խմիչքից հետո:

Մտահոգվելով՝ ես հարցրի.

- Կարո՞ղ եք ապահովել մեր անվտանգությունը:

Անհավատալի էր, երբ լսեցի նրա պատասխանը.

- Իմ կայանը, որն ամենամոտն է այդ քաղաքին, վաթսուն կիլոմետրով հեռու է: Այսօր երեկոյան ժամը 6-ին իմ աշխատանքն ավարտվում է, և ոչ ոք չի կարողանա գալ ձեզ մոտ, քանի որ մենք աշխատողների պակաս ունենք:

Չհավատալով լսածիս՝ ես ցած դրեցի խոսափողը և խիստ մտահոգվեցի: Իմ միտքը բացականչում էր, որ անմիջապես հավաքեի իրերս և հեռանայի այդ քաղաքից: Մենք ապրում էինք եկեղեցու անդամներից մեկի կրկնակի կցավագոնի մեջ, որը կայանված էր բաց դաշտում և խոցելի էր ցանկացած հարձակման համար: Մենք անպաշտպան և մերժված զգացինք: Ինչո՞ւ գնալ այնտեղ այդ երեկո: Եկեղեցական խորհուրդն արհամարհեց մեզ. մենք պետք է պարզապես հեռանանք այդ քաղաքից:

Ես գիտեի, որ եսասիրաբար էի մտածում. մեր երկու շաբաթվա ծառայությունն ազդել էր շատերի վրա այդ եկեղեցում, և եթե մենք ժամանակից շուտ հեռանայինք նրանցից՝ ինչ-որ սպառնալիքի պատճառով, նրանք կրկին մերժվածություն կզգային առաջնորդի կողմից: Ես գիտեի, որ եթե փախչեինք, մենք փոխզիջման նախադրյալ կստեղծեինք, որը, հավանաբար, ազդելու էր մեզ վրա մինչև մեր կյանքի ավարտը: Ես շարունակ մտածում էի Հիսուսի հետևյալ խոսքերի մասին. «Վարձու ծառան *(նա, որը ծառայում է միայն աշխատավարձի համար)*... երբ տեսնում է, որ գայլը գալիս է, լքում է հոտը և փախչում» (Հովհաննես 10.12, AMPC):

Մենք աղոթում էինք ժամեր շարունակ: Ես շարունակաբար լսում էի իմ սրտում հետևյալ խոսքը, որ Աստծո ներկայության մեջ բնակվողները «պահում են իրենց խոստումները, նույնիսկ երբ դա ցավոտ է» (Սաղմոս 15.4, NLT): Ի վերջո, մեր սրտերը համակվեցին խաղաղությամբ, և մենք զգացինք, որ ապահով էինք լինելու: Մենք հրաշալի ծառայություն անցկացրինք այդ երեկո: Ոչ մի ռումբ տեղադրված չէր, և մենք կարողացանք պատշաճ կերպով հրաժեշտ տալ այդ եկեղեցուն:

Մենք ապրում ենք անկում ապրած աշխարհում, որը հակառակ է և նույնիսկ թշնամացած է Աստծո ճանապարհներին: Ահա թե ինչու է գրված. «Եվ ձեզ Աստծուց այդ շնորհք եղավ Քրիստոսի համար՝ ոչ միայն հավատալ Նրան, այլև Նրա համար չարչարվել էլ» (Փիլիպեցիների 1.29): Այս մասին գրում է ոչ միայն Պողոսը, այլև Պետրոսը.

> «Որովհետև դուք հենց այդ բանի մեջ կանչվեցիք, որ Քրիստոսն էլ չարչարվեց և ձեզ էլ օրինակ թողեց, որ Նրա հետքերին հետևեք: Որ մեղք չգործեց, և նենգություն չգտնվեց Նրա բերանում: Որ նախատվելիս՝ փոխարենը չէր նախատում, չարչարվելիս՝ չէր սպառնում, բայց դատաստանը հանձնում էր արդար Դատավորին» (Ա Պետրոս 2.21-23):

Մենք չպետք է վրեժ լուծենք. փոխարենը, պետք է Աստծո ձեռքերի մեջ հանձնենք այն անարդարացի վերաբերմունքը, որը ստանում ենք: Մենք

չպետք է անտեսենք դա, այլ աղոթքով հանձնենք Նրան: Աստված վրեժ կլուծի մեր փոխարեն, սակայն Նա կանի դա Իր ձևով և Իր ժամանակին:

Աստծո թագավորության հերոսները մեծ հաղթանակներ տարան իրենց հավատքի միջոցով: Այնուամենայնիվ, Աստծուն հնազանդվելու պատճառով, նրանցից ոմանք բախվեցին ծաղրի, կապանքների, կտտանքների, բռնության, բանտարկության, ստիպված եղան թափառել անապատներում, ապրել քարանձավներում, նաև հայտնվեցին անթիվ այլ անհարմարավետ և ցավոտ հանգամանքներում: Ինչո՞ւ: Նրանք ապրում էին անկում ապրած աշխարհում, որը թշնամաբար է տրամադրված Աստծո թագավորության հանդեպ (տե՛ս Եբր. 11.36-39): Այդ մարդիկ ունեին մեկ ընդհանրություն. սուրբ երկյուղն ունենալու պատճառով, նրանք հրաժարվեցին անհնազանդ լինելուց, նույնիսկ եթե դա ցավ էր պատճառելու իրենց: Բայց նրանք վստահ էին հետևյալ խոստման մեջ. «Արցունքներով ցանողները կհնձեն ուրախության աղաղակներով... նրանք երգում են՝ հունձքով վերադառնալիս» (Սաղմոս 126.5,6, NLT):

Անձնական կիրառում

Հատված. «Տիրոջ վախի մեջ զորեղ վստահություն կա, և Նրա որդիների համար ապավեն պիտի լինի» (Առակաց 14.26):

Եզրահանգում. Տիրոջ երկյուղը զինում է մեզ Աստծուն հնազանդվելու խոր վճռականությամբ, նույնիսկ թշնամանքի բախվելու դեպքում:

Մտորում. Արդյո՞ք ես շրջանցել եմ Աստծո Խոսքին հնազանդվելը ինքնապահպանման համար: Ես կամենո՞ւմ եմ ապաշխարել և ընդունել Տիրոջ երկյուղը: Արդյո՞ք ես կընտրեմ սերը և հնազանդությունը, նույնիսկ եթե ստիպված լինեմ վճարել դրա համար ֆինանսապես, սոցիալական առումով և ֆիզիկապես:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր ինձ, որ շարունակ անհնազանդ եմ եղել Քո Խոսքին՝ ինձ պաշտպանելու համար: Ես հասկանում եմ, որ իմաստուն որոշում չեմ կայացրել. Քո պաշտպանությունը հաստատ և մնայուն է, իսկ իմ պաշտպանությունը միայն ժամանակավոր է: Այս պահից ի վեր ես ընտրում եմ Տիրոջ երկյուղը. թող որ այն տա ինձ Քեզ հնազանդվելու խոր վճռականություն՝ անկախ այն գնից, որ պետք է վճարել: Շնորհակա՛լ եմ այս զորության համար, Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես զինված եմ սուրբ երկյուղով, որպեսզի հնազանդվեմ Աստծուն, նույնիսկ եթե ստիպված լինեմ չարչարանքներ կրել: Ես հանձնում եմ իմ անձն արդար Դատավորին:

«Շիտակ արա քո ոտքերի
շավիղը, և քո բոլոր
ճանապարհները
կհաստատվեն»։

– ԱՌԱԿԱՑ 4.26

27| ԿԱՏԱՐՎԱ՛Ծ Է

Թույլ տվեք մի հարց տալ՝ այս գլուխը սկսելու համար: Հնարավո՞ր է արդյոք իրագործել որևէ նախագիծ՝ ամբողջական ներուժով, առանց այն ավարտին հասցնելու: Պատասխանն ակնհայտորեն «ոչ» է: Մեր Տերն ունի խոշոր նախագիծ, որն ընթացքի մեջ է, և որի նպատակը թագավորություն կառուցելն է: Նա պատասխանատվություն է տալիս յուրաքանչյուրիս, և եթե կատարենք մեր առաջադրանքը, Նրա փառավոր թագավորության աշխատանքն ավարտված կլինի:

Մտապահե՛ք այս ճշմարտությունը, մինչ խոսում ենք Աստծո Խոսքից դողալու վերջին կողմի մասին: Ահա առաջին չորսը և վերջինը՝ դրանցից հետո.

1. Հնազանդվե՛ք Աստծուն անմիջապես.
2. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում.
3. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ երբ դուք անձնական շահ չեք տեսնում.
4. Հնազանդվե՛ք Աստծուն, նույնիսկ եթե դա ցավոտ է.
5. **Հնազանդվե՛ք Աստծուն մինչև վերջ.**

Իսրայելի առաջին թագավոր Սավուղն Աստծո Խոսքից չդողացող մարդու դասական օրինակ է: Նա հեշտ շեղվում էր հնազանդությունից, երբ այն անիմաստ էր թվում նրան, երբ անձնական շահ չէր տեսնում դրանում, և երբ այն չէր ծառայում նրա նպատակներին: Բնականաբար, նրա աներկյուղ վարքը հաճախ էր ցավեցնում և վնասում մարդկանց:

Նա միշտ չէ, որ այդպիսին էր: Մինչև թագավոր դառնալը խոնարհ և աստվածավախ երիտասարդ էր. երկու առաքինություն, որոնք միշտ միասին են: Երբ հանրահայտ Սամուել մարգարեն գտավնրան, նա առաջին հերթին ասաց. «Ինչո՞ւ պետք է ուշադրություն դարձնես ինձ վրա: Ես Իսրայելի ամենափոքր ցեղից եմ, և իմ ընտանիքն ամենա-

փոքրն է մեր ցեղում» (Ա Թագավորաց 9.21, հեղինակի շրջասություն): Ավելի ուշ ամբողջ Իսրայելը հավաքվեց՝ իրենց առաջին թագավորին տեսնելու համար: Երկարատև գործընթացից հետո աստվածային ընտրությունը Սավուղն էր, բայց երբ առաջնորդները կանչեցին նրան, չէին գտնում. նա թաքնվել էր մի անհայտ վայրում: Նա ճանաչված լինելու ցանկություն չուներ (տես Ա Թագ. 10.20-24):

Ինչպես պարզվեց, սուրբ երկյուղը նրա գանձը չէր: Նման Սողոմոնին, նա թողեց այն, հենց որ ստացավ հաջողություն, համբավ և առաջնորդ լինելու արտոնությունները: Շատերի պես, Սավուղ թագավորի դեպքում էլ սուրբ երկյուղը կորցնելու սկզբնական նշաններն աննկատ են: Ամեն ինչ սկսվում է փոքր հարցերում ստացված հանդիմանություններն անտեսելուց, և արդյունքում խիղճն ավելի ու ավելի է անզգայանում: Ի վերջո, բախվելով ավելի կարևոր հարցերի՝ մենք արդեն չենք նկատում մեր կյանքում ձևավորված շարունակական անհնազանդությունը:

Սա վերաբերում էր Սավուղ թագավորին: Սուրբ երկյուղը կորցնելու նշանները սկսեցին ի հայտ գալ (տես Ա Թագ. 13.5-14), բայց նա անուշադրության էր մատնում, քանի որ միևնույն ժամանակ մեծ հաջողություններ ուներ (տես Ա Թագ. 14.47):

Այդ ամենից որոշ ժամանակ անց թագավորը հրաման ստացավ. «Հիմա գնա՛ և Ամաղեկին զարկի՛ր, և նրա ամբողջ ունեցածը նզովե՛ք, և նրան չխնայես: Եվ մեռցնես՝ մարդուց մինչև կինը, և երեխայից մինչև կաթնակերը, արջառից մինչև ոչխարը, և ուղտից մինչև էշը» (Ա Թագավորաց 15.3): Տերը պատրաստ էր վրեժ լուծել այդ ազգի անօրեն արարքների պատճառով:

Սավուղը 210.000 զինվորից բաղկացած բանակ հավաքագրեց: Նա և նրա զինվորները սպանեցին յուրաքանչյուր մարդու և կենդանու՝ բացի Ամաղեկի թագավոր Ագագից և լավագույն անասուններից (տես Ա Թագ. 15.7-9):

Եկեք մտածենք այս մասին: Եթե Սավուղը նման մեծ բանակ հավաքեց, նշանակում է՝ ամաղեկացիների թիվն առնվազն մեկ քառորդ միլիոնի էր հասնում. այնպես որ, ըստ էության, նրանք մահվան մատնեցին 249.999 մարդու: Թագավորը կատարեց իրեն հրամայվածի 99.99 տոկոսը, բայց ուշադրություն դարձրեք, թե ինչպես Աստված արձագանքեց նրա՝ *գրեթե* կատարյալ հնազանդությանը.

> «Զղջացի, որ Սավուղին թագավոր եմ արել, որովհետև Ինձնից ետ դառավ և Իմ խոսքերը չկատարեց» (Ա Թագավորաց 15.11):

Սամուելը փոխանցում է այս ուղերձը թագավորին և ուղղակիորեն *ապստամբություն* է անվանում նրա վարքը (տես Ա Թագ. 15.23): Անկասկած, Սավուղը *մեղք էր գործել:* Եկեք մի պահ կանգ առնենք

և խոսենք այն մասին, թե ինչ է մեղքը: Հովհաննես առաքյալը գրում է, որ մեղքն անօրինություն է (տե՛ս Ա Հովհ. 3.4): Նրա մեղքի սահմանումը կարելի է այսպես ձևակերպել. *«մեղքը՝ անհնազանդություն է Աստծո իշխանությանը»:* Դիտարկենք սա հետևյալ կերպով. Եդեմի պարտեզում Ադամը անկողին չմտավ մարմնավաճառի հետ, բանկ չթալանեց, և ո՛չ էլ սպանեց ինչ-որ մեկին: Նա պարզապես անհնազանդ եղավ Աստծո ասածին: Նույն կերպով, Սավուղը որոշեց ոչ *լիարժեք կերպով* հնազանդվել Աստծո հանձնարարածին:

Եկեք խորապես դիտարկենք սա: Երբ Սավուղը կռվի գնալու հրաման ստացավ, նա ոտքով չդոփեց և չասաց. «Ո՛չ, ես չե՛մ անի դա»: Շատերն ապստամբություն կհամարեին նման արձագանքը: Սավուղը նաև չանտեսեց այդ հրամանը և փոխարենը չզբաղվեց իր անձնական հարցերով: Եթե նա այդպես վարվեր, մեծամասնությունը կեզրակացներ. «Նա սխալ վարվեց, քանի որ հնազանդությունն առաջնահերթ չէր նրա համար»: Սակայն քչերն ապստամբություն կանվանեին դա:

Իսկ ինչ վերաբերում է հրամանը 99.99 տոկոսով կատարելուն, մեծամասնությունը հավանություն կտար դրան, և շատ քչերը նրա արարքն ապստամբություն կհամարեին: Եթե մենք Սավուղի փոխարեն լինեինք և ստանայինք այս հանդիմանությունը, մեզնից քանի՞սը կընդդիմանար. «Լավ, ողջամի՛տ եղեք: Ինչո՞ւ եք այդքան կենտրոնացած այն փոքրի վրա, որը չեմ կատարել, փոխարենը հաշվի առնեք այն ամենը, ինչը կատարել եմ»: Այս ճշմարտության լույսի ներքո կարող ենք եզրակացնել հետևյալը. *գրեթե կատարյալ* հնազանդությունը բոլորովին հնազանդություն չէ:

Պարզենք, թե ինչու Սամուելն այդքան խիստ խոսեց Սավուղի հետ: Առաջինը՝ այդ ժամանակ, եթե դուք թագավոր էիք, որն այլ երկիր էր նվաճել, այդ երկրի թագավորին ողջ բռնելը հավասար էր ձեր պալատում կենդանի հաղթանշան ունենալուն: Այն մշտապես հիշեցնելու էր ձեր մեծության մասին, ոչ միայն ձեզ, այլև նրանց, ովքեր լինելու էին ձեր պալատում:

Երկրորդը՝ ինչո՞ւ էր պետք խնայել լավագույն անասուններին: Մինչև պատասխանելը, եկեք ավելի բարդացնենք ամեն ինչ: Սավուղը թույլ տվեց խնայել լավագույն անասուններին՝ դրանք Տիրոջն ընծայելու համար: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես նա փորձեց հերքել մարգարեի խոսքերը. «Ճիշտ է, որ բանակը խնայեց ոչխարների, այծերի և եզների լավագույններին,- խոստովանեց Սավուղը:- Բայց ժողովուրդը զոհաբերելու է դրանք քո Տեր Աստծուն: Մենք կործանեցինք մնացած ամեն ինչ» (Ա Թագավորաց 15.15, NLT): Ինչո՞ւ նա արեց դա: Հնարավո՞ր է, որ նա այդպես վարվեց՝ ժողովրդի բարեհաճությունը շահելու համար: Խոսքն այն ազգի մասին է, որն ընդունում էր Տեր Աստծուն: Մտածե՛ք զինվորների, քահանաների և ժողովրդի կարծիքի մասին: Ամենայն հավանականությամբ, նրանք ասում էին միմյանց. «Մենք այն-

պիսի՞ աստվածապաշտ թագավոր ունենք: Նա մշտապես առաջնահերթություն է տալիս Աստծուն: Նա տալիս է Աստծուն լավագույնը»: Ժողովուրդը չգիտեր ամեն ինչ կործանելու սկզբնական հրամանի մասին: Ըստ էության, Սավուղն անում էր դա իր հեղինակությունը բարձրացնելու համար: Նրա արարքների շարժառիթը մարդու հանդեպ վախն էր: Սավուղն անապահովության զգացում ուներ:

Այսօր շատերը կարեկցանքով են վերաբերվում անապահովության զգացում ունեցող մարդկանց: Այնուամենայնիվ, անապահովության զգացումի ետևում թաքնված է նույնիսկ անհնազանդության գնով ընդունելություն, սեր և հարգանք ստանալու մեր ցանկությունը: Մենք չենք գիտակցում, թե որքան ընդունված և սիրված ենք մեր Արարչից: Մենք պետք է ցույց տանք, թե իրականում ինչ է անապահովության զգացումը. այն վտանգավոր ծուղակ է:

Սավուղը չկատարեց իրեն տրված հրամանը՝ Աստծուց երկյուղ չունենալու պատճառով: Վերադառնանք Հիսուսի օրինակին: Նրան սպասում էր մերժում, ամոթ, ատելություն, դաժան հակառակություն, մարմնական ծեծ և զարհուրելի խաչելություն: Երբ տաճարի պահապանները եկան Նրան ձերբակալելու, աշակերտները փորձեցին թույլ չտալ դա և պաշտպանեցին Հիսուսին: Այնուամենայնիվ, Նրա արձագանքը հետևյալն էր.

> «Մի՞թե չեք հասկանում, որ Ես կարող էի խնդրել Իմ Հորից հազարավոր հրեշտակներ՝ մեզ պաշտպանելու համար, և Նա անմիջապես կուղարկեր նրանց: Բայց եթե անեի դա, ինչպե՞ս կկատարվեին այն Խոսքերը, որոնք նկարագրում են այն, ինչ տեղի է ունենալու հիմա» (Մատթեոս 26.53,54, NLT):

Մինչև վերջ հնազանդվելը կարևորագույն բանն էր Հիսուսի համար:

Երբ սովորում էի ավագ դպրոցում, ես հավատացյալ չէի, բայց մեր հանդերձարանում մի պաստառ կար, որն ամեն անգամ գրավում էր ուշադրությունս: Ես տեսնում էի այն ամեն օր՝ բասկետբոլի պարապմունքից հետո: Այդ պաստառի վերևի մասում պատկերված էր մի մարզիկ, որը նստած էր՝ գլուխը կախած, իսկ կողքին գրված էր. «Ես հանձնվում եմ»: Ներքևի մասում պատկերված էր Հիսուսը՝ խաչի վրա, իսկ կողքին գրված էր. «Ես չհանձնվեցի»:

Դա անդառնալի տպավորություն թողեց ինձ վրա, երբ ես անհավատ էի: Այժմ, հասկանալով, որ Հիսուսը կարող էր խուսափել զարհուրելի չարչարանքներից և դաժան մահից, բայց փոխարենը որոշեց շարունակել՝ հնազանդվելով, մինչև որ կասեր. «Կատարվա՛ծ է», դա շատ ավելի մեծ կշիռ ունի ինձ համար: Նա լիակատար, մինչև վերջ հնազանդության օրինակ թողեց մեզ, որպեսզի ավարտենք այն գործը, որն Աստված վստահում է մեզ:

Այժմ կարող ենք ավելի լավ հասկանալ Նրա հրահանգն Իր աշակերտներին, երբ նրանք խնդրեցին Հիսուսին ավելացնել իրենց հավատքը.

> «Երբ որ *բոլոր* ձեզ հրամայված բաներն անեք, ասեք, թե՝ մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկաս 17.10):

«Բոլոր» բառն այս խոսքում լիովին նոր իմաստ է ստանում: Եկեք մշտապես հնազանդվենք մինչև վերջ:

Անձնական կիրառում

Հատված. «Երբեք մի՛ հանձնվեք... Պահեք ձեր հայացքը Հիսուսի վրա, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այն ընթացքը, որում մենք գտնվում ենք: Ուսումնասիրեք, թե ինչպես Նա արեց դա: Քանի որ Նա երբեք չհեռացրեց հայացքն այնտեղից, որտեղ գնում էր՝ այն բերկրալի ավարտից Աստծո մեջ և Աստծո հետ, Նա կարողացավ դիմանալ ցանկացած բանի ճանապարհին... Երբ պարզեք, որ տկարանում եք ձեր հավատքի մեջ, կրկի՛ն կարդացեք այդ պատմությունը՝ կետ առ կետ, թշնամանքի այդ երկար շարանը, որը Նա այդքան դժվարությամբ անցավ: Դա ադրենալին կներարկի ձեր անձերի մեջ» (Եբրայեցիների 12.2,3, MSG):

Եզրահանգում. *Գրեթե* կատարյալ հնազանդությունը բոլորովին հնազանդություն չէ: Հիսուսը լիակատար, մինչև վերջ հնազանդության օրինակ թողեց մեզ, որպեսզի ավարտենք այն գործը, որն Աստված վստահում է մեզ:

Մտորում. Արդյո՞ք, սկսելով հնազանդվել Աստծո Խոսքին, թույլ եմ տվել, որ շեղող հանգամանքները, հաճույքները, մարդկանց հակառակությունը կամ անհավանությունը կամ ցանկացած դժվարություն դրդեն ինձ կանգ առնել և չավարտել իմ ընթացքը: Ինչպե՞ս կարելի է փոխել դա:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, ների՛ր ինձ, որ սկսել եմ հնազանդվել այն բանին, ինչ պատվիրել ես ինձ, սակայն ավարտին չեմ հասցրել՝ կա՛մ անտեսելով Քո պատվերը, կա՛մ մտափոխվելով, քանի որ չեմ հասկացել, որ ծառայում եմ ինքս ինձ: Ես ապաշխարում եմ սուրբ երկյուղի բացակայության համար և խնդրում եմ, որ ներես ինձ: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ հնազանդվել Աստծո Խոսքին մինչև վերջ:

Երբ մարդիկ այլևս չեն
վախենում Աստծուց, նրանք ան-
վարան զանց են անում Նրա
օրենքները:
Հետևանքների վախն
անկարող է զսպել մարդուն, երբ
Աստծո վախն այլևս չկա:

– Է. Ու. ԹՈՋԵՐ

28| ԻՆՉՊԷՍ ՏԱՂԵԼ ԽԻՂՃԸ

Ինչպես նշեցի նախորդ գլխում, սուրբ երկյուղը կորցնելու սկզբնական նշաններն աննկատ են՝ այնքան, որ մենք պետք է ավելի կենտրոնանանք այս կարևոր ճշմարտության վրա և հանգամանորեն բացատրենք այն: Դուք երբևէ զգացել եք անհանգստություն ձեր ներսում, երբ ձեզ ինչ-որ վիճարկելի բան անելու հնարավորություն է ընձեռնվել: Մարդկանց մեծ մասը հասկանում է, որ այդ կերպով մեր *խիղճը* փորձում է պաշտպանել մեզ, սակայն շատերը չեն գիտակցում, որ մեր խղճի ձայնի պարզությունը և ուժգնությունը կարող է փոփոխվել:

Մեր խիղճը պարգև է Աստծուց, և մենք ոչ մի դեպքում չպետք է թեթևամտորեն վերաբերվենք: Այն *մեր սրտի* անբաժանելի մասն է. դրա զգայունությունն ավելի է սրվում սուրբ երկյուղով և հակառակը՝ ավելի է բթանում սուրբ երկյուղի բացակայության դեպքում: Աստծո Խոսքը զգուշացնում է. «Հսկի՛ր քո *սիրտը* ամեն ինչից առավել, քանի որ այն որոշում է քո կյանքի ընթացքը» (Առակաց 4.23, NLT):

Երբ երեսունն անց էի, մի հայտնի ծառայող ճաշի հրավիրեց ինձ: Ճաշելու ընթացքում հարցրեց.

- Ջո՛ն, ինչպե՞ս չսայթաքեմ իմ ծառայության մեջ՝ այն բազմաթիվ ծառայողների պես, որոնք սայթաքել են:

Զարմանքից՝ կերակուրը կարծես կոկորդիս մնաց: Ինչո՞ւ նա պետք է նման հարց տար ինձ: Ես երիտասարդ էի, և նա ծառայության մեջ էր ավելի երկար ժամանակ, քան ես փրկված էի: Բայց պատասխանից խուսափելու փոխարեն ես ուղղեցի իմ ուշադրությունը Սուրբ Հոգուն և լուռ հարցրի. *«Սո՛ւրբ Հոգի, ի՞նչ պատասխանեմ նրան»:*

Գրեթե անմիջապես լսեցի. *«Ասա՛ նրան, որ հսկի իր խիղճը՝ որպես ամենաթանկ ունեցվածք»:*

Ես ասացի այն, ինչ լսեցի, և հանկարծ բերանիցս դուրս թռան հետևյալ խոսքերը.

- Քեզ մեծ հնարավորություններ կառաջարկեն, բայց քո ներսում դու կիմանաս, որ դա փոխզիջման կենթարկի քո անկեղծությունը, որ դա ազնիվ չէ, վիճարկելի է կամ կարող է վնաս հասցնել մարդկանց: Լսի՛ր քո խղճին, մի՛ վանիր դրա զգուշացումները: Եթե անտեսես դա, կկորցնես զգայունությունն Աստծո հանդեպ:

Այդ դեպքին հաջորդող մի քանի օրում ես բացահայտեցի, որ «խիղճ» կամ «խղճմտանք» բառը հաճախ է հանդիպում Աստվածաշնչում, թեև նախկինում ես ուշադիր չէի դրա հանդեպ: Այն գրված է գրեթե երեսուն անգամ միայն Նոր կտակարանում: Պողոսը գրում է Տիմոթեոսին.

> «Հարի՛ր Քրիստոսի հանդեպ քո հավատքին և մաքո՛ւր պահիր քո *խիղճը:* Որովհետև որոշ մարդիկ դիտավորյալ զանցեցին իրենց *խիղճը*. որպես արդյունք, նրանց հավատքը նավաբեկության ենթարկվեց» (Ա Տիմոթեոս 1.19):

Նավաբեկության ենթարկված հավատքն աննշան խնդիր չէ:

Այդ տարեց ծառայողի հետ ունեցած ճաշի ընթացքում աչքերս բացվեցին, և տեսա, թե որքան ծանրակշիռ է Պողոսի այս պնդումը: Այն բացատրում է, թե ինչու շատերը բարեհաջող ավարտ չեն ունենում:

Աստվածաշնչի հորդորը մեր խիղճը մաքուր «պահելու» մասին՝ նշանակում է, որ սկզբնապես այն լավ վիճակում է: Հիսուսի արյունը մաքրում և սրբում է մեր խիղճը (տես Ա Տիմոթ. 3,9, Եբր. 9.9,14): Սա վերստին ծնունդի մեծագույն առավելություններից է: Երեմիա մարգարեն մի պնդում է անում մեր խղճի մասին, որը հաճախ սխալմամբ է մեկնաբանվում. նա հայտարարում է. «Խորամանկ է սիրտն ամենից ավելի և ապականված. նրան ո՞վ կարող է հասկանալ» (17.9): Նա նկատի չունի վերստին ծնված մարդկանց, որոնք նոր բնություն ունեն և վերստեղծված են Հիսուսի նմանությամբ: Հին կտակարանում մարդիկ չունեին նոր սիրտ: Այնուամենայնիվ, Աստված խոստացավնրանց. «Եվ Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ» (Եզեկիել 36.26): Սա տեղի ունեցավ, երբ Հիսուսը փրկագնեց մեր մարդկային բնությունը և տվեց Իր բնությունը:

Քրիստոսում նոր արարած դառնալու հրաշքի շնորհիվ մենք արժանահավատ խիղճ ունենք: Խնդիրը՝ այն մաքուր պահելն է: Այսպիսով, այժմ պետք է հարց տանք. ինչպե՞ս է այն ապականվում: Խղճի լիակատար ապականությունը տեղի չի ունենում մի ակնթարթում. որպես

կանոն, դա սկսվում է փոքր բաներից, և եթե մենք չենք զգուշանում, ավարտվում է նավաբեկությամբ: Հակոբոսը գրում է.

> «Բայց պարզապես մի՛ լսեք Աստծո Խոսքը: Դուք պետք է *կատարեք այն, ինչ Խոսքն ասում է*: Հակառակ դեպքում, դուք միայն խաբում եք ձեզ» (Հակոբոս 1.22, NLT):

Կրկին, սա ուղղակիորեն վերաբերում է հնազանդությանը: Մենք սպառիչ կերպով քննարկեցինք այն փաստը, որ սուրբ երկյուղի ապացույցն անհապաղ և ամբողջական հնազանդությունն է, նույնիսկ երբ դա անիմաստ է թվում, երբ շահն ակնհայտ չէ, կամ երբ դա ցավ է պատճառում: Այսպես վարվող մարդը չի հայտնվի ինքնախաբեության մեջ:

Եկեք կանգ առնենք և համոզվենք, որ հասկանում ենք այս ճշմարտությունը: Անկասկած, հնարավոր է խաբել ձեր ծանոթներին, նույնիսկ ձեր մտերիմ ընկերներին և ընտանիքի անդամներին, սակայն ինքներդ ձեզ խաբելն այլ է: Ըստ էության, երբ անհնազանդ ենք, մենք *խաբում ենք ինքներս մեզ:* Մենք թուլացնում ենք ճշմարտության պաշտպանությունը, և մեր բարոյական կողմնորոշման զգացումը թուլանում է: Մենք ավելի քիչ ենք գիտակցում, որ վտանգի ենք ենթարկում ինքներս մեզ:

Եկեք այս գործընթացի մի երևակայական օրինակ բերենք: Դուք երբևէ զրպարտել եք ինչ-որ մեկին: Այն պահին, երբ արեցիք դա, գուցե այնպիսի զգացում ունեիք, ասես ձեր որովայնը դանակով խոցվեց. դա ձեր խղճի ձայնն էր: Հուսով եմ՝ դուք ականջ դրեցիք այդ ձայնին, ապաշխարեցիք և անմիջապես շտկեցիք ձեր ասածը: Այնուամենայնիվ, հաճախ մենք արդարացնում ենք մեր վարքը: Մեր պատճառաբանությունները կարող են այսպիսին լինել. *«Այն, ինչ ես ասացի, ճի՛շտ է»:* Ցավոք, մեր սխալական փաստարկը հաղթում է, և մենք շարունակում ենք հարել դրան՝ անտեսելով զգուշացումը մեր ներսում: Այդուհանդերձ մենք սկսում ենք ապականության գործընթացը. մեր խղճի զգայունությունը թուլանում է:

Հաջորդ անգամ, երբ ինչ-որ մեկի դեմ ենք խոսում, մեր խղճի ձայնը նման չէ մեր որովայնը խոցող դանակի. այժմ այն նման է ուժգին կսմթոցի մեր ներսում: Մեր խիղճը կրկին խոսում է, բայց այս անգամ՝ պակաս ճանաչելի ձայնով: Այս անգամ ներքին պայքարն այդքան էլ լարված չէ. մենք ավելի հեշտ ենք անտեսում այդ զգուշացումը և արդարացնում մեր խոսքերը: Պատճառն այն է, որ մենք ավելի ենք ապականել մեր սիրտը, և մեր խղճի զգայունությունն ավելի է թուլացել:

Երբ կրկին ինչ-որ մեկի դեմ ենք խոսում, մենք չենք զգում ուժգին կսմթոց. այժմ մեր խղճի ձայնը նման է թեթև ծակոցի, որը հազիվնշմարելի է: Մենք այլևս ստիպված չենք համոզել ինքներս մեզ՝

մեր դատողություններով, քանի որ մեր խղճի ձայնն արդեն շատ ցածր է: Մենք կարող ենք ավելի հեշտ արդարացնել մեր վարքը. մեր խղճի զգայունությունն ավելի է թուլանում:

Ի վերջո, դադարում ենք որևէ բան զգալ: Մեր խիղճը տաղվում է: Մենք այլևս չենք զգում, որ կուրացել ենք, և ընդհանրապես զրկվում ենք զանազանելու կարողությունից: Այժմ մենք չունենք բարոյական կողմնորոշում, և մեր հավատքի նավաբեկությունն անխուսափելի է: Ըստ էության, մենք խաբել ենք ինքներս մեզ. մենք մոլորության մեջ ենք:

Այս ամենից կարելի էր խուսափել հասարակ ապաշխարությամբ՝ մտքի և սրտի լիարժեք փոփոխությամբ: Ապաշխարելիս մենք գիտակցում ենք, որ մեր իմաստությունն անօգուտ է, և հաստատուն կերպով հարում ենք Աստծո իմաստությանը: «Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանողն ու թողնողը ողորմություն կգտնի» (Առակաց 28.13):

Ողորմությունը և վերականգնումը կարող են շնորհվել այս գործընթացի ցանկացած պահին, բայց սուրբ երկյուղի բացակայությունը ուշացնում է մեր արձագանքը: Մենք խաղի ենք վերածում դա, քանի որ մեր սիրտն ավելի ու ավելի է անզգայանում մեր խղճի հանդիմանության հանդեպ: Իմաստուն անձնավորությունը մշտապես արագ արձագանքում է ապաշխարությամբ իր խղճի զգուշացումներին. նա գիտակցում է, որ ուշացնելը կարող է վտանգավոր լինել:

Կան բազմաթիվ մարդիկ՝ թե՛ Աստվածաշնչում, թե՛ մեր օրերում, որոնք ուշացրել են իրենց խղճի ձայնը լսելը: Դա կարելի է համեմատել «ռուսական պտտախաղ» խաղալու հետ: Գուցե խուսափեք նավաբեկությունից, բայց ինչպե՞ս կհասկանաք, թե երբ եք անցել անզգայացման սահմանը: Չկա այնպիսի ձայն, որը զգուշացնում է. «Եթե մեկ անգամ էլ անտեսես ինձ, դու լիովին լռեցնելու ես ինձ»: Պողոսը ցավով գրում է.

> «Եվ Հոգին հայտնի ասում է, թե հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան և մտիկ կտան մոլար ոգիների և դևերի վարդապետությունների՝ ստախոսների կեղծավորությամբ, որոնց խղճմտանքը տաղված է» (Ա Տիմոթեոս 4.1,2):

Տաք երկաթով տաղված մաշկը բոլորովին զրկվում է զգայունությունից: Նույնը վերաբերում է մեր խղճին: Մենք սկսում ենք վարվել հակառակ մեր իրական ինքնությանը՝ չզգալով ոչ մի հանդիմանություն: Ահա թե ինչ տեղի ունեցավ Անանիայի, Սափիրայի, Սավուղ թագավորի և այլ մարդկանց հետ:

Տաղման ևս մեկ հետևանքն այն է, որ այն ամեն ինչ ամփոփում

է իր մեջ: Եթե տաղեք միսը, դրա հյութը չի կարողանա արտահոսել: Պողոսը գրում է. «Ճշմարիտն եմ ասում Քրիստոսում և սուտ չեմ ասում, իմ խղճմտանքն էլ վկայում է ինձ Սուրբ Հոգով» (Հռոմեացիների 9.1): Եթե հավատացյալը տաղել է իր խիղճը, նա այլևս չի կարողանա հաղորդակցվել Սուրբ Հոգու հետ: Հոգու վկայությունը չի կարողանա հասնել մեր անձին, ինչպես որ մսի հյութը չի կարողանա արտահոսել: Նման մարդը զրկվում է բարոյական տեղորոշման համակարգից իր կյանքում. նա կործանման ճանապարհին է:

Ամփոփելով՝ կարդացեք Պողոսի պնդումներից երկուսը. «Եղբայրներ, ես բոլորովին բարի խղճմտանքով վարվել եմ Աստծո առջև մինչև այսօր» (Գործք 23.1): Կրկին, «Ինքս ջանք եմ անում, որ ամեն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աստծո առջև և մարդկանց առջև» (Գործք 24.16): Եկեք ջանասիրաբար հսկենք մեր սրտերը:

Անձնական կիրառում

Հատված. «Եկեք մուտք գործենք անմիջապես Աստծո ներկայության մեջ՝ անկեղծ սրտերով, լիովին վստահելովնրան: Որովհետև մեր մեղավոր խիղճը ցողվել է Քրիստոսի արյամբ՝ մեզ սուրբ դարձնելու համար» (Եբրայեցիների 10.22, NLT):

Եզրահանգում. Մեր խղճի ձայնի պարզությունը և ուժգնությունը կարող են փոփոխվել: Մեր զգայունությունը սրվում է սուրբ երկյուղով, և հակառակը՝ այն բթանում է դրա բացակայությամբ:

Մտորում. Մեր խիղճը մաքրվում է Հիսուս Քրիստոսի արյամբ: Ի՞նչ հոգևոր կարգապահություն կարող եմ հաստատել իմ կյանքում՝ իմ խիղճը մաքուր պահելու համար:

Աղոթք. Սիրելի՛ երկնային Հայր, խնդրում եմ, որ ներես ինձ այն դեպքերի համար, երբ անտեսել եմ իմ խիղճը և հակառակվել եմ: Ներողություն, որ ջանասիրաբար չեմ հսկել այն: Ես ապաշխարում եմ և խնդրում Քո ներումը: Խնդրո՛ւմ եմ, մաքրի՛ր ինձ Հիսուսի արյունով: Վերականգնի՛ր մաքուր խիղճ իմ ներսում, որը մեղմ է և զգայուն Քո ձայնին և առաջնորդությանը: Օգնի՛ր, որ արագ հնազանդվեմ Քեզ ամեն ինչում: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես ջանասիրաբար կհսկեմ իմ սիրտը և զգայուն կլինեմ իմ խղճի առաջնորդությանն ու ձայնին:

Մ ՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Ասծո

ՀԵՏ

ՇԱԲԱԹ 5

Ավելի լավ է՝ գին վճարեմ, որպեսզի անձամբ լսեմ Աստծո ձայնը, որքան էլ դժվար լինեն հանգամանքները, քան ստիպված համակերպվեմ՝ Նրա ձայնը մշտապես այլ մարդուց լսելուն:

– ՋՈՅ ԴՈՈՒՍՈՆ

ՇԱԲԱԹ 5 – ՕՐ 1

29|ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Աճելով մեզանում՝ այն չափով, որով ավելանում է Աստծո փառքի մեր ընկալումը, սուրբ երկյուղը մաքրում է մեր շարժառիթները, ազատում է մարդու հանդեպ վախից և տալիս է ճշմարիտ սրբության պտուղ կյանքում: Սուրբ երկյուղի դրսևորումն անհապաղ և ամբողջական հնազանդությունն է Աստծուն՝ անկախ այն բանից, թե արդյո՞ք տեսնում ենք որևէ պատճառ կամ շահ, կամ՝ թե որքան ցավոտ է դա մեզ համար:

Հասկանալով սա՝ այժմ կարող ենք ուղղել մեր քննարկումն այս եզակի պարգևի առավելություններին, և այս բաժնում կկենտրոնանանք այն առավելության վրա, որը մեծագույնն է՝ Աստծո հետ մտերմության:

Անգլերենում «մտերիմ» բառը փոխառված է երկու լատիներեն բառերից՝ «ինտուս», որը նշանակում է «ներսում, ծածուկում», և «ինտիմուս», որը նշանակում է «հույժ գաղտնի»[1]: Միացնելով այս երկուսը՝ ստանում ենք «ծածուկ գաղտնիքներ»: Սա թույլ է տալիս մեզ ավելի լավ ըմբռնել մտերմությունը՝ որպես հասկացություն, որը նկարագրում է սրտակից կապ երկու մտերիմ ընկերների միջև, որն ավելի բարձր մակարդակի վրա է, քան հասարակ ծանոթությունը, երբ ճանաչում եք ինչ-որ մեկին միայն մակերեսորեն, ոչ թե խորապես:

Մտերմությունը նման է երկկողմանի ճանապարհի. երկու կողմերն էլ պետք է ճանաչեն միմյանց ծածուկ ցանկությունները և մտքերը: Խոսելով Աստծո հետ մտերմության մասին՝ դիտարկենք և՛ Նրա, և՛ մեր տեսանկյունները՝ սկսելովնրանից: Դավիթը գրում է.

> «Ո՛վ Տեր, Դու *քննել* ես իմ սիրտը և *գիտես* ամեն ինչ իմ մասին» (Սաղմոս 139.1):

«Քննելը» եբրայերենում *«հաքար»* բառն է, որը նշանակում է «հետազոտել, որոնել, փնտրել»: Այս սահմանումը գերազանց նկարագրում է, թե ինչ է անհրաժեշտ՝ ինչ-որ մեկի հետ մտերիմ հարաբերություն սկսելու համար: Մենք ներդնում ենք ժամանակ և ջանք, ինչը ոչ թե բեռ է, այլ բերկրանք է մեզ համար՝ բացահայտելու համար դիմացինի ծածուկ մտքերը և ճանապարհները:

Ես զգացել եմ այս բերկրանքը Լիզայի և իմ ամուսնության մեջ: Երբ նոր էինք ամուսնացել, ես գրեթե ոչինչ չգիտեի այն մասին, թե ինչ էր նա ցանկանում, փափագում, նախընտրում, ինչ նա չէր հավանում, նույնիսկ՝ թե ինչ էր նա ատում: Պահանջվեցին որոնումներ ժամանակի ընթացքում, ինչը սկզբից մինչև վերջ բերկրանք էր պատճառում ինձ, որպեսզի ճանաչեի նրա ծածուկ մտքերը և ճանապարհները: Պարզ ասած՝ անհրաժեշտ են կենտրոնացված մտավոր, զգացմունքային և ֆիզիկական ջանքեր, որպեսզի մտերմանաք ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Հաջորդ բառը, որը հետաքրքրում է մեզ, *«գիտենալն»* է: Եբրայերենում այն *«յադա»* բառն է, որը Հին կտակարանում ամենից հաճախ օգտագործվում է մտերմության իմաստով: Այն հանդիպում է Ծննդոց 4.1-ում. «Ադամը գիտաց իր կնոջը՝ Եվային, և նա հղացավ»: Սուրբ Հոգին օգտագործեց *«յադա»* բառը՝ ցույց տալու համար ամենասերտ մտերմությունը, որին երկուսը կարող են հասնել այս կյանքում: Ըստ էության, Դավիթը նկատի ունի. «Տեր, Դու խորապես ճանաչում ես ինձ»:

Դավիթն օգտագործում է և՛ *«հաքար»,* և՛ *«յադա»* բառերը, որպեսզի վառ պատկերացում փոխանցի Աստծո մասին, Ով փնտրում և որոնում է այն անհատների ծածուկ ցանկությունները և ճանապարհները, որոնց հետ փափագում է մտերիմ լինել: Կրկին, դիտարկելով Լիզայի և իմ հարաբերությունները, ես գիտեմ ավելին նրա մասին՝ տարիներ շարունակ նրա հետ ժամանակ անցկացնելուց հետո: Ես ոչ միայն գիտեմ նրա ծածուկ ցանկությունները, ինչպես արդեն նշեցի, այլև՝ նրա առօրյան, նրա արձագանքը որոշակի հանգամանքներին, նրա նախասիրությունները հանգստի ժամանակ, թե ինչ է նա սիրում անել, ևն: Նույն կերպով, Դավիթը շարունակում է.

> «Դու գիտես իմ նստելն ու վեր կենալը, հեռվից իմանում ես իմ մտածմունքները: Իմ գնալն ու պառկելը քննում ես և իմ բոլոր ճանապարհները գիտես: Որովհետև դեռ բնավ խոսք չկա իմ լեզվի վրա, ահա, ո՛վ Տեր, Դու ամենը գիտես» (Սաղմոս 139.2-4):

Աստված գիտի մեր ծածուկ կյանքն այնպես, որ վեր է մեր պատկերացումից: *«Հաքար»* բառը նշանակում է, որ Աստված ջանք է գործադրում, որպեսզի հետազոտի, փնտրի և որոնի Դավթին, և Նա

անում է նույնը յուրաքանչյուրիս հետ, ինչպես Լիզայի և իմ հարաբերության պարագայում, սակայն՝ ավելի բարձր մակարդակով: Իրականում, ընդամենը մի քանի խոսք անց հանդիպում ենք մի ապշեցուցիչ պնդման այն մասին, որ Աստծո մտքերը մեր մասին՝ անհատապես գերազանցում են այս աշխարհի բոլոր ավազահատիկների թիվը (խոսք 18): Եթե ես մտածեի Լիզայի ցանկությունների, առանձնահատկությունների և ձգտումների մասին, նաև՝ թե ինչ նրան դուր չի գալիս (տասներկու վայրկյանը մեկ՝ նախորդ քառասուն տարում), և ավելացնեի մեկական ավազահատիկ՝ յուրաքանչյուր մտքի համար, հավաքված ավազը նույնիսկ մեկ կոշիկի տուփ չէր կազմի: Աստծո մտքերը յուրաքանչյուրիս մասին գերազանցում են *մեր մոլորակի* բոլոր ավազահատիկները, և Նա ոչ մի դեպքում չէր չափազանցնի, քանի որ դա սուտ կլիներ, և անկարելի է, որ Աստված ստի: Սա աներևակայելի՜ է: Դուք սկսում եք հասկանա՞լ, թե որքան է Նա ձգտում իմանալ ամեն ինչ մեր մասին:

Աստված խորապես ցանկանում է մտերիմ լինել յուրաքանչյուրիս հետ: Այնուամենայնիվ, թույլ տվեք կրկնել, որ ճշմարիտ մտերմությունը ենթադրում է, որ երկու կողմերն էլ լավ ճանաչում են միմյանց: Ինչպես որ Նա է ձգտում մեր ծածուկ մտքերին, մենք նույնպես պետք է ջերմեռանդորեն ձգտենք ճշմարիտ մտերմություն ձևավորել: Մովսեսը ձգտում է այսպիսի փոխհարաբերության մակարդակ՝ աղաղակելով.

> «Դու ասացիր. «Քեզ ճանաչում եմ [*յադա*] քո անունով, և Իմ առջև շնորհք գտար»: Եվ հիմա աղաչում եմ, եթե Քո առջև շնորհք գտա, խնդրեմ, ինձ իմացրո՛ւ [*յադա*] Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ, որ Քո առջև շնորհք գտնեմ» (Ելից 33.12,13):

Աստված չի ճանաչում մեզ որպես մեկը՝ մարդկանց բազմության մեջ: Նա ճանաչում է մեզ անձնապես, անհատապես, անունով: Վերոբերյալ խոսքում տեսնում ենք, որ Մովսեսը ցանկանում է փոխադարձ պատասխանել դրան. նրա ջերմեռանդ ձգտումն է՝ առաջանալ Աստծուն ճանաչելու մեջ: Նա ցանկանում է մտերիմ հարաբերություն՝ ոչ թե որ միայն Աստված խորապես ճանաչի իրեն, այլև՝ որ Մովսեսն էլ խորապես ճանաչի Աստծուն: Իսկ մե՞նք: Գրված է. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (Հակոբոս 4.8):

Հաշվի առնելով այն, ինչ քննարկեցինք, կարծում եմ՝ այժմ դուք լսում եք կանչ, և ավելին՝ աղաղակ, որը բխում է Աստծո սրտից: Ամեն վայրկյան այն ավելի ուժգին է դառնում: «Ինչո՞ւ ես հեռու մնում, երբ կարող ես մտերմորեն ճանաչել Ինձ»: Ըստ էության, մենք տեղեկանում ենք, որ *հենց մենք ենք որոշում Աստծո հետ մեր մտերմության մակարդա-*

կը: Թույլ տվեք ավելի պարզ ասել սա. դո՞ւք եք որոշում, թե որքանով եք մոտ գտնվում Աստծուն, ոչ թե Աստված: Ուրեմն, ի՞նչ դեր ունի Աստծո երկյուղն այստեղ: Գրված է.

> «Տիրոջ երկյուղը գիտելիքի սկիզբն է» (Առակաց 1.7, NKJV):

Ինչպիսի՞ գիտելիքի: Արդյո՞ք հեղինակը նկատի ունի բժշկական, բնագիտական, պատմական կամ այլ ակադեմիական գիտելիք: Մեր համալսարաններից շատերը լի են գիտելիքով, սակայն Աստծո երկյուղը դրանցում քիչ է կամ լիովին բացակայում է: Արդյո՞ք սա վերաբերում է հասարակական կամ քաղաքական գիտելիքի: Ո՛չ, այս աշխարհի ճանապարհները հիմարություն են Աստծո համար: Մի՞թե խոսքն Աստվածաշնչի իմացության մասին է: Բոլորովին ո՛չ, քանի որ փարիսեցիները Սուրբ Գրքի գիտակներ էին, բայց չունեին Աստծո երկյուղը և սաստիկ բարկացնում էին Նրան: Պատասխանը հետևյալ խոսքում է.

> «Վախեցի՛ր Տիրոջից, և դու կստանաս գիտելիք Աստծո մասին» (Առակաց 2.5, NLT):

Այս խոսքում եղող «գիտելիք» բառը սահմանվում է *«Աստվածաշնչյան լեզուների բառարանում»* որպես «տեղեկություն որևէ անձի մասին՝ այդ անձի հետ փոխհարաբերության շեշտադրմամբ»: «*Վայնի ամբողջական բացատրական բառարանը*» ցույց է տալիս, որ այս խոսքը ենթադրում է «ունենալ մտերիմ փորձառական գիտելիք Նրա [Աստծո] մասին»: Պարզ ասած՝ այս խոստումը հետևյալն է... *Տիրոջ երկյուղը՝ Աստծուն մտերմորեն ճանաչելու սկիզբն է:*

Ճշմարտությունն այն է, որ մենք նույնիսկ չենք սկսի մտերմորեն ճանաչել Աստծուն, եթե չունենանք երկյուղ Նրանից, քանի որ սա է սկզբնակետը: Եթե որևէ բան նախաձեռնեք՝ առանց սկզբնակետի, դուք չեք կարողանա ավարտին հասցնել: Եթե ես սկսեմ հարյուր մետրանոց մրցավազք՝ սկզբնակետից հիսուն մետր անց, ես չեմ կարողանա ո՛չ մասնակցել այդ մրցավազքին, ո՛չ էլ ավարտել այն: Նույնը վերաբերում է Աստծո հետ մեր հարաբերությանը. առանց սուրբ երկյուղի, անկարելի է մտերմորեն ճանաչել Նրան: Բարեբախտաբար, Նա ցույց է տվել մեզ ճանապարհը՝ Իրեն ճանաչելու, բայց արդյո՞ք մենք կընտրենք այն:

Հիշեք, որ Տիրոջ երկյուղով է, որ հեռանում ենք չարից կամ *անօրինությունից:* Գիտակցելով սա՝ մտածե՛ք այն մասին, որ Հիսուսը նախապես տեղեկացնում է բազմաթիվ մարդկանց մասին, որոնք հանկարծակիի են գալու Դատաստանի օրը: Նրանք Տեր են անվանում Նրան, բայց Հիսուսից լսելու են. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից

դեն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթեոս 7.23): *«Ճանաչել»* բառը հունարենում *«գինո՛սկո»* բառն է, որը եբրայերեն *«յադա»* բառի համարժեքն է: Ովքեր չունեն սուրբ երկյուղը, Հիսուսը կասի. «Ես երբե՛ք մտերմորեն չեմ ճանաչել ձեզ»: Սա լուրջ խնդիր է, որի մասին կխոսենք հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Իմ սիրտը լսեց, որ Դու ասում ես. «Ե՛կ և զրուցի՛ր Ինձ հետ»: Եվ իմ սիրտն արձագանքում է. «Տե՛ր, ես գալի՛ս եմ»» (Սաղմոս 27.8, NLT):

Եզրահանգում. Ճշմարիտ մտերմությունը ենթադրում է, որ երկու կողմերն էլ լավ ճանաչում են միմյանց:

Մտորում. Մտածե՛ք այն մարդու մասին, որի հետ ամենից շատ եք ցանկանում շփվել: Որքանո՞վ գիտեք, թե ինչ է այդ մարդը մտածում կամ զգում՝ առանց, նույնիսկ, մեկ բառ ասելու: Որքանո՞վ գիտեք, թե ինչպես նա կարձագանքի տարբեր իրավիճակներում: Արդյո՞ք դա ինքնաբերաբար տեղի ունեցավ, թե՞ պահանջվեց որոշակի ժամանակ, որպեսզի որոնեիք և հասկանայիք ձեր մտերիմ ընկերոջ ճանապարհները: Այժմ մտածե՛ք այն մասին, որ Աստծո մտքերը ձեր մասին անհաշվելի են: Ի՞նչ է սա ցույց տալիս: Ի՞նչ տեղի կունենար, եթե դուք որոնեիք Աստծո սիրտը և ճանապարհները և մտորեիք դրանց շուրջ ավելի, քան ձեր մտերիմ ընկերոջ պարագայում:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, ես հասկանում եմ, որ անտեսել եմ մեծագույն հրավերը, որ երբևէ ստացել եմ, այսինքն՝ Քեզ հետ մտերիմ լինելու հրավերը: Ես թույլ եմ տվել անթիվ բաների խանգարել կամ խլել այն ժամանակը, որում պետք է ձևավորեի այս մտերմությունը: Ես ուրախությամբ որոշում եմ կայացնում փոփոխություն կատարել: Երբ բացում եմ իմ Աստվածաշունչը, որպեսզի կարդամ, աղոթեմ և մտորեմ, ուզում եմ ճանաչել Քեզ ավելի խոր, մտերիմ մակարդակով: Խնդրում եմ, Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ, որ ձգտելու եմ ճանաչել Հիսուսին այնքան, որքան Նա է ցանկանում ճանաչել ինձ:

«Կա ճանապարհ
յուրաքանչյուր մարդու առջև,
որը ճիշտ է թվում, բայց այն
ավարտվում է մահվամբ»:

– ԱՌԱԿԱՑ 16.25, NLT

30 | ՈՒՐԻՇ ՀԻՍՈՒՍ

Հաճախ, որևէ բան ավելի լավ հասկանալու համար, օգտակար է դիտարկել դրա հակադրությունը: Այնպես որ, մինչև կշարունակենք խոսել Աստծո հետ մտերմության մասին, նախ՝ քննարկենք դրա հակառակ կողմը, որը կնկարագրեմ հետևյալ պատմությամբ:

Ես նոր էի Հավայի ժամանել՝ մի առաջնորդական համաժողովում քարոզելու համար: Իմ հյուրանոցային համարը դեռ պատրաստ չէր, այնպես որ, մի հանգստի վայր գտա՝ լողավազանի մոտ գտնվող հովանոցներից մեկի տակ: Այնպես էր ստացվել, որ մի գործարար կին, որը մեկ այլ համաժողովի էր մասնակցում, նույնպես սպասում էր իր համարին: Մենք սկսեցինք զրուցել, և երբ նա իմացավ, որ քրիստոնյա հեղինակ և ծառայող եմ, սկսեց պատմել Հիսուսի հետ իր հարաբերության մասին:

Մի քանի րոպեն բավական էր՝ հասկանալու համար, որ այդ կինը չէր ճանաչում Նրան: Նա վստահաբար պնդում էր այն, ինչին ինքը հավատում էր, բայց նրա խոսքերը գրեթե չէին համապատասխանում Աստվածաշնչին: Ես լուռ խնդրեցի Սուրբ Հոգուն իմաստություն տալ ինձ, և մի քանի վայրկյան անց Նա հայտնեց ինձ, թե ինչ կարող էի ասել:

Հենց որ ավարտեց, ես հարցրի.

- Տեսնո՞ւմ եք լողավազանի մյուս կողմում նստած մարդուն:

Նա պատասխանեց զարմացած հայացքով (հավանաբար՝ այն պատճառով, որ ես կտրուկ փոխեցի խոսակցության թեման).

- Այո՛, տեսնում եմ:

Ես խանդավառությամբ ասացի.

- Նրա անունը Ջիմ է, նա Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքից է: Ապրում է խիստ բուսական սննդակարգով: Երազում է լինել Միացյալ Նահանգների ջրագնդակի օլիմպիական թիմում: Նա մարզվում է օրը

երեք ժամ՝ լողավազանում և մարզասրահում: Նրա նախասիրություններն են փիքլբոլը, պարաշյուտային սպորտը և գեղանկարչությունը: Ջիմն ամուսնացած է այն կնոջ հետ, ով հիմա լողավազանի ջրային մերսման լոգարանում է. նրա անունը Բեթ է, և նա տասը տարով երիտասարդ է նրանից:

Հետաքրքրված այն բանով, թե որքան գիտեի այդ մարդու մասին, նա հարցրեց.

- Դուք եկել եք՝ մասնակցելու նույն համաժողովին:

- Ո՛չ,- արագորեն պատասխանեցի:

- Այդ դեպքում, որտեղի՞ց եք ճանաչում Ջիմին,- հարցրեց նա՝ առավել մեծ հետաքրքրությամբ:

Ես շրջվեցի, նայեցի նրա աչքերի մեջ և ասացի.

- Ես չեմ ճանաչում նրան:

Նրա դեմքի արտահայտությունը փոխվեց. այժմ այն արտահայտում էր զգուշություն, գուցե նաև մտահոգություն: Գուցե նա փորձում էր հասկանալ, թե ով էի ես. կնամո՞ղ, մասնավոր խուզարկո՞ւ, թե՞ պետական գործակալ:

Մի պահ դադարից հետո վստահաբար ասացի.

- Ես *հավատում եմ,* որ նա այդպիսին է:

Նա խոսքեր չուներ:

Ես շարունակեցի.

- Քիչ առաջ դուք մեծ վստահությամբ պատմում էիք, թե ինչպես եք *հավատում* Հիսուսին, բայց ձեր խոսքերի գրեթե մեծ մասը Նրա մասին ճիշտ չէ. դա հակառակ է այն բանին, ինչ Աստվածաշունչը սովորեցնում է: Ես գիտեմ դա, քանի որ ճանաչում եմ Նրան:

Մեր զրույցն ավարտվեց նրա ցանկությամբ, բայց նա նկատելիորեն ազդվել էր:

Պողոս առաքյալն ապշեցուցիչ խոսքեր է գրում մի եկեղեցու, որին խորապես սիրում էր. «Դուք պատրաստակամորեն հանդուրժում եք՝ ինչ էլ որ ձեզ ասեն, նույնիսկ եթե ուրիշ Հիսուսի են քարոզում» (Բ Կորնթացիների 11.4, NLT): Նա չի խոսում այլ աստծո մասին, այլ՝ ուրիշ Հիսուսի: Ակնհայտ է, որ նրանք *հավատում էին* Հիսուսին, սակայն, իրականում չէին *ճանաչում* Նրան: Ինչո՞ւ: Նրանք հավատում էին այն ամենին, ինչ իրենց դուր էր գալիս, և հետևաբար ապրում էին իրական Հիսուսից օտարացած: Սա այնքան էլ դժվար չէ: Տերն անտեսանելի է. այնպես որ, դուք կարող եք փոփոխել Նրա բնությունը՝ ձեր երևակայությանը համապատասխանեցնելու համար:

Իսրայելի զավակները վարվեցին այդկերպ: Եգիպտոսից դուրս գալն այս աշխարհից փրկվելու խորհրդապատկերն է: Գրված է. «Եվ

ամենն էլ... այն հոգևոր վեմից էին խմում, որ գնում էր նրանց հետ, և այն վեմն էր Քրիստոսը: Բայց Աստված նրանցից շատերին չհավանեց» (Ա Կորնթացիների 10.4,5): Կային բազմաթիվ պատճառներ, թե ինչու նրանք հաճելի չէին Աստծուն, բայց բոլորի հիմքում էլ նրանց անհնազանդությունն էր Աստծո Խոսքին՝ աստվածային երկյուղի բացակայության պատճառով:

Երբ Մովսեսը սարի վրա էր քառասուն օր, Ահարոնը՝ այն առաջնորդը, որը մնացել էր ժողովրդի հետ, ոսկե հորթ ձուլեց: Տեսնելով դա՝ մենք բացականչում ենք. «Դա կռապաշտությունն է»: Ճիշտ է. այնուամենայնիվ, շատերը չեն գիտակցում, որ Ահարոնը և ժողովուրդն «Էլոհիմ» էին անվանում այդ հորթին: Այս բառն օգտագործվում է 2.606 անգամ Հին կտակարանում: Այն կարող է վերաբերել սուտ աստվածների, բայց տասից ինը դեպքերում այն վերաբերում է *Եհովային*՝ միակ ճշմարիտ Աստծուն: Օրինակ, այս բառը գրված է երեսուներկու անգամ Ծննդոց գրքի առաջին գլխում: Աստվածաշնչի առաջին խոսքում գրված է. «Սկզբում *Էլոհիմը* ստեղծեց երկինքը և երկիրը»:

Մենք հեշտ կարող ենք պարզել, թե արդյո՞ք նրանք նկատի ունեին, որ այդ հորթն *Էլոհիմն* էր՝ Ամենակարող Աստված, թե՞ այն *էլոհիմ* էր, այսինքն՝ սուտ աստված: Պատասխանն այն է, որ Ահարոնը *Յահվեհ* է անվանում այդ հորթին (տե՛ս Ելից 32.5): Սա միակ ճշմարիտ Աստծո սրբազան անունն է, և Աստվածաշնչում այն ոչ մի անգամ չի օգտագործվում՝ որևէ սուտ աստծո անվանելու համար, բացի այս սուրբգրային հատվածից: Ահարոնը և ժողովուրդը չտվեցին այդ հորթին *օսիրիս, բահաղ, իսիս* անունները, կամ ցանկացած այլ սուտ աստծո անուն: Նրանք հայտարարեցին. «Սա Յահվեհն է՝ Նա, Ով ազատեց մեզ Եգիպտոսից» (Ելից 32.4, հեղինակի շրջասությունը):

Ինչպե՞ս նրանք կարող էին այդ աստիճան սխալվել: Ինչո՞ւ նրանք չէին ճանաչում միակ կենդանի Աստծուն, ինչպես որ Մովսեսն էր ճանաչում: Նրանք տեսան Նրա հրաշքները. նրանք հետևեցին Նրա ամպի սյանը և կրակի սյանը: Պատասխանը բարդ չէ: Ամիսներ առաջ, երբ Աստված իջավ սարի վրա՝ ժողովրդին ներկայանալու, նրանք ետ քաշվեցին և աղաղակեցին Մովսեսին. «Դո՛ւ մոտ գնա և լսի՛ր ամենը, ինչ որ մեր Եհովա Աստված ասում է, և դո՛ւ ասա մեզ՝ ինչ որ մեր Եհովա Աստված քեզ հետ խոսի. մենք կլսենք և կկատարենք» (Երկրորդ Օրինաց 5.27):

Ես միայն կարող եմ պատկերացնել Մովսեսի բացարձակ հիասթափությունը: Նա չէր կարող ըմբռնել, թե ինչու նրանք չէին ցանկանում լինել Աստծո ներկայության մեջ: Ինչպե՞ս էր դա հնարավոր: Մովսեսը բերեց այս մտահոգությունը Տիրոջ մոտ՝ պատասխաններ գտնելու ակնկալիքով, բայց գրեթե վստահաբար, Աստծո պատասխանը զարմացրեց նրան. «Այս ժողովրդի՝ քեզ ասած խոսքերի ձայնը լսեցի. նրանց

ամեն ասածը լավ է» (Երկրորդ Օրինաց 5.28):

Մովսեսն ապշեց. նա, ամենայն հավանականությամբ, մտածեց. «*Սպասի՛ր: Նրանք ճի՛շտ են: Գոնե մեկ անգամ այս ժողովուրդը ճի՛շտ է»:* Իմ պատկերացմամբ, նրա պատասխանն Աստծուն մոտավորապես այսպիսին էր. «Ինչո՞ւ նրանք չեն կարող գալ Քո ներկայության մեջ և մտերմորեն ճանաչել Քեզ, ինչպես՝ ես»: Աստված պատասխանեց, բայց այն, ինչ Նա ասաց, ցավալի էր.

> «Երանի՜ նրանք այնպիսի սիրտ ունենային իրենցում, որ *Ինձնից վախենային»* (Երկրորդ Օրինաց 5.29, NLT):

Աստված ցավով ասում է, որ եթե նրանք վարվեին սուրբ երկյուղով, կկարողանային մուտք գործել Իր ներկայության մեջ և մտերմորեն հաղորդակցվել: Սա, իր հերթին, կօգներ նրանց հնազանդվել, և արդյունքում նրանց և նրանց երեխաների համար ամեն ինչ լավ կլիներ: Դրանից հետո Աստված տալիս է հետևյալ ցուցումը Մովսեսին.

> «Գնա՛ և ասա՛ նրանց. «*Վերադարձե՛ք ձեր վրանները»:* Իսկ ինչ վերաբերում է քեզ, կանգնի՛ր այստեղ՝ *Ինձ մոտ,* և Ես կխոսեմ քեզ հետ» (Երկրորդ Օրինաց 5.30,31, NKJV):

Սա և՛ սրտառուչ է, և՛ ոգևորիչ: Մի կողմից, սա սրտառուչ է: Իսրայելի ամենախավար ժամանակն այն չէր, երբ նրանք հորթ ձուլեցին, ո՛չ էլ՝ երբ նրանք չար լուր բերեցին, որը թույլ չտվեց իրենց մուտք գործել Խոստման երկիր: Ո՛չ, դա չէր նրանց ամենախավար ժամանակը: Աստված դուրս հանեց նրանց Եգիպտոսից (այս աշխարհից)՝ նրանց Իր մոտ բերելու համար, որպեսզի մտերմորեն ճանաչեին Իրեն, ինչպես որ Ինքն էր ճանաչում նրանց: Այնուամենայնիվ, նրանք հրաժարվեցին՝ *սուրբ երկյուղի* բացակայության պատճառով: Ողբերգակա՞ն է:

Մյուս կողմից, սա ոգևորիչ էր Մովսեսի համար, քանի որ նա հրավեր ստացավ կանգնելու Աստծո մոտ և լսելու Նրա խոսքերը՝ ուղիղ Նրա բերանից: Նա հրավեր ստացավ մտերմորեն հաղորդակցվելու Աստծո հետ, այնինչ, ժողովուրդը վերադարձավ իրենց վրանները:

Լողավազանի մոտ գտնվող կինն ազդարարում էր *ուրիշ* Հիսուսի, կորնթացիները ծառայում էին *ուրիշ* Հիսուսի, և Իսրայելը հետևում էր *ուրիշ* Ամենակարող Աստծո: Արդյո՞ք մենք նկատում ենք, թե ինչն է կրկնվում: Հնարավոր է ստեղծել մի աստվածություն և տալ նրան Հիսուս անունը, սակայն չճանաչել *իրական* Հիսուսին, Ովնստած է Աստծո աջ կողմում: Եվ առավել մտահոգիչ է այն, որ թե՛ Իսրայելը, թե՛ Կորնթոսի եկեղեցին վերապրել էին Աստծո հայտնված զորությունը և հրաշքները՝ իրենց աղոթքների պատասխանների միջոցով:

Այսպիսով, վերադառնանք այն մեծ բազմություններին, որոնք դատաստանի ժամանակ դավանելու են Հիսուսին որպես իրենց Տեր, բայց ողբերգական ձևով լսելու են Նրանից նույն խոսքերը, որոնք Մովսեսը լսեց Աստծուց Իսրայելի վերաբերյալ. «Հեռացեք Ինձնից»: Սա պետք է որ դրդի մեզ սերտորեն ուսումնասիրել Հիսուսի մարգարեական խոսքերն այն մասին, թե իրականում ինչ տեղի կունենա այս բազմությունների հետ: Ինչպես նշվեց այս գլխի սկզբում, դրանով մենք ավելի կհասկանանք սուրբ երկյուղի կարևորությունը մեր Տիրոջ և Իշխանի հետ մտերմության հարցում: Մենք կանենք սա հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Այս Բարի լուրն է, որ փրկում է ձեզ, եթե դուք շարունակեք հավատալ այն ուղերձին, որը պատմեցի ձեզ, եթե, իհարկե, չեք հավատացել այնպիսի բանի, ինչն ի սկզբանե ճիշտ չի եղել» (Ա Կորնթացիների 15.2, NLT):

Եզրահանգում. Հնարավոր է ձեր ամբողջ սրտով հավատալ ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի, ինչը ճիշտ չէ:

Մտորում. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ հավատում եմ իրական Հիսուսին, ոչ թե կեղծիքի: Կարո՞ղ եմ իմանալ սա այն պատճառով, որ իմ առաջնորդները սովորեցնում են Նրա մասին: Բայց մի՞թե Ահարոնը չէր սովորեցնում և առաջնորդում Իսրայելին: Կարո՞ղ եմ վստահաբար իմանալ, քանի որ կարդում եմ Աստվածաշունչը: Բայց մի՞թե փարիսեցիները նույնը չէին անում: Ինչպե՞ս կարող եմ իմանալ:

Աղոթք. Հա՛յր, Հիսուսի անունով, ես խնդրում եմ, որ ոչ միայն իմանամ ճշմարտությունը, այլև սիրեմ ճշմարտությունը: Ես որոշում եմ կայացնում ընդունել Քո կենդանի Խոսքը՝ որպես վերջնական հեղինակություն, և հնազանդվել, անկախ այն բանից՝ հասկանո՞ւմ եմ, թե՞ ոչ: Այդպես վարվելով՝ ես կունենամ Քո խոստումը, որ երբեք խաբված չեմ լինի: Երբ կարդում եմ Խոսքը և հնազանդվում, թող որ այն կարդա ինձ. թող այն հայտնի ինձ, թե ով եմ ես, և թե՝ Ով է իմ Տեր Հիսուսը: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ հավատալ Աստծո Խոսքին, անկախ այն բանից՝ հասկանո՞ւմ եմ, թե՞ ոչ:

«Ես տարածեցի իմ
ձեռքերը ամեն օր դեպի մի
ապստամբ ժողովուրդ, որոնք
գնում են մի այնպիսի ճանա-
պարհով որ լավ չէ»:

– ԵՍԱՅԻ 65.2

31| ՁԵՋ ՉԵՄ ՃԱՆԱՉՈՒՄ

Մենք ավելի շատ կհասկանանք և կգնահատենք մտերմությունն Աստծո հետ, եթե շարունակենք դիտարկել դրա հակառակ կողմը: Նախորդ գլխի, ինչպես նաև այս գլխի թեման բավականին ծանր է: Այնուամենայնիվ, այս աստվածաշնչյան զգուշացումներն իրականում սիրո և պաշտպանության պարգևներ են մեր հոգատար Հորից: Հիսուսի կողմից ասված այս խոսքերը սուրբ երկյուղ կներշնչեն մեր մեջ և մինչև մեր ընթացքի ավարտը կօգնեն չհեռանալ կյանքը Պարգևողից:

Աստվածաշունչը հստակ զգուշացնում է, որ վերջին օրերում քարոզվելու և լայնորեն ընդունվելու է այնպիսի ավետարան, որն առաջարկելու է կեղծ փրկություն՝ առանց Հիսուսի իշխանությանը հնազանդվելու: Պարզ ասած՝ այն առաջարկելու է հարաբերություն Հիսուսի հետ՝ առանց անպայմանական հնազանդության Նրա Խոսքին: Դա սուրբ երկյուղի հակադրությունն է, և դրա արդյունքը *հորինված Հիսուսի* ընդունելն է՝ նույնը, ինչում Պողոսը մեղադրեց Կորնթոսի հավատացյալներից շատերին:

Այն բանից հետո, երբ Պողոսն ընդդիմացավ այդ հույն «հավատացյալներին»՝ *ուրիշ Հիսուսի* հետևելու համար, նա խոսեց նրանց սրտերի վիճակի մասին, որոնք ստեղծել էին այդ երևակայական փրկչին: Նա գրում է. «Ձեզնից շատերը չեն թողել իրենց անցյալի մեղքերը: Դուք չեք ապաշխարել ձեր պղծությունից, սեռական անբարոյությունից և կրքոտ հաճույքներին ձգտելուց» (Բ Կորնթացիների 12.21, NLT): Նրանք դավանում էին Տեր Հիսուսին, բայց ապրում էին հակառակ Նրա Խոսքին:

Այս երևույթը հազվագյուտ էր Առաջին եկեղեցում, բայց լայնորեն

տարածված է ժամանակակից Արևմուտքի եկեղեցում: Այս ուսմունքի արդյունքում «Տերը» փոքրանում է՝ վերածվելով ընդամենը տիտղոսի, ոչ թե այն դիրքի, որը Հիսուսն ունի Իր ժողովրդի կյանքում: Հիսուսը մարգարեանում է.

> «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթեոս 7.21):

Հիսուսը նկատի ունի այն մարդկանց, որոնք դավանում են Իրեն՝ որպես Տեր, ոչ թե նրանց, ովքեր ակնածում են Մուհամեդից, Ջոզեֆ Սմիթից, Բուդդայից, Հարե Կրիշնայից, Կոնֆուցիոսից կամ մեր ժամանակաշրջանի ցանկացած սուտ մարգարեից: Ուշադրություն դարձրեք *«Տեր»* բառի կրկնությանը այս խոսքում: Կրկին, երբ որևէ բառ կամ արտահայտություն երկու անգամ է գրվում Աստվածաշնչում, պատահական չէ: Հեղինակը շեշտադրում է դա: Այնուամենայնիվ, նման դեպքերում փոխանցվում է ոչ միայն շեշտը, այլև հուզական մեծ լարվածությունը: Օրինակ, երբ Դավիթ թագավորին լուր հասավ, որ Հովաբի բանակը սպանել էր իր որդուն, նրա արձագանքը խիստ զգացմունքային էր. «Եվ թագավորը ծածկեց իր երեսը, և մեծ ձայնով աղաղակեց թագավորը. «Որդի՛ս, Աբիսողոմ, Աբիսողոմ, որդի՛ս, որդի՛ս»» (Բ Թագավորաց 19.4): Պարտադիր չէ, որ նա կրկնած լիներ «որդիս» բառը. փոխարենը, վշտի հուզական աղաղակն այնքան մեծ էր, որ հեղինակը կրկնակի գրի առավնրա ասածը:

Նույն կերպով, Տերը փոխանցում է այդ մարդկանց ուժգին հուզական վերաբերմունքն Իր հանդեպ: Նրանք ոչ միայն համաձայնում են այն ուսմունքին, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, այլև զգացմունքորեն և եռանդուն կերպով են վերաբերվում իրենց հավատքին: Խոսքը նրանց մասին է, ովքեր ոգևորված են «քրիստոնյա» լինելու պատճառով. ամենայն հավանականությամբ, նրանք արտահայտում են իրենց զգացմունքները, երբ պատմում են իրենց հավատքից, և նույնիսկ լաց են լինում երկրպագության ժամանակ:

Բացի այն, որ նրանք զգացմունքորեն են վերաբերվում Քրիստոսին, նաև ներգրավված են Նրան ծառայելու մեջ.

> «Ես կարող եմ տեսնել հիմա. Վերջին դատաստանին հազարավորները վեհ կեցվածքով մոտենում են Ինձ և ասում. «Տե՛ր, մենք քարոզել ենք Ուղերձը, մենք հանել ենք դևերին, բոլորը խոսում էին մեր գերհոգևոր նախագծերից»» (Մատթեոս 7.22, MSG):

Ես մեջբերում եմ այս խոսքն Աստվածաշնչի «Ուղերձ» շրջասութ-

յունից, քանի որ այն լավագույնս փոխանցում է, որ նրանք դիտորդներ չէին: Նրանք անմիջականորեն ներգրավված էին իրենց եկեղեցու աշխատանքի մեջ կամ աջակցում էին դրան: Նրանք նույնպես ազդարարում էին իրենց հավատքն Ավետարանի հանդեպ. «Մենք քարոզել ենք Ուղերձը»: Ըստ էության, նրանք ծառայում էին՝ բերելով դրական փոփոխություններ մարդկանց կյանքերում:

Այս շրջասությունն օգտագործում է *«հազարավոր»* բառը, բայց գրեթե բոլոր թարգմանություններում գրված է *«շատերը»:* Հունարենում այն *«պոլյուս»* բառն է, որի սահմանումն է՝ «մեծ՝ թվով, հաշվով, քանակով», և այս բառը հաճախ է օգտագործվում «մեծամասնությունը» իմաստով: Ցանկացած դեպքում, Հիսուսը նկատի չունի մարդկանց փոքրաթիվ խմբի, այլ՝ մեծ բազմության, որը հավատում է Ավետարանի ուսմունքներին: Նրանք Տեր են անվանում Նրան, ուժգին հուզական տրամադրվածություն ունեն Նրա հանդեպ, տարածում են Նրա ուղերձը և եռանդուն կերպով քրիստոնեական ծառայություն են կատարում: Մենք հեշտորեն ճշմարիտ քրիստոնյա կանվանեինք նրանց: Այդ դեպքում, ո՞րն է առանձնացնող գործոնը: Ինչո՞վ են նրանք տարբերվում ճշմարիտ հավատացյալներից: Հիսուսն ասում է մեզ.

> «Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն *գործողներ»* (Մատթեոս 7.23):

Բանալի արտահայտությունն այստեղ «անօրինություն գործողն» է: Կրկին, անօրեն վարքագիծն Աստծո Խոսքին չհետևելն է: Այնպես չէ, որ այս տղամարդիկ և կանայք ժամանակ առ ժամանակ սայթաքում էին, այլ՝ երբ դա ձեռնտու էր նրանց, հետևողականորեն մերժում էին Աստծո Խոսքը, անտեսում էին Աստծո Խոսքը կամ չէին հնազանդվում Աստծո Խոսքին: Նրանք չունեին սուրբ երկյուղ:

Հետաքրքիր է նշել, որ Հիսուսը հայտարարեց. «Երբե՛ք ձեզ չեմ *ճանաչել»:* Ինչպես նշվեց նախորդ գլխում, *«ճանաչել»* բառը հունարեն *«գինո՛սկո»* բառն է, որն ունի նույն իմաստը, ինչ եբրայերեն *«յադա»* բառը՝ մտերմորեն ճանաչել ինչ-որ մեկին: Նրանք երբեք ճշմարիտ մտերմություն չեն ունեցել Աստծո հետ: Թեև Տեր են անվանում Նրան, դա պարզապես տիտղոս է, քանի որ նրանք չէին հնազանդվում Աստծո պատվիրաններին: Հովհաննեսը գրում է.

> «Եվ սրանով գիտենք, որ ճանաչեցինք *[գինո՛սկո]* Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք: Ով որ ասում է, թե՝ ճանաչեցի *[գինո՛սկո]* Նրան և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում» (Ա Հովհաննես 2.3,4):

Այս հատվածը կատարելապես համապատասխանում է այն բանին, թե ինչպես Հիսուսը սկսեց Իր խոսքը. «Դուք կարող եք ճանաչել մարդկանց՝ նրանց գործերով» (Մատթեոս 7.20, NLT): Այս գործերը քրիստոնեական ծառայությունը, Ավետարանի ուղերձը քարոզելը և եկեղեցի հաճախելը չեն, քանի որ այն մարդիկ, որոնք մերժում ստացան, ունեին այս հատկանիշները:

Թույլ տվեք ասել հետևյալը. անկասկած, դուք կգտնեք այս հատկանիշները ճշմարիտ հավատացյալի կյանքում. իրականում, ոչ ոք չի կարող ճշմարիտ հավատացյալ լինել՝ առանց դրանց: Այնուամենայնիվ, այս հատկանիշներն ունենալը չի նշանակում, որ տվյալ մարդը ճշմարտապես Աստծո զավակ է: Որոշիչ գործոնը հետևյալն է. նրանք հնազանդ են Նրա Խոսքին:

Այս հատվածը Հիսուսի հայտնի Լեռան քարոզի եզրափակիչ թեման է: Ամփոփելով Իր հանկարծակիի բերող խոսքերը՝ Նա ավարտում է.

> «Արդ, ով որ Իմ այս խոսքերը լսում է և կատարում, կնմանեցնեմ նրան մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա հաստատված էր:
>
> Եվնա, ով որ Իմ այս խոսքերը լսում է և չի կատարում, նա կնմանվի մի անխելք մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն կործանվեց, և նրա կործանումը մեծ էր» (Մատթեոս 7.24-27):

Եթե ուսումնասիրեք մարդկանց այս երկու խումբը, ամեն ինչ հանգում է մի պարզ տարբերության: Նա պնդում է, որ երկուսն էլ լսում են Իր խոսքերը, բայց առաջին խումբը *կատարում է,* իսկ երկրորդ խումբը *չի կատարում:* Կամ, կարելի է ասել, որ առաջին խումբը *դողում է Աստծո Խոսքից* (վախենում է Աստծուց), իսկ երկրորդ խումբը *չի դողում Աստծո Խոսքից* (չի վախենում Աստծուց):

Հիսուսը պարզորեն ցույց է տալիս, որ այս երկու խմբերն արտաքուստ շատ նման են: Հիմք չունեցող խմբի հավատքը քրիստոնեական վարդապետության հանդեպ, ջերմեռանդորեն Նրան Տեր անվանելը և նրանց գործուն քրիստոնեական ծառայությունը խորհրդանշում են այն, թե ինչպես են նրանք կառուցել իրենց կյանքը՝ իրենց տունը: Հաստատուն հիմք ունեցող խմբին հատուկ են նույն որակները, և դրա հետ մեկտեղ նրանք հնազանդվում են Նրա խոսքերին, ասես թե դա իրենց կամքն է: Երկու տներն էլ պատրաստված են նույն նյութից՝ նույն ուս-

մունքներից: Երկուսն էլ նույն տեսքն ունեն երկրպագության և ծառայության մեջ: Տարբերությունը հիմքն է՝ անտեսանելին: Մարդկանց մի խումբը ծածուկ մտերմություն ունի Աստծո հետ, իսկ մյուսը՝ ոչ:

Աստծո հետ մտերմությունը խոստացված է նրանց, ովքեր վարվում են սուրբ երկյուղով: Հաջորդ մի քանի գլուխներում կդիտարկենք այս վեհ արտոնությունը, որի հրավերն ուղղված է մեզ:

Անձնական կիրառում

Հատված. «Թող Աստված ավելի ու ավելի շնորհք տա ձեզ... Իր աստվածային զորությամբ [շնորհքով] Աստված տվել է մեզ այն, ինչ մեզ պետք է աստվածապաշտ կյանք վարելու համար... Նա տվել է մեզ մեծ և թանկ խոստումներ: Այս խոստումներն են, որ կարողություն են տալիս մեզ բաժնեկցելու Նրա աստվածային բնությունը և փախչելու այս աշխարհի ապականությունից, որն առաջանում է մարդկային ցանկություններից» (Բ Պետրոս 1.2-4, NLT):

Եզրահանգում. Հիսուսի հետ հարաբերության ապացույցն այն է, որ մարդու կյանքում գործում է իր ուժերը գերազանցող զորություն՝ Նրա Խոսքը պահելու համար: Այս զորությունը Նրա շնորհքն է:

Մտորում. Ես փորձում եմ հնազանդվել Հիսուսի խոսքերին իմ ուժերո՞վ, թե՞ ապավինում եմ Նրա շնորհքին, խոստումներին և աստվածային բնությանը: Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ ապավինել Նրա՛ կարողությանը, ոչ թե՝ իմ:

Աղոթք. Հա՛յր, ների՛ր ինձ, որ փորձել եմ իմ ուժերով հնազանդվել Քո Խոսքին: Այս պահից ես հայտարարում եմ, որ Հիսուսն իմ կյանքի լիիրավ Տերն է: Այն, ինչ ասում է Քո Խոսքը, վերջնական հեղինակություն է իմ կյանքում: Ես կկառչեմ միմիայն Քո զորացնող շնորհքից և այն աստվածային բնությունից, որը տալիս ես՝ Քո ճանապարհներում վարվելու համար: Սա այն շավիղն է, որով միասին ենք անցնում՝ մտերմորեն հաղորդակցվելով: Այնքա՛ն շնորհակալ եմ, որ հրավիրում ես ինձ այս վեհ կյանքի մեջ: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես կապրեմ՝ հավատալովնրա կարողությանը: Ես այլևս կառչած չեմ լինի իմ կարողությունից, այլ կհամագործակցեմ Նրա զորության հետ:

Մենք երբեք չենք
լուսավորվում կամ
զարմանում այն բանից, ինչ գա-
լիս է մեր մտքերից: Բայց երբ
Աստված է խոսում,
դրանում միշտ հիացմունքի և
ակնածանքի տարր կա:

– ՋՈՅ ԴՈՈՒՍՈՆ

32| ՏԻՐՈՋ ԳԱՂՏՆԻՔԸ

Նախորդ երկու գլուխները դժվարին, մարտահրավեր նետող և զգաստացնող էին: Սրտաճմլիկ և ցավալի է իմանալը, որ նրանք, որոնք Հիսուսից ակնկալում են «Մտի՛ր Տիրոջ ուրախության մեջ» խոսքերը, փոխարենը լսելու են. «Հեռացի՛ր Ինձնից»: Չկա ավելի մեծ մոլորություն, քան կարծելը, թե դուք հարաբերություն ունեք Աստծո հետ, այնինչ, իրականում այդպես չէ: Այդ մարդիկ հանկարծակի սարսափով գիտակցելու են իրենց անմտությունն այն բանում, որ փորձել են օգտագործել Աստծուն, փոխարենը մոտենային Նրան: Նրանք օգտագործել են Նրա Խոսքը՝ իրենց ծառայեցնելու համար, փոխարենը վերապրեին այն վեհ սերը, որը հայտնվում է Նրա Խոսքին հնազանդվելիս: Հիսուսը մեծ սիրովնախազգուշացնում է այս զարհուրելի իրադարձության մասին, որպեսզի պաշտպանի մեզ գաղջ կամ մոլորված վիճակում հայտնվելուց:

Այժմ, ունենալով պատկերացում մտերմության հակառակ կողմի մասին, եկեք ուրախությամբ անցում կատարենք մեր Արարչին իրապես մոտ լինելու երանությանը: Մենք կսկսենք խոսել Աստծո հետ հարաբերության մի տեսակի մասին, որը լիովին բացահայտելու համար կպահանջվի մի քանի գլուխ:

Որպես սկիզբ, թույլ տվեք մի հարց տալ. հնարավո՞ր է, որ Աստծո թագավորության մեջ գտնվող մարդը չլսի «Հեռացի՛ր Ինձնից» զարհուրելի խոսքերը, սակայն, միևնույն է, բաց թողնի Աստծո հետ մտերիմ լինելու հնարավորությունը: Կարճ պատասխանն է՝ այո՛: Բայց, եկեք գտնենք այս պատասխանն Աստվածաշնչում և սկսենք իմ ամենասիրելի խոսքերից մեկով.

> «Տիրոջ *գաղտնիքը* նրանց հետ է, ովքեր վախենում են Նրանից, և Նա ցույց կտա նրանց Իր ուխտը» (Սաղմոս 25.14, NKJV):

«Գաղտնիք» բառը եբրայերենում *«սոդ»* բառն է, որը նշանակում է «խորհուրդ»: «Հունարենի բառարանում» նույնպես գրված է. «Այս բառի հիմքային իմաստը գաղտնիությունն է»: Այնպես որ, ըստ էության, սաղմոսերգուն նկատի չունի որևէ առանձին գաղտնիք, այլ՝ Աստծո *գաղտնի խորհուրդը,* կամ, մեր քննարկման համար մենք պարզապես կանվանենք սա *գաղտնիքներ* (հոգնակի թվով): Այս խոսքը կարելի է կարդալ հետևյալ կերպով. «Աստված կիսում է Իր գաղտնիքները նրանց հետ, ովքեր վախենում են Նրանից»:

Այժմ հարցրեք ձեզ հետևյալը. ո՞ւմ հետ եք դուք կիսում ձեր գաղտնիքները, պարզապես ծանոթ մարդկա՞նց, թե՞ մտերիմ ընկերների: Համոզված եմ, որ ձեր պատասխանն է՝ մտերիմ ընկերների: Աստված անում է նույնը. Նա կիսում է Իր գաղտնիքները մտերիմ ընկերների հետ, և Նրա մտերիմ ընկերները սուրբ երկյուղին հարող մարդիկ են: Աստվածաշնչի «Անգլերեն Ստանդարտ թարգմանության» մեջ գրված է. «Տիրոջ ընկերությունը նրանց հետ է, ովքեր վախենում են Նրանից» (ESV):

Աստված բոլորի ընկերը չէ: Թույլ տվեք ավելի մասնավորեցնել սա. *Աստված եկեղեցում գտնվող բոլոր մարդկանց ընկերը չէ:* Այս գաղափարն ընդլայնելու համար, սկսենք Հին կտակարանից, որտեղ երկու մարդիկ են կոչվել Աստծո ընկերները՝ Աբրահամը և Մովսեսը: Արդյո՞ք եղել են այլ մարդիկ: Անկասկած՝ Նոյը, Դանիելը, Եսթերը, Հովսեփը, Դավիթը, Հոբը, Ենովքը, Եսային և այլք, որոնք մոտ էին Աստծուն: Այնուամենայնիվ, այս երկու մարդկանց կյանքերը պատկերում են այն ընթացքը, որը տանում է Տիրոջ հետ ընկերական հարաբերության:

Սկսենք Աբրահամից: Ինչո՞ւ է նա կոչվում Աստծո ընկերը: Երբ նա յոթանասունհինգ տարեկան էր, Աստված խոստացավնրա սրտի մեծագույն փափագը՝ որդի: Այնուամենայնիվ, դա անմիջապես տեղի չունեցավ: Նա սպասեց ևս քսանհինգ տարի, մինչև որ նրա կին Սառան հրաշքով ծնեց Իսահակին: Կարո՞ղ եք պատկերացնել խոր գնահատանքն այդքան սպասված խոստման հանդեպ և դրա անսահման քաղցրությունը:

Համոզված եմ, որ հոր և որդու կապն ամեն տարի ավելի ուժգնանում էր: Նրա մեծ հարստությունը ոչինչ էր՝ իր որդու հանդեպ ունեցած բերկրանքի համեմատ: Չկար ոչինչ ավելի թանկ Աբրահամի համար, նույնիսկ սեփական կյանքը:

Բայց մի օր՝ առանց նախապես զգուշացնելու, Աստված ասաց Աբ-

րահամին աղոթքի մեջ. «Ա՛ռ քո սիրած մեկ հատիկ որդուն՝ Իսահակին, և Մորիայի երկիրը գնա և այնտեղ նրան ողջակեզ արա այն սարերից մեկի վրա, որ քեզ կասեմ» (Ծննդոց 22.2):

Սպասեք: Ինչպե՞ս թե սպանել ամենակարևոր մարդուն կամ ամենակարևոր բանը ձեր կյանքում, միայն որովհետև Աստված պատվիրեց դա՝ առանց, նույնիսկ, որևէ պատճառ ներկայացնելու: Նա ոչ մի դեպքում չէր պատկերացնի, որ Աստված նման դժվար բան կխնդրեր իրենից: Նա պահանջեց Աբրահամի կյանքից ավելին. Աստված խնդրեց նրա սիրտը: Դա անիմաստ էր թվում:

Թույլ տվեք ընդմիջարկել մի կարևոր գաղափարով: Մենք գիտենք, որ դա փորձություն էր: Իրականում, Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս սա. «Եվ եղավ, որ այս բաներից հետո Աստված փորձեց Աբրահամին» (խոսք 1): Բայց հենց սրանում է արդեն տեղի ունեցած պատմական իրադարձության մասին կարդալու թերությունը. մենք գիտենք դրա ավարտը: Հավատացյալների մեծ մասը մի քանի անգամ լսել կամ կարդացել է այն: Բայց մենք մոռանում ենք, որ Աբրահամը չգիտեր, որ դա փորձություն էր: Աստված փորձում է մեզ, մենք ոչ մի դեպքում չենք իմանա դա, մինչև այդ փորձության ավարտը: Գուցե հնարավոր է խորամանկությամբ հանձնել դպրոցական քննությունները, բայց ոչ ոք չի կարող խաբել այն քննություններին, որոնք Աստված է անցկացնում: Եթե չենք կատարել տնային աշխատանքը, որը Նրա Խոսքում կենալն է՝ մեր սրտերը սրբացնելու համար, մեզ համար շատ դժվար կլինի դրանք հանձնելը, որքան էլ ուշիմ լինենք:

Եթե Աբրահամի ժառանգներն իմանային, որ Աստված փորձում էր իրենց անապատում, նրանք այլ կերպ կարձագանքեին: Աբրահամի ներսում կար այլ բան, ինչը չունեին նրա ժառանգները. սուրբ երկյուղը:

Ինձ դուր է գալիս Աբրահամի արձագանքն այս անչափ ծանր կարգադրությանը. «Եվ Աբրահամն առավոտ կանուխ վեր կացավ» (Ծննդոց 22.3): Նա անմիջապես գործի՛ անցավ: Նա չմտորեց դրա շուրջ մի քանի օր կամ մի քանի շաբաթ: Նա չկանչեց իր ընկերներին՝ նրանց կարծիքը հարցնելու համար: Նա չանտեսեց Աստծո պատվերը և չհակառակվեց դրան: Նա, Իսահակը և երկու ծառան վեր կացան հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, պատրաստվեցին և ճանապարհ ընկան:

Գուցե նախորդ գիշերն Աստծո ձայնը լսելուց անմիջապես հետո քայլ անելը մի փոքր հեշտ էր, բայց ի՞նչ էր կատարվում երկուսուկես օր անց, երբ Աբրահամն այլևս չէր լսել երկնքից, և այժմ նայում էր այն սարին, որի վրա պետք է զոհաբերեր իր համար ամենաթանկ անձնավորությանը, միայն որովհետև Աստված էր պատվիրել՝ առանց որևէ պատճառ ներկայացնելու:

Աբրահամը շարունակեց գնալ դեպի սարի ստորոտը և այնտեղ խնդրեց իր ծառաներին, որ սպասեն: Նա սարը բարձրացավ Իսահակի հետ, զոհասեղան կառուցեց՝ ամբողջ ընթացքում թաքցնելով իր խռովված հույզերը և արցունքները: Պահանջվեց նրա կամքի ուժի և ինքնատիրապետման յուրաքանչյուր մասնիկը, որպեսզի կատարեր այն, ինչ անհրաժեշտ էր՝ այդ զոհը մատուցելու համար: Ի վերջո, եկավ ճգնաժամային պահը. այն հույսը, որ Աստված կարող էր մտափոխվել, կորսված էր: Այնպես որ, մեծ ցավովնա կապկպեց Իսահակին և բարձրացրեց դանակը՝ խրելու այն որդու սիրտը, միայն որովհետև Աստված էր խնդրել՝ առանց որևէ պատճառ ներկայացնելու:

Հանկարծ Աստծո մի հրեշտակ հայտնվեց և բացականչեց. «Ձեռքդ տղային մի՛ դիպցրու և նրան մի բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես, և քո մեկ հատիկ որդուն Ինձնից չխնայեցիր» (Ծննդոց 22.12):

Ինչպե՞ս այդ հրեշտակն իմացավ, որ Աբրահամը վախենում էր Աստծուց: Քանի որ նա հնազանդվեց *անմիջապես,* երբ դա *անիմաստ էր թվում*, երբ նա *որևէ շահ չէր տեսնում,* երբ դա *ցավոտ էր,* և նա արեց դա *մինչև վերջ:*

Աբրահամը ցած դրեց դանակը, արձակեց Իսահակի կապերը, բարձրացրեց աչքերը և տեսավ մի խոյ, որը բռնված էր մացառների մեջ: Նա ասաց . «Եհովա Իրե՛», ինչը նշանակում է՝ «Տերը կտեսնի» կամ «Տերը կմատակարարի» (Ծննդոց 22.14): Ի՞նչ տեղի ունեցավ: Այդ պահին Աստված հայտնեց Իր բնավորության կողմերից մեկն Աբրահամին, որը մինչև այդ ոչ ոք չգիտեր: Ինչո՞ւ: Քանի որ նա Աստծո ընկերն է:

Թույլ տվեք պարզաբանել: Ովքեր ընթերցում են այս գիրքը, ճանաչում են ինձ որպես հեղինակ Ջոն Բիվեր: Ոմանք լսել են ինձ համաժողովներին կամ եկեղեցիներում քարոզելիս, ճանաչում են ինձ որպես քարոզիչ Ջոն Բիվեր: Այնուամենայնիվ, կա մի կին, նրա անունը Լիզա է, որը ճանաչում է ինձ որպես ամուսին Ջոն Բիվեր, հայր Ջոն Բիվեր, պապիկ Ջոն Բիվեր, լավագույն ընկեր Ջոն Բիվեր, սիրեկան Ջոն Բիվեր, և ես կարող եմ շարունակել: Քչերը գիտեն իմ անհատականության այս կողմերը. միայն նրանք, ովքեր ամենից մտերիմ են ինձ: Իսկ վերջինը հայտնի է միայն Լիզային:

Այդ օրը Աբրահամը դարձավ ավելի մտերիմ ընկեր Աստծո համար: Հաջորդ գլխում կխոսենք այս երկու ընկերների միջև բացառիկ հարաբերության մասին, նաև՝ թե ինչպես ինքներս նման հարաբերություն ունենանք:

Անձնական կիրառում

Հատված. «Տիրոջ [քաղցր, բավականություն պատճառող ընկերակցության] գաղտնիքն ունեն նրանք, ովքեր վախենում են [ակնածում և երկրպագում են] Նրանից, և Նա ցույց կտա նրանց Իր ուխտը և կհայտնի դրա [խոր, ներքին] նշանակությունը» (Սաղմոս 25.14, AMPC):

Եզրահանգում. Աստված կիսում է Իր գաղտնիքները մտերիմ ընկերների հետ, և Նրա մտերիմ ընկերները սուրբ երկյուղին հարող մարդիկ են:

Մտորում. Ի՞նչ է ընկերը: Ինչպե՞ս են ընկերները վայելում կյանքը: Ի՞նչն է ընկերությունն ավելի խոր դարձնում: Ես կցանկանայի՞ լինել Աստծո ընկերը: Իմ կարծիքով, ի՞նչ է Նա փնտրում ընկերոջ մեջ: Արդյո՞ք ես լավ ընկեր եմ եղել Նրա համար, եթե ոչ՝ ի՞նչ պետք է փոխվի: Ինչպիսի՞ն եմ ցանկանում լինել՝ որպես Նրա ընկեր:

Աղոթք. Թանկագին Տե՛ր, ես ցանկանում եմ լինել Քո մտերիմ ընկերը: Գիտեմ, որ Դու նույնպես ցանկանում ես դա: Մտորելով այն մասին, թե ինչ է մտերիմ ընկերը, հասկանում եմ, որ հավատարիմ ընկեր չեմ եղել Քեզ համար: Խնդրում եմ, ների՛ր ինձ, որ Քո ցանկությունները վեր չեմ դասել ամեն ինչից և չեմ պաշտպանել մեր հարաբերությունն այն բանում, թե ինչպես եմ ապրում և ինչպես եմ արձագանքում Քեզ: Ես խնդրում եմ շնորհք, որպեսզի Քո ընկերը լինեմ ամբողջ հավիտենության ընթացքում: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Իմ ձգտումն է՝ լինել Աստծո ընկերը: Ես որոշում եմ կայացնում, որ դա լինելու է իմ մեծագույն առաջնահերթությունը:

Աստծո երկյուղը լուսավորում է անձը, հեռացնում է չարիքը, թուլացնում է կրքերը, վանում է խավարն անձից և մաքուր է դարձնում այն: Աստծո երկյուղն իմաստության գագաթնակետն է: Որտեղ այն չկա, դուք ոչ մի լավ բան չեք գտնի: Այն տեղը, որտեղ Աստծո երկյուղը չկա, բաց է սատանայական անկումների համար:

– ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

33| ՆԵՐՔԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Մենք քննարկեցինք, թե ինչպես ձևավորվեց ընկերությունն Աստծո և Աբրահամի միջև: Սա օրինակ է այն մասին, թե ինչպես կարող ենք մտնել Աստծո հետ նման մտերիմ հարաբերության մեջ: Բայց մինչև դրան անդրադառնալը, շարունակենք խոսել Աբրահամի մասին:

> «Չե՞ք հիշում, որ մեր նախահայր Աբրահամն արդարացավ Աստծո առջև *իր գործերով,* երբ զոհասեղանին մատուցեց իր որդի Իսահակին... Նա նույնիսկ *կոչվեց Աստծո ընկերը»* (Հակոբոս 2.21,23, NLT):

Հակոբոս առաքյալը խոսում է նրանց ընկերության մասին, և զուգադիպություն չէ, որ թե՛ Հակոբոսի, թե՛ հրեշտակի խոսքերը համընկնում են: Այս մտերմության խթանն Աբրահամի սուրբ երկյուղն էր, որն ակնհայտ դարձավնրա անհապաղ և ամբողջական հնազանդությամբ (գործերով): Նույնիսկ երբ Աստծո տված կարգադրությունն անիմաստ էր թվում, դրանում չկար որևէ ակնհայտ շահ, և դա կատարելը ցավոտ էր, նա դողաց Աստծո Խոսքից: Աստվածային երկյուղը դրդում է մեզ և՛ *կամենալ,* և՛ *կատարել* այն, ինչ Աստված խնդրում է մեզնից: Այն դուռ է բացում Նրա հետ մտերմության համար:

Մի անգամ Աստված հարցրեց այն երկու հրեշտակներին, որոնք ուղեկցում էին Իրեն Մամբրեի կաղնիների պուրակում Աբրահամին այցելելու ժամանակ. «Մի՞թե Աբրահամից ծածկող եմ այն, ինչ անելու եմ» (Ծննդոց 18.17):

Դրանից հետո Տերը դիմեց Աբրահամին՝ Իր մտադրությունները

քննարկելու համար, իսկ երկու հրեշտակները շարունակեցին իրենց ճանապարհը՝ գնալով Սոդոմ և Գոմոր քաղաքները: Ես շրջասության կենթարկեմ այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո՝ այս պատմությունն ավելի ընթեռնելի դարձնելու համար, բայց, ըստ էության, Տերն ասաց.

- Աբրահա՛մ, ես պայթեցնելու եմ այս երկու քաղաքները, քանի որ դրանց մեղքը բացահայտ և վրդովեցուցիչ է, ի՞նչ ես կարծում:

Պատկերացնո՞ւմ եք, որ նման բան լսեիք Արարչից: Ցնցված՝ Աբրահամը պատասխանում է.

- Սոդո՞մը:

Տերը պատասխանում է.

- Այո՛, այո՛, նաև Գոմորը: Ի՞նչ ես կարծում:

Աբրահամը խուճապահար մտածում է. *«Մտածի՛ր, Աբրահա՛մ, մտածի՛ր: Իմ զարմիկ Ղովտն այդտեղ է ապրում. այնպես որ, ես պետք է բարեխոսեմ նրա համար, ինչպես և մյուս անմեղ մարդկանց համար»:* Աբրահամի գլխում միտք է ծագում.

> «Եվ Աբրահամը մոտեցավ և ասաց. «Մի՞թե ամբարշտի հետ արդարին էլ կկորցնես: Գուցե այն քաղաքի մեջ հիսուն արդար կա, մի՞թե նրանց կկորցնես և չես խնայի այն տեղը՝ այն հիսուն արդարի համար, որ նրանում են. քա՛վ լիցի Քեզ այսպիսի բան անելը, որ արդարին ամբարշտի հետ մեռցնես, և արդարն ամբարշտի պես լինի: Քա՛վ լիցի Քեզ: Մի՞թե ամբողջ երկրի Դատավորն արդարություն չի անի»» (Ծննդոց 18.23-25):

Պատկերացնո՞ւմ եք Աստծո ուրախությունը և բարեհաճությունը՝ Իր հետ ուխտ ունեցող մարդու արձագանքը լսելիս: Ամենայն հավանականությամբ, Նա պատասխանեց.

- Գերազանց փաստարկ է: Լավ, Ես չեմ կործանի այդ երկու քաղաքները, եթե դրանցում հիսուն արդար լինի: Այնքա՛ն ուրախ եմ, որ խոսեցի Իմ ընկեր Աբրահամի հետ:

Բայց դա չի գոհացնում Աբրահամին. իսկ եթե հիսուն արդար չլինի՞: Այնպես որ, նա կրկնում է նույնը, սակայն պակասեցնում է այդ թիվը՝ քառասունհինգի հասցնելով:

Տերը պատասխանում է.

- Եվս մեկ լավ փաստարկ: Լա՛վ, Ես չեմ կործանի այդ քաղաքները, եթե դրանցում քառասունհինգ արդար լինի: Ուրախ եմ, որ խոսեցի այս մասին Իմ ընկեր Աբրահամի հետ:

Աբրահամը կանգ չի առնում. նա շարունակում է պնդել իրենը՝ անցնելով քառասունհինգից քառասունի, հետո՝ երեսունի, հետո՝ քսանի, և, ի վերջո, տասը արդարի: Նա մտածում է. «Գոնե տասը

արդար կլինի: Իմ զարմիկ Ղովտը նրանցից մեկն է, և անհրաժեշտ է ևս ինը մարդ»:

Միայն ընկերը կարող է այդ կերպով խոսել թագավորի հետ, որը դատաստան անելու իշխանություն ունի: Նման խնդրանքը՝ արված ծառայի կամ ենթակայի կողմից, անհարգալից կհամարվեր: Տերը համաձայնեց յուրաքանչյուր խնդրանքին, ինչից հետո գրված է. «Երբ Տերն ավարտեց Իր զրույցն Աբրահամի հետ, գնաց, իսկ Աբրահամը վերադարձավ իր վրանը» (Ծննդոց 18.33, NLT):

Հիշեք՝ Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է, որ մենք սիրում ենք այն, ինչ Նա է սիրում, և ատում ենք այն, ինչ Նա է ատում: Մի անգամ Աստված խոսեց ինձ հետ այն բանից հետո, երբ ես կապ հաստատեցի մի մարդու հետ, ով խստորեն էր վարվել ինձ հետ, և սիրով լի, բժշկող խոսքեր ասացի նրան: Աստված ասաց. «Որդի՛ս, երբ հոգում ես այն մասին, ինչի մասին Ես եմ հոգում, այսինքն՝ մարդկանց, Ես կքննարկեմ Իմ ծրագրերը քեզ հետ: Սուրբ երկյուղն իրականում կարողություն է տալիս ճշմարտապես և խորապես սիրելու ոչ միայն Աստծուն, այլև՝ մարդկանց:

Աստվածաշունչը պնդում է, որ մարդիկ Սոդոմում և Գոմորում «ուտում էին, խմում էին, առնում էին, ծախում էին, տնկում էին, շինում էին» (Ղուկաս 17.28): Եկեք ձևակերպենք սա մեզ առավել ծանոթ լեզվով. «Կյանքը լավ է, տնտեսությունը բարգավաճում է, և եթե Աստված կա, Նա դեմ չի լինի մեր կյանքի ոճին»: Այդ քաղաքների բացարձակ ոչնչացմանը քսանչորս ժամ էլ չէր մնացել, բայց բնակիչները նույնիսկ գաղափար չունեին այդ մասին: Բայց սա չէ ամենից տագնապալի փաստը:

Զարհուրելի իրողությունը հետևյալն է. Ղովտը, որին Աստվածաշունչն «արդար» է անվանում (տե՛ս Բ Պետր. 2.7), նույնքան անտեղյակ էր այն բանից, ինչ կատարվելու էր, որքան բոլոր անաստված մարդիկ: Անհրաժեշտ էր, որ Աստծո ողորմությամբ ուղարկված երկու հրեշտակ տանեին այդտեղից նրան և նրա ընտանիքին, և նույնիսկ դա տեղի ունեցավ Աբրահամի աղոթքի շնորհիվ (տե՛ս Ծնն. 19.29):

Այս պատմությունը մեզ ավելի համապատասխանեցնելու համար դիտարկենք այն, ասես տեղի է ունեցել մեր օրերում: Պատկերացրեք երկու արդար մարդու. երկուսն էլ փրկված, վերստին ծնված քրիստոնյա տղամարդիկ են: Այդ *արդար* մարդկանցից մեկը գիտի, թե ինչ է Աստված անելու, մինչև որ Նա կանի, և օգնում է Աստծուն որոշել, թե ինչպես է Նա անելու: Մյուս արդար մարդը նույնիսկ գաղափար չունի վերահաս դատաստանի մասին, ինչպես և անօրեն մարդիկ: Ինչո՞ւ: Առաջին արդարը վախենում է Աստծուց. այդ իսկ պատճառով, նա Աստծո ընկերն է, ինչի շնորհիվ գիտի Աստծո գաղտնիքները: Երկրորդ արդարը չի վախենում Աստծուց. այնպես որ, նա Աստծո ընկերը

չէ, ինչի պատճառովնա չգիտի Աստծո գաղտնիքները:

Ղովտն արդար էր կոչվում, բայց աշխարհիկ էր: Նա խորհրդանշում է այնպիսի հավատացյալի, որը, ծայրահեղ հանգամանքների դեպքում, առաջին հերթին ձգտում է ծառայել իր շահերին՝ նման Կորնթոսի եկեղեցուն և շատերին մեր Արևմուտքի եկեղեցում: Այս «արդար» մարդկանց խումբն ունի այնպիսի շփում Աստծո հետ, որը չի տարբերվում Միացյալ Նահանգների նախագահի հետ իմ շփումից: Գուցե ես օգուտ ստանամ նախագահի որոշումներից և կառավարումից, բայց ես չգիտեմ նրա «ներքին անցուդարձը»՝ նրա ծրագրերը, անձնական զգացմունքները, կամ նրա որոշումները՝ նախքան դրանք կայացնելը:

Ղովտի բնավորությունն ակնհայտ է դառնում այն բանով, թե որտեղ նա որոշեց բնակվել, ինչ տեսակի կին ընտրեց, և ինչպիսին դարձան նրա արյունապղծությունից ծնված զավակները՝ ամմոնացիները և մովաբացիները: Ի սկզբանե Ղովտն ընտրեց այն, ինչը լավագույնն էր թվում: Առանձնանալիս Աբրահամը թույլ տվեց, որ առաջինը Ղովտն ընտրեր, թե որ երկրում բնակվեր՝ համաձայնելով գնալ հակառակ ուղղությամբ: Աստվածաշնչում գրված է. «Ղովտը երկարատև հայացք գցեց Հորդանանի հարթավայրի բերրի հովիտներին» (Ծննդոց 13.10, NLT): Ի՞նչն էր այդ երկարատև հայացքի պատճառը: Նա գիտեր այդ հովիտներում գտնվող քաղաքների անօրինության մասին: Ամենայն հավանականությամբ, նա փորձում էր գլուխ հանել, թե ինչպես կարող էր վայելել այս աշխարհի համակարգի առավելությունները՝ առանց դրա ծուղակն ընկնելու: Նա մի ծրագիր մշակեց. որոշեց բնակվել հովիտներում՝ ապահով հեռավորության վրա անօրինության կենտրոնից (տե՛ս Ծնն. 13.12), բայց նրա փոխզիջումային գաղափարը չգործեց: Ավելի ուշ նա և ընտանիքն արդեն բնակվում էին քաղաքի պարիսպների ներսում. ի վերջո, այդ ամենը ներքաշեց նրան:

Երբ չունենք սուրբ երկյուղ, մենք ի վերջո ձգտելու ենք հնարավորինս մոտենալ այս աշխարհին, բայց այնպես, որ գլխիվայր չընկնենք դրա մեջ: Այնուամենայնիվ, եթե մեր շարժառիթն այսպիսին է, միայն ժամանակի հարց է, մինչև որ այս աշխարհը կներքաշի մեզ: Մենք պետք է հիշենք, որ կանչված ենք այս աշխարհի մեջ՝ կորսվածներին փրկելու, ոչ թե նրանց պես դառնալու համար:

Ղովտի կինը ծառայում է որպես զգուշացում յուրաքանչյուրիս համար: Այդ գիշեր դատաստանի օրը գալու էր Ղովտի վրա՝ գողի պես, եթե չլիներ Աբրահամի բարեխոսությունը: Նրա աշխարհիկության հետևանքները զարհուրելի էին: Ինչպես նշեցինք, Ղովտի զավակներն անաստված մարդիկ էին: Նրա կինն այնքան էր կապված

Սոդոմին, որ անհնազանդ գտնվեց ետ չնայելու հրեշտակների ցուցմանը, ինչի պատճառով դատաստանի ենթարկվեց. նա անմիջապես աղի սյան վերածվեց: Հիսուսը սիրով զգուշացնում է մեզ. «Հիշեք, թե ինչ կատարվեց Ղովտի կնոջ հետ» (Ղուկաս 17.32, NLT):

Մենք իմաստությամբ կվարվենք, եթե հարցնենք. արդյո՞ք ընկերության այս պայմանը վերաբերում է մեզ՝ Աստծո զավակներին: Շուտով կխոսենք այս մասին, բայց, նախ, անդրադառնանք մյուս անձնավորությանը Հին կտակարանում, ով Աստծո ընկեր է կոչվում:

Անձնական կիրառում

Հատված. «Մոտեցե՛ք Աստծուն, և Աստված կմոտենա ձեզ: Լվացե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ. մաքրե՛ք ձեր սրտերը, որովհետև ձեր հավատարմությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև» (Հակոբոս 4.8, NLT):

Եզրահանգում. Աստված կիսում է Իր ծրագրերը նրանց հետ, ովքեր վախենում են Իրենից: Նա թաքցնում է Իր ծրագրերը նրանցից, որոնց հավատարմությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև:

Մտորում. Հիսուսն ասում է. «Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին, գա, ... գալու բաները կպատմի ձեզ» (Հովհաննես 16.13): Ի՞նչ կերպով է այս խոսքը վերաբերում Աստծո և Աբրահամի շփմանը: Արդյո՞ք ես ցանկանում եմ ունենալ այսպիսի հարաբերություն Աստծո հետ, որ Նա կիսի ինձ հետ Իր ծրագրերը:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, ես ցանկանում եմ լսել Քո ծածուկ խորհուրդը: Ես գիտակցում եմ, որ սիրախաղ եմ արել այս աշխարհի հետ, ինչպես և Ղովտը: Ըստ էության, ես հեռացրել եմ ինձ Քո ներքին խորհրդից: Ես ապաշխարում եմ: Խնդրում եմ, որ լիովին մաքրես ինձ՝ իմ Տեր Հիսուսի արյամբ: Խնդրո՛ւմ եմ, ընդունի՛ր Ինձ՝ ինչպես մեկին, ում հետ կիսում ես Քո խորհուրդները: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես ընտրում եմ Աստծո՛ւն, ոչ թե այս աշխարհը:

Միայն երբ մեզ համակի
երկյուղի և ակնածանքի
անհաղթահարելի զգացումը
Աստծո ներկայության մեջ, մենք
կսկսենք երկրպագել Նրան
հոգով և ճշմարտությամբ:

– ԷԼԻՍԹԵՐ ԲԵԳ

34| ԵՐԵՍ ԱՌ ԵՐԵՍ

Այժմ դիտարկենք մյուս անձնավորությանը Հին կտակարանում, որը կոչվեց Աստծո ընկերը:

> «Եվ Տերը խոսում էր Մովսեսի հետ *երես առ երես,* ինչպես որ մի մարդ խոսում է իր *ընկերոջ* հետ» (Ելից 33.11, NLT):

Գրեթե անըմբռնելի է, որ Աստվածաշունչն օգտագործում է «երես առ երես» արտահայտությունը՝ նկարագրելով Աստծո և Մովսեսի ընկերակցությունը: Մտապահեք, որ խոսքն Ամենակարող Աստծո մասին է, ոչ թե ձեր հարևաններից մեկի, և նույնիսկ որևէ հայտնի անձնավորության: Դուք հասկանո՞ւմ եք այս խոսքերի վեհությունը: Մտերմություն նշանակող այս բառը չի օգտագործվում միայն մեկ անգամ. մենք տեսնում ենք այն երկրորդ անգամ, երբ Տերը բարկացավ Ահարոնի և Մարիամի վրա՝ Մովսեսին քննադատելու համար: Նա խստորեն հայտարարեց.

> «Իմ ամբողջ տնից նա է, որին Ես *վստահում եմ:* Ես խոսում եմ նրա հետ *երես առ երես*՝ պարզորեն, և ոչ թե հանելուկներով: Նա տեսնում է Տիրոջը՝ ինչպես որ Նա է» (Թվոց 12.7,8, NLT):

«Ես վստահում եմ քեզ» խոսքերն Աստծուց լսելը մեծագույն գովեստն է, որ մարդ-արարածը կարող է ստանալ: Այս պնդումն օգնում է ավելի լավ հասկանալ ընկերությունն Աստծո հետ. այն հիմնված է վստահության վրա: Ի՞նչն է կառուցում Աստծո վստահությունը մեր հանդեպ.

> Անպայմանական հնազանդությունը՝ Նրա խնդրանքները մշտապես կատարելը: Բացարձակ արժանահավատությունը՝ մշտապես ձեր խոսքը պահելը: Անսասան առաջնահերթությունը՝ մշտապես Նրա ցանկություններն առաջին

> տեղը դասելը: Նրա սիրտը ճանաչելը՝ որոշումներ կայացնելիս մշտապես Աստծո կամքն ընտրելը:

Այս չորսում հետևողական լինելն անչափ կարևոր է: Եթե դրանցից մեկը խախտվի, արագ և անկեղծ ապաշխարությունը կօգնի կրկին շահել Նրա վստահությունը: Սուրբ երկյուղը դրդում է մեզ հուսալի լինել այս չորս կետերում, իսկ Մովսեսի կյանքում այն բարձր մակարդակի վրա էր: Այս գլխում կկենտրոնանանք երրորդ և չորրորդ կետերի վրա, որոնք են Աստծո սրտում եղածը մշտապես ճանաչելը և ընտրելը:

Մտածեք Մովսեսի կյանքի մասին. կյանքի առաջին քառասուն տարում նա վայելում էր մեծ հարստություն, լավագույն կերակուրները, նորաձև հագուստ, լավագույն նյութական ունեցվածքը և ցանկացած հաճույք: Նա ապրում էր աննկարագրելի ապարանքում. ամբողջ աշխարհում չկար ավելի հարուստ մարդ, քան նրա պապն էր՝ փարավոնը: Այնուամենայնիվ, գրված է.

> «Նա *ընտրեց*... չարչարվել հանուն Քրիստոսի՝ Եգիպտոսի գանձերին տիրանալու փոխարեն, որովհետև նա ակնկալում էր *իր մեծ վարձատրությունը*» (Եբրայեցիների 11.25,26, NLT):

Մովսեսը *որոշեց* հեռանալ այդ ամենից: Նա կարող էր փորձել ծառայել Աստծուն պալատում, բայց փնտրում էր այնպիսի վարձատրություն, որը չէր ստանա՝ մնալով Եգիպտոսում: Մի՞թե դա Խոստման երկիրն էր: Հազիվ թե այդպես լիներ, քանի որ մի՞թե կաթ ու մեղր բխեցնող երկիրը կարող էր առաջարկել այնպիսի բան, ինչ նա արդեն իսկ չուներ:

Բացահայտելու համար, թե ինչ էր նա փնտրում ամենից առավել, դիտարկենք նրա կյանքը՝ թագավորական ապարանքից հետո: Մի՞թե այդ ամենը թողնելու նրա որոշումն իմաստուն էր թվում: Արդյո՞ք նրա կյանքի պայմանները բարելավվեցին այն բանից հետո, երբ նա դադարեց Եգիպտոսի արքայազն լինելուց: Նա թողեց իշխանությունը ուրիշներին և քառասուն տարի անապատում ոչխարներ արածեցրեց: Քառասուն տարին քիչ ժամանակ չէ: Հաջորդը՝ նա Աստծո ժողովրդին փարավոնից ազատելու սաստիկ լարված և տևական ընթացք անցավ: Ասես թե այդ ամենը բավական չէր, նա ապրեց վրանում՝ անջրդի անապատում, որտեղ բազմաթիվ դժվարություններ կային: Այն ժողովուրդը, որին նա առաջնորդում էր, տրտնջացող էր, ընդդիմացող էր և բոլորովին գոհ չէր նրա առաջնորդությունից:

Հենց այս իրավիճակում էր, որ Աստված մի առաջարկ արեց Մովսեսին, որը կհեռացներ նրա կյանքի լարվածության և խառնաշփոթի մեծ մասը: Նա հանձնարարեց Մովսեսին հավաքել ամբողջ ժողովրդին և Խոստման երկիր տանել: Նա կարգեց մի ընտիր հրեշտակի, որը կա-

ռաջնորդեր նրանց և կքշեր բոլոր թշնամի ազգերին: Տերը հիշեցրեց Մովսեսին, որ այն առատ, պտղաբեր երկիր էր, սակայն վերջում հայտարարեց. «Բայց Ես Ինքս ձեզ հետ չեմ գնա» (Ելից 33.3, GNT):

Կանգ առեք և մտածեք, թե ինչպիսին էր Մովսեսի և ժողովրդի կյանքն ամեն օր: Չկար բազմազանություն. գեղեցիկ հովիտներ, գետեր, անտառներ, բերրի հող, պարտեզներ, այգիներ և արոտավայրեր: Արդեն բավականին ժամանակ էր՝ ոչ ոք տաք լոգանք չէր ընդունել, հարմարավետ անկողնում չէր քնել, թարմ հագուստ չէր հագել և հաճելի գնումներ չէր կատարել: Նրանց ճաշացանկը խիստ ձանձրալի էր. չկային թարմ մրգեր և բանջարեղեն, ձուկ և միս, ոչ էլ աղանդեր. միայն հաց, որն ամեն առավոտ հայտնվում էր գետնին՝ առանց գետնանուշի կարագի, մուրաբայի կամ երշիկեղենի. ուրիշ ոչինչ:

Ստրկությունը Եգիպտոսում սարսափելի էր, բայց անջրդի անապատում դեգերելը ոչնչով լավ չէր. երկու դեպքում էլ պայմանները սաստիկ ծանր էին, թեկուզ՝ տարբեր կերպերով: Այնուամենայնիվ, անապատում Իսրայելցիները հույս ունեին, որ կստանային իրենց երկիրը՝ առատ, պտղաբեր և գեղեցիկ երկիր: Նրանք սպասում էին դրան սերունդներ շարունակ:

Պատկերացնո՞ւմ եք, որ լսեիք այս հրաշալի խոսքերն Աստծուց: Անկասկած, Մովսեսը կընդուներ այդ առաջարկը, կշտապեր իջնել սարից և ազդարարել այդ ուշագրավ լուրը ամբողջ ազգին: Ժողովուրդը կցնծար, նրանք ևս մեկ անգամ կգովեին նրան՝ որպես մեծ առաջնորդի, և բոլորն ուրախությամբ կսկսեին երկար սպասված ճանապարհորդությունը դեպի բաղձալի Խոստման երկիր: Այնուամենայնիվ, լսեք Մովսեսի պատասխանն Աստծո առաջարկին:

> «Եթե Դու Ինքդ չգնաս մեզ հետ, մի՛ պարտադրիր մեզ հեռանալ այս վայրից» (Ելից 33.15, NLT):

Որպես հիշեցում, ինչպիսի՞ «վայրի» մասին էր խոսքը: Դա դժվարությունների, ճնշումների և նեղության վայր էր: Մովսեսի պատասխանը շփոթմունք և նույնիսկ տարակուսանք է առաջացնում նրանց մոտ, ովքեր լուսավորված չեն: Ըստ էության, նա հայտարարեց. «Եթե ստիպված լինեմ ընտրել Քո *ներկայության* և Քո *օրհնությունների* միջև, ես կընտրեմ Քո ներկայությունը»: Ինչո՞ւ: Դուք կարող եք տեղեկություն ստանալ ինչ-որ մեկի մասին, նույնիսկ եթե նա բացակա է, սակայն չեք կարողանա մտերմանալ նրա հետ: Սա էր Մովսեսի ցանկալի վարձատրությունը:

Գուցե հարցնեք՝ ինչո՞ւ պետք է Աստծուն հաճելի լիներ, որ Մովսեսը մերժեց այդ առաջարկը: Մովսեսը ճանաչում էր Աստծո սիրտը: Մտածեք հետևյալը. երբևէ պատահե՞լ է, որ անկեղծորեն առաջարկել եք ձեր սիրելիին ինչ-որ հաճելի բան, բայց նա զարմացրել է ձեզ՝ ասելով. «Ո՛չ, ես ուզում եմ քեզ հետ լինել, ոչ թե վայելել դա առանց քեզ»:

Նման պատասխանը հազվագյուտ է, անչափ հուզիչ է և հրաշալի:

Մովսեսը երկյուղ ուներ Աստծուց, և այն, ինչ կարևոր էր Աստծո համար, մշտապես նրա առաջնահերթությունն էր. նա հասկանում էր Աստծո սիրտը, այդ իսկ պատճառով, վայելում էր Նրա վստահությունը: Այն ժողովուրդը, որին նա առաջնորդում էր, բոլորովին այլ սիրտ ուներ: Գրված է.

> «Աստված հայտնեց Իր *բնավորությունը* Մովսեսին, և Իր *գործերը*՝ Իսրայելի ժողովրդին» (Սաղմոս 103.7, NLT):

Ինչպես և Աբրահամի պարագայում, Աստված հայտնեց Իր *բնավորությունը* Մովսեսին: Աստվածաշնչի անգլերեն «Բարի լուր» թարգմանության մեջ գրված է, որ Աստված հայտնեց Իր *ծրագրերը* Մովսեսին: Այլ կերպ ասած, Նրա մասնավոր գաղտնիքները հայտնվեցին Մովսեսին, բայց ոչ՝ Իսրայելին: Իսրայելը միայն ճանաչում էր Աստծուն այն բանով, թե ինչպես էր Նա պատասխանում իրենց աղոթքներին, այսինքն՝ Նրա *գործերով:*

Որքա՜ն հավատացյալներ են այսօր ճանաչում Աստծուն միայն պատասխանված աղոթքներով: Նրանց հարաբերությունն Աստծո հետ ավելի շուտ գործնական է, քան մտերիմ: Նրանք գիտեն Նրա խոսքերը, բայց ոչ՝ Նրա սիրտը: Հաճախ Աստվածաշունչը նրանց համար կանոնների և պատմական իրադարձությունների հավաքածու է, կամ այն օգտագործվում է ընդամենը որպես ոգեշնչման աղբյուր: Ավելին՝ մարդիկ խեղաթյուրում են Աստվածաշունչը, որպեսզի արդարացնեն իրենց անօրեն վարքը, փոխարենը ստանան կյանք վերափոխող ճշմարտություններ, որոնք հայտնում են Նրա սիրտը:

Եվ Մովսեսը, և՛ Իսրայելն արդար էին՝ նույն կերպով, ինչպես Աբրահամը և Ղովտը: Այնուամենայնիվ, միայն Աստծուց երկյուղ ունեցողներն են իրավասու ճանաչելու Նրա սիրտը՝ Նրա բնավորությունը, գաղտնիքները և ծրագրերը: Ինչո՞ւ էր Աստված վստահում Մովսեսին, բայց ոչ՝ Իր ժողովրդին: Քանի որ Աստված գիտեր, որ Մովսեսը մշտապես ընտրելու էր այն, ինչ Իր սրտում էր, ոչ թե այն, ինչ լավագույնն էր թվում իրեն: Սա է սուրբ երկյուղը:

Երբ Իսրայելը կառուցեց ոսկե հորթը Ելից գրքում, Աստված զայրույթով ազդարարեց.

> «Եվ հիմա թո՛ղ տուր Ինձ, որ Իմ բարկությունը նրանց վրա բորբոքվի, և փչացնեմ նրանց, և քեզ [Մովսես] մեծ ազգ շինեմ» (32.10):

Կրկին, մի ուշագրավ առաջարկ՝ Մովսեսին մեծ ազգ դարձնելը: Ինչպե՞ս նա արձագանքեց: Նա ևս մեկ անգամ ընտրեց այն, ինչ լավագույնն էր Աստծո համար, ոչ թե իր համար: Նա խիզախորեն ընդդիմացավ այդ առաջարկին՝ հիշեցնելով Աստծուն Իր համբավի մասին

Եգիպտոսի և ամբողջ աշխարհի առջև, որոնք հետևում էին իրադարձություններին: Մյուս ազգերն ասելու էին, որ Աստված հավատարիմ չէր Իր ժողովրդին: Այդ խոսակցությունն այնքան լարված դարձավ, որ Մովսեսը պարզ ասաց. «Մտափոխվի՛ր» (խոսք 12, NLT): Նա ուներ համարձակություն՝ առաջարկելու Աստծուն փոխել Իր միտքը, երբ Նրա բարկությունը բորբոքված էր: Սա չի կարող տեղի ունենալ, եթե դուք չունեք Աստծո երկյուղը և, որպես արդյունք, չեք ճանաչում Նրա սիրտը և չեք ցանկանում լավագույնը Նրա համար:

Ահա թե ինչու էր Աստված վստահում Մովսեսին և չէր վստահում Իսրայելի ժողովրդին, թեև Նա փրկել էր յուրաքանչյուրին: Նա ազատել էր այդ ժողովրդին Եգիպտոսի ամուր կապանքներից՝ Իր զորությամբ, սակայն նրանց հետ չէր կիսում Իր սրտինը: Արդյո՞ք Աստծո հետ ընկերության այս պայմանը վերաբերում է Նրա զավակներին Նոր կտակարանի ժամանակաշրջանում: Մենք կպարզենք սա հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Ամեն բան վստահվել և հանձնվել է Ինձ՝ Իմ Հորից... և ոչ ոք լիովին չի ճանաչում և ճշտորեն չի հասկանում Հորը՝ Որդուց բացի» (Մատթեոս 11.27, AMPC):

Եզրահանգում. «Ես վստահում եմ քեզ» խոսքերն Աստծուց լսելը մեծագույն գովեստն է, որ մարդ-արարածը կարող է ստանալ: Վստահության հիմքը Աստծո հետ ընկերական հարաբերություն սկսելու կարևորագույն պայմանն է: Այս հիմքը կա Տիրոջից երկյուղ ունեցող մարդկանց կյանքում:

Մտորում. Մովսեսն Աստծո երկյուղն ուներ, նա ճանաչում էր Աստծո սիրտը և վստահված էր Նրա կողմից: Հիսուսի բերկրանքը Տիրոջ երկյուղն էր, Նա ճանաչում էր Իր Հոր սիրտը, և Նրան վստահվեց ամեն ինչ: Դուք տեսնո՞ւմ եք այս կապը: Ի՞նչ է տեղի ունենում, երբ սուրբ երկյուղը դառնում է մեր բերկրանքը:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, ես ցանկանում եմ վայելել Քո վստահությունը: Խնդրում եմ, ների՛ր ինձ այն դեպքերի համար, երբ չեմ հնազանդվել Քեզ, չեմ պահել իմ խոսքը, ո՛չ էլ վեր եմ դասել Քո ցանկությունները և Քո շահերը իմ ցանկություններից: Ես որոշում եմ փոխել սա և խնդրում եմ, որ լցնես ինձ սուրբ երկյուղով, որը զորություն կտա ինձ կատարելու այս փոփոխությունն իմ կյանքում: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ լինել այնպիսի անձնավորություն, որին Տեր Հիսուսը կարող է վստահել:

«Չէ՞ որ մեր սրտերը
բորբոքվում էին մեզանում,
երբ որ ճանապարհին մեզ հետ
խոսում էր, և ինչպես
Գրքերը բաց էր անում
մեզ համար»:

– ՂՈՒԿԱՍ 24.32

35| ԴՈՒՔ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐՆ ԵՔ

Աբրահամի և Մովսեսի կյանքերը ցույց են տալիս, թե ինչ է անհրաժեշտ Աստծո հետ ընկերական հարաբերություն սկսելու համար: Տերը նույնիսկ ասաց Մովսեսի մասին. *«Իմ ամբողջ տնից* նա է այն անձնավորությունը, որին Ես վստահում եմ» (Թվոց 12.7, NLT): Աստված հայտարարեց, որ այդ սերնդի մեջ այլևս չկար մեկը Իր ժողովրդից, ում Նա կարող էր ավելի շատ վստահել: Ինչպիսի ապշեցուցիչ պնդում:

Արդյոք Հիսուսը փոխեց այս չափանիշը: Արդյոք Նա ընկերական հարաբերություն սկսեց յուրաքանչյուրի հետ, ով հավատաց Իրեն: Կարճ պատասխանն է՝ ոչ, բայց թույլ տվեք մանրամասն դիտարկել սա՝ սկսելով մի պնդմամբ, որ Հովհաննեսը գրում է Հիսուսի ծառայության սկզբի մասին.

> «Այն հրաշագործ նշանների շնորհիվ, որ Հիսուսը կատարեց Երուսաղեմում Զատկի տոնակատարության ժամանակ, շատերը սկսեցին *վստահել* Նրան: Բայց Հիսուսը չէր *վստահում* նրանց, քանի որ Նա գիտեր ամեն ինչ մարդկանց մասին» (Հովհաննես 2.23,24, NLT):

«Վստահել» բառն այս խոսքում հետաքրքիր հունարեն բառ է, որը նշանակում է «հավատալ՝ բացարձակ վստահության և ապավինության աստիճան, վստահություն ունենալ, հավատք ունենալ»[1]: Հետաքրքրական է, որ Հիսուսը փոխադարձաբար չէր արձագանքում այս վստահությանը: Թեև մարդիկ հավատում էին այն աստիճան, որ լիովին վստահում և ապավինում էին Նրան, Նա չէր վստահում

նրանց: Նա գիտեր, որ մարդկանց ճնշող մեծամասնությունը վստահելի չէր: Նա սիրում էր նրանց, ծառայում էր նրանց, բայց թույլ չէր տալիս մոտենալ Իրեն՝ ընկերության մակարդակով: Այն վստահությունը, որն Աստված ցուցաբերում էր Մովսեսի հանդեպ, չէր ցուցաբերվում Հիսուսի (մարմնով հայտնված Աստծո) կողմից այն մարդկանց, ովքեր պարզապես հավատում էին Նրան:

Եկեք անցում կատարենք դեպի Վերջին ընթրիքը: Հիսուսի ծառայության նախորդ երեք տարիներին Նրան հավատացողների մեծ մասը վստահելի չգտնվեց. շատերը հետևում էին Նրան գաղտնաբար կամ հեռվից, միայն երբ դա ձեռնտու էր իրենց: Աշակերտներից շատերը լքեցին Նրան, իսկ Հուդան դավաճանեց[2]: Արդյո՞ք սա օգնում է մեզ հասկանալ, թե ինչու Հիսուսը չէր պատասխանում շատերին՝ փոխադարձ վստահությամբ: Վերջին ընթրիքին Հիսուսը նստած էր այն աշակերտների հետ, որոնք ամենից մոտն էին Իրեն: Շնորհակալությամբ և սիրով՝ Նա ասաց. «Դուք այն մարդիկ եք, որոնք մնացին Ինձ հետ՝ Իմ նեղությունների մեջ» (Ղուկաս 22.28, ESV): Ըստ էության, նրանք հուսալի էին գտնվել: Ավելի ուշ՝ այդ գիշեր, Պետրոսը մեծ սխալ էր թույլ տալու, սակայն հետագայում ապաշխարելու էր և վերադառնալու էր ավելի հավատարիմ սրտով, և Հիսուսը գիտեր այդ մասին:

Հուդան գնացել էր կատարելու իր մատնությունը, և Հիսուսն ասաց մնացած տասնմեկին. «Այլևս ծառա չեմ ասում ձեզ» (Հովհաննես 15.15): Այն, որ Հիսուսն ասում է «այլևս», նշանակում է, որ այդ տղամարդիկ մի ժամանակ ծառաներ էին համարվում: Սա հայտնություն չէ, այլ՝ հասարակ լեզվաբանություն: Պողոսն ավելի մանրամասն է բացատրում այս սկզբունքը.

> «Քանի դեռ ժառանգը մանուկ է, նա իրականում շատ բանով չի տարբերվում ծառայից» (Գաղատացիների 4.1, TPT):

Մենք պետք է հարցնենք. ինչո՞ւ է Աստված պահում մեզ ծառայի մակարդակի վրա, եթե մենք Նրա թագավորության ժառանգներն ենք: Պատասխանն է՝ մեզ պաշտպանելու համար: Նա չի ուզում, որ Անանիայի և Սափիրայի ծանր կացությունը բաժին հասնի նաև մեզ: Դա բոլորովին հաճելի չէ Նրան:

1980-ական թվականներին Լիզան և ես աշխատել ենք երկու համաշխարհային ծառայություններում, որոնցից մեկն ուներ 450 վարձատրվող աշխատողից բաղկացած աշխատակազմ, իսկ մյուսը՝ 150: Մենք տեսանք ղեկավարման խնդիրներ երկու ծառայությունների մեջ էլ, և երբ սկսեցինք մեր ծառայությունը, մենք անցանք հակառակ ծայրահեղության՝ մեր աշխատակազմին ղեկավարելու հարցում: Մեր գա-

ղափարներից մի քանիսը լավն էին, մյուսները՝ ոչ: Կար մի չափանիշ, որը մենք հաստատեցինք. «Ես լինելու եմ յուրաքանչյուր աշխատողի լավագույն ընկերը»: Հավանաբար, դուք արդեն հասկացաք այդ «իմաստության» ամբողջ հիմարությունը:

Մեր առաջին աշխատողը մի երիտասարդ էր, որին ես Ջասթին կանվանեմ: Ես դարձրի նրան իմ լավագույն ընկերը. մենք միասին բասկետբոլ էինք խաղում, տեսանյութեր էինք դիտում, հաճախ ճաշում էինք, մի խոսքով՝ անում էինք այն, ինչ ընկերներն են անում: Սկզբում ամեն ինչ լավ էր: Այնուամենայնիվ, գրեթե մեկ տարի անց ես պետք է մի փոքր հանդիմանեի նրան: Մենք սեղանի շուրջ էինք, նա նստած էր իմ դիմացը, և ես սկսեցի մեր զրույցը՝ մեղմորեն ասելով.

- Ջասթի՛ն, երբ ուղևորությունների ես գալիս ինձ հետ, դու պետք է սիրալիր լինես այն մարդկանց հետ, որոնք մոտենում են մեր նյութերի սեղանիկին: Խնդրո՛ւմ եմ, ժպտա՛ և շփվի՛ր նրանց հետ, քանի որ նրանք թանկ են Աստծո համար:

Այն, ինչ կատարվեց դրանից հետո, ապշեցրեց ինձ: Նա ուղղեց ցուցամատն ինձ վրա և սկսեց մեղադրել ամեն տեսակի սխալ արարքների մեջ: Նա թվարկեց մի շարք բաներ, որոնք ես սխալ էի անում: Ես մտածեցի. *«Ո՛չ, մի՞թե ես անում եմ այդ բաները»:* Սակայն մի քանի րոպե անց հասկացա, որ նա քննադատորեն էր նայում ինձ: Այդ պահին հարցրի Սուրբ Հոգուն, թե ինչ էր պետք անել: Նա մեղմորեն ասաց. «Հեռացրո՛ւ նրան ծառայությունից»:

Ես թույլ տվեցի, որ նա ավարտեր, և ասացի.

- Ջասթի՛ն, ես պետք է ազատեմ քեզ աշխատանքից:

Նա խիստ բարկացավ և արագ հեռացավ մեր տնից: Աչքերիս անմիջապես արցունքներ հայտնվեցին, քանի որ ես հոգում էի նրա մասին: Հանկարծ Սուրբ Հոգին շշնջաց. «Նա կվերադառնա և կրկնակի հավատարիմ կլինի»:

Երեք ամիս անց ես հեռախոսազանգ ստացա Ջասթինից: Նա ասաց.

- Աստված պարզ խոսեց ինձ հետ և հանդիմանեց: Ես զանգում եմ, որպեսզի ներողություն խնդրեմ: Ես անտեսել էի այն դիրքը, որն Աստված տվել էր ինձ՝ քո և Լիզայի կյանքում: Եվ ես անտեսել էի այն դիրքը, որը Նա տվել էր երկուսիդ՝ իմ կյանքում: Ես հասարակի և սովորականի պես էի վերաբերվում ձեզ՝ որպես հավասար մարդկանց, ոչ թե որպես առաջնորդների: Ես ներողություն եմ խնդրում:

Ես անմիջապես պատասխանեցի.

- Ջասթի՛ն, ես ներո՛ւմ եմ քեզ:

Հաշտությանն ուղղված ավելի շատ խոսքերից հետո ես հարցրի, թե արդյո՞ք նա կցանկանար վերադառնալ և աշխատել մեզ հետ: Նա ուրախությամբ համաձայնեց: Եվ մենք այլևս խնդիրներ չունեցանք

այդ ոլորտում:

Այժմ ես այլ մտածելակերպ ունեմ: Ես չեմ կիսում սրտիս գաղտնիքներն իմ աշխատակիցների հետ, քանի դեռ չեմ տեսնում, որ նրանք հաստատված են այն բանում, ինչը Ջասթինն անտեսել էր: Ես այսպես եմ վարվում ոչ թե այն պատճառով, որ ուզում եմ հեռու մնալ մեր թիմի անդամներից կամ չեմ ուզում անձամբ չշփվել նրանց հետ: Ես անում եմ դա, որպեսզի պաշտպանեմ նրանց: Ես չեմ ուզում, որ նրանց հետ տեղի ունենա այն, ինչ կատարվեց Ջասթինի հետ: Այնուամենայնիվ, հենց որ տեսնում եմ, որ որևէ աշխատող հաստատված է իր դիրքում, ես սկսում եմ ընկերաբար շփվել նրա հետ: Մեր թիմի անդամներից մի քանիսն իմ ամենամոտ ընկերներն են:

Ըստ էության, Տերն ասում է մեզ. «Քանի դեռ դու հաստատված չես այն բանում, թե ով եմ Ես քո կյանքում, և թե ով ես դու Իմ առջև, այսինքն՝ քանի դեռ հաստատված չես Տիրոջ երկյուղի մեջ, Ես պետք է պահեմ քեզ ծառայի մակարդակի վրա, թեև դու ժառանգ ես՝ որդի կամ դուստր Իմ թագավորության մեջ: Ես այսպես եմ վարվում, որպեսզի պաշտպանեմ քեզ, որպեսզի դու չենթարկվես դատաստանի՝ Անանիայի և Սափիրայի պես»:

Հիսուսն ասում է նրանց.

> «Այլևս *ծառա* չեմ ասում ձեզ, որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ինչ է գործում, բայց ձեզ *բարեկամ* (կամ՝ *ընկեր*) ասացի, որովհետև ամեն ինչ, որ լսեցի իմ Հորից, իմացրի ձեզ» (Հովհաննես 15.15):

Ըստ էության, Հիսուսը նկատի ունի. «Մինչև հիմա Ես չէի հայտնել ձեզ ներքին անցուդարձը՝ Իմ ծրագրերը, գաղտնի խորհուրդները և Իմ սրտի ծածուկ կողմերը: Բայց այժմ կարող եմ վստահել ձեզ՝ ինչպես Մովսեսին և Աբրահամին»: Ահա թե ինչու է Հիսուսն ասում բոլորիս.

> «Դուք Իմ ընկերներն եք, եթե...» (Հովհաննես 15.14, NKJV):

Մենք երգեր ենք երգում, ուղերձներ ենք քարոզում և անփութորեն խոսում ենք այն մասին, որ Հիսուսը մեր ընկերն է, և ոմանք նույնիսկ այնպես են խոսում Նրա մասին, ասես Նա իրենց մտերիմ ընկերն է: Այնուամենայնիվ, մենք հազվադեպ ենք ավարտում Նրա պնդումը: «Եթե» բառը պայմանն է. դա ինքնաշխատ չէ, նույնիսկ եթե մենք հավատում ենք Նրան: Ո՞րն է ընկերության պայմանը:

> «Դուք Իմ ընկերներն եք, *եթե կատարում եք այն, ինչ Ես պատվիրում եմ ձեզ»:*

Այդ պայմանը Տիրոջ երկյուղն է՝ Նրա Խոսքից դողալը, Նրա պատվիրաններին անմիջապես և մինչև վերջ հնազանդվելը, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում, դուք որևէ օգուտ չեք տեսնում դրանում, և դա ցավոտ է: Ինչպես որ Աբրահամը և Մովսեսն ընդունվեցին Ամենակարող Աստծո ընկերական հարաբերության մեջ՝ Աստծո հանդեպ ունեցած երկյուղի պատճառով, այնպես էլ այսօր է: Երբ Տիրոջ սիրտը և կամքը մեր գլխավոր առաջնահերթությունն են, Նա կարող է վստահել մեզ, և Նա կողջունի մեզ ընկերական հարաբերության մեջ: Ինչպիսի՜ պատիվ է, ինչպիսի՜ արտոնություն է, և որքա՜ն հուզիչ է լինել տիեզերքի Արարչի ընկերը:

Մինչև այս գլուխն ավարտելը, թույլ տվեք անդրադառնալ մի հարցի, որը գուցե պտտվում է ձեր մտքում. «Մի՞թե Հիսուսը պատվիրաններ է տվել մեզ»: Այո՛, միայն Նոր կտակարանում կա ավելի քան հինգ հարյուր պատվիրան: Այս պատվիրանները չեն պահանջվում՝ փրկություն ստանալու համար, քանի որ այն ձրիաբար տրվող պարգև է: Այս պատվիրանները փառավորում են Աստծուն, և մենք զորություն ենք ստանում, որպեսզի պահենք դրանք սուրբ երկյուղի միջոցով: «Ուրեմն, գնացե՛ք, բոլոր ազգերն աշակերտե՛ք... նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատվիրեցի, պահեն» (Մատթեոս 28.19,20):

Սուրբ երկյուղի մեծագույն առավելությունն է՝ Հիսուսի հետ ընկերական հարաբերության մեջ ընդունված լինելը: Հաջորդ բաժնում կխոսենք սուրբ երկյուղի այլ առավելությունների մասին:

Անձնական կիրառում

Հատված. «Դուք Իմ ընկերներն եք, եթե կատարում եք այն, ինչ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես 15.14, NKJV):

Եզրահանգում. Մենք չենք շահում Հիսուսի վստահությունը՝ պարզապես Նրան հավատալով: Տիրոջ հետ ընկերությունը պահված է նրանց համար, ովքեր երկյուղ ունեն Նրանից:

Մտորում. Արժե՞ հնազանդվել Հիսուսին անմիջապես և լիարժեք, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում, նույնիսկ եթե թվում է, թե դրանում անձնական շահ չկա, և նույնիսկ եթե դա ցավոտ է: Արդյո՞ք ընկերությունը Նրա հետ այնպիսի առավելություն է, որն արժե այս ամենին:

Աղոթք. Սիրելի՜ Տեր, ես ցանկանում եմ ամեն ինչից առավել լինել Քո մտերիմ ընկերը: Ես չեմ ցանկանում ճանաչել Քեզ հեռ-

վից. ես ցանկանում եմ մոտ լինել Քեզ: Ես ընտրում եմ Տիրոջ երկյուղը՝ հնազանդվել Քեզ առանց որևէ պայմանի, սիրել Քեզ ամբողջ իմ սրտով, անձով, մարմնով և ուժերով, և սիրել մարդկանց՝ ճշմարտությամբ, ինչպես Դու ես սիրում: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ կայացնում դառնալ Հիսուսի ընկերը: Ես կհնազանդվեմ այն ամենին, ինչ Նա կպատվիրի ինձ:

Աստծո գանձի առավելությունները

ՇԱԲԱԹ 6

«Շիտակ արա քո ոտքերի
շավիղը, և քո բոլոր
ճանապարհները
կհաստատվեն»:

– ԱՌԱԿԱՑ 4.26

36| ՀԱՍՏԱՏԵԼՈՎ ԻՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Այժմ ուղղենք մեր ուշադրությունը սուրբ երկյուղի բազմաթիվ առավելություններին: Արդեն քննարկել ենք մի քանիսը, որոնց թվում էր նաև մեծագույնը՝ մտերմությունն Աստծո հետ: Շարունակենք բացահայտել հետևյալ գիտելիքը. «Որքա՜ն մեծ է Քո բարությունը, որ պահեցիր Քեզնից վախեցողների համար» (Սաղմոս 31.19):

Մինչև այս ոգևորիչ քննարկումը սկսելը, կարևոր է պարզաբանել մի տարածված թյուրըմբռնում: Հաճախ մարդիկ մեկնում են Աստվածաշունչը փորձառության տեսանկյունից՝ թե՛ իրենց, թե՛ այլ մարդկանց, փոխարենը թույլ տան, որ Աստվածաշունչը ձևավորի իրենց փորձառությունը: Ըստ էության, շատերի կարծիքով, Աստծո խոստումներն անկանոն են. գուցե դրանք կատարվեն, իսկ գուցե՝ ոչ: Գերակշռող պատկերացումն այս մասին հետևյալն է. *«Եթե Աստված ուզում է այսինչ բանն ինձ համար, դա հրաշալի է: Բայց եթե ոչ, Նա գերիշխան է, և ես պետք է ընդունեմ դա»:* Ըստ այս համոզմունքի, Աստված կողմնակալ է Իր զավակների հանդեպ, ինչը ճիշտ չէ: Նման պատկերացումը հեշտորեն կարող է Աստծո հանդեպ ծածուկ և անխոս վրդովմունք առաջացնել:

Իրականությունը լիովին այլ է. հաճախ մենք պետք է պայքարենք այն բանի համար, ինչ Աստված ասում է: Ես կօգտագործեմ մի աստվածաշնչյան օրինակ՝ այս ճշմարտությունը պատկերելու համար: Եկեք հիշենք մի աստվածաշնչյան խոստում, որը, շատերի կարծիքով, իրականացավ ինքնաշխատ կերպով: Աստված խոսեց Աբրահամի հետ. «Իսահակով է քեզ համար սերունդ կոչվելու» (Ծննդոց 21.12): Աստծուց տրված այս խոսքը, նախկինում տրված խոսքերի հետ մեկ-

տեղ, հստակ ցույց տվեց աստվածային խոստումը. Աբրահամը մի ամբողջ ազգի հայր էր դառնալու, և խոստացված Մեսիան գալու էր Իսահակի սերունդների միջոցով:

Մտապահելով սա՝ տեսնենք, թե ինչպես սկիզբ առան Իսահակի սերունդները՝ սկսելով այն բանից, թե ինչպես Աստված կին ընտրեց նրա համար: Աբրահամի ծառան ուղևորվեց իր տիրոջ ծննդավայրը, որպեսզի հարսնացու գտներ Իսահակի համար: Երկար ճանապարհորդությունից հետո նա կանգնեց քաղաքի ջրհորի մոտ և աղոթեց, որ անսխալական նշան ստանար Աստծուց. այն աղջիկը, որը կխմեցներ իր տասը ուղտերին՝ առանց խնդրելու, «նա լինի քո ծառա Իսահակի համար *սահմանածդ»* (Ծննդոց 24.14):

Կանգ առնենք՝ նշելու համար, որ երկար անապատային ճանապարհորդությունից հետո մեկ ուղտը կարող է խմել 120-200 լիտր ջուր՝ տասնհինգ րոպեում: Բազմապատկեք դա տասն անգամ. հազիվ թե որևէ աղջիկ ինքնակամ այդքան ջուր հաներ ջրհորից: Նրա աղոթքը պետք է հրաշքով պատասխանվեր, բայց Ռեբեկան լիարժեք կատարեց նրա խնդրանքը: Կասկած չկար, որ նա ընտրված էր Աստծուց՝ Իսահակի կինը լինելու համար:

Այն բանից հետո, երբ ծառան տուն վերադարձավ՝ Ռեբեկայի հետ, Իսահակը և Ռեբեկան ամուսնացան: Բայց կար մի ահռելի խոչընդոտ այդ խոստումը կատարվելու ճանապարհին. նա ամուլ էր և չէր կարողանում երեխաներ ունենալ: Մի՞թե Աստված սխալվեց: Մի՞թե Նա չգիտեր, որ Ռեբեկան չէր կարող հղիանալ: Ինչպե՞ս էր կատարվելու Նրա խոստումը: Ինչո՞ւ Նա ընտրեց Ռեբեկային: Ի՞նչ պետք է անեին Իսահակն ու Ռեբեկան: Մի՞թե նրանք պետք է պարզապես սպասեին, մինչև որ խոստումը կատարվեր, մինչև որ մի օր Ռեբեկան հրաշքով կհղիանար:

Փորձելով պատասխան գտնել՝ եկեք դիտարկենք Աբրահամի կյանքը, որպեսզի ստանանք առաջին հուշումը: Նա համարձակ աղոթքներ բարձրացնող մարդ էր: Նա էր, որ կոչ արեց Աստծուն վարվել Իր բնության համեմատ և չկործանել Սոդոմը և Գոմորը՝ հանուն տասը արդարի: Մենք գիտենք Աստվածաշնչից, որ նա սովորեցրեց իր որդուն վարվել նույն կերպով (տե՛ս Ծնն. 18.19): Իմանալով այս մասին՝ մենք կարդում ենք.

> «Եվ Իսահակն *աղաչեց* Տիրոջը իր կնոջ համար, որ ամուլ էր: Եվ Տերը *լսեց նրա աղաչանքը,* և նրա կինը՝ Ռեբեկան, հղացավ» (Ծննդոց 25.21):

Կրկին, եթե լիներ աստվածային խոստում, որը պետք է իրականանար առանց մարդկային միջամտության, դա կլիներ երեխաներ ունենալու Ռեբեկայի կարողությունը: Սակայն այդպես չէր: Իսահակից պահանջ-

վեց հստակ գործողություն՝ Աստծո խոստումը հաստատելու համար: Նա պետք է *աղաչեր:* Եբրայերենի բառարանում գրված է. «Այս բառի հիմքային իմաստն է՝ աղաղակ՝ ուղղված Տիրոջը»: Այնպես որ, դա պարզապես անփույթ աղոթք չէր, այլ՝ ջերմեռանդ խնդրանք, որը չէր ընդունի «ոչ» պատասխանը: Այնպիսի աղոթք, որը հաճելի է Աստծուն: Գրված է.

> «Արդար մարդու արդյունավետ, ջերմեռանդ աղոթքը շատ բանի է նպաստում» (Հակոբոս 5.16):

Հակոբոս առաքյալը հայտարարում է, որ արդյունավետ աղոթքը ջանասեր կամ ջերմեռանդ աղոթքն է: Նա բերում է Եղիայի օրինակը, որն աղոթում էր անձրևի համար: Եղիան ստիպված էր յոթ անգամ ջերմեռանդորեն աղոթել՝ գլուխը ծնկների միջև դնելով, և յոթ անգամ ուղարկել իր ծառային՝ տեսնելու, թե արդյո՞ք անձրևային ամպեր գալիս էին: Նրա հավատքը հրաժարվեց հանձնվել մինչև Աստծո խոստման կատարվելն այս երկրի վրա (տես Գ Թագ. 18.41-45):

Իսահակը գիտեր Աստծո կամքը և ջերմեռանդորեն աղաղակում էր, որպեսզի այն հաստատվեր այս երկրի վրա: Արդյո՞ք նույնը վերաբերում է բոլոր հավատացյալներին: Գրված է.

> «Ով Տեր, Քո Խոսքը հավիտյան *հաստատ* է երկնքում» (Սաղմոս 119.89):

Աստծո Խոսքը հաստատված է երկնքում: Պատահական չէ, որ այս խոսքում նշված չէ երկիրը, այլ՝ միայն երկինքը: Ինչո՞ւ: Սաղմոսերգուն հայտարարում է. «Երկինքները պատկանում են Տիրոջը, բայց Նա տվեց երկիրը ամբողջ մարդկությանը» (Սաղմոս 115.16, NLT): Երկինքը և երկիրը պատկանում են Տիրոջը (տես Ա Կորնթ. 10.26), բայց Նա «վարձակալության» է հանձնել երկիրը մարդկությանը՝ որոշակի ժամանակով:

Մեր ամուսնության սկզբում Լիզան և ես մի բնակարան էինք վարձել: Այն չէր պատկանում մեզ, բայց մենք կարող էինք ապրել և ընտանեկան մթնոլորտ ստեղծել այնտեղ: Սեփականատերը չէր գալիս և փոխում մեր կահավորած կահույքը, չէր ձևավորում բնակարանը կամ տնօրինում որևէ բան դրանում: Այնուամենայնիվ, եթե մենք օգնություն խնդրեինք, նա կաջակցեր:

Նման կերպով, երկիրը պատկանում է Աստծուն, բայց Նա «վարձակալության» է տվել այն մարդկությանը: Սա բացատրում է, թե ինչու Նա չեկավ պարտեզ և չհարվածեց Ադամի ձեռքին՝ պտուղը ցած գցելով: Նա տվեց մարդկությանը իշխանություն երկրի վրա (տես Ծննդ. 1.26-28): Հասկանալով սա՝ մենք պետք է հարց տանք. ինչպե՞ս է Նրա Խոսքը հաստատվում այս երկրի վրա: Գրված է. «Երկու և երեք վկա-

ների *բերանից* ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիների 13.1): Եվ Եսայի մարգարեի գրքում Աստված հայտարարում է.

> «Այնպես էլ պիտի լինի Իմ *բերանից* դուրս եկած խոսքը. այն չպիտի պարապ ետ դառնա Ինձ մոտ, այլ կատարի Իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար որ Ես այն ուղարկեցի» (Եսայի 55.11):

Հետաքրքրական է, որ երկու խոսքերում էլ նշվում է *«բերան»* բառը: Աստծո բերանը խոսում է Նրա ցանկալի կամքը, բայց անհրաժեշտ է, որ ինչ-որ մեկը, որին իշխանություն է տրված երկրի վրա, խոսի այն իր բերանով, որպեսզի հաստատի դա երկրի վրա: Ըստ էության, մենք խնդրում ենք, որ Նա գա և օգնի մեզ երկրի վրա: Այդ դեպքում, Նրա խոստումը հաստատվում է երկրի վրա՝ ինչպես երկնքում: Պարզ ասած, Նա չի հարկադրի Իր կամքը մեր «վարձակալած երկրում», քանի դեռ մենք չենք խնդրում, որ Նրա կամքը կատարվի:

Աստված խոստում տվեց Աբրահամին: Պատկերացնո՞ւմ եք Իսահակին, որն աղաչում էր. «Իմ հոր Աստվա՛ծ, Դու խոստացար, որ ինձնից ազգ է լինելու, և իմ սերունդներն օրհնված են լինելու: Ես խնդրում եմ, որ բացես իմ կնոջ արգանդը՝ երեխաներ ծնելու համար: Ամե՛ն»: Որպես արդյունք, Աստծո կամքը հաստատվեց:

Այժմ դիտարկենք մեր մեծագույն օրինակը՝ Հիսուսին:

> «Մինչ Հիսուսն այստեղ՝ երկրի վրա էր, Նա մատուցում էր աղոթքներ և աղաչանքներ՝ բարձր աղաղակով և արցունքներով, Նրան, Ով կարող էր փրկել Իրեն մահից: Եվ Աստված լսեց Նրա աղոթքները՝ Աստծո հանդեպ Նրա խոր երկյուղածության պատճառով» (Եբրայեցիների 5.7, NKJV):

Կրկին տեսնում ենք *«աղաչանքներ»* բառը, բայց այս անգամ այն *Աստծո հանդեպ խոր երկյուղածության* հետ է: Մենք ստացանք ևս մեկ բանալի: Անհրաժեշտ է ոչ միայն աննահանջ հավատք, որը խոսում է (աղաղակում է), մինչև որ Աստծո խոստումն ակնհայտորեն կատարվի այս երկրի վրա, այլև՝ Տիրոջ երկյուղը, որպեսզի այն խոստումները, որոնք Աստված տվել է Իր ժողովրդին, հաստատվեն: Ուշադրություն դարձրեք, որ Աստված *լսեց* Հիսուսի աղոթքները: Այլ բան է աղոթելը, բայց լիովին այլ բան է *լսված* լինելը: Կա՞ն արդյոք աղոթքներ, որոնք չեն լսվում: Իհա՛րկե: Հակոբոսը գրում է. «Երբ խնդրում եք, չեք ստանում, որովհետև ձեր շարժառիթներն ամբողջովին սխալ են» (Հակոբոս 4.3, NLT): Կրկին, մենք պետք է ուշադրություն դարձնենք մեր շարժառիթներին, և Տիրոջ երկյուղն է, որ վերահսկում է մեր շարժառիթները:

Երբ երկյուղ ունենք Աստծուց, մենք կարող ենք խիզախորեն աղոթել և հռչակել, որ Աստծո խոստումները կամ կամքը կատարվեն այս երկրում, և դա կհաստատվի այնպես, ինչպես երկնքում: Գուցե սա է պատճառը, որ Պողոս առաքյալը գրում է, մոտ լինելով իր երկրային ժամանակի ավարտին. «Պատերազմի՛ր հավատքի բարի պատերազմը և բռնի՛ր հավիտենական կյանքը» (Ա Տիմոթեոս 6.12): Սա պատերազմ է, և հավատքով մենք տիրանում ենք այն ամենին, ինչ տալիս է հավիտենական կյանքը:

Անձնական կիրառում

Հատված. «Իրենից վախեցողների կամքն անում է Նա և նրանց աղաղակը լսում... է» (Սաղմոս 145.19):

Եզրահանգում. Հաճախ մարդիկ մեկնում են Աստվածաշունչը փորձառության տեսանկյունից՝ թե՛ իրենց, թե՛ այլ մարդկանց, փոխարենը թույլ տան, որ Աստվածաշունչը ձևավորի իրենց փորձառությունը:

Մտորում. Արդյո՞ք ես թույլ եմ տվել, որ իմ համոզմունքները հեռանան այն ամենից, ինչ ասում է Աստվածաշունչը՝ իմ կամ ուրիշների փորձառության պատճառով: Կա՞ն արդյոք խոստումներ, որոնք դեռ չեն կատարվել իմ կյանքում, իմ ընտանիքում, իմ ազդեցության շրջանակում: Արդյո՞ք ես համակերպվել եմ առանց այդ աստվածային խոստումների ապրելուն: Արդյո՞ք ես կամենում եմ պայքարել այդ խոստումների համար՝ աղաչելով, որ դրանք կատարվեն այս երկրում:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, Հիսուսի անունով, ների՛ր ինձ հոգևոր ծուլության համար, ների՛ր, որ համակերպվել եմ չկատարված խոստումներին և չեմ պայքարել այն ամենի համար, ինչ Քո Խոսքը հռչակում է: Ես թույլ եմ տվել, որ իմ անցյալի փորձառությունները ձևավորեն իմ ընթացքը, փոխարենը պայքարեի այն ամենի համար, ինչ Դու հաստատել ես: Ես ապաշխարում եմ և որոշում պատերազմել հավատքի բարի պատերազմը, աղոթել, որպեսզի Քո կամքը հաստատվի այս երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Ամե՛ն:

Դավանություն. Ես որոշում եմ պատերազմել հավատքի բարի պատերազմը, տիրանալ այն ամենին, ինչ հավիտենական կյանքն ազդարարում է, և այնպես անել, որ Աստծո կամքը հաստատվի իմ ազդեցության շրջանակում:

Այն մարդիկ, որոնք
վախենում են Աստծուց,
ապրում են առանց վախի:
Այն մարդիկ, որոնք չեն
վախենում Աստծուց, ի վերջո
վախենում են ամեն ինչից:

– ՌԻՉԱՐԴ ՀԵԼՎԵՐՍՈՆ

37| ԲՈԼՈՐ ՎԱԽԵՐԸ ՀԵՌԱՑՆՈՂ ՎԱԽԸ

Մենք ապրում ենք վախով համակված աշխարհում: Իրականում, Հիսուսն ասում է մեզ, որ այն ավելի է սաստկանալու: Նրա նկարագրությունն այն մասին, թե ինչ է սպասվում, զգաստացնող է. «Որովհետև մարդկանց սրտերը կնվաղեն վախից և այն բաներին սպասելուց, որ ամբողջ աշխարհի վրա պիտի գա» (Ղուկաս 21.26): Այս վախերը և անհանգստությունները հեռացնում են հույսը, խաղաղությունը և անդորրը՝ թողնելով միայն անհանգստություն, ծանրացած սրտեր և շարունակական տանջանք: Ո՞րն է այս ամենի հակաթույնը:

> «Տերը խիստ զգուշացում է տվել ինձ, որ չմտածեմ, ինչպես որ բոլորն են մտածում: Նա ասաց. «Ամեն ինչ դավադրություն մի՛ անվանիր, ինչպես որ նրանք են անվանում, և մի՛ ապրիր՝ զարհուրելով այն ամենից, ինչ նրանց է վախեցնում: Սո՛ւրբ արա Երկնքի զորքերի Տիրոջը քո կյանքում: Նա է միակը, Ումից պետք է վախենաս: Նա է միակը, Ումից պետք է դողաս: Նա ապահով կպահի քեզ»» (Եսայի 8.11-14, NLT):

Սուրբ երկյուղը հեռացնում է բոլոր վախերը և անհանգստությունները, քանի որ այն հիմնված է Աստծո ապահովության խոստման վրա: Մի պահ կանգ առեք և մտածեք այս իրողության մասին: Պատկերացրեք, որ Միացյալ Նահանգների ամբողջ զինված ուժերը նշանակված են ձեզ պաշտպանելու համար: Յուրաքանչյուր գեներալ տեղեկացնում է իրեն ենթակա սպաներին, որ դուք համար մեկ քաղաքացին եք, և ցանկացած միջոց, որ անհրաժեշտ է ձեր ապահովության համար, պետք է կիրառվի: Նրանց առաջադեմ սպառազինության

բոլոր տեսակների նպատակն է ապահովել ձեր պաշտպանությունը, որտեղ էլ լինեք կամ ուր էլ գնաք: Դա գրեթե աներևակայելի է, բայց եթե դա տեղի ունենար, համոզված եմ, որ դուք ապահով և անվտանգ կզգայիք: Այնուամենայնիվ, այս ամենը խամրում է Ամենակարող Աստծո հետևյալ խոսքերի համեմատ. «Ես ապահով կպահեմ քեզ»: Զարմանալի չէ, որ գրված է.

> «Որքա՜ն մեծ է Քո բարությունը, որ պահեցիր Քեզնից վախեցողների համար, և որ անում ես Քեզ հուսացողներին՝ մարդկանց որդիների առջև: Դու ծածկում ես նրանց Քո երեսի ծածկույթով՝ մարդու դավաճանությունից: Դու թաքցնում ես նրանց Քո խորանի մեջ՝ լեզուների հակառակությունից» (Սաղմոս 31.19,20):

Այս շռայլ բարության խոստումը՝ Աստծո ներկայության մեջ ապահով թաքնված լինելը այն մարդկանցից, որոնք կփորձեն վնասել մեզ, տրված չէ բոլորին, այլ՝ ովքեր Աստծո երկյուղն ունեն: Տարիներ շարունակ Լիզան և ես դիմացել ենք մեր դեմ ուղղված ստերի, չարախոսության, մեղադրանքների և սպառնալիքների: Ես կատակով ասացի իմ ընկերներից մեկին. «Մի՛ որոնիր իմ անունը «Գուգլում». այն կհեղեղի քեզ ինձ դատապարտող հոդվածներով»: Բայց մենք որոշում էինք կայացրել լուռ մնալ և չպաշտպանել մեզ: Փոխարենը, մենք հանձնում էինք այդ հարձակումները Նրան, Ումից երկյուղ ունենք, և կարող ենք վկայել Նրա հարատև պաշտպանության մասին: Դա հեշտ չէր. կային ժամանակներ, երբ բառացիորեն միացնում էի ձեռքերիս ափերը և վեր էի բարձրացնում՝ որպես այդ մեղադրանքները և սպառնալիքներն Աստծուն հանձնելու արտաքին նշան, և աղաղակում էի. «Հա՛յր, ես հանձնում եմ սա Քո ձեռքերի մեջ. խնդրում եմ, պաշտպանի՛ր մեզ»: Նա երբեք չթողեց մեզ:

Մենք տեսել ենք սուրբ երկյուղի պաշտպանությունը բազմաթիվ մարդկանց կյանքերում, որոնց ճանաչում ենք: Մի քանի տարի առաջ ես քարոզեցի 1.500 մարդուց բաղկացած լսարանի առջև իմ հայրենի քաղաքում: Այդ ծառայությանը շատերը թողեցին իրենց վախերը՝ փոխարենը ընդունելով Տիրոջ երկյուղը: Հաջորդ երեկոյան մի մայր և դուստր, որոնք արձագանքել էին այդ հավաքույթին արված կոչին և ազատություն էին ստացել վախերից, տուն էին վերադառնում գնումներ կատարելուց հետո: Նրանք տեսան երեք տղամարդու իրենց տան մոտ՝ դանակներով և ատրճանակներով զինված: Այդ տղամարդիկ խստորեն հրամայեցին նրանց տուն մտնել: Ամենայն հավանականությամբ, նրանց նպատակն էր թալանը, բռնաբարությունը և գուցե այդ երկու կանանց սպանությունը:

Ավելի ուշ մայրը պատմում էր.

- Եթե չլիներ նախորդ երեկոն, ես վախից քարացած կլինեի, կպապանձվեի և կկատարեի նրանց պահանջները: Սակայն, ես անտեսեցի տուն մտնելու նրանց հրամանը և անմիջապես սկսեցի բարձրաձայն աղոթել, որ Հիսուսը փրկի մեզ: Եվ որքան ավելի էի աղաղակում, այնքան իմ վստահությունը, ուժը և խաղաղությունն ավելանում էին: Այդ տղամարդիկ սկսեցին դողալ և խստորեն հրամայեցին ինձ, որ դադարեի աղոթելուց: Նրանց համբերությունն ի վերջո սպառվեց, և նրանք բարկացած բղավեցին. «Հերի՛ք է, հերի՛ք է, հերի՛ք է աղոթես»:

Այդ երեք տղամարդիկ պատրաստ չէին հանդիպելու նման վստահ կանանց: Հարձակվողները շփոթվեցին, և մինչ նրանք խոսում էին մոր հետ, դուստրը կարողացավ աննկատ տուն մտնել և զանգել՝ օգնություն կանչելով: Երբ այդ երեքը հանկարծ հասկացան, որ աղջիկը հեռացել է, նրանք փախուստի դիմեցին:

Նույն տարում, երբ ծառայում էի Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքում, ևս մի երիտասարդ կին ազատագրվեց վախերից՝ ընդունելով սուրբ երկյուղը: Այդ ծառայությանը հաջորդող շաբաթվա ընթացքում, երբ նա դուրս եկավ առևտրի կենտրոնից և նստեց մեքենան, նկատեց, որ մի տղամարդ էր թաքնվել ետևի նստարանին, և նրա ձեռքին դանակ կար: Այդ տղամարդը խստորեն հրամայեց նրան վարել մեքենան: Փոխարենը վախով բռնվեր, նա սկսեց աղաղակել Հիսուսին՝ առանց դադարելու: Նա մի քանի ժամ շարունակ վարում էր մեքենան, և ամբողջ ընթացքում այդ տղամարդը պահանջում էր, որ կինը լռեր, բայց նա հրաժարվում էր: Ի վերջո այդ տղամարդն ասաց. «Կանգնեցրո՛ւ մեքենան», և երբ այդ կինն արեց դա, նա բացեց մեքենայի ետևի դուռը և փախուստի դիմեց:

Կար ժամանակ, երբ Ասորեստանի թագավորը, բարկացած Եղիսե մարգարեի վրա, ուղարկեց իր զորքերին՝ նրան գերելու համար: Եղիսեի ծառան առաջինն էր, որ տեսավ բոլոր զինվորներին, ձիերը և կառքերը: Նա համակվեց վախով:

«Մի՛ վախեցիր,- ասաց Եղիսեն: Դրանից հետո Եղիսեն աղոթեց. «Ո՛վ Տեր, բացի՛ր նրա աչքերը, և թող նա տեսնի»» (Դ Թագավորաց 6.16,17, NLT): Տերն արեց դա, և Եղիսեի ծառան տեսավ հրեշտակային ձիերի և կառքերի մեծ բազմություն սարալանջին:

Հիսուսը հաճախ բախվում էր բազմությունների, որոնք քարեր էին վերցնում՝ Նրան քարկոծելու համար: Մի անգամ բազմությունը փորձեց ժայռից ցած գցել Նրան, բայց յուրաքանչյուր իրավիճակում, որտեղ Նրա կյանքին վտանգ էր սպառնում, Նա պարզապես անվնաս անցնում էր բազմության միջով (տես Ղուկ. 4.29, Հովհ. 8.59, 10.39):

Միակ դեպքը, երբ Աստված թույլ է տալիս ինչ-որ մեկին չարչա-

րանքներ կրել, այն է, եթե դա տրված է ի վերուստ՝ Աստծո փառքի համար: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ իրավիճակներում կա սուրբ երկյուղից բխող վստահություն, որը հեռացնում է մարդկային վախը: Մտածե՛ք այն երեք հրեա երիտասարդների մասին, որոնց բերեցին ամբողջ աշխարհի ամենաազդեցիկ թագավորի՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսորի առջև: Նա մեծ կուռք էր կանգնեցրել և հրամայել էր, որ բոլոր մարդիկ խոնարհվեին դրա առջև ամեն անգամ, երբ լսվում էր երաժշտության ձայնը:

Այդ երեք երիտասարդները վախենում էին Աստծուց: Նրանք հրաժարվեցին մեղանչել և չհնազանդվեցին այդ տիրակալի հրամանին: Նրանց բերեցին սաստիկ բարկացած Նաբուգոդոնոսորի առջև, որը կարող էր անմիջապես նետել նրանց կրակե հնոցը: Մի՞թե այդ երիտասարդները վախեցած էին: Ես թույլ կտամ, որ ինքներդ որոշեք դա՝ հաշվի առնելով, թե ինչ նրանք ասացին ցասման մեջ գտնվող թագավորին. «Ահա մեր Աստվածը, Ում մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքված հնոցից, և քո ձեռքից էլ, ո՛վ թագավոր, Նա մեզ կազատի: Եվ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, ո՛վ թագավոր, որ քո աստծուն մենք չենք պաշտում և քո կանգնեցրած արձանին երկրպագություն չենք անում» (Դանիել 3.17,18):

Ինչպիսի՜ վստահություն: Նրանք հանդարտ և անվախ մնացին, թեև Աստվածաշնչում գրված է. «Նաբուգոդոնոսորի բարկությունն այնպես մոլեգնեց Սեդրաքի, Միսաքի և Աբեթնագովի վրա, որ նրա երեսն այլայլվեց զայրույթից» (խոսք 19, NLT): Նրանք վախենում էին Աստծուց և այդ պատճառով գիտեին, որ Նա, միևնույն է, ազատելու էր իրենց՝ կյանքով, թե մահով: Նրանց նետեցին հնոցը, բայց նրանք անվնաս դուրս եկան, և նրանց վրայից նույնիսկ ծխի հոտ չէր գալիս: Նրանք անվախ մնացին, նույնիսկ եթե դա մահ էր նշանակելու:

Պողոս առաքյալը՝ մի մարդ, որը մեծապես երկյուղած էր Աստծուց, նույն դիրքորոշումն ուներ: Երբ նրան մահապատիժ էր սպառնում, նա գրեց. «Ես վստահ եմ, որ իմ կյանքը պատիվ կբերի Քրիստոսին՝ թե՛ ապրելու, թե՛ մահանալու դեպքում: Որովհետև ինձ համար ապրելը նշանակում է ապրել Քրիստոսի համար, իսկ մահանալը նույնիսկ ավելի լավ է» (Փիլիպեցիների 1.20,21, NLT): Ինչո՞ւ է Քրիստոսին փառավորելու համար մահանալը նույնիսկ ավելի լավ, կամ, ինչպես գրված է այլ թարգմանությունների մեջ, «շատ ավելի լավ», քան կյանքը: Աստծո երկյուղը, որն իմաստության սկիզբն է, լուսավորում է մեզ, որպեսզի պատշաճ կերպով դիտարկենք այս և հաջորդ կյանքերը: Սա է պատճառը, որ Հիսուսը պնդում է. «Եվ մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն սպանում են և հոգին չեն կարող սպանել, բայց ավելի վախեցե՛ք Նրանից, որ կարող է հոգին էլ, մարմինն էլ կորցնել գեհենի մեջ» (Մատթեոս 10.28):

Տարիներ առաջ, երբ դեռ շրջիկ քարոզիչ էի, Աստված խոսեց ինձ հետ, քանի որ վախենում էի իմ երեխաների համար: Նա ասաց. «Ջո՛ն, ցանկացած վախ քո կյանքում ընդամենը ցույց է տալիս այն ոլորտները, որոնք դու դեռ չես բերել խաչի մոտ. դրանք դեռ քեզ են պատկանում»: Ես ապաշխարեցի այդ առավոտյան, ամբողջովին հանձնեցի իմ որդիներին Աստծուն և այլևս չանհանգստացա նրանց ապահովության համար: Երբ այդպես ենք վարվում, մենք վայելում ենք այն, ինչ մյուսները սաստիկ ցանկանում են, բայց չեն կարողանում գտնել. խաղաղություն, վստահություն և ազատություն վախից:

Անձնական կիրառում

Հատված. «Տիրոջ երկյուղն առաջնորդում է դեպի կյանք՝ բերելով ապահովություն և պաշտպանություն չարիքից» (Առակաց 19.23, NLT):

Եզրահանգում. Ցանկացած ոչ օգտակար վախ ձեր կյանքում միայն ցույց է տալիս այն ոլորտը, որը չեք բերել խաչի մոտ. այն դեռ ձեզ է պատկանում:

Մտորում. Կյանքիս ո՞ր ոլորտներում վախ ունեմ: Ես վախենո՞ւմ եմ իմ առողջության, ֆինանսների, ամուսնության, երեխաների, աշխատանքի կամ ուսման համար: Իմ կյանքում ես վախենո՞ւմ եմ մերժված լինելուց, հավատքի համար հալածվելուց կամ որևէ այլ բանից: Արդյո՞ք ես լիովին հանձնել եմ կյանքիս այդ ոլորտը Հիսուսի իշխանությանը, թե՞ այն դեռ պատկանում է ինձ:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, ների՛ր ինձ, որ չեմ հանձնել (անվանե՛ք այն, ինչ ձեզ է վերաբերում) Քեզ: Մտորելով սրա շուրջ՝ պարզ է դառնում, որ այն դեռ ինձ է պատկանում: Իմ անապահովությունը բացահայտել է սուրբ երկյուղի պակասն իմ կյանքի այս բնագավառում: Ես ապաշխարում եմ և իմ կյանքի յուրաքանչյուր բնագավառը (անվանե՛ք այն, ինչ ձեզ է վերաբերում) հանձնում եմ Հիսուսի իշխանությանը, ամե՛ն:

Դավանություն. Հիսուսն իմ Տերն է: Ես հանձնում եմ Նրան իշխանությունն իմ կյանքի բոլոր ոլորտներում: Թո՛ղ ամեն ինչ Նրա կամքով լինի:

«Առաջնորդի՛ր երեխաներիդ
դեպի ճիշտ ուղին,
և երբ մեծանան, նրանք
չեն թողնի այն»:

– ԱՌԱԿԱՑ 22.6, NLT

38| ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աստծո երկյուղի մեջ կա ևս մեկ մեծ առավելություն. բարի ժառանգությունը: Թույլ տվեք մի քանի հարց տալ: Ինչ է անցնում ձեր մտքով, երբ լսում եք Բենեդիկտ Առնոլդի անունը: Առաջին միտքը, հավանաբար, «դավաճան» բառն է: Իսկ Մայր Թերեզայի՞: Դուք մտածում եք «Սիրո առաքելության» մասին: Իսկ Ադոլֆ Հիտլերի՞: Դուք մտածում եք. «Բռնակալ, որը սպանեց միլիոնավոր մարդկանց»: Իսկ Ալբերտ Էյնշտեյնի՞: Դուք մտաբերում եք այն մարդուն, որը հայտնաբերել է հարաբերականության տեսությունը:

Այն, ինչ դուք մտաբերեցիք, հավանաբար, այդ քաջ հայտնի մարդկանց ժառանգությունն է: Իրականում, յուրաքանչյուրս է ժառանգություն ստեղծում: Մենք պետք է տանք մեզ հետևյալ հարցը. մարդիկ կհիշեն մեր ժառանգությունն ուրախությամբ, թե՞ տհաճությամբ: Գոյություն ունի ավելի կարևոր հարց. ինչպե՞ս է մեր ժառանգությունը դիտարկվելու երկնքում: Աստծո թագավորության կառուցման համար այն համարվելու է նպաստավո՞ր, թե՞ կործանարար:

«Ժառանգություն» բառի սահմանումներից մեկը, ըստ «Մերիամ-Վեբսթեր» բառարանի, հետևյալն է. «ինչ-որ բան, որը փոխանցված կամ ստացված է որևէ նախահորից կամ նախնուց»[1]: Ինչպե՞ս է Աստծո երկյուղն ազդում մեր սերունդների վրա: Որպես սկիզբ, վերադառնանք հավատքի հայր Աբրահամին: Սարի վրա, երբ հրեշտակը թույլ չտվեց նրան դանակով սպանել Իսահակին, Տերն ասաց.

> «Քեզ *օրհնելով կօրհնեմ* և քո սերունդը... *շատացնելով կշատացնեմ*, և քո սերունդն իր թշնամիների դուռը կժառանգի» (Ծննդոց 22.17):

Տարիներ շարունակ ես կարդում էի սա և մտածում, թե ինչու են բառերն այս խոսքում կրկնվում: Ի վերջո, իմ հետաքրքրասիրությունը հաղթեց. ես զանգեցի մի ռաբբունիի և հարցրի, իսկ նա պատասխանեց.

- Հրեական պատկերացմամբ, երբ ինչ-որ հղում կրկնակի է արվում, դա վերաբերում է բազմապատկմանը... և քանի որ բայերից մեկը ներկա ժամանակով է, իսկ մյուսը՝ ապառնիով, մեկնությունն այսպիսին է. մեկ օրհնությունը վերաբերում է հայր Աբրահամին, բայց Աստված նաև խոստանում է օրհնություն նրա սերունդներին: Այլ կերպ ասած՝ օրհնելով քեզ, Աբրահա՛մ, Ես կշարունակեմ օրհնել քեզ՝ քո երեխաների միջոցով:

Սուրբ երկյուղն օգուտ է տալիս մեր սերունդներին. «Քո սերունդն իր թշնամիների դուռը կժառանգի»: Սա հրաշալի է, շուտով կխոսենք այս մասին, բայց, նախ, կա ևս մեկ ճշմարտություն այդ ռաբբունիի բացատրությունից, որը պետք է ընդգծել: Սուրբ երկյուղը շարունակում է օրհնել մեզ՝ մեր սերունդների միջոցով, և սա ճշմարիտ է ոչ միայն այս կյանքում, այլև հավիտենության մեջ:

Մեր սերունդներն ազդեցություն են թողնում մեր հավիտենական կյանքի վրա՝ բերելով մեզ ավելի մեծ պատիվ և ազդեցություն թե՛ ապագայում, թե՛ հաջորդ կյանքում: Որպեսզի բացատրեմ սա, թույլ տվեք մի օրինակ բերել: Արչի Մաննինգն ամերիկյան ֆուտբոլի ազգային լիգայի «Նյու Օռլեանս սեյնթս» թիմի ավագ խաղացողն էր տասը խաղաշրջանի ընթացքում: Նրա առաջնորդությամբ, այդ թիմի հաղթանակների թիվը հավասարվեց պարտությունների թվին միայն մեկ խաղաշրջանում. մնացած ինը խաղաշրջաններում նրանք պարտություն էին կրում: Մեծամասնությունը կմոռանար նրա մասին, բայց նրա երկու որդիները՝ Փեյթոնը և Էլին, միասին հաղթեցին Սուպերգավաթի չորս մրցաշար՝ հայտնվելով Սուպերգավաթի ամենաարժեքավոր խաղացողների թվում: Այժմ ավելի շատ մարդիկ են ճանաչում Արչիին՝ նրա որդիների շնորհիվ, հետևաբար, նա ավելի մեծ պատիվ և ազդեցություն է ստանում սպորտային աշխարհում:

Հավիտենության մեջ շատերը կստանան շատ ավելի մեծ պատիվ և ազդեցություն՝ շնորհիվ իրենց ժառանգների հնազանդության՝ Աստծո թագավորությունը կառուցելու գործում: Աբրահամը գերազանց օրինակ է. նրա հավիտենական ազդեցությունը կընդլայնվի նրա սերունդների՝ Հովսեփի, Սամուելի, Դավթի, Դանիելի, Եսայու և, իհարկե, Հիսուսի միջոցով: Եվ մենք նշեցինք ընդամենը մի քանիսին նրա ժառանգներից: Նրա ժառանգությունը շարունակվում է նույնիսկ հիմա: Այս օրհնությունը վերաբերում է նրանց, ովքեր Աստծուց երկյուղ ունեն. նրանք «երկար կհիշվեն» և «ազդեցություն ու պատիվ կունենան» (Սաղմոս 112.6,9, NLT): Շատերը մտածում են, որ երկնքում ամեն ինչ զրոյից է սկսվում, սակայն դա ճիշտ չէ: Որպես հավատաց-

յալներ, մենք արդեն իսկ սկսել ենք կառուցել հավիտենական պատմությունը, քանի որ գրված է. «Նրանց արդար գործերը կհիշվեն հավիտյան» (Սաղմոս 112.9, NLT):

Այժմ անցնենք Աստծո խոստմանը այն մասին, որ մեր սերունդները հաղթողներ կլինեն. նրանք կժառանգեն իրենց «թշնամիների դուռը»: Ավելի ժամանակակից տարբերակով կարելի էր ասել, որ մեր սերունդները չեն պարտվի Աստծուն անարգող մարդկանցից, այլ հաջողակ առաջնորդներ և ազդեցիկ մարդիկ կլինեն (տես Երկր. Օր. 28.13): Գուցե մտածեք, որ սա վերաբերում է միայն Աբրահամին և նրա անմիջական ժառանգներին, սակայն գրված է.

> «Երանելի է այն մարդը, որ Տիրոջից վախենում է, և նրա պատվիրանները շատ հավանում է: Նրա զավակը զորավոր կլինի երկրի վրա. ուղիղների ցեղը կօրհնվի» (Սաղմոս 112.1,2):

«Ցեղ» բառը կրում է «երկար ժամանակվա» իմաստ[2] և վերաբերում է մեր ժառանգներին[3]: Զաքարիան մարգարեացավ. «Նրա ողորմությունն ազգից ազգ Նրանից վախեցողների վրա է» (Ղուկաս 1.50): Հաջողակ կլինեն ոչ միայն մեր զավակները. այս խոստումն ընդգրկում է մեր ցեղը: Այս սկզբունքի մի փայլուն օրինակ կարելի է տեսնել երկու մարդկանց կյանքերում, որոնք ծնվել են տասնութերորդ դարում:

Առաջինը Մաքս Ջյուքս անունով մի մարդ է: 1874 թվականին Ռիչարդ Դագդեյլ անունով մի սոցիոլոգ այցելեց Նյու Յորք նահանգի հյուսիսում գտնվող տասներեք բանտ: Նա հայտնաբերեց վեց մարդու՝ չորս տարբեր ազգանուններով, որոնք արյունակցական կապ ունեցող ազգականներ էին: Դա հետաքրքրություն առաջացրեց, և նա սկսեց մանրակրկիտ ուսումնասիրել այդ մարդկանց տոհմածառը: Առաջին ներկայացուցիչը, որին նա հայտնաբերեց, Մաքս Ջյուքսն էր՝ վաղ շրջանի մի ներգաղթյալ՝ Հոլանդիայից, որը ծնվել էր 1720-1740 թվականների միջակայքում: Տարիներ տևող մանրակրկիտ հետազոտություններից հետո Դագդեյլը հայտնաբերեց Ջյուքսի 540 ժառանգների: Նրանց թվում էին 76 դատապարտված հանցագործ, հասարակաց տներ տնօրինող 18 անձ, 120 մարմնավաճառ և պետական աջակցության ավելի քան 200 շահառու: Կարճ ասած, գոյություն ունեին սերունդների ընթացքում պահպանվող մեղքեր, որոնց արդյունքն արտահայտված անառողջ վարքագծեր էին, և պետությունը ստիպված էր ծախսել այդ մարդկանց վրա տասնյակ միլիոնավոր դոլարներ՝ տարադրամի այսօրվա արժեքով[4]:

Այժմ համեմատենք նրան Ջոնաթան Էդվարդսի հետ, որը ծնվել է նույն ժամանակահատվածում: Նա արթնության քարոզիչ էր, գրել է բազմաթիվ գրքեր և ոգեշնչել շատերին, որ Ավետարանը հասցնեն ազգերին: Նա ամուսնացավ Սառա Պիերպոնտի հետ՝ 1727 թվակա-

նին: Այս զույգը մեծապես երկյուղած էր Աստծուց: Նրանք միասին Աստվածաշունչ էին կարդում և աղոթում էին ամեն երեկո՝ քնելուց առաջ: Նրանք տասնմեկ երեխա ունեին, և Ջոնաթանը օրինություն էր հռչակում յուրաքանչյուր երեխայի կյանքում ամեն օր: Նա ասում էր. «Ամեն տուն պետք է փոքր եկեղեցի լինի»:

Ջոնաթանի և Սառայի 1394 հայտնի ժառանգներն Աստծուց վախեցողներին տրված խոստման փայլուն օրինակ են ծառայում՝ այն խոստման, որ *նրանք կժառանգեն իրենց թշնամիների դռները, և նրանց սերունդներն ամենուր հաջողակ կլինեն:* Նրանց ժառանգների թվում էին համալսարանի 13 նախագահ, 65 համալսարանական պրոֆեսոր, 3 Միացյալ Նահանգների սենատոր, 30 դատավոր, 100 իրավաբան, 60 բժիշկ, 75 ցամաքային և ռազմածովային ուժերի սպա, 100 ծառայող և միսիոներ, 60 ակնառու հեղինակ և Միացյալ Նահանգների մեկ փոխնախագահ, որի անունն Ահարոն Բեր էր: Կառավարությունը ստիպված չէր նույնիսկ մեկ ցենտ ծախսել նրանց ժառանգների վրա[5]:

Երբ մեր չորս որդիները փոքր էին, ես վախենում էի, որ նրանց կյանքը կարող էր վաղաժամ ավարտվել, որ նրանք կարող էին վիրավորվել իրենց հորից, որը շրջիկ քարոզիչ էր և երբեմն տարվա մեջ ավելի քան 200 օր տանը չէր լինում, կամ՝ որ նրանք կարող էին վիրավորվել Աստծուց՝ ինձ այդպիսի կոչում տալու համար: Մի երեկո, երբ տնից հեռու էի գտնվում, մի համաժողովում ծառայելուց անմիջապես հետո գիտակցեցի, որ սուրբ երկյուղի պակասը թույլ չէր տալիս ինձ իմ երեխաների կյանքում իշխանությունը հանձնել Հիսուսին: Ես բացականչեցի աղոթքի մեջ.

- Հա՛յր, այս չորս որդիներն այլևս ի՛մը չեն. այժմ նրանք պատկանում են Հիսուսին: Դու կարող ես անել նրանց հետ՝ ինչ ցանկանում ես, բայց սատանա՛, դու երբեք չե՛ս դիպչի նրանց:

Այդ օրվանից ես այլևս չեմ վախեցել նրանց համար:

Այդ դեպքից կարճ ժամանակ անց Աստված հայտնեց մի ուշագրավ ճշմարտություն Իր Խոսքի միջոցով: Փենեհեսն Ահարոն քահանայապետի թոռն էր: Նա նախանձավոր էր Աստծո և Իսրայելի ժողովրդի համար: Նրա ուժգին սուրբ երկյուղը դրդեց նրան անել այն, ինչից այլ հավատացյալներ վախենում էին. նա խիզախորեն պաշտպանեց ճշմարտությունը: Դրանից հետո Աստված ասաց. «Այժմ ասա՛ նրան, որ Ես Իմ խաղաղության հատուկ ուխտն եմ կնքում նրա հետ: Այս ուխտով Ես տալիս եմ նրան և նրա սերունդներին քահանայության մշտական իրավունք» (Թվոց 25.12,13, NLT): Ըստ էության, նրա ժառանգներին խոստացվեց ավելի մտերիմ հարաբերություն Աստծո հետ՝ նրա սուրբ երկյուղի շնորհիվ: Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ, որ մեր որդիների պաշտպանությունը՝ Լիզայի և իմ եռանդագին հնազանդությունն է Նրա կամքին:

Այժմ՝ տարիներ անց, կարող եմ ասել, որ մեր չորս որդիներն աշ-

խատել են «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության մեջ առնվազն ինը տարի: Նրանցից երկուսը գրքերի հեղինակներ են, բոլորն առաջնորդներ են, և ամենակարևորը՝ բոլորը վարվում են Աստծո սուրբ երկյուղով: Մարդիկ մշտապես հարցնում են, թե ինչ ենք մենք արել՝ աստվածապաշտ տղամարդիկ դաստիարակելու համար: Անկեղծ ասած, դա որևէ կապ չունի մեր իմաստության հետ, և մեր բազմաթիվ սխալները՝ որպես ծնողներ, բավական են գրքերի հատորներ կազմելու համար: Այնուամենայնիվ, կար մի բան, ինչում մենք չսխալվեցինք. մենք վարվում էինք սուրբ երկյուղի բարձր մակարդակով:

Երբ մեր որդիները կամակոր էին դարձել դեռահասության շրջանում, Լիզան և ես աղաղակում էինք Տիրոջը, որպեսզի Նրա խոստումը հաստատվեր մեր որդիների կյանքերում, և շարունակում էինք ապրել սուրբ երկյուղով: Մենք երբեք չկորցրինք մեր հավատքը, և դուք նույնպես չպետք է կորցնեք ձեր հավատքը: Աստծո խոստումը Տիրոջից վախեցողների համար այն է, որ «Նրա զավակը զորավոր կլինի երկրի վրա» (Սաղմոս 112.2):

Անձնական կիրառում

Հատված. «Որդիներդ՝ տնկված ձիթենիների պես, քո սեղանի չորս կողմով: Ահա հենց այսպես է օրհնվում այն մարդը, որ վախենում է Տիրոջից» (Սաղմոս 128.3,4):

Եզրահանգում. Երբ բնակվում եք սուրբ երկյուղի մեջ, ինչ-որ էական բան է փոխանցվում ձեր զավակներին. նրանք ոչ միայն ազդեցիկ մարդիկ կլինեն, այլև դուք կշարունակեք օրհնություն ստանալ նրանց միջոցով:

Մտորում. Ինչպե՞ս եմ ես դիտարկում իմ երեխաներին (կամ՝ ապագա երեխաներին): Ես անհանգստանո՞ւմ եմ նրանց ապագայի համար: Ես լիովին հանձնե՞լ եմ նրանց Հիսուսի իշխանությանը: Ես սուրբ երկյուղո՞վ եմ վարվում նրանց առջև: Ես արձագանքում, աղոթում և վարվում եմ ըստ նրանց ներկա վարքի՞, թե՞ ըստ Աստծո Խոսքի խոստումների:

Աղոթք. Սիրելի՛ Տեր, Քո Խոսքը պնդում է, որ ես հարատև ժառանգություն կապահովեմ՝ սուրբ երկյուղով վարվելու դեպքում: Ես հավատում եմ Քո խոստմանը, որ իմ զավակները զորավոր կլինեն երկրի վրա, որ նրանք ազդեցիկ և հաջողակ կլինեն և պատիվ կբերեն Քո անվանը և իմ անվանը: Ես որոշում եմ կայացնում, որ շարունակելու եմ համարձակ աղոթել, որ այս խոստումները հաստատվեն: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Իմ զավակները զորավոր են երկրի վրա, հաջողակ են ամենուր, և նրանք ժառանգելու են իրենց թշնամիների դուռը:

Երբ սահմանում ենք, թե
ինչից է բաղկացած ճշմարիտ
մարդկային իմաստությունը,
ամենից հարմար է
օգտագործել այնպիսի բառ,
որը հստակ կարտահայտի
Աստծո երկյուղը:

– ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ

39|ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԲԱՆԸ

Այս գլխի թեման այնքան ծավալուն է, որ միայն այս մասին կարելի էր մի ամբողջ գիրք գրել: Այնուամենայնիվ, եթե անտեսեինք այն, այս ուղերձը լիարժեք չէր լինի: Այսպիսով, դիտարկեք սույն գլուխը որպես սուրբ երկյուղի այս կարևոր կողմի ներածություն:

Լսեք հետևյալ խոսքերը մեր Արարչի սրտից՝ կյանքի խոսքերը, ճշմարտության խոսքերը, այն խոսքերը, որոնք պաշտպանում են, որոնք ավելի մնայուն են, քան արևը, լուսինը և աստղերը, որոնք ավելի հաստատ են, քան այն հողը, որի վրա կանգնած ենք.

> «Ուրախ է այն մարդը, որն իմաստություն է գտնում. նա, ով հասկացողություն է ձեռք բերում... *ոչինչ,* որ դու ցանկանում ես, չի կարող համեմատվել նրա հետ» (Առակաց 3.13,15, NLT):

Չկա *ոչինչ* այս աշխարհում, ինչը հավասար է աստվածային իմաստությանը: Սա ուշագրավ է. *ոչինչ*: Ահա թե ինչու է գրված. «Իմաստություն ստանալը ամենակարևոր բանն է, որ կարող ես անել» (Առակաց 4.7, GNT), և հենց որ այն գտնվի, «կառաջնորդի քեզ բերկրալի շավիղներով. նրա բոլոր ճանապարհները բավականություն պատճառող են» (Առակաց 3.17, NLT):

Մենք պետք է փնտրենք Աստծո իմաստությունը յուրաքանչյուր որոշման մեջ, որ կայացնում ենք, քանի որ գրված է. «Եթե արժևորես իմաստությունը, այն *մեծ* կդարձնի քեզ» (Առակաց 4.8): Ինչպիսի՜ վեհ խոստում: Եբրայերենում օգտագործված «մեծ» բառի սահմանումն է «բարձրանալ, վեր ելնել, մեծարվել»: Երբ Աստված առաջ-

խաղացում է տալիս, ոչ ոք և ոչ մի հանգամանք չի կարող հետընթաց տալ: Այսպիսով, իմաստությունը ճանապարհ է դեպի տևական նշանակալիություն:

Իմաստությունը պետք է բացահայտվի. այն թաքնված է, սակայն անհասանելի չէ: Հենց որ գտնվում է, անասելի առավելություններ է բերում: Այսպիսով, ինչպե՞ս գտնել այն:

> «Իմաստության *սկիզբը* Տիրոջ երկյուղն է» (Սաղմոս 111.10, Առակաց 9.10):

«Սկիզբ» բառը եբրայերենում ակնառու բառ է: Այն գրված է Աստվածաշնչի առաջին խոսքում. *«Սկզբում* Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»: Այս բառը նշանակում է «սկզբնակետ»: Սուրբ երկյուղն իմաստության *ծագման վայրն* է: Մտածե՛ք այս մասին հետևյալ կերպով. պատկերացրեք մի գանձարան, որը լի է ամբողջ իմաստությամբ, որն անհրաժեշտ է ձեզ տևական հաջողության համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ դուռ և մեկ բանալի, որը թույլ կտա ձեզ մուտք գործել այդտեղ՝ Տիրոջ երկյուղը: Եսային գրում է. «Հարուստ պաշար... իմաստության և գիտելիքի. Տիրոջ երկյուղն այս գանձի *բանալին* է» (Եսայի 33.6, NIV):

Ըստ էության, գոյություն չունի տևական իմաստություն՝ Տիրոջ երկյուղից դուրս: Սուրբ երկյուղը մնայուն իմաստության սկիզբն է, բայց դրա օգուտը շարունակվում է նաև սկզբնակետից հետո.

> «Տիրոջ երկյուղը կենաց *աղբյուր* է՝ մահվան *որոգայթներից* խույս տալու համար» (Առակաց 14.27):

Ուզում եմ ընդգծել երկու բանալի բառ. *«աղբյուր»* և *«որոգայթներ»:* Եբրայերեն *«աղբյուր»* բառը կրում է հոսքի կամ մշտապես բխող աղբյուրի իմաստ: Բարեհաջող կյանքը չի բխում հատուկենտ կայացրած ճիշտ որոշումներից, այլ՝ իմաստուն որոշումների մշտական հոսքից, որը տևական պտուղ է բերում:

Երկրորդ բառը՝ *«որոգայթները»,* վերաբերում է ծուղակի կամ խայծի: «Այս եբրայերեն բառի պատշաճ իմաստը որսորդի ծուղակի մեջ դրված խայծն է»[1]: Յուրաքանչյուր հմուտ որսորդ գիտի, որ անհրաժեշտ է երկու բան՝ հաջող ծուղակ պատրաստելու համար: Այն պետք է թաքնված լինի, որպեսզի աննկատ մնա կենդանու համար, և պետք է խայծ ունենա, այսինքն՝ հրապուրի կենդանուն դեպի իր մահացու ճիրանները: Այս բանալի բառերի մասին բավականաչափ պատկերացում կազմելով՝ կարդացե՛ք մեկ այլ հատված, որն ավելի է պարզաբանում այս ճշմարտությունը.

«Տիրոջ երկյուղն է *իմաստության խրատը*» (Առակաց 15.33):

Միավորելով երկու հատվածներում գրված ճշմարտությունները՝ բացահայտում ենք, որ սուրբ երկյուղը Աստծո իմաստության աղբյուր կամ մշտական հոսք է: Այն մշտապես ներկա խորհրդական է, որը չի քնում և չի ննջում, այլ հետևողականորեն սովորեցնում է իմաստուն որոշումներ կայացնել կյանքում:

Թողնված լինելով ինքներս մեզ՝ առանց Աստծո իմաստության, մարդկությունը հազարավոր տարիների ընթացքում ապացուցել է, որ մենք շարունակ կործանարար որոշումներ ենք կայացնելու՝ համարելով, որ մեր որոշումները ճիշտ են: Ինչո՞ւ է այդպես: Մահվան և կործանման ուղիները թաքնված են և խայծ ունեն իրենցում՝ նման որսորդի որոգայթի: Այն, ինչը բարի, իմաստուն, օգտակար և հաճելի է թվում, հաճախ ընդամենը խայծ է, որի նպատակն է հրապուրել ձեզ դեպի այն, ինչն ի վերջո վատ, ոչ իմաստուն, կործանարար և տրտմեցնող է: Տիրոջ երկյուղը պաշտպանում է մեզ դրանից՝ *հավատարմորեն օգնելով խույս տալ այս որոգայթներից:*

Եթե նայեք ժամանակակից հասարակությանը, օժտված և իմաստուն տղամարդիկ և կանայք որոշումներ են կայացնում, որոնք կործանման են տանում իրենց ազդեցության ներքո գտնվող մարդկանց: Միևնույն ժամանակ, մյուսները կուրորեն չեն նկատում նրանց անմտությունը: Աստվածաշունչը պնդում է, որ մերժելով սուրբ երկյուղը, «նրանց անմիտ սրտերը խավարեցին: Ասելով, թե իմաստուն են, հիմարացան» (Հռոմեացիների 1.21,22): Երբ մտքերը խավարած են, տեսողությունը նույնպես խավարած է, և միայն ժամանակի հարց է, թե երբ, կուլ տալով խայծը, գլխիվայր կընկնենք մահվան թաքնված որոգայթները:

Այնուամենայնիվ, հակառակը նույնպես ճշմարիտ է: Երբ հաստատուն կերպով ընդունում ենք սուրբ երկյուղը, մեր կյանքում մշտապես ներկա և շարունակ հոսող իմաստության խորհրդական կա, որը տևական օգտակար որոշումներ կայացնելու կարողություն է տալիս: Նույնիսկ երբ մենք անտեղյակ ենք մահվան թաքնված որոգայթներից, այդ աղբյուրը շարունակ պաշտպանում է մեզ անգիտակցաբար ծուղակն ընկնելուց:

Դիտարկենք այս սկզբունքը՝ խոսելով մի մարդու մասին, որն ուխտ չուներ Աստծո հետ, սակայն վախենում էր Նրանից: Խոսքը Գերարի Աբիմելեք թագավորի մասին է: Նա տարավ Աբրահամի կին Սառային իր կանանոցը: Կարճ ժամանակ անց Աստված եկավնրա մոտ գիշերը և ասաց. «Ահա դու պիտի մեռնես այդ կնոջ պատճառով, որ դու առար, որովհետև նա մի մարդու կին է» (Ծննդոց 20.3):

Աբիմելեքն աղաղակեց. «Տե՛ր... Ես ուղիղ սրտովս և մաքուր ձեռ-

քերովս արի այս» (խոսք 4,5): Ինչ վերաբերում է «Տեր» բառին այս խոսքում, մենք գիտենք, որ «այս բառը բառացիորեն նշանակում է «իմ Տեր»»[2]: Նրա երկյուղն Աստծուց ակնհայտ է այն բանով, թե ինչպես է նա դիմում Աստծուն, ինչպես նաև նրա պատասխանով: Այժմ լսեք, թե ինչ է Աստված ասում նրան.

> «Այո՛, Ես գիտեմ, որ դու անմեղ ես: Ահա թե ինչու *թույլ չտվեցի, որ մեղանչես Իմ դեմ,* և ահա թե ինչու թույլ չտվեցի քեզ դիպչել նրան» (Ծննդոց 20.6, NLT):

Տիրոջ երկյուղը խորհրդական էր, որից նա անտեղյակ էր, սակայն դրա նպատակն էր՝ ետ պահել նրան մահվան որոգայթից: Այդ որոգայթը թաքնված էր. այն ներկայացված էր խաբուսիկ կերպով՝ որպես Աբրահամի քույր, սակայն սուրբ երկյուղը պաշտպանեց նրան: Ինչպե՞ս է, որ հեթանոս թագավորը, որը չուներ հայտնի ուխտ Աստծո հետ և չուներ Աստծո գրված Խոսքը, դողաց այլ տղամարդու կնոջը վերցնելու մտքից: Մենք գտնում ենք պատասխանը Պողոսի հետևյալ խոսքերում. «Նույնիսկ հեթանոսները, որոնք չունեն Աստծո գրված օրենքը, ցույց են տալիս, որ գիտեն Նրա օրենքը, երբ բնազդորեն հնազանդվում են դրան՝ նույնիսկ առանց այն լսելու: Նրանք ցույց են տալիս, որ Աստծո օրենքը գրված է իրենց սրտերում, որովհետև նրանց խիղճը և մտքերը կա՛մ մեղադրում են իրենց, կա՛մ հայտնում են, որ իրենք ճիշտ են վարվում» (Հռոմեացիների 2.14,15, NLT):

Ավելին՝ ինչպե՞ս է, որ այս հեթանոս թագավորը դողաց այլ տղամարդու կնոջը վերցնելու մտքից, սակայն մի փորձառու հովիվ կամ այնպիսի անձնավորություն, որը տարիներ շարունակ եկեղեցի է հաճախում, շնություն է գործում այլ տղամարդու կնոջ հետ՝ մի երևույթ, որին վերջերս ավելի հաճախ ենք ականատես լինում: Պատասխանը բարդ չէ: Թեև այդ եկեղեցական առաջնորդը կամ եկեղեցի հաճախող մարդն իր բերանով դավանում է, որ պատկանում է Հիսուսին, նա չունի Աստծո երկյուղը: Գրված է.

> «Եվ ես գտա մահից ավելի դառը՝ այն կնոջը, որի սիրտը *ցանցեր* և ուռկաններ են, և որի ձեռքերը՝ կապանքներ: Աստծո առջև հաճելի եղողը կազատվի նրանից, իսկ *մեղավորը* կբռնվի նրա մեջ» (Ժողովող 7.26):

Աստվածաշունչը չի ասում, որ *անօրենը* կբռնվի, այլ՝ *մեղավորը,* այսինքն՝ նա, որը վրիպում է նշանակետից, քանի որ սուրբ երկյուղ չունի: Սա հեշտորեն կարող է վերաբերել այնպիսի մարդու, որը դավանում է, թե քրիստոնյա է: Հակոբոսը գրում է դավանող հավատաց-

յալներին. «Լվացեք ձեր ձեռքերը, ո՛վ *մեղավորներ*. մաքրե՛ք ձեր սրտերը, որովհետև ձեր հավատարմությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև» (Հակոբոս 4.8, NLT):

Մեր կողմից լայնորեն ընդունված Արևմուտքի ավետարանը համակարգված կերպով հեռացրել է Աստծո երկյուղը մեր սրտերից՝ սովորեցնելով կեղծված շնորհք, որի խրատը տարբերվում է Աստծո իմաստությունից: Այն ստեղծում է խեղաթյուրված խորհրդի անառողջ աղբյուր, ինչը հեռացնում է այն զսպող ուժը, որը պաշտպանում է մեզ մեղքից: Ճշմարիտ շնորհքը, սակայն, չի հակասում սուրբ երկյուղին.

> «Որովհետև Աստծո շնորհքը, որը փրկություն է բերում, հայտնվել է բոլոր մարդկանց՝ սովորեցնելով մեզ, որ, մերժելով անօրինությունը և աշխարհային կրքերը, մենք պետք է ապրենք զգաստ, արդար և աստվածապաշտ կերպովներկա աշխարհում» (Տիտոս 2.11,12, NKJV):

Մենք չենք կարող բաժանել Աստծո ճշմարիտ շնորհքն Աստծո սուրբ երկյուղից: Դրանք միավորված են, և երկուսն էլ *սովորեցնում* են, այսինքն՝ շարունակաբար խորհուրդ են տալիս մեզ հեռու մնալ մահվան որոգայթներից:

Անօրեն վարքի ախտն Աստծո ուխտը դավանող ժողովրդի միջև նոր բան չէ: Իսրայելի և եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում մենք տեսնում ենք նույն օրինաչափությունը, բայց այն ավելի է սաստկանում այս վերջին օրերին, որոնք, Հիսուսի խոսքերով, նշանավորվելու են մոլորությամբ: Սուրբ երկյուղի կորուստը բացում է մարդկանց սրտերը և անձերը խավար խորհուրդների համար, որոնք ճշմարիտ են թվում, այնինչ, իրականում, անգիտակցաբար տանում են դեպի մեղքը և մահը:

Ներկայումս անօրինության ուժն արագորեն տարածվում է մեր հասարակության մեջ: Դրա ազդեցությունը շեշտակիորեն մեծանում է: Եթե լայնորեն ընդունված կեղծ շնորհքը շարունակի հեռացնել սուրբ երկյուղը հավատացյալների սրտերից, դավանող քրիստոնյաների մեծամասնությունն անկում կապրի՝ անօրինությունից բխող մոլորության պատճառով: Մեզ սուրբ երկյուղի արթնություն է պետք, քանի որ այն շարունակ պաշտպանում է մոլորությունից: Դրա շնորհիվ մեր սրտերը կհետևեն ճշմարտությանը, նույնիսկ եթե մեծամասնությունն արդեն իսկ գլխիվայր ընկել է մոլորության մեջ:

Ընդունե՛ք սուրբ երկյուղը՝ որպես մեծ գանձ: Հսկե՛ք այն ջանասիրաբար, քան կհսկեիք մեկ միլիոն դոլարը, թանկարժեք զարդերը կամ լավագույն տունը: Մենք պաշտպանում ենք այդ թանկարժեք իրերը՝ պահելով պետականորեն ապահովագրված բանկերում և պահոցնե-

րում, չիրկիզվող պահարաններում, կամ՝ տեղադրելով անվտանգության համակարգեր, սակայն մեր մեծագույն գանձը Տիրոջ երկյուղն է: Ահա թե ինչու է գրված. «Հսկի՛ր քո *սիրտը* ամեն ինչից առավել, քանի որ այն որոշում է քո կյանքի ընթացքը» (Առակաց 4.23, NLT):

Անձնական կիրառում

Հատված. «Ահա իմաստությունը կանչում է, և հանճարը ձայն է տալիս... Որովհետև ինձ գտնողը կյանք է գտել, և Տիրոջից շնորհք կստանա: Բայց ինձ դեմ մեղանչողը կվնասի իր հոգին» (Առակաց 8.1,35,36):

Եզրահանգում. Որպես Քրիստոսի հետևորդներ, իմաստություն ստանալն ամենակարևոր բանն է, որ կարող ենք անել: Տիրոջ երկյուղն իմաստության աղբյուր է. այն պաշտպանում է մեզ մահվան որոգայթներից:

Մտորում. Ես գծե՞լ եմ սահմաններ իմ կյանքում: Ես որոշե՞լ եմ չընդունել իմ հասարակության իմաստությունը, որը հակառակ է Աստծո Խոսքին: Ես պատրա՞ստ եմ հալածվել Նրա Խոսքի հանդեպ իմ համոզմունքների և հնազանդության համար: Ես սկսելո՞ւ եմ ավելի մեծ ուշադրությամբ փնտրել Հիսուսի իմաստությունն իմ ամենօրյա որոշումներում:

Աղոթք. Սիրելի՛ Հայր, Հիսուսի անունով, ես աղաղակում եմ Քո իմաստության և հանճարի համար: Խնդրո՛ւմ եմ, բացի՛ր իմ ականջները և աչքերը, որպեսզի ընկալեմ այն: Ես չեմ ուզում անմիտ լինել՝ ինձ իմաստուն կարծելով: Ես կարժևորեմ իմ Տեր Հիսուս Քրիստոսի իմաստությունը և կառչած կլինեմ դրանից՝ ավելի, քան աշխարհի առաջարկած ցանկացած բանից: Ես որոշում եմ հնազանդվել, նույնիսկ եթե հալածվեմ իմ համոզմունքների և հնազանդության համար: Ամե՛ն:

Դավանություն. Ես վճռել եմ փնտրել իմ Տեր Հիսուսի իմաստությունը՝ յուրաքանչյուր որոշման մեջ, որ կայացնում եմ:

Աստծո երկյուղը
վայել է խոնարհներին:

– ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ

40| ՀԱՋՈՂԱԿ ԿՅԱՆՔ

Խորամուխ լինելով Առակաց գրքի իմաստության մեջ՝ տեսնում ենք այն, ինչ ես անվանում եմ «զորավոր երկվորյակներ»: Այս երկու առաքինությունները միշտ միասին են և հաճախ լրացնում են իրար Աստվածաշնչում: Դրանց մասին գրված է հետևյալ խոսքում.

> «*Ճշմարիտ խոնարհությունը* և *Տիրոջ երկյուղն* առաջնորդում են հարստության, պատվի և երկար կյանքի» (Առակաց 22.4, NLT):

Ճշմարիտ խոնարհությունը և սուրբ երկյուղը կապակցված են: Դուք երբեք չեք գտնի այնպիսի մարդու, որն ունի Աստծո երկյուղը և ճշմարտապես խոնարհ չէ, ո՛չ էլ կգտնեք ինչ-որ մեկի, որը ճշմարտապես խոնարհ է, սակայն չունի երկյուղ Աստծուց: «Ճշմարիտ» բառը կարևոր է, քանի որ գոյություն ունեն կեղծ խոնարհության տարբեր ձևեր: Հաջորդ գլխում կխոսենք այս մասին ավելի սպառիչ կերպով:

Եկեք համառոտ դիտարկենք երեք թվարկված խոստումները. հարստություն, պատիվ և երկար կյանք: *«Հարստություն»* բառը եբրայերենում *«օշեր»* բառն է, որի սահմանումն է «հարստություն, առատություն. այն նկարագրում է ամեն տեսակի հարստություն՝ հողատարածքներ, ունեցվածք, անասուններ և ժառանգներ»: Այս բառի իմաստը պարզ է, և մենք մեկ անգամ չէ, որ տեսնում ենք Աստվածաշնչում հարստությունը՝ որպես սուրբ երկյուղի խոստում: Սաղմոսերգուն նույնպես գրում է.

> «Երանելի է այն մարդը, որ Տիրոջից վախենում է և Նրա պատվիրանները շատ հավանում է... Ապրանք և հարստություն կլինի նրա տանը, և նրա արդարությունը կմնա հավիտյան» (Սաղմոս 112.1,3):

Այս խոսքում գրված է նույն եբրայերեն *«օշեր»* բառը: Այս ճշմարտությունը կարող է հակասական թվալ: Ոմանք համարում են, որ հարստություն և առատություն ունենալը հակառակ է աստվածապաշտությանը: Այնուամենայնիվ, եթե մենք մերժում ենք պարզ սուրբգրային ճշմարտությունները՝ հանուն մեր ավանդության, մի՞թե դա հպարտության ցուցանիշ չէ, որն, անկասկած, սուրբ երկյուղի հակադրությունն է:

Ես պետք է ինքս հասկանայի սա տարիներ առաջ: Մեր ծառայության վաղ տարիներին Լիզան և ես ականատես էինք լինում, թե ինչպես էին ծառայողները քարոզում, այսպես կոչված, «բարգավաճման ավետարանը», ինչի պատճառով ճոխությունը դարձավ շատերի կյանքի նպատակը: Դրա պտուղը կործանարար էր. շատերը հայտնվեցին ագահության մեջ, ինչը կռապաշտություն է: Բազմաթիվ մարդիկ մոլորվեցին ճշմարիտ հավատքից և տարբեր նեղություններ բերեցին իրենց կյանքում: Տեսնելով այդ ուսմունքի զոհերին՝ արձագանքեցինք՝ անցում կատարելով հակառակ ծայրահեղության: Մենք սկսեցինք արհամարհել ցանկացած ուսմունք, որը հիշատակում էր հարստությունը, առատությունը և բարգավաճումը: Ի վերջո, Սուրբ Հոգին շտկեց մեր ոչ հասուն վերաբերմունքը: Մենք պետք է ընդունեինք ճշմարտությունն այն մասին, որ Աստծուց իրապես երկյուղ ունեցող մարդը կարող է պատշաճ կերպով տնօրինել հարստությունը և չհայտնվել ագահության ծուղակում:

Ո՞րն է հարստության և առատության նպատակը: Դրանք միջոցներ են՝ մարդկանց օրհնելու համար: Այս գիրքը գրելու պահին մեր ծառայությունը բաժանել է ավելի քան 53 միլիոն քրիստոնեական նյութեր՝ տպագրված գրքեր և դասընթացներ, 118 լեզվով խոսող հովիվների և առաջնորդների, որոնք ապրում են 130 երկրներում: Մենք նույնպես մի հավելված ենք ստեղծել, որը կոչվում է «MessengerX» (Մեսինջեր Իքս), որտեղ հասանելի են աշակերտության համար նախատեսված նյութեր 122 լեզուներով: Այդ նյութերն արդեն իսկ ներբեռնվել են 230 երկրներում, և մեր հավելվածն անվճար է՝ օգտագործման համար: Այս նախագծերի պատրաստման համար պահանջվել են տասնյակ միլիոնավոր դոլարներ: Ինչ կլիներ, եթե այն տղամարդիկ և կանայք, որոնք աջակցել են այս աշխատանքին, հավատային, որ աստվածապաշտությունը համարժեք է չքավորությանը կամ աղքատությանը: Եթե նրանք այդպես մտածեին, մենք չէինք կարողանա հավատքի մեջ հաստատել այն միլիոնավոր մարդկանց, որոնց համար մեր ծառայությունը հասանելի է դարձել:

Մեծ տարբերություն կա ագահությամբ տարված լինելու և հարստության միջոցով մարդկանց կյանքերում ազդեցություն թողնելու միջև: Ճշմարտապես Աստծուց երկյուղ ունեցող մարդիկ հասկանում են այս տարբերությունը և հեռու են մնում առաջինից: Նոր կտակարանում, այն բանից հետո, երբ Հիսուսը խաչվեց, գրված է.

> «Եվ երբ որ իրիկուն եղավ, Արիմաթիայից մի *հարուստ* մարդ եկավ, անունը Հովսեփ, որ ինքն էլ *աշակերտ եղած էր Հիսուսին:* Սա գնաց Պիղատոսի մոտ և Հիսուսի մարմինը խնդրեց» (Մատթեոս 27.57,58):

Հովսեփը հարուստ էր, և Աստվածաշունչը Հիսուսի աշակերտ է անվանում նրան: Այնուամենայնիվ, զավեշտական է, որ Հիսուսի հետևորդների մեծամասնությունը փախչել և թաքնվել էր: Սակայն այդ հարուստ մարդը, իր սուրբ երկյուղի շնորհիվ, համարձակվեց անտեսել հրեա առաջնորդների ահաբեկումը և Հռոմի հզորությունը՝ մոտենալով Պիղատոսին և խնդրելով Հիսուսի մարմինը: Ինչպիսի՜ համարձակ անձնավորություն:

Խնդրում եմ, սխալ մի՛ հասկացեք: Եթե ինչ-որ մեկն աղքատ է, մի՞թե դա նշանակում է, որ նա չունի երկյուղ Աստծուց: Ո՛չ: Աստվածաշնչում կան շատ տղամարդիկ և կանայք, որոնք նյութական հարստություն չունեին: Մի՞թե նրանք պակաս աստվածապաշտ էին այդ պատճառով: Իհարկե՝ ո՛չ: Ճշմարիտ հարստությունը չի չափվում փողով կամ ունեցվածքով, այլ՝ մյուսներին օգնելու մեր կարողությամբ: Ահա մեր խոստումը.

> «Վախեցե՛ք Տիրոջից, ո՛վնրա սուրբեր, որովհետև Նրանից վախեցողների համար պակասություն չկա: Առյուծի կորյունները կարոտում են և սոված են, բայց Տիրոջը խնդրողները ոչ մի բարիքի պակասություն չունեն» (Սաղմոս 34.9,10):

Մարդկանց կյանքերում Աստծո թագավորության ազդեցությունը բերելը՝ աղոթքի, կերակրելու, աշակերտելու, հյուրասիրության կամ ծառայելու միջոցով, աստվածահաճո ցանկություն է: Շատ լավ է, երբ մենք միջոցների առատություն ունենք, որպեսզի կատարենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է մեր աստվածային առաքելության համար: Աստվածապաշտ մարդիկ ձգտում են կատարել այդ ամենը և, անելով դա, անձամբ օրհնվում են: Հպարտ, կրոնական և նախանձող մարդիկ ջանք չեն խնայում՝ փորձելով փաստել, թե ինչու հավատացյալները պետք է աղքատ լինեն, նաև սովորեցնում են մարդկանց այնպիսի համոզմունքներ, որոնք հիմնված չեն Աստվածաշնչի վրա:

Սողոմոն թագավորը Տիրոջ երկյուղով էր առաջնորդում և սովորեցնում իր ժողովրդին: Նրա օրոք «ամբողջ Հուդան և Իսրայելն ապրում էին խաղաղությամբ և ապահովությամբ: Եվ Դանից՝ հյուսիսում, մինչև Բերսաբե՝ հարավում, *յուրաքանչյուր ընտանիք* ուներ *իր տունը և այգին»* (Գ Թագավորաց 4.25, NLT): Ավելին՝ գրված է, որ ժողովուրդը «ուտում ու խմում և ուրախանում էր» (Գ Թագավորաց 4.20): Կանգ առեք և մտածեք հետևյալ պնդման մասին. *«յուրաքանչյուր ընտանիք* ուներ իր տունը և այգին»: Ոչ ոք ամբողջ երկրում չէր ստանում սոցիալական նպաստներ, գործազուրկ չէր և աղքատ չէր. բոլորն առատություն ունեին: Տիրոջ երկյուղը իմաստություն է տալիս, որն օգուտ է բերում նրանց, ովքեր կրում են դրա ազդեցությունը: Այս դեպքում դա վերաբերում էր մի ամբողջ ազգի: Ինչ տեղի կունենար, եթե մեր բոլոր առաջնորդները վարվեին Տիրոջ երկյուղով:

Որպես վերջին միտք, այս խոստումն այնպիսին չէ, որի համար պետք է պատերազմենք աղոթքով, ինչպես որ Իսահակը պետք է պայքարեր, որպեսզի Ռեբեկայի արգանդը բացվեր: Հիսուսը խոստանում է մեզ. «Փնտրե՛ք Աստծո թագավորությունը ամեն ինչից առավել և արդա՛ր ապրեք, և Նա կտա ձեզ այն ամենը, ինչի կարիքը ունեք» (Մատթեոս 6.33, NLT):

Դիտարկենք հաջորդ խոստումը՝ *պատիվը:* Մեր բացման խոսքում օգտագործված «պատիվ» բառը եբրայերենում *«կավոդ»* բառն է, որի սահմանումն է «պատիվ, փառք, մեծություն, հարստություն»: Նախորդ գլուխներից մեկում տեսանք, որ Մովսեսն օգտագործեց հենց այս բառը, երբ խնդրում էր տեսնել Աստծո փառքը: Դրա իմաստն է կշիռ և հեղինակություն, որոնք չեն բխում որևէ պաշտոնից կամ դիրքից, այլ կապված են մարդու բնավորության հետ: Այսպիսով, մենք բացահայտում ենք Աստծո երկյուղի ևս մեկ զարմանալի առավելություն՝ վեհանձնությունը: Այն վերափոխում է ձեզ՝ դարձնելով արժանապատիվ և հարգված անձնավորություն: Առակաց գիրքը միակը չէ, որտեղ գրված է այս մասին. սաղմոսերգուն օգտագործում է նույն եբրայերեն բառն Աստծուց վախեցողների համար. «Նրանք ազդեցություն և պատիվ կունենան» (Սաղմոս 112.9, NLT):

Դիտարկենք Առակաց գրքի առաքինի կնոջը: Նա անհավանական հատկանիշներ ունի: Նա վստահելի է, իմաստուն է, աշխատասեր է, եռանդուն է, գործունյա է, բարգավաճ է, հարուստ է, բարի է, օգնում է կարիքավորներին և պաշտպանում է անօգնականներին: Եվս մեկ ուշագրավ հատկանիշ, որը հաճախ անտեսվում է, սակայն վերաբերում է մեր քննարկմանը, հետևյալն է. «Նա զգեստավորված է ուժով և արժանապատվությամբ» (Առակաց 31.25, NLT): Այլ կերպ ասած՝ նա կրում է պատիվը՝ զգեստի նման, ինչպես մենք հագուստ ենք կրում. այն տեսանելի և նկատելի է նրանց, ովքեր նրա շուրջն են: Եվ ո՞րն է նրա վերջին առաքինությունը:

«Սուտ է վայելչությունը, և ունայն՝ գեղեցկությունը. այն կինը, որ *վախենում է Տիրոջից,* նա կգովվի» (Առակաց 31.30):

Այն սուրբ երկյուղն է: Հրաշալի է այն, որ այս կնոջը վերագրված վեհանձնությունը և արժանապատվությունը հասանելի են ցանկացած տղամարդու կամ կնոջ, որն ունի Աստծո երկյուղը: Իմ շրջիկ ծառայության տարիներին ես հանդիպել եմ բազմաթիվ ակնառու առաջնորդների և անհատների: Շատերը մեծապես ազդել են հասարակության վրա, սակայն առավել, քան այն ամենը, ինչ մարդիկ կառուցել են, իմ ուշադրությունը գրավում են այն տղամարդիկ և կանայք, որոնք արժանապատվություն են կրում: Նրանց ներկայության մեջ կշիռ կա: Նրանք լույս, սեր, պատիվ և վեհանձնություն են ճառագում: Նրանց երեխաները սիրում և հարգում են նրանց: Նրանց աշխատակիցները և ընկերները սիրով են շփվում նրանց հետ: Հետաքրքրական է, որ այդ մարդկանց մեծ մասը հասարակական գործիչներ չեն: Ինչն է առանձնահատուկ դարձնում նրանց. նրանք Աստծո երկյուղն ունեն:

Մեր բացման խոսքի երրորդ խոստումը *երկար կյանքն է* կամ երկարակեցությունը: Այն սերտորեն կապակցված է ճշմարիտ խոնարհության հետ: Մենք մանրամասն կխոսենք այս խոստման մասին հաջորդ գլխում:

Անձնական կիրառում

Հատված. «Ովքեր վախենում են Տիրոջից, ատում են չարը... Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են Ինձ: Ովքեր որոնում են Ինձ, անպատճառ կգտնեն: Ես հարստություն և պատիվ ունեմ, ինչպես նաև մնայուն հարստություն և արդարադատություն» (Առակաց 8.13,17,18, NLT):

Եզրահանգում. Սուրբ երկյուղը և խոնարհությունը խոստանում են հարստություն, պատիվ և երկար կյանք: Հարստությունը չի չափվում մեզ պատկանող փողով կամ ունեցվածքով, այլ՝ մյուսներին օգնելու մեր կարողությամբ: Վեհանձնությունը վերաբերում է մեր բնավորությանը, ոչ թե պաշտոնին կամ դիրքին:

Մտորում. Ես դիտարկում եմ հարստությունն առողջ լույսի ներքո: Արդյոք ձգտում եմ դրան՝ անապահովության զգացումի, վախի կամ ագահության պատճառով: Միթե ավելի լավ չէր լինի, եթե ես ձգտեի Աստծո երկյուղին և հավատայի այն խոստմանը, որ դրա շնորհիվ առատություն կունենամ և ազդեցություն կթողնեմ մարդ-

կանց կյանքերում: Ինչպե՞ս եմ հասկանում արժանապատվությամբ զգեստավորվելը:

Աղոթք. Սիրելի՛ Հայր, խնդրո՛ւմ եմ, կատարի՛ր Քո խոստումն այն մասին, որ ճշմարիտ խոնարհության և սուրբ երկյուղի ձգտելիս ես կունենամ այն հարստությունը, պատիվը և երկար կյանքը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի կատարեմ իմ աստվածային առաքելությունը, որը մարդկանց ծառայելն է: Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Երբ ձգտեմ սուրբ երկյուղին և ճշմարիտ խոնարհությանը, Իմ երկնային Հայրը խոստացել է ինձ հարստություն, պատիվ և երկար կյանք:

«Խոհեմ անձը մնում է
ճիշտ ուղու վրա»:

– ԱՌԱԿԱՑ 15.21

41| ԲԱՐԵՀԱՋՈՂ ԱՎԱՐՏ

Մենք չենք կարող լիարժեք համարել մեր քննարկումը հաջողակ կյանքի մասին, եթե չխոսենք նաև բարեհաջող ավարտի մասին: Տասնութերորդ գլխում անդրադարձանք երկարակեցությանը, բայց այս գլխում կշարունակենք դիտարկել Տիրոջ երկյուղի և խոնարհության կարևոր դերը դրանում:

> «Ճշմարիտ խոնարհությունը և Տիրոջ երկյուղն առաջնորդում են հարստության, պատվի և *երկար կյանքի*» (Առակաց 22.4, NLT):

Սուրբ երկյուղի ապշեցուցիչ առավելություններից մեկը երկար օրերն են: Գրված է. «Տիրոջ երկյուղը կավելացնի օրերը» (Առակաց 10.27): Ինչպիսի՜ խոստում: Եվ այս մասին չի հիշատակվում միայն մեկ անգամ. կրկին, գրված է, որ սուրբ երկյուղի իմաստությամբ «քո կյանքի տարիները կավելացնես» (Առակաց 9.11): Մեզ խոստացվում են ոչ միայն ավելացված տարիներ, այլև՝ որ մեր օրերն ավելի արդյունավետ կլինեն:

Եվս մեկ հաստատություն այս մասին գտնվում է Տասը պատվիրաններում: Տիրոջ երկյուղը դրդում է մեզ անպայմանականորեն պատիվ ցուցաբերել մեր ծնողների հանդեպ, և երբ անում ենք դա, մեզ խոստացված է՝ «ամեն ինչ լավ կլինի քեզ համար, և դու երկար կյանք կունենաս երկրի վրա» (Եփեսացիների 6.3, NLT): Կրկին, մենք գտնում ենք ոչ միայն երկարակեցություն, այլև՝ արդյունավետություն: Մենք կարող ենք աղոթքով խնդրել այս խոստումները:

Ասելով այս ամենը՝ կարևոր է նշել, որ առանց կյանքի որակի, ավելացված տարիների վայելքը պակասում է: Սողոմոնը գրում էր իր վա-

տատեսական տարիներին. «Լավ է... մահվան օրը... ծննդյան օրից» (Ժողովող 7.1): Ակնհայտ է, որ նա, հավանաբար, չէր վայելում կյանքը, երբ գրել է այս խոսքերը: Ի՞նչն է ապահովում կյանքի որակը. ճշմարիտ խոնարհությունը և Տիրոջ երկյուղը:

Տարիներ առաջ, երբ աղոթքի մեջ էի, կարդացի.

> «Ոզիա թագավորի մեռած տարում տեսա Տիրոջը՝ բարձր և վերացած, աթոռի վրա նստած, և Նրա *քղանցքը* լցրել էր տաճարը» (Եսայի 6.1):

Եսային տեսավ Տիրոջը՝ Իր ամբողջ փառքով: Ինչպես նշեցինք նախորդ գլուխներից մեկում, նա տեսավ Ամենակարողին՝ Իր գահի վրա, հսկա հրեշտակներին և դռների սյունները, որոնք ցնցվում էին նրանց բացականչություններից: Այս փորձառության արդյունքում նրա կյանքն արմատապես փոխվեց:

Այս պատմությունը կարդալուց հետո ես աղաղակեցի.

- Տե՛ր, ահա թե ինչ է ինձ պետք. նորովի տեսնել Հիսուսին:

Սուրբ Հոգին շշնջաց իմ սրտում. «Ես չսկսեցի այս խոսքը դրանով: Վերադարձի՛ր և կրկի՛ն կարդա»:

Ես շփոթվեցի, սակայն կատարեցի Նրա կարգադրությունը, և այս անգամ «Ոզիա թագավորի մեռած տարում» բառերն ասես դուրս թռան էջից: Ես լսեցի. «Ոզիան պետք է մահանար, մինչև որ Եսային կկարողանար նորովի տեսնել Ինձ»:

Այդ ժամանակ շատ բան չգիտեի Ոզիայի մասին: Ես միայն գիտեի, որ նա Իսրայելի կամ Հուդայի թագավորներից մեկն էր: Բայց երբ սկսեցի ուսումնասիրել նրա կյանքը, մի շարք ուշագրավ փաստեր բացահայտեցի: Նա նստեց Հուդայի թագավորության գահին, երբ ընդամենը տասնվեց տարեկան էր, և թագավորեց հիսուներկու տարի: Այս մասին պատկերացում կազմելու համար, վերջին հիսուներկու տարում ես եղել եմ տասը տարբեր ԱՄՆ նախագահների իշխանության ներքո: Ոզիան բավականին երկար է թագավորել:

Տասնվեց տարեկանում ստանալով իշխանություն միլիոնավոր մարդկանց վրա՝ նա իմաստուն կերպով վարվեց. նա սկսեց փնտրել Աստծուն: Գրված է. «Որքան ժամանակ որ նա խնդրում էր Տիրոջը, Աստված նրան հաջողություն էր տալիս» (Բ Մնացորդաց 26.5): Նա աներևակայելի ձեռքբերումներ ունեցավ: Այն իմաստությունը, որ Աստված տվեց, բարձրացրեց նրան՝ հասցնելով ապշեցուցիչ մեծության: Նա ամրապնդեց տնտեսությունը, վերականգնեց քաղաքները, ազդեցիկ բանակ ձևավորեց և ետ գրավեց այն տարածքները, որոնք իր հայրերը կորցրել էին: Գրված է. «Նրա համբավը տարածվեց հե-

ռավոր վայրեր, որովհետև Տերը զարմանալի օգնություն տվեց նրան, և նա շատ հզորացավ» (Բ Մնացորդաց 26.15, NLT):

Այնուամենայնիվ, ինչպես և Սողոմոնի դեպքում, Տիրոջ երկյուղը նրա գանձը չէր: Ցավոք, գրված է.

> «Բայց երբ նա հզորացավ, նույնպես *հպարտացավ,* ինչը դարձավնրա անկման պատճառը» (Բ Մնացորդաց 26.16, NLT):

Ինչ-որ պահի նա կորցրեց խոնարհությունը և սուրբ երկյուղը, որոնցով սկսել էր իր ընթացքը: Ահա մի կարևոր ճշմարտություն. այս զորավոր երկվորյակ առաքինությունները կստեղծեն պտղաբերության ընթացք, ինչը նշանակում է, որ հաջողությունը, որպես կանոն, կշարունակվի, նույնիսկ եթե դրա սկիզբը դնող և ընթացքն ապահովող առաքինություններն այլևս դրա հիմքում չեն: Այն, ինչ մենք կարդում ենք դրանից հետո, բավականին հետաքրքիր է.

> «...հանցանք գործեց իր Տեր Աստծո դեմ և մտավ Տիրոջ տաճարը, որ խնկի սեղանի վրա խունկ ծխի»
> (Բ Մնացորդաց 26.16):

Սուրբ Հոգին մի հարց տվեց ինձ. «Որդի՛ս, Ոզիան դարձավ *ավելի՞* հոգևոր, թե՞ *պակաս* հոգևոր, երբ հպարտությունը մտավնրա սիրտը: Ես անմիջապես հասկացա, որ պատասխանը հակառակ էր իմ տրամաբանությանը: Ես միշտ կարծում էի, որ երբ հպարտությունը մտնում է մարդու սիրտը, նա պակաս հոգևոր է դառնում: Այնուամենայնիվ, Ոզիան տաճար մտավ, որպեսզի հոգևոր գործողություն կատարեր Տիրոջ առջև: Ես չէի նկատի դա, եթե Սուրբ Հոգին չտար ինձ այդ հարցը:

Ցնցված՝ ես բարձրաձայն ասացի.

- Նա ավելի հոգևոր դարձավ:

Սուրբ Հոգին շշնջաց իմ սրտում. «Հպարտության հոգին և կրոնի հոգին միասին են գործում, և նրանք ուժ են տալիս միմյանց՝ մեկը մյուսին թաքցնելով»: Հպարտությունը թույլ չի տալիս մարդուն ընդունել, որ ինքը կրոնավոր է դարձել, իսկ կրոնը ծածկում է հպարտությունը՝ հոգևոր վարքով:

Ես մտածեցի Հիսուսի օրերում ապրող փարիսեցիների մասին: Ոզիայի պես, այդ առաջնորդները, հավանաբար, սկսել էին Եհովայի հանդեպ անկեղծ սիրով և սուրբ երկյուղով, բայց ինչ-որ պահի հպարտությունը մուտք էր գործել նրանց սրտերը: Նրանք շարունակում էին հեռվանալ Աստծուց, սակայն շարունակ ավելի ներգրավված էին դառնում հոգևոր գործունեության մեջ:

Ոզիան ընդդիմության հանդիպեց քահանաների կողմից, որոնք

մատնացույց արեցին նրա ոչ սուրբգրային վարքը: Երբ Ոզիային ընդդիմացան ճշմարտությամբ, նա բարկացավ քահանաների վրա (ինչը նույնպես խոնարհության կորստի ցուցիչ է(: Հանկարծ նրա ճակատը բորոտությամբ պատվեց: Այս թագավորի կյանքի մնացորդը ողբերգական էր. նա հարկադրված էր ապրել մեկուսացված տան մեջ: Նրա որդին ստանձնեց նրա իշխանությունը թագավորական ապարանքում, և, ի վերջո, Ոզիան մահացավ բորոտությունից:

Դիտարկենք սա հասարակության աչքերով: Միակ ակնհայտ իրողությունը Հուդայի և Երուսաղեմի բնակիչների համար այն էր, որ նրանց թագավորը վարակվեց բորոտությամբ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես սոցիալական ցանցերը կտարածեին դա: Կհայտնվեին բազմաթիվ մեկնաբանություններ. «Ո՜չ, մեր թագավորը բորոտությամբ է վարակվել, ինչպիսի՜ ողբերգություն»: Ոչ ոք ժողովրդից չգիտեր, թե ինչն էր այդ հիվանդության պատճառը: Բայց Սուրբ Հոգին ցույց է տալիս «ներքին անցուդարձը». պատճառը՝ սուրբ երկյուղի և խոնարհության կորուստն էր:

Տեսնելով սա՝ ես շարունակեցի հարցնել Տիրոջից մեր օրերի վերաբերյալ: Իմ սիրտը ցավում է այն բազմաթիվ առաջնորդների համար, որոնց անկումը տեսել եմ կյանքիս ընթացքում: Ամենից հաճախ պատճառը եղել է արտամուսնական կապը, բայց երբեմն դա տեղի է ունենում հարբեցողության, թմրամոլության, ագահության կամ այլ արատների պատճառով: Նրանցից յուրաքանչյուրը սկսել է Հիսուսին փառք բերելու մեծ եռանդով: Ինչպե՞ս նրանք կարող էին տեղի տալ նման խավար վարքի: Մի՞թե չէին տեսնում մյուսներին, որոնք գնում էին նույն ճանապարհով:

Սուրբ Հոգին կրկին խոսեց ինձ հետ. «Որդի՛ս, անկում ապրած առաջնորդների խնդիրը հորմոնները չէին, այլ՝ հպարտությունը»: Այն, ինչ բոլորս տեսել ենք, նրանց ճակատին հայտնված բորոտությունն էր՝ նրանց սիրավեպերը, արատները կամ այլ արարքներ, որոնք հանգեցրել են նրանց անկմանը: Սակայն մենք չենք տեսել այն հպարտությունը, որը գրավել էր սուրբ երկյուղի և խոնարհության տեղը նրանց կյանքում: Միայն Աստված գիտի, թե որ պահին է դա սկսվում: Նույնիսկ անկում ունեցող առաջնորդը չգիտի այդ մասին, քանի որ հպարտությունը կուրացնում է իր զոհին՝ թույլ չտալով պարզ տեսնել:

Տևական հաջողության պատճառով մենք հեշտորեն կարող ենք մոռանալ, թե ինչը հասցրեց մեզ այդտեղ՝ խոնարհությամբ և սուրբ երկյուղով Աստծուն ջանասիրաբար փնտրելը: Ահա թե ինչու է անչափ կարևոր, որ մեր հաջողության պահերին մեր առջև պահենք Հիսուսի հետևյալ խոսքերը. «Առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.5):

Ըստ էության, այդ օրը Սուրբ Հոգին ասաց. «Ջո՛ն, դու նորովի

տեսնելու ես Հիսուսին՝ այն չափով, որ չափով հպարտությունը մահանա քո կյանքում»: Վերափոխումն առաջնահերթ է, իսկ առանց Աստծուն նորովի տեսնելու, մենք բաց ենք թողնում Նրան ավելի նմանվելու հնարավորությունը: Բազմաթիվ հայտնի ծառայողներ չունեցան բարեհաջող ավարտ, թեև բոլորն էլ հավատում էին, որ կարող էին խուսափել խոնարհության և սուրբ երկյուղի կորստի անխուսափելի հետևանքներից: Մի՛ խաբվեք. ամո՛ւր կառչեք ճշմարիտ խոնարհությունից, ունեցե՛ք բացարձակ կախվածություն Հիսուսից և սուրբ երկյուղը դարձրե՛ք ձեր գանձը: Այսպե՛ս վարվեք: Աստծո խոստումն է՝ հարստություն, պատիվ և երկար կյանք:

Անձնական կիրառում

Հատված. «Լսի՛ր ինձ և արա՛ այն, ինչ ասում եմ, և կունենաս երկար, լավ կյանք» (Առակաց 4.10, NLT):

Եզրահանգում. Մենք նորովի տեսնելու ենք Հիսուսին՝ այն չափով, որ չափով հպարտությունը մահանա մեր կյանքում: Ճշմարիտ խոնարհությունն արմատացած է սուրբ երկյուղի մեջ: Խոնարհությունը գիտելիք է այն մասին, որ առանց Հիսուսի մենք չենք կարող ոչինչ անել: Այդ իսկ պատճառով, որոշում ենք կայացնում լիովին և բացարձակապես կախված լինել Նրանից:

Մտորում. Արդյո՞ք իմ կյանքում խոնարհություն կա: Իմ կյանքում կա՞ն ոլորտներ, որոնք ինքս եմ տնօրինում: Ես կազմո՞ւմ եմ ծրագրեր՝ առանց Տիրոջ հետ խորհրդակցելու: Կայացնո՞ւմ եմ որոշումներ՝ առանց ներս նայելու, որպեսզի ստանամ Նրա վկայությունը: Եթե այդպես է, ինչպե՞ս կարող եմ փոխել այս մոտեցումը: Ինչպե՞ս է գոհությունը օգնում ինձ մնալ և՛ համարձակ, և՛ խոնարհ:

Աղոթք. Սիրելի՛ Հայր, Հիսուսի անունով, ների՛ր ինձ հպարտության համար՝ իմ կյանքի հետևյալ ոլորտներում *(թվարկե՛ք դրանք):* Ես ապաշխարում եմ՝ ինքս ինձնից կախված լինելու և ինձ այլ մարդկանցից բարձր դասելու համար: Մաքրի՛ր ինձ Հիսուսի արյամբ: Ես խոնարհեցնում եմ ինձ Քո առջև և որոշում եմ համարել մարդկանց ավելի կարևոր, քան ինքս ինձ: Ամե՛ն:

Դավանություն. Իմ որոշումն է, որ խոնարհությունը և Տիրոջ երկյուղն առաջնորդեն իմ կյանքը:

Ես հաճախ եմ աղոթում. «Աստվա՛ծ, ուղարկի՛ր ապաշխարության և Աստծո երկյուղի արթնություն, որը կտարածվի ամբողջ աշխարհամասով, որպեսզի մենք խնայվենք և պատվենք Քեզ»:

– Է. Ու. ԹՈՋԵՐ

42| ԳԱՆՁԸ ԳՏՆԵԼԸ

(Նշում ընթերցողին. այս գլուխը սովորականից երկար է լինելու՝ գրքի ուղերձը պատշաճ կերպով ավարտելու համար: Եթե դուք ընթերցում եք գիրքն ամեն օր, ես բաժանել եմ այս գլուխը երկու մասի՝ առավոտյան և երեկոյան ընթերցանության):

Առավոտյան ընթերցանություն. առավելությունների ամփոփումը

Այն վեհ առավելությունները, որոնք սուրբ երկյուղը տրամադրում է, անչափ շատ են մեկ գրքի համար: Անհրաժեշտ են հատորներ՝ դրանք սպառիչ կերպով քննարկելու համար: Ես ուսումնասիրել եմ դրանք գրեթե երեք տասնամյակ և դեռ երկյուղած եմ այն ամենից, ինչ Սուրբ Հոգին հայտնում է ինձ Աստվածաշնչից: Այնպես որ, եկեք ամփոփենք այս բաժինը՝ հպանցիկ դիտարկելով ևս մի քանի խոստում: Համարեք յուրաքանչյուրը ներածություն՝ ձեր հետագա ուսումնասիրության և բացահայտումների համար: Ընդունեք այս խոստումները ձեր սրտում: Մի՛ փորձեք անուշադրության մատնել կամ տրամաբանել, թե ինչու դրանք չեն կատարվում: Անընդմեջ դավանեք այս խոստումները Աստծո առջև: Եթե ունեք Աստծո երկյուղը, դրանք ձեր գանձերն են, որոնք պետք է գտնեք, և որոնց պետք է տիրանաք:

> «Որքա՜ն *ուրախ* են նրանք, ովքեր վախենում են Տիրոջից, ովքեր հետևում են Նրա ճանապարհներին: Դու *ուրախությամբ կվայելես* քո աշխատանքի պտուղը: Որքա՜ն *ուրախ* և բարգավաճ դու կլինես» (Սաղմոս 128.1,2, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ «ուրախ» արմատով բառերը հանդի-

պում են երեք անգամ ընդամենը երկու խոսքում: Աստծուց ճշմարտապես վախեցող մարդու կյանքում առատ ուրախություն կա: Այս հատվածում հատուկ նշված ոլորտներից մեկը, որտեղ մենք ուրախություն ենք ունենալու, մեր աշխատանքն է: Ես երբեք չեմ մոռանա մի իրադարձություն, որը մեծ ազդեցություն թողեց իմ կյանքում: Այն տեղի ունեցավ, երբ աշխատում էի որպես ինժեներ «Այ-Բի-Էմ» ընկերությունում՝ վաղ 1980-ական թվականներին: Մենք տոնում էինք մեր աշխատակիցներից մեկի աշխատանքային երեսունութ ամյակը: Մոտավորապես տասը հոգով հավաքվել էինք նրա գրասենյակում աշխատանքային օրվա սկզբին:

Ինչ-որ պահի այդ անձնավորությունն ասաց.

- Ես ատել եմ ամեն օրը, երբ այս շենք եմ մտել՝ երեսունութ տարի:

Մյուսները ծիծաղեցին և գլխով արեցին՝ համաձայնելովնրա հետ:

Ես դեռ մի քանի ամիս էր, որ աշխատում էի այդտեղ, երիտասարդ էի և անտեղյակ, բայց շփոթվեցի և հարցրի.

- Այդ դեպքում, ինչո՞ւ եք աշխատում այստեղ:

Նրա քմծիծաղն արագորեն փոխվեց արհամարհանքի. նա շրջվեց՝ նայելով ինձ, և հեգնանքով ասաց.

- Ջո՛ն, սա աշխատանք է: Դու պետք է աշխատես, որպեսզի կերակուր և հագուստ գնես:

Ես տեսնում էի մյուս տղամարդկանց հայացքներից, որ նրանք համաձայն էին այդ մարդու հետ: Ես հասկացա, որ այլևս ոչինչ պետք չէր ասել, քանի որ ես չէի գտնվում իմաստուն մարդկանց ընկերակցության մեջ: Միակ պատճառը, թե ինչու ես ընդունվեցի ճարտարագիտական համալսարան, լավ վճարվող աշխատանք չունենալու վախն էր: Նրա բացատրությունը բացահայտեց իմ անսուրբ վախը: Ես որոշում կայացրի, որ երեսունութ տարի անց չէի ասելու ճիշտ նույն խոսքերը: Այդ վախը չէր ուղղորդելու իմ կյանքը. ես վստահելու էի Աստծուն: Ուրախ եմ ասելու, որ այդ ժամանակվանից ես վայելել եմ իմ աշխատանքի պտուղը, և այս խոստումը պատկանում է նրանց, ովքեր Աստծո երկյուղն ունեն:

Սաղմոսերգուն շարունակում է.

> «Կինդ պտղաբեր որթի պես է քո տան ներսերում: Որդիներդ՝ տնկված ձիթենիների պես քո սեղանի չորս կողմով: Ահա հենց այսպես է *օրհնվում այն մարդը, որ վախենում է Տիրոջից»* (Սաղմոս 128.3,4):

Դուք կվայելեք ձեր ձեռքի աշխատանքը, ձեր կողակիցը ծաղկունք կապրի, և ձեր եռանդուն երեխաները կցանկանան ձեր կողքին լի-

նել: Այնքա՛ն մարդկանց կյանքերում չկա այն, ինչ պատկերված է այս խոսքերում. իրականում, մեր հասարակության մեծ մասը զուրկ է սրանից: Այնքա՛ն շատ գումար վաստակող մարդիկ կան, որոնք չեն վայելում կյանքը: Նրանք անհաշտ են իրենց կողակիցների հետ, իսկ նրանց երեխաները չեն ուզում գործ ունենալ իրենց ընտանիքների հետ: Նրանց ընտանիքները թառամում են՝ ծաղկունք ապրելու փոխարեն... բայց կա աստվածային հույս:

Այս խոստման հույսը հստակ է և հրաշալի: Այն չի վերաբերում նրանց, ովքեր եկեղեցի են հաճախում կամ նույնիսկ դավանում են, որ հարաբերություն ունեն Հիսուսի հետ: Այն հատկապես պնդում է. «Սա Տիրոջ օրհնությունն է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից» (Սաղմոս 128.4, NLT):

Հարգելի՛ ընթերցող, դուք գրեթե ավարտել եք այս ուղերձը: Եթե հասել եք մինչև այստեղ, նշանակում է՝ որոշել եք երկյուղ ունենալ Աստծուց: Նշանակում է՝ սա այն խոստումներից մեկն է, որոնք դուք կարող եք աղոթքով խնդրել: Աղաղակե՛ք Աստծուն, ինչպես որ Իսահակն էր աղաղակում, որպեսզի սուրբ երկյուղի խոստումները կատարվեն ձեր կյանքում: Ամիսներ շարունակ այս խոստումներն իրականություն չէին մեր ընտանիքում: Իրավիճակը ցույց էր տալիս, որ գուցե դրանք երբեք էլ իրականություն չդառնային, բայց մենք հարել էինք Աստծո խոստումների հույսին և աղոթքով պայքարում էինք դրանց համար: Այժմ կարող ենք ասել, որ տարիներ շարունակ դրանք կատարված են մեր ընտանիքում:

Կարդանք մեկ այլ սաղմոս, որը հանգամանորեն խոսում է Աստծուց երկյուղ ունեցող մարդկանց մասին.

> «Փա՛ռք Տիրոջը: Որքա՛ն *ուրախ* են նրանք, ովքեր վախենում են Տիրոջից և ցնծում են՝ հնազանդվելովնրա պատվիրաններին: Նրանց երեխաներն ամենուր հաջողակ կլինեն. աստվածապաշտ մարդկանց մի ամբողջ սերունդ օրհնված կլինի» (Սաղմոս 112.1,2, NLT):

Կրկին, մենք տեսնում ենք «ուրախ» բառը՝ կապակցված սուրբ երկյուղի հետ: Ուրախությունը հոգևոր ուժ է. այն հիմնված չէ հանգամանքների վրա, ինչպես երջանկությունը: Փոխարենը, ուրախությունը հիմնված է Աստծո հավիտենական Խոսքի վրա. այն մեր զորությունն է: Այն ավելի արդյունավետ և պտղաբեր է դարձնում մեզ:

Այս հատվածում նույնպես տեսնում ենք, որ սուրբ երկյուղը մեծ ազդեցություն է գործում մեր սերունդների վրա: Միայն մենք չէ, որ հաջողակ կլինենք. նույն խոստումը տրվում է մեր զավակներին: Եկեք շարունակենք.

> «Նրանք հարուստ կլինեն, և նրանց բարի գործերը կմնան հավիտյան... Նման մարդիկ չեն պարտվի չարից: Արդարները երկար կհիշվեն: Նրանք չեն վախենում վատ լուրերից. նրանք հաստատակամորեն վստահում են, որ Տերը կհոգա իրենց մասին: Նրանք վստահ և անվախ են և կարող են հաղթականորեն դիմակայել իրենց թշնամիներին» (Սաղմոս 112.3,6-8, NLT):

Վերջերս խոսում էի մի հավատացյալ կնոջ հետ, և նա ասաց, որ մեկ օր, երբ հեռանանք այս կյանքից, կսկսվի մեր հավիտենությունը: Ես անմիջապես առարկեցի.

- Ո՛չ, մեզ՝ վերստին ծնված հավատացյալներիս համար, հավիտենությունն արդեն սկսվել է:

Մեր ներկա սիրո աշխատանքը կմնա հավիտյան: Այնուամենայնիվ, սուրբ երկյուղ չունեցող մարդիկ չունեն այս խոստումը. նրանց բաժինը ճիշտ հակառակն է. «Ինչ էլ որ նրանք արեցին կյանքի ընթացքում՝ սիրելը, ատելը, նախանձելը, ամենը վաղուց արդեն չկա» (Ժողովող 9.6, NLT):

Աստծո երկյուղն ունեցողները չեն վախենում վատ լուրերից: Մեր օրերում, երբ կան բազմաթիվ սոցիալական ցանցեր, զանգվածային լրատվամիջոցներ և անթիվ այլ լուրերի ու բամբասանքների աղբյուրներ, վատ լուրերի թիվն ավելին է, քան երբևէ: Այնքա՜ն շատերն են վախենում գալիքից: Բայց Աստծո երկյուղն ունեցողները չունեն ահ ու սարսափ ապագայի վերաբերյալ. նրանք վստահ են և անվախ: Կրկին, գրված է.

> «Տիրոջ վախում զորեղ վստահություն կա, և Նրա որդիների համար ապավեն պիտի լինի» (Առակաց 14.26):

Կա ներքին վստահություն, որն ուղեկցում է սուրբ երկյուղը: Սա այնպիսի բան է, ինչին շատերն են ձգտում, սակայն շուտով բացահայտում են, որ այն անհասանելի է թվում: Ես Ջոն Հեգի անունով մի ընկեր ունեմ, որը մեծ հարգանք վայելող հովիվ է Տեխաս նահանգում: Նա վախենում է Աստծուց ավելի, քան ցանկացած առաջնորդ, որին երբևէ հանդիպել եմ: 1973 թվականին մի մարդ ներս մտավ եկեղեցական դահլիճ, որտեղ Ջոն Հեգին ծառայություն էր անցկացնում, կանգնեց նրանից երկուսուկես մետր հեռավորության վրա և ատրճանակից ինը միլիմետրանոց վեց գնդակ արձակեց նրա վրա: Հովիվ Ջոնը վստահ կանգնած մնաց և նույնիսկ տեղից չշարժվեց: Բոլոր վեց գնդակները վրիպեցին: Այս գիրքը գրելու պահին՝ այդ դեպքից հիսուն տարի անց, հովիվ Ջոնը ողջ է և շարունակում է քարոզել Ավետարանը: Նման իրավիճակում գրե-

թե բոլորը լիովին կկորցնեին ինքնատիրապետումը, կգոչեին, գետնին կպառկեին կամ պատսպարվելու տեղ կփնտրեին: Հովիվ Ջոնը նույնիսկ չցնցվեց. նա շարունակ վստահությամբ նայում էր իր վրա կրակող մարդուն: Գրված է.

> «Տիրոջ հրեշտակը բանակ է շինում Նրանից վախեցողների չորս կողմով և փրկում է նրանց» (Սաղմոս 34.7):

Հրեշտակները կարգված են՝ պաշտպանելու նրանց, ովքեր վախենում են Աստծուց: Հետագայում դատափորձագիտական հետազոտությունը պարզեց, որ փամփուշտների կեսն անցել էր հովիվ Ջոնի աջ կողմից՝ տասնհինգ սանտիմետր հեռավորությամբ, իսկ մյուս կեսն անցել էր ձախ կողմից՝ տասնհինգ սանտիմետր հեռավորությամբ: Կրակողը վրիպել էր երկուսուկես մետրից: Նույնիսկ կրակել չիմացող մարդիկ կխոցեին թիրախը երկուսուկես մետրից՝ վեց հնարավորության դեպքում: Մենք վստահ ենք, որ Աստծո հրեշտակն էր փոխել փամփուշտների ուղղությունը:

Հուդայի Հովսափատ թագավորը մի մարդ էր, որը «խորապես նվիրված էր Տիրոջ ճանապարհներին» (Բ Մնացորդաց 17.6): Իր թագավորության երրորդ տարում նա ուղարկեց քահանաների իր երկրի յուրաքանչյուր քաղաք, որպեսզի սովորեցնեին ժողովրդին Աստծո Խոսքը: Գրված է.

> «Եվ Տիրոջ վախը եղավ Հուդայի շրջակայքում եղող բոլոր երկրների թագավորությունների վրա, և Հովսափատի հետ պատերազմ չարեցին» (Բ Մնացորդաց 17.10):

Սուրբ երկյուղով ապրելու մեջ մեծ պաշտպանություն կա: Եվս մեկ աստվածաշնչյան օրինակը Հակոբն է, որը կարգադրեց իր ընտանիքին վախենալ Աստծուց և հեռացնել իրենց կուռքերը: Գրված է, որ երբ նրանք արեցին դա, «Ճանապարհ ելան, և իրենց շուրջը եղած քաղաքների վրա Աստծո վախը ընկավ, և Հակոբի որդիների ետևից չընկան» (Ծննդոց 35.5):

Այնքան խոստումներ կան Տիրոջ երկյուղին նվիրված մարդկանց համար: Կարդացեք հետևյալ խոսքերը.

> «Մշտապես վախեցիր Տիրոջից: Դու *կվարձատրվես* դրա համար. քո *հույսը* չի խափանվի» (Առակաց 23.17,18, NLT):

Ուշադրություն դարձրեք այն երկու բառերին, որոնք շեղագրով են նշված: Առաջինը՝ մեր օրերին, երբ *հույսը* սակավ է, բազմաթիվ

հոգևոր առաջնորդներ հիմնականում կենտրոնանում են մարդկանց ոգեշնչելու վրա, միաժամանակ անտեսելով Աստծո Խոսքը: Նրանք մեկ-երկու աստվածաշնչյան հատված են հիշատակում՝ լուրջ ունկնդիրներին խաղաղեցնելու համար, բայց հիմնական շեշտադրումը ոգեշնչող պատմություններն են: Թեև այդ պատմություններն օգուտ կբերեն և կխթանեն մարդկանց կարճ ժամանակով, նման ոգեշնչող հոլիվուդյան կինոնկարի, դրանք չունեն սուրբ երկյուղի խոստացված մնայուն *վարձատրությունները:*

Տիրոջ երկյուղը վարձատրում է մեզ բազմաթիվ կերպերով. կատարված ցանկություններ (տե՛ս Սաղմ. 145.19), հավատարիմ ընկերներ (տե՛ս Սաղմ. 119.63,74,79), մեր մարմնի բժշկությունը (տե՛ս Առակ. 3.7,8), ինքնություն (տե՛ս Սաղմ. 60.4) նաև առաջնորդություն կյանքում՝ այն, ինչին շատերն են ձգտում:

> «Ովքե՞ր են նրանք, որ վախենում են Տիրոջից: Նա ցույց կտա նրանց այն ուղին, որ պետք է ընտրեն: Նրանք կապրեն բարգավաճման մեջ, և նրանց երեխաները կժառանգեն երկիրը» (Սաղմոս 25.12,13, NLT):

Ինչո՞ւ ինչ-որ մեկը չպետք է ձգտի արժևորել սուրբ երկյուղը՝ իր ամբողջ հասկացողությամբ: Ես ի սրտե ցանկանում եմ, որ տեսնեք դրա արժեքը և չպահեք այն ձեր ներսում, այլ լինեք Հովսափատ թագավորի պես, ով իր ազդեցության ներքո գտնվող մարդկանց սովորեցնում էր վախենալ Աստծուց:

Երեկոյան ընթերցանություն. գտնել սուրբ երկյուղը

Ավելի քան երեսուն տարի առաջ Տերը խոսեց ինձ հետ, որ սուրբ երկյուղը լինելու է այս աշխարհում Աստծո վերջին շարժման կենտրոնում: Այս արթնության մեծ առավելությունը լինելու է հետևյալը. հաստատվելու է միակ հատկանիշը, որն Աստվածաշունչը վերագրում է այն եկեղեցուն, որի համար Հիսուսը վերադառնալու է: Եկեղեցին չի կոչվում «արդիական», թեև արդիական լինելը կարևոր է կորսվածներին հասնելու համար: Այն չի կոչվում «առաջնորդական», թեև առաջնորդությունն անչափ կարևոր է ուժեղ եկեղեցի կառուցելու համար: Այն չի կոչվում «համայնքային եկեղեցի», թեև համայնքային հարաբերությունը կարևոր է, քանի որ լավ չէ, որ մարդը մենակ լինի: Ահա այն հարսնացուի միակ հատկանիշը, որի համար Նա վերադառնալու է.

> «Որ Իր առջև փառավոր կանգնեցնի եկեղեցին, որ չունենա մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ, որ *սուրբ* և անարատ լինի» (Եփեսացիների 5.27):

Այն կոչվում է սուրբ եկեղեցի: Թանկագին ընթերցող, քանի որ սրբությունը կատարվում է Աստծո ահով, մեր Տերն անկեղծորեն ցանկանում է, որ դուք ազդեցություն թողնող մարդկանց թվում լինեք այս մեծ արթնության ժամանակ: Այդ իսկ պատճառով, կարևոր է ավարտել մեր ուղերձը ցուցումներով այն մասին, թե ինչպես ավելացնել մեր սուրբ երկյուղը:

Թույլ տվեք վերադարձնել ձեզ այն զարմանալի և ուշագրավ ծառայությանը Մալազիայում: Նրա վեհ և զորավոր ներկայության դրսևորման ժամանակ ես երկյուղով դողում էի և մտածում. *«Ջո՛ն Բիվեր, ոչ մի սխալ խոսք չասես, և ոչ մի սխալ շարժում չանես»*:

Մինչ ետուառաջ էի քայլում բեմի վրա՝ մտածելով այս մասին, իմ բերանից դուրս եկան խոսքեր, որոնք ականջներս լսեցին միայն դրանք ասելուց հետո: Նախկինում երբեք չէի մտածել կամ չէի խորհել դրա շուրջ. «Սա Տիրոջ երկյուղի Հոգին է»:

Հանկարծ մտքումս ասես լույսեր վառվեցին: Ես բացականչեցի իմ ներսում. *«Ճի՛շտ է, ճի՛շտ է. սա Սուրբ Հոգու դրսևորումներից մե՛կն է»:* Ես երբեք չէի կապակցել այս ամենը, բայց Աստվածաշնչում գրված է հետևյալը Հիսուսի մասին.

> «Եվնրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին՝ իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին: Եվնրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է» (Եսայի 11.2,3):

Այստեղ թվարկված է Սուրբ Հոգու յոթ դրսևորում, և Հիսուսը վարվում էր այդ բոլորի լրման մեջ, սակայն Նրա ախորժանքը կամ բերկրանքը սուրբ երկյուղն էր: Այսպիսով, հարցը հետևյալն է. ինչպե՞ս ընդունել *Տիրոջ երկյուղի Հոգին:* Հիսուսն ասում է մեզ. «Արդ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկաս 11.13):

Մենք պետք է պարզապես խնդրենք մեր երկնային Հորը: Այնուամենայնիվ, դա անփույթ խնդրանք չէ, այլ՝ աղաղակ է մեր սրտից՝ այնպիսին, որը չի ընդունի «ոչ» պատասխանը: Անմիջապես այս բառերից առաջ Նա ասում է. «Շարունակե՛ք խնդրել, և դուք կստանաք այն, ինչ խնդրում եք: Շարունակե՛ք փնտրել, և դուք կգտնեք» (Ղուկաս 11.9, NLT): Այս խոսքը շեշտադրում է հաստատակամությունը:

Վերադառնանք 1994 թվականին՝ այն համաժողովին, որն անցկացնող հովիվը հանդիմանեց ինձ Տիրոջ երկյուղի մասին քարոզելու համար: Հաջորդ առավոտյան շինարարական հրապարակում ես սկսեցի իմ աղոթքը՝ մտածելով, թե ինչ սխալ էի թույլ տվել, սա-

կայն որոշ ժամանակ անց ջերմեռանդորեն և բարձրաձայն աղաղակում էի սուրբ երկյուղի համար: Դա վճռական խնդրանք էր, որը չէր ընդունի «ոչ» պատասխանը: Այդ ժամանակ ես չէի գիտակցում այդ պահի կարևորությունը, բայց այժմ դիտարկում եմ դա որպես իմ կյանքի ամենից շրջադարձային և վերափոխող պահերից մեկը: Նույնիսկ այս պահին գրեթե ամեն օր ես ջերմեռանդորեն խնդրում եմ իմ երկնային Հորը նորովի լցնել ինձ Տիրոջ երկյուղի Սուրբ Հոգով: Եկեք դիտարկենք մեկ այլ աստվածաշնչյան հատված, որը մեծապես առնչվում է մեր քննարկմանը:

> «Որդյակս, եթե Իմ խոսքերն ընդունես և Իմ պատվերները պահես քեզ մոտ, որ ականջ դնես իմաստությանը և սիրտդ ուղղես հանճարին, երբ որ հասկացողությանը կանչես և ձայն տաս հանճարին, եթե դու նրան որոնես՝ ինչպես արծաթը, և գանձերի նման նրան պտրտես, այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը և Աստծո գիտությունը կգտնես» (Առակաց 2.1-5):

Մենք պետք է աղաղակենք մեր սրտի խորքից սուրբ երկյուղի համար, ինչպես նաև ջանասիրաբար փնտրենք այն, ինչպես կփնտրեինք նշանադրության մատանուց ընկած ադամանդը կամ կորցրած ոսկե զարդը: Համոզված եմ, որ դիտել եք հաղորդումներ կամ կինոնկարներ գանձեր որոնողների մասին, որոնք մշտապես պատկերում են այդ մարդկանց աննահանջ հաստատակամությունը: Գոյություն ունի մի ուշագրավ կինոնկար, որը կոչվում է «Ազգի գանձերը»[1]: 2004 թվականին նկարահանված այս կինոնկարը Բենջամին Գեյթս անունով մի մարդու մասին է, որն անցկացրել էր ամբողջ կյանքը, որպեսզի գտներ գանձեր, որոնք պահվել էին 1700-ական թվականներին: Նա ներդրել էր ամբողջ ժամանակը և ուժերը, նույնիսկ վտանգի ենթարկելով իր համբավը և ազատությունը, որպեսզի գտներ դրանք: Թեև այն, ինչ նա որոնում էր, մեկ օր ի չիք է դառնալու, սակայն նրա աննահանջ հաստատակամությունն է, որ պետք է ոգեշնչի մեզ:

Եթե մենք մոտենայինք Աստծո Խոսքին, Նրա իմաստությանը, աստվածային խորհրդին և սուրբ երկյուղին նույնպիսի վճռականությամբ, անչափ օրհնված կլինեինք: Մենք աղաղակում ենք այն բանի համար, ինչը մնալու է հավիտյան. դա Աստծո գանձն է: Նա չի թաքցրել այն *մեզնից,* այլ՝ *մեզ համար:* Նա խրախուսում է մեզ, որ գտնենք այն, և ուրախանում է, երբ անում ենք դա: Նա նույնպես ցնծում է, երբ մենք ստանում ենք դրա վարձատրությունները:

Իմ անկեղծ հույսն է, որ այն, ինչ ծնվեց իմ մեջ առավոտյան այդ շի-

նարարական հրապարակում, Սուրբ Հոգու օգնությամբ ծնվել է նաև ձեր մեջ՝ անհագ քաղցը Տիրոջ երկյուղի հանդեպ: Արժևորե՛ք դա և հարե՛ք դրան, ասես դա ձեր ամենից արժեքավոր ունեցվածքն է: Եթե այդպես վարվեք, դուք կսիրեք այն, ինչ սիրում է Աստված, և կատեք այն, ինչ Նա է ատում, և այն, ինչ կարևոր է Նրա համար, կարևոր կդառնա ձեզ համար: Դուք խորապես կսիրեք մարդկանց և խորապես կատեք այն մեղքը, որը կործանում է նրանց: Դուք կփոխեք ձեր ազդեցության շրջանակում գտնվող մարդկանց կյանքերը և ամբողջ հավիտենության ընթացքում ուրախ կլինեք, որ արեցիք դա:

Խնդրո՛ւմ եմ, հիշե՛ք. *կարևորն այն չէ, թե ինչպես ենք սկսում մեր ընթացքը, այլ՝ թե ինչպես ենք ավարտում:* Կա երկու աստվածաշնչյան խոսք բարեհաջող ավարտի մասին, որոնք մեծ հույս են տալիս և զորացնում են մեզ.

> «Ամբողջ փառքն Աստծուն, Ով կարող է *պահել ձեզ ընկնելուց,* և կբերի ձեզ մեծ ուրախությամբ Իր փառավոր ներկայության մեջ՝ առանց նույնիսկ մեկ արատի» (Հուդա 24, NLT):

> «Նա *հաստատուն կպահի ձեզ մինչև վերջ,* որպեսզի դուք ազատ լինեք ամեն մեղադրանքից այն օրը, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը վերադառնա» (Ա Կորնթացիների 1.8, NLT):

Բարեհաջող ավարտ ունենալը հաջողակ կյանքի կարևորագույն կողմերից է, և Աստված շնորհել է մեզ սուրբ երկյուղը՝ դա իրագործելու համար: Ինձ համար պատիվ էր ներկայացնել ձեզ այս գանձը: Խնդրո՛ւմ եմ, գաղտնի մի՛ պահեք այս ուղերձը. այն կարելի է տարածել բազմաթիվ կերպերով: Կիսվե՛ք այս ուղերձով ձեր ազդեցության շրջանակում գտնվող մարդկանց հետ: Եթե անեք դա, մենք ավելի քիչ կորուստներ կկրենք գալիք օրերին և ավելի առողջ եկեղեցի կունենանք:

Որոշում կայացրեք դառնալ սուրբ երկյուղի ազդեցիկ վերափոխող շարժման մասնիկը, որը կպատրաստի հարսին Փեսայի վերադարձի համար: Մի՛ եղեք դիտորդի դերում: Ընդունելով սուրբ երկյուղը՝ դուք կբացահայտեք խոր մտերմություն Փեսայի հետ, ձեր փրկությունը կհասունանա, դուք անչափ պտղաբեր կդառնաք, նաև հավիտենական ժառանգություն կկառուցեք:

Անձնական կիրառում

Հատված. «Եվնրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել Իր փառքի առջև՝ անբիծ ցնծությամբ, այն մեկ իմաստուն Աստծուն և մեր Փրկչին փառք և մեծություն, զորություն և իշխանություն, և՛ հիմա, և՛ բոլոր հավիտյաններում: Ամե՛ն» (Հուդա 24,25):

Եզրահանգում. Բարեհաջող ավարտ ունենալը հաջողակ կյանքի ամենակարևոր կողմն է: Աստված՝ Իր սուրբ երկյուղի պարգևով, հաստատուն և անմեղադրելի կպահի ձեզ մինչև վերջ:

Մտորում. Ինչ պետք է անեմ, որպեսզի ավելացնեմ սուրբ երկյուղն իմ կյանքում: Ես փափագո՞ւմ եմ և աննահանջ կերպով ձգտո՞ւմ եմ սուրբ երկյուղին՝ որպես գանձի: Ես կհարե՞մ դրան՝ որպես իմ ամենաթանկ ունեցվածքի: Ինչ պետք է մշտապես անեմ՝ այն պահպանելու համար:

Աղոթք. Սիրելի՛ Հայր, ես աղաղակում եմ, որ լցնես ինձ Տիրոջ Հոգով՝ իմաստության Հոգով, հանճարի Հոգով, խորհրդի Հոգով, զորության Հոգով, գիտության Հոգով և Տիրոջ երկյուղի Հոգով: Հաստատո՛ւն պահիր ինձ մինչև վերջ, որպեսզի ես անմեղադրելի լինեմ Տեր Հիսուս Քրիստոսի օրում: Աղոթում եմ Հիսուսի անունով, ամե՛ն:

Դավանություն. Տիրոջ երկյուղն իմ գանձն է:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՑՔ ԱՍՏԾՈ ՄԵԾՈՒԹՅԱՆԸ

Իսրայելի պատմության մեջ կար մի ժամանակ, երբ Աստված ձգտում էր ավելացնել սուրբ երկյուղն Իր ժողովրդի կյանքում՝ տալով հետևյալ հարցը.

> «Ո՞ւմ եք Ինձ նմանեցնում: Ո՞վ է Ինձ հավասար» (Եսայի 40.25, NKJV):

Եթե պատմության մեջ երբևէ եղել է այնպիսի ժամանակ, երբ այս հարցերի շուրջ պետք է լրջորեն խորհել և ոչ թե անդրադառնալ հպանցիկ, ապա՝ հիմա է: Մեր ժամանակաշրջանում մարդկության «վեհությունը» շարունակ պատկերվում է սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ներում, հեռուստատեսությամբ և այլ հանրային հարթակներում: Մեզ շարունակ ցուցադրում են գովեստներ՝ ուղղված տաղանդավոր մարզիկների, գեղեցիկ հոլիվուդյան աստղերի, օժտված երաժիշտների, հայտնի գործարարների, ազդեցիկ առաջնորդների և այլ կարևոր մարդկանց: Նրանց համբավը գովաբանվում է, ու թեև դա անվնաս է թվում, մարդկային փառքի մասին տեղեկության մշտական հոսքը թույլ չի տալիս մեզ խորհել Աստծո փառքի իրողության շուրջ[1]:

Լիզան և ես բախվեցինք այս երևույթին մոտավորապես քսանհինգ տարի առաջ՝ մեր երեխաներին դաստիարակելիս: Այդ օրերին ինֆորմացիոն հոսքն այդքան ճնշող չէր, քանի որ չկային հեռախոսային հավելվածներ և սոցիալական ցանցեր: Նույնիսկ այդ ընթացքում նկատեցինք, որ մեր որդիները չափից ավելի հետաքրքրված էին մի պրոֆեսիոնալ բասկետբոլիստով: Այդ ժամանակ նա ամենահայտնի մարզիկն էր Ամերիկայում, շատերն էին կուռքի պես վերաբերվում նրան, և

նույնիսկ տասնամյակներ անց նա շարունակում է հայտնի մնալ:

Մեր ընտանիքը ծառայություններ էր անցկացնում Ամերիկայի Արևելյան ափին, և մենք իջևանել էինք օվկիանոսի ափին գտնվող մի հյուրանոցում: Մենք նոր էինք վերադարձել մեր հյուրանոցային համարը՝ լողափում մի քանի ժամ անցկացնելուց հետո: Մեր որդիներն այսուայն կողմ էին նետվել և գլորվել հուժկու Ատլանտյան օվկիանոսի ալիքների մեջ: Նրանք և՛ անչափ ուրախ էին, և՛ երկյուղած էին օվկիանոսի ուժից:

Ես նստեցի իմ երեք ավագ որդիների կողքին, և մենք սկսեցինք զրուցել: Մատնացույց անելով բացված ապակե շարժական դռները՝ հարցրի նրանց.

- Տղաներ, այս օվկիանոսն ահռելի է, այնպես չէ՞:

- Այո՛, հայրի՛կ,- միասին պատասխանեցին նրանք:

- Դուք կարող եք տեսնել միայն դրա մի քանի կիլոմետրը, բայց այս օվկիանոսն իրականում տարածվում է հազարավոր կիլոմետրեր:

- Զարմանալի՜ է,- պատասխանեցին տղաները՝ փաթաթված իրենց տաք սրբիչներով:

- Եվ սա դեռ ամենամեծ օվկիանոսը չէ. կա ևս մեկը, որն ավելի մեծ է և կոչվում է Խաղաղ օվկիանոս: Եվ բացի այս երկու օվկիանոսները, կա ևս երկուսը:

Տղաները միասին գլխով արեցին՝ լուռ զարմանքով, մինչ մենք շարունակում էինք լսել մեր բաց ապակե դռներից եկող ալիքների ձայնը, որոնք մեծ դղրդյունով բախվում էին ափին:

Մեր ճանապարհորդությունը «Ազգային բասկետբոլային ասոցիացիայի» եզրափակիչ խաղաշրջանի ժամանակ էր: Այդ բասկետբոլային գերաստղի ձեռքբերումները շարունակ քննարկվում էին լրատվամիջոցների, մալուխային հեռուստաալիքների, ինչպես նաև մեր որդիների և նրանց ընկերների կողմից: Իմ որդիները տպավորված էին այն բանով, թե որքան հեշտորեն էր նա կարողանում ձեռքի ափով բռնել բասկետբոլային գնդակը: Տեսնելով, որ որդիներս ինչ-որ չափով պատկերացրին ջրի այն անասելի ծավալը, որը նկարագրեցի, ես հարցրի նրանց.

- Տղաներ, գիտե՞ք, որ Աստված ամբողջ ջուրը, որը դուք տեսնում եք, նաև այն ջուրը, որի մասին ես պատմեցի ձեզ, կշռել է Իր ձեռքի ափով (տե՛ս Եսայի 40.12):

Նրանց դեմքերին անկեղծ զարմանք երևաց:

Դրանից հետո, հնարավորինս պարզ կերպով պատմեցի նրանց ոչ միայն օվկիանոսի չափի, այլև՝ ուժի մասին: Ես ասացի որդիներիս, որ եթե մեկուկես կիլոմետր պարագծով մի երկնաքար ընկներ Ատլանտյան օվկիանոսը՝ մի քանի հարյուր կիլոմետրով հեռու Նյու

Յորք քաղաքի ափամերձ տարածքից, այնքան մեծ ալիք կբարձրանար, որ կսրբեր Հյուսիսային Ամերիկայի ամբողջ Արևմտյան ափի բոլոր քաղաքները, Կարիբյան կղզիները և Հարավային Ամերիկայի Ատլանտյան ափի մեծ մասը[2]: Բացի այդ, օվկիանոսի մյուս կողմից այն ավերածություններ կառաջացներ մի շարք եվրոպական և աֆրիկյան ափամերձ քաղաքներում: Սակայն այս ալիքի բարձրությունը կլիներ ավելի ցածր, քան Ատլանտյան օվկիանոսի խորությունը: Ես հարցրի նրանց.

- Ինչ տեղի կունենար, եթե բոլոր օվկիանոսների ջրերն ամբողջ ուժով հարվածեին մարդկությանը: Ամբողջ աշխարհի օվկիանոսներում մեծ ուժ կա, սակայն Աստված, մինչև վերջին կաթիլը, կշռել է այդ ջուրը Իր ձեռքի ափով:

Դրանից հետո անցում կատարեցի գիշերային երկնքին: Կրկին հարցրի որդիներիս, որոնք այժմ կլանված լսում էին.

- Գիտե՞ք, թե ուրիշ ինչ է Աստվածաշունչն ասում Աստծո մեծության մասին:

- Ինչ, հայրի՛կ:

- Այն ասում է, որ Աստված կարող է չափել տիեզերքն Իր ձեռքի թիզով (տե՛ս Եսայի 40.12):

Պահելով իմ ձեռքը նրանց առջև՝ ես ցույց տվեցի, որ թզաչափը՝ բութ մատիս ծայրից մինչև ճկույթիս ծայրը գտնվող հեռավորությունն է: Որդիներիս մի հարց տվեցի, որը հիմա կտամ նաև ձեզ. «Դուք մտածե՞լ եք տիեզերքի չափի մասին»: Դա վեր է մեր մտավոր կարողություններից: Գուցե եթե փորձենք ինչ-որ չափով պատկերացնել տիեզերքի հսկա մեծությունը, մենք ավելի կմոտենանք Նրա փառքն ընկալելուն:

Այն, ինչ գրելու եմ, մի փոքր գիտական լեզվով է, բայց հորդորում եմ, որ շարունակեք կարդալ, քանի որ ես կփորձեմ հնարավորինս պարզ և հասարակ ներկայացնել սա, ինչպես որ արեցի իմ որդիների համար: Երբ մտածում ենք այս փաստերի մասին, մեզանում ակնածանք է առաջանում Նրա մեծության հանդեպ, քանի որ գրված է. «Երկինքները պատմում են Աստծո փառքը» (Սաղմոս 19.1):

Գիտնականների գնահատմամբ, տիեզերքում միլիարդավոր գալակտիկաներ կան, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է շուրջ 100 միլիոն աստղ: Այդ գալակտիկաների չափը բավականին փոքր է՝ դրանց միջև գոյություն ունեցող տարածության համեմատ:

Մեր արևը գտնվում է այդ գալակտիկաներից մեկում: Մեր գալակտիկան այնքան մեծ է, որ նայելով գիշերային երկնքին, դուք չեք տեսնում տիեզերքը, այլ միայն այն աննշան (տիեզերքի չափերի համեմատ) գալակտիկան, որում մենք ապրում ենք, որը կոչվում է Ծիր

Կաթին: Ավելին՝ դուք նույնիսկ չեք տեսնում ամբողջական Ծիր Կաթինը, այլ միայն դրա մի մասը, քանի որ այս գալակտիկայի աստղերի մեծամասնությունն անչափ հեռու է գտնվում՝ անզեն աչքով տեսնելու համար:

Այնպես որ, եկեք խոսենք միայն այն աստղերի մասին, որոնք *կարող ենք* տեսնել անզեն աչքով ամեն գիշեր: Ամենամոտ աստղը մեր մոլորակին՝ մեր արևից հետո, մեզնից հեռու է ընդամենը 4.3 լուսատարով: Մարդկանց մեծ մասին սա գրեթե ոչինչ չի ասում. այնպես որ, եկեք բացատրենք: Լույսի արագությունը վայրկյանում 300,000 կիլոմետր է. ոչ թե ժամում, այլ՝ *վայրկյանում:* Ստացվում է գրեթե 1,079,252,848.8 կիլոմետր ժամում: Մեր ինքնաթիռները թռչում են մոտավորապես ժամում 800 կիլոմետր արագությամբ: Այսպիսով, ինչպես տեսնում եք, լույսի արագությունն աներևակայելի է:

Որպեսզի պատկերացնեք, թե որքան արագ է դա, եկեք ենթադրենք, որ դուք կարող էիք թռչել հսկայական ռեակտիվ ինքնաթիռով դեպի արևը: Երբ Ասիա եմ թռչում, որը երկրագնդի հակառակ կողմում է՝ այն վայրից, որտեղ ես ապրում եմ, պահանջվում է մոտավորապես քսաներեք ժամ: Եթե նույն ինքնաթիռով ուղևորվեի դեպի արևը՝ առանց կանգառների, կպահանջվեր մոտավորապես քսանմեկ տարի: Հիշեք ձեզ քսանմեկ տարի առաջ և պատկերացրեք, որ այդ պահից մինչև հիմա դուք միայն նստած եք ինքնաթիռում (հուսով եմ՝ ձեր նստարանը պատուհանի մոտ է): Նրանց համար, ովքեր գերադասում են ճանապարհորդել մեքենայով... հազիվ թե դուք տեղ հասնեիք, քանի որ ձեզնից կպահանջվեր մոտավորապես երկու հարյուր տարի՝ չհաշված կանգառները վառելիքի և հանգստի համար: Այժմ եկեք հարցնենք, թե որքան ժամանակում է արևի լույսը հասնում երկիր: Պատասխանն է՝ ընդամենը 8 րոպե և 20 վայրկյանում:

Եկեք անցում կատարենք արևից դեպի մեր մոլորակին ամենամոտ գտնվող հաջորդ աստղը: Մենք արդեն գիտենք, որ այն 4.3 լուսատարով հեռու է երկրից: Եթե պատրաստեինք երկրի, արևի և այդ աստղի մասշտաբային մոդել, այն կունենար հետևյալ տեսքը: Ըստ այդ մոդելի, երկիրը պղպեղահատի չափ կլիներ, իսկ արևը հավասար կլիներ 20.3 սանտիմետր տրամագծով գնդի: Հեռավորությունը երկրի և արևի միջև հավասար կլիներ 23.8 մետրի՝ գրեթե ֆուտբոլի դաշտի երկարության մեկ քառորդին: Սակայն հիշեք, որ այս 23.8 մետր տարածությունն ինքնաթիռով անցնելու համար կպահանջվեր ավելի քան քսանմեկ տարի:

Եթե երկրի և արևի դիրքն այսպիսին է, կարո՞ղ եք կռահել, թե որքան հեռու կլինի հաջորդ ամենամոտ գտնվող աստղը մեր պղպեղահատի չափ ունեցող երկրից: Գուցե մտածեք 100 մետրի, 200 մետրի կամ, նույնիսկ, մեկ կիլոմետրի մասին. նույնիսկ մոտ չէ: Մեզ ամենա-

մոտ գտնվող աստղը կդրվեր մեր պղպեղահատից 6,500 կիլոմետր հեռավորության վրա: Դա նշանակում է, որ եթե դնենք մեր պղպեղահատը Նյու Յորք քաղաքում, այդ ամենամոտ գտնվող աստղը՝ ըստ մեր մոդելի, կտեղադրվեր Լոս Անջելեսից 1600 կիլոմետր հեռու՝ Խաղաղ օվկիանոսում: Այս ամենամոտ աստղին ինքնաթիռով հասնելու համար կպահանջվեր մոտավորապես 51 *միլիարդ* տարի՝ առանց կանգառների: Դա 51,000,000,000 տարի է: Սակայն լույսն այդ աստղից հասնում է մեզ ընդամենը 4.3 տարում:

Եկեք շարունակենք: Աստղերի մեծ մասը, որոնք դուք տեսնում եք գիշերը անզեն աչքով, հեռու է մեզնից հարյուրից հազար լուսատարով: Այնուամենայնիվ, կա մի քանի աստղ, որոնք կարող եք տեսնել անզեն աչքով, և որոնք հեռու են մեզնից ավելի քան չորս հազար լուսատարով (հիշեք, որ դրանք նույնիսկ մեր գալակտիկայի ամենահեռու աստղերը չեն): Ես չեմ էլ փորձի հաշվել այն ժամանակը, որ կպահանջվի ինքնաթիռով այդ աստղերին հասնելու համար: Սակայն մտածե՛ք հետևյալը. երբ նայում եք գիշերային երկնքին և տեսնում եք այն աստղերից մեկը, որը 4000 լուսատարով հեռու է մեզնից, իրականում դուք տեսնում եք այն լույսը, որն այդ աստղն արձակել է մոտավորապես այն ժամանակ, երբ Աբրահամն ամուսնացավ Սառայի հետ: Այդ լույսը սլացել է ժամում 1,079,252,848.8 կիլոմետր արագությամբ՝ առանց իր ընթացքը դանդաղեցնելու, և հենց նոր երկիր է հասել:

Հիշեք, որ մենք խոսում ենք միայն մեր փոքրիկ Ծիր Կաթին գալակտիկայի աստղերի մասին: Մենք նույնիսկ դուրս չենք եկել դրանից դեպի մյուս միլիարդավոր գալակտիկաները: Եվ մի՛ մոռացեք, որ գալակտիկաների միջև մեծ մասամբ ահռելի տարածություն կա: Օրինակ, մեր հարևան գալակտիկան, որն ամենից մոտն է մեզ, կոչվում է Անդրոմեդա: Դրա հեռավորությունը մեզնից մոտավորապես 2.3 միլիոն լուսատարի է: Մտածե՛ք այս մասին. լույսը պետք է սլանա այդ գալակտիկայից ժամում 1,079,252,848.8 կիլոմետր արագությամբ՝ ավելի քան երկու միլիոն տարում, որպեսզի երկիր հասնի: Եվ դա մեզ ամենից մոտ գտնվող գալակտիկան է: Գոյություն ունեն միլիարդավոր այլ գալակտիկաներ: Կարծում եմ՝ սա արդեն ավելին է, քան կարող ենք ընկալել:

Կրկին, թույլ տվեք հիշեցնել. Եսային հայտարարում է, որ Աստված չափել է այս անծայրածիր տիեզերքն Իր թիզով, ինչը Նրա բութ մատից մինչև ճկույթն է: Սողոմոնը հայտարարում է Աստծո Հոգով. «Բայց իրա՞վ Աստված կբնակվի այս երկրի վրա: Ահա երկինքը և երկինքների երկինքը չեն կարող Քեզ պարունակել» (Գ Թագավորաց 8.27): Դուք սկսում եք հասկանա՞լ, թե ում մասին ենք խոսում:

Երբ այս ամենը կիսեցի իմ որդիների հետ, նրանք սկսեցին պատշաճ կերպով դիտարկել այդ հայտնի բասկետբոլային գերաստղին:

Մեր Արարչի մեծության շուրջ մտորելուց հետո նրանք այլևս անառողջ ակնածանք չէին տածում նրա տաղանդների հանդեպ:

Իսկ ձեզ հետ, սիրելի՛ ընթերցող, ուզում եմ մեկ քայլ առաջ գնալ: Բացի այն, որ մեր երկնային Հոր գործերն ապշեցուցիչ չափերի և ծավալների են հասնում, Նրա արարչագործության մանրուքները նույնպես ազդարարում են Նրա փառքը: Գիտությունը ծախսել է տարիներ և անասելի միջոցներ՝ այս բնական աշխարհի գործընթացներն ուսումնասիրելու համար: Մինչև օրս մարդիկ միայն աննշան չափով են հասկացել այն իմաստությունը, որն Աստված օգտագործել է արարչագործության մեջ: Դեռ շատ չպատասխանված հարցեր կան: Այն, թե ինչպես և ինչից է կառուցված նյութական աշխարհը, շարունակում է զարմանքի առարկա մնալ:

Արարված կյանքի բոլոր տեսակները կառուցված են բջիջներից: Բջիջները մարդկային մարմնի, բույսերի, կենդանիների և կյանքի ցանկացած ձևի շինանյութն են: Մարդու մարմինը, որն ինքնին ինժեներական հրաշալիք է, բաղկացած է մոտավորապես 100,000,000,000,000 բջիջներից (կարո՞ղ եք ընկալել այս թիվը), որոնք անչափ բազմազան են: Իր իմաստությամբ Աստված ստեղծել է բջիջները՝ հստակ առաջադրանքներ կատարելու համար: Դրանք աճում են, բազմապատկվում և, ի վերջո, մահանում են՝ ճիշտ ժամանակացույցով:

Թեև բջիջներն անտեսանելի են անզեն աչքին, դրանք մարդուն հայտնի ամենափոքր մասնիկները չեն: Բջիջները բաղկացած են բազմաթիվ փոքր մասնիկներից, որոնք կոչվում են մոլեկուլներ. մոլեկուլները բաղկացած են ավելի փոքր մասնիկներից, որոնք կոչվում են տարրեր, իսկ տարրերի մեջ կարելի է գտնել ավելի փոքր մասնիկներ, որոնք կոչվում են ատոմներ:

Ատոմներն այնքան փոքր են, որ այս նախադասության վերջում դրված վերջակետի երկու կետերից մեկում ավելի քան մեկ միլիարդ ատոմ կա: Որքան էլ փոքր լինի ատոմի չափը, այն գրեթե ամբողջովին բաղկացած է դատարկ տարածությունից: Ատոմի մնացած մասը բաղկացած է պրոտոններից, նեյտրոններից և էլեկտրոններից: Պրոտոնները և նեյտրոնները միասին խմբավորված են և կազմում են փոքրիկ և անչափ ամուր միջուկ, որը գտնվում է անմիջապես ատոմի մեջտեղում: Էլեկտրոններ կոչվող էներգիայի փոքրիկ փնջերը լույսի արագությամբ պտտվում են այս միջուկի շուրջը: Սա այն առանցքային շինանյութն է, որը պահպանում է ամեն ինչի գոյությունը:

Այսպիսով, որտեղի՞ց է ատոմը ստանում իր էներգիան, և ի՞նչ ուժ է միասին պահում այս մասնիկները: Գիտնականներն անվանում են այդ ուժերն *էլեկտրամագնիսական և միջուկային ուժեր:* Սրանք ըն-

դամենը բարեհունչ գիտական տերմիններ են, որոնք նկարագրում են այն, ինչը մարդկությունը դեռևս անկարող է լիարժեք բացատրել: Այնուամենայնիվ, Աստված արդեն ասել է, որ Ինքն է «Իր զորության խոսքով ամեն բան կրում» (Եբրայեցիների 1.3): Եվ Կողոսացիների 1.17-ում գրված է. «Ամեն բան Նրանով է հաստատ»:

Կանգ առեք և լրջորեն մտածեք այս մասին: Ահա թե ինչպիսին է այն փառավոր Արարիչը, Ում մենք Հայր ենք անվանում, Ում նույնիսկ տիեզերքը չի կարող պարունակել: Նա կարող է չափել տիեզերքն Իր թիզով, սակայն Նա այն աստիճան մանրակրկիտ է արարել մեր փոքրիկ մոլորակը և դրանում գտնվող արարածներին, որ ժամանակակից գիտությունը տարիներ տևող հետազոտություններից հետո դեռևս բազմաթիվ չպատասխանված հարցեր ունի: Զարմանալի չէ, որ սաղմոսերգուն բացականչում է.

> «Ես նայում եմ Քո երկինքներին, որոնք Դու արարել ես Քո մատներով: Ես տեսնում եմ լուսինը և աստղերը, որոնք Դու ստեղծել ես: Բայց ինչո՞ւ են մարդիկ կարևոր Քեզ համար: Ինչո՞ւ ես Դու հոգ տանում մարդկանց մասին» (Սաղմոս 8.3,4, NCV):

Կարծում եմ՝ այս խոսքերն ամփոփում են ամեն ինչ: Եվ սաղմոսերգուն բարձրաձայնում է Աստծո գահը շրջապատող ահռելի հրեշտակներից մեկի մտքերը: Նրանք շարունակում են աղաղակել. «Սո՛ւրբ ես»՝ Նրա սքանչելի Անձի վեհության և ընդարձակության համար: Այն արարածները, որոնք հետևում էին, թե ինչպես էր Նա ստեղծում անծայրածիր տիեզերքը՝ իր բարդ կառուցվածքով, տեսան նաև մարդկանց արարումը և աղաղակեցին. «Ի՞նչ է սա: Ինչո՞ւ է Աստված այսպես ուշադրություն դարձնում այս փոշեհատիկի պես մոլորակում գտնվող փոշեհատիկի պես մարդկանց»:

Որդիներիս հետ զրույցից հետո նրանք այլևս տարված և կլանված չէին մեր ժամանակակից հանրահայտ մարդկանց փառքով: Նրանք հասկացան, որ ցանկացած մեծ բան մեր մոլորակում խամրում է՝ մեր Աստծո մեծության համեմատ: Հուսով եմ՝ այս հավելվածը կատարեց նույնը ձեզ համար: Մտորեք այն ամենի շուրջ, ինչ կարդացիք՝ այն հարցի լույսի ներքո, որն Աստված տվեց Իր ժողովրդին Եսայի մարգարեի միջոցով. «Ո՞ւմ եք Ինձ նմանեցնում: Ո՞վ է Ինձ հավասար» (Եսայի 40.25, NKJV):

Իհարկե, կարելի է բազմաթիվ գրքեր գրել Նրա արարչագործության հրաշալիքների և իմաստության մասին: Սա չէ իմ մտադրությունը: Իմ նպատակն է զարմանք և զմայլանք արթնացնել Նրա ձեռքի գործերի հանդեպ, քանի որ դրանք պատմում են Նրա մեծ փառքը:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Սփերջեն, Չարլզ. «Չարլզ Հ. Սփերջենի մեջբերում», «Quotefancy»: Մուտքը՝ նոյեմբերի 15, 2022. https://quotefancy.com/quote/786372/Charles-H-Spurgeon-The-fear-of-God-is-the-death-of-every-other-fear-like-a-mighty-lion-it:

Գլուխ 1

1. Ժողովող 1.8, MSG
2. Ժողովող 1.9, NLT
3 Ժողովող 7.1
4. Ժողովող 1.15, NLT
5. Ժողովող 12.2-6

Գլուխ 3

1. «Աստվածաշնչի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան»:
2. Վեբսթեր, Նոյ. «Երկյուղ» բառահոդված, «1828 թվականի Վեբսթերի անգլերենի ամերիկյան բառարան», «Editorium», 2010:

Գլուխ 5

1. Եբրայեցիների 12.29-ում գրված է, որ Աստված «սպառող կրակ» է. Հռոմեացիների 8.15-ում գրված է, որ Նա Աբբա Հայր է:

Գլուխ 6

1. «Բաթլերի «Սրբերի կյանքը և գործերը». Համառոտ հրատարակություն, վերանայված և թարմացված», Մայքլ Վոլշ, խմբ. (Նյու Յորք, «Harper San Francisco» 1991), էջեր 29-30:

Գլուխ 8

1. «Քանի՞ ասվազահատիկ կա մի քառակուսի դյույմի մեջ», *«WikiAnswers»,* մուտքը՝ սեպտեմբերի 10, 2022. https://math.answers.com/other-math/How_many_grains_of_sand_are_in_one_square_inch:

Գլուխ 11

1. Յոհաննես Փ. Լուվ և Յուջին Ալբերտ Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996), էջ 684:
2. Լուվ և Նայդա. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», էջ 540:
3. «Անկման և հույսի նշաններ հավատքի հիմնական ցուցանիշների մեջ», Բարնա. մուտքը՝ barna.gloo.us, 2021. https://barna.gloo.us/articles/signs-of-decline-and-hope:

Գլուխ 12

1. Լուվ և Նայդա, էջ 765:

Գլուխ 13

1. Կարդացեք Ղուկաս 5.14, Հովհաննես 6.15, Փիլիպեցիների 2.7, Եբրայեցիների 5.4 և Եսայի 42.2:

Գլուխ 15

1. Զոդհիաթես, Սփիրոս. «Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2000):
2. Լուվ և Նայդա, էջ 433:

Գլուխ 16

1. Լուվ և Նայդա, էջ 429:
2. Լեոն Մորիս, «Ավետարան՝ ըստ Մատթեոսի». «Այուն» Նոր կտակարանի մեկնություն (Գրանդ Ռեփիդս, Միչիգան, Լեչեստեր, Անգլիա. «W.B. Eerdmans», «Inter-Varsity Press», 1992), էջ 175:

Գլուխ 19

1. Կ. Ս. Լյուիս և Քլայդ Ս. Քիլբի. «Կ. Ս. Լյուիս. Նամակներ ամերիկացի տիկնոջը» (Գրենդ Ռեփիդս, Միչիգան. «Eerdmans», 1997):

Գլուխ 20

1. Լուվ և Նայդա, էջ 662:

Գլուխ 29

1. «Մտերիմ». սահմանում և իմաստ. «Collins English Dictionary», «Մտերիմ». սահմանում և իմաստ | «Collins English Dictionary» (HarperCollins Publishers Ltd), մուտքը՝ նոյեմբերի 15, 2022, https://www.collinsdictionary.com/us/dictionary/english/intimate: «Ինտիմուս». «WordSense Online Dictionary» (նոյեմբերի 15, 2022), հղումը՝ https://www.wordsense.eu/intimus/:

Գլուխ 35

1. Լուվ և Նայդա, էջ 375
2. Կարդացեք Հովհաննես 3.1,2, 6.26,66, 12.42, 19.38, Մատթեոս 26.14-16

Գլուխ 38

1. Merriam-Webster.com բառարան, «ժառանգություն» բառահոդված, մուտքը՝ նոյեմբերի 1, 2022, https://www.merriam-webster.com/dictionary/legacy:
2. Լյուդվիգ Քյոհլեր և այլք, *«Հին կտակարանի եբրայերեն և արամեերեն բառարան»* (Լեյդեն, «E. J. Brill», 1994-2000), էջ 217:
3. Ուորեն Բեյքեր և Յուջին Ի. Կարպենտեր. *«Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Հին կտակարան»* (Զատտանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2003), էջ 231:
4. Ռիչարդ Լյուսիս Դագդեյլ. *«Ջյուքսերը. հետազոտություն հանցագործության, չքավորության, հիվանդության և ժառանգականության մասին»,* Ջորջիայի պետական համալսարանի Իրավաբանության ամբիոնի ընթերցասրահ, հունվարի 1, 1969:
5. Ռոբերտ Ալան Ուորդ. «Ջոնաթան Էդվարդսի ժառանգները», «White Mountain Independent», սեպտեմբերի 27, 2019, https://www.wmicentral.com/community_beat/religion/the-descendants-of-jonathan-edwards/article_9e54e16d-59c5-5cf2-a99f-dea187da978a.html:

Գլուխ 39

1. Բեյքեր և Յուջին Ի. Կարպենտեր. *«Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Հին կտակարան»* (Զատտանուգա, Տենեսի, «AMG Publishers», 2003), էջ 585:
2. Բեյքեր և Կարպենտեր. *«Բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան. Հին կտակարան»,* էջ 18:

Գլուխ 41

1. Ջոն Թյորթելթաուբ, ռեժ. *«Ազգի գանձերը»* (2005, Բըրբանք, Կալիֆոռնիա, «Walt Disney Entertainment»), 2005, DVD:

Հավելված

1. Փաստերը և թվերը վերցված են մի գրքից, որը գրել եմ տարիներ առաջ. *«Կրակոտ սիրտ»,* Գլուխ 4. Տիրոջ փառքը (Նեշվիլ, Տենեսի, «Thomas Nelson», 1999), էջեր 31-44:
2. Այս ակնարկը գրելուց հետո ստեղծվել են ավելի ճշգրիտ գիտական մոդելներ: Համաձայն հետազոտությունների, ափամերձ քաղաքները կարող էին անվնաս մնալ, եթե մի երկնաքար ընկներ օվկիանոսի մեջտեղում: Բայց ոչ ոք վստահաբար չգիտի, թե ինչ տեղի կունենա: Ահա որոշ հետաքրքիր հոդվածներ այս ենթադրության վերաբերյալ (անգլերենով). https://www.nytimes.com/1998/01/08/us/what-if-huge-asteroid-hits-atlantic-you-don-t-want-to-know.html և https://www.space.com/35081-asteroid-impact-ocean-computer-simulations-solar-system.html:

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

Ոչ մի քրիստոնյա չի ցանկանում սահմանափակել Աստծուն, սակայն շատերս անգիտակցաբար սահմանափակում ենք Նրա գործունեությունը մեր կյանքում, քանի որ անտեսում ենք մի վճռական հոգևոր սկզբունք՝ Պատիվը:

Պատիվն այնպիսի հասկացություն է, որը մեծ մասամբ կորսվել է մեր մշակույթում, բայց, ինչպես կտեսնենք գրքի էջերում, այն առանցքային դեր ունի մեր կյանքի բոլոր ոլորտներն Աստծո թագավորության ազդեցությանը ենթարկելու համար:

«Պատվի վարձքը» գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը ցույց է տալիս, որ, պատասխանելով պատվելու կանչին, դուք ընդունում եք Աստծո արժեհամակարգը և հայտնվում եք այնպիսի դիրքում, որ կարող եք ստանալ այն, ինչ Աստված որոշել է ձեզ համար:

Այս խորաթափանց աստվածաշնչյան սկզբունքները միավորելով դրանք գործնականորեն պատկերող ազդեցիկ պատմությունների հետ՝ գիրքը նորովի կներկայացնի ձեզ այս մոռացված առաքինությունը և, ամենակարևորը, ձգտում կառաջացնի, որ ընդգրկեք այն ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր



- **Անվճար ավելի քան 125 լեզուներով**
- Հասանելի՝ որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն

Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:



MessengerX.com

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

Ինչ է նշանակում երկյուղած լինել Աստծուց

Դուք փափագո՞ւմ եք մտերմորեն հաղորդակցվել ձեր Արարչի հետ: Արդյո՞ք թվում է, թե Նա հեռու է ձեզնից և նույնիսկ անհասանելի է: Ջոն Բիվերը հավաստիացնում է, որ Աստված մոտ է, բայց գուցե Աստծո հետ ձեր ընթացքի մեջ բացակայում է էապես կարևոր մի տարր՝ Տիրոջ երկյուղը:

«Աստծո երկյուղը» գրքում Ջոն Բիվերը հրավեր է անում՝ նորովի հասկանալու, թե ինչ է նշանակում ձեր փրկությունն ահով ու դողալով կատարելը: Այս՝ գրեթե մոռացված առաքինությունը բացառիկ ճանապարհ է դեպի լիարժեք և պտղաբեր կյանք: Դուք կբացահայտեք, որ սուրբ երկյուղը.

- Էապես կարևոր է Աստծո հետ մտերիմ շփման համար,
- Ազատում է ցանկացած վախից և անհանգստությունից,
- Սրբացնում է մեր ներքին շարժառիթները և դիտավորությունները,
- Առաջնորդում է դեպի ճշմարիտ իմաստություն, հասկացողություն և գիտություն:

Սուրբ երկյուղը բացահայտում է կյանքը Աստծո կողմից նախատեսված կերպով: Միայն այս առաքինությունը ձևավորելու և դրան հարելու միջոցով է, որ մենք գտնում ենք այնպիսի խաղաղություն, ապահովություն և ուրախություն, որոնք շատերն անհավանական են համարում: Մեր Արարչից սարսափելու փոխարեն, Տիրոջ երկյուղին հարելը կառաջնորդի մեզ կյանքի ավելի բարձր մակարդակ, որն ընդմիշտ կփոխի մեզ:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ ծառայող է, ով հայտնի է իր համարձակ և առանց փոխզիջման մոտեցմամբ Աստծո Խոսքին: Նա նույնպես միջազգային հանրահայտ հեղինակ է, որի գրքերը վաճառվել են միլիոնավոր օրինակներով և թարգմանվել ավելի քան 125 լեզվով: Իր կնոջ՝ Լիզայի հետ հիմնադրել է «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է հեղափոխել աշակերտությունն աշխարհով մեկ՝ ձևավորելով Քրիստոսի անզիջում և ջերմեռանդ հետևորդների:

MessengerX

Անվճար ներբեռնումների
և հոսքային հեռարձակման համար
այցելեք **MessengerX.com**

Ցանկանում եք ավելին
Տեսածրեք պատկերակը

Messenger
INTERNATIONAL

Գիրքը նվեր է հեղինակից
և վաճառքի ենթակա չէ